



ՆԱԳՍՆԵՐՈ

www.ng.brah

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՄԵԾԵՐԵՆԻ



ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

# ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ  
վէպ

Հրատարակութեան պատրաստեց, ծանօթագրեց,  
վերջաբանը գրեց՝ Արթուր Անդրանիկեան



Երեւան - 2022

ՀՏԴ 821.19-31 Շահան Շահնուր

ԳՄԴ 84(5Հ)-44

Շ 165

Շահան Շահնուր

Շ 165 Նահանջը առանց երգի/ Շահան Շահնուր.- Եր.: Էդիթ Պրինտ, 2022.- 232 էջ:

*Շահան Շահնուրի (Կ. Պոլիս, 1902, Փարիզ, 1973) «Նահանջը առանց երգի» վէպը նորակազմաւոր Սփիւռքի տարեգրութեան՝ գեղարուեստական ընդհանրացմամբ, հոգեւոր ուժացում ապրող հայութեան վկայութիւններ ընդգրկող վիպասք է՝ համաժամանակային խորհրդածութիւնների մղող հարցադրումներով:*

*Արտատպւում է 1929 թուականի փարիզեան  
հրատարակութիւնից*

*Հրատարակւում է Շահան Շահնուրի  
մահուան 50-ամեայ տարելիցի առթիւ*

ՀՏԴ 821.19-31 Շահան Շահնուր

ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-75-886-2

© Էդիթ Պրինտ

© Հրատ. պատ. համար Ա. Անդրանիկեան

Այսօրեղ հրապարակաւ պարտք կը համարիմ  
իմ սրտագին շնորհակալութիւնս յայտնել գորգի  
եւ հնութեանց ծանօթ վաճառական Տիար Վահան  
Իսպիրեանի, որ ազնիւ գթասրտութեամբ մը հա-  
ճեցաւ հոգալ գրքիս տպագրական ծախքերը եւ  
այսպէս քաջալերել զիս իմ առաջին քայլերուս մէջ:

**Հեղինակը**

## **Յակոբ Տէր Յակոբեանին**

Եւ ամենայն ժողովուրդքն որ եկեալ էին, եւ  
տեսանէին զտեսիլն զայն՝ եւ զգործ, բախէին  
զկուրծս՝ եւ դառնային:

ՂՈՒԿ. ԻԳ. 48

Եւ ասէ /Յիսուս/ ցնուա. զի խռովեալ էք, եւ  
ընդէր խորհուրդ ելանեն ի սիրտս ձեր:

Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ.  
շոշափեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մարմին եւ  
ոսկերս ոչ ունի, որպէս զիսս տեսանէք զի ու-  
նիմ:

Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռս եւ  
զոտս:

ՂՈՒԿ. ԻԴ. 38, 39, 40



## ՄՈՒՏՔ

Հասունցած տղայ մըն էր սակայն. ապացոյց, որ չկրցաւ բոզ ու Աստուած բառերուն սահմանում մը տալ: Աղջիկը գրկած էր ետեւի կողմեն, թելերը անուրիներէն անցուցած, ու իր քիթը հետզհետէ աւելի կը մխրճուէր անոր ականջին ետեւ, զմայլելի անուշահոտութեամբ մը գլխէ ելած: Իրապէս հարուստ աղջիկ մըն էր ան. ապացոյց, որ իր կուրծքերը տղուն ակերուն խորութիւնը ունէին ճիշդ:

Հակառակ սակայն այդ միսին, հակառակ այդ երկնային բոյրին, ոչ բոզը, ոչ ալ Աստուածը կրցաւ սահմանել եւ երբոր իրենց ճիշդ դէմը գտնուող հայելիին մէջ տեսաւ անոր ժպիտը ու իր դիմագիծը, աջ ձեռքը ազատելով՝ պատին վրայի հայելիին հակառակ կողմը դարձուց, իբրեւ միակ բացատրութիւն: Բոզն ու Աստուածը անհետացան անմիջապէս, որ տղուն ձեռքը խորութիւնը ջնջեց: Այն ատեն երիտասարդ աղջիկը ծռեցաւ հագուստը կռնակէն քաշելու համար եւ հագուստին հետ սրունքները բարձրացան ճիշդ այն գիծերով, ինչպէս որ դիտող աչքերը զանոնք երեւակայած էին: Վարդագոյն մետաքսէ գուլպաներ հագած էր, որոնք երկու կարմիր կրունկներէ մեկնելով բարձրացան վեր, գեղեցիկ զուգաւորումի մը մէջ միսերը սեղմած, գրկած: Անոնց կլորութեանը վրայ մետաքսին ստացած փայլերը լուսեղէն լեզուներու պէս սողոսկեցան վեր, մինչեւ ազդրերուն բարձրը, ծծելով ու լիզելով, հակառակ իրենց թեթեւ քմայքին: Նմանապէս վարդագոյն էր այդ կարճ ներքնաշապիկը, խիստ պարզ, առանց աւելորդ ժանեակներու: Անոր ու գուլպաներուն միջեւ միսը կ'երեւէր պզտիկ բացուածքէ մը, որ կը լայննար կամ կը նեղնար ամէն անգամ, որ աղջիկը ծռէր ու ցցուէր այժմ շտկուած հայելիին մէջ, բերնին վրայ սիրտ մը գծելու համար: Պզտիկ ծալքեր կային, ուղիղ ծալքեր, երկու կէտերու շուրջ հաւաքուած կուրծքին վրայ: Քանի կէտերը տեղ փոխեցին



մետաքսին ետել, ծալքերն ալ իրենց հետ դարձան, դողալով, գունաթափուելով:

- Ecoute, Chouchou!\*, - ըսաւ այդ սրտոտ բերանը՝ հայելիին մէջ երիտասարդին ականարկը փնտռելով, - այս հինգ-շաբթի Mayol\*\* կըսկսիմ հրաշալի դերով մը, պիտի գաս զիս տեսնելու, այնպէս չէ՞:

- Դեռ ասկէ աւելի բան մը ունիս ինձի ցուցնելիք, - պատասխանեց միւսը՝ աջ ափը աղջկան միսին վրայ հնչեցնելով:

- Ինչ, ինչ, դուն ալ աւստրիացիի մը պէս կը կարծես, թէ միայն մեր սրունքները եւ կուրծքերը ցուցնելու համար է, որ բեմ կ'ելլենք: music-hallի դերասանուհի ըլլալնուս համար արուեստագիտուհի չե՞նք: Այո՛, սիրելիս, մի՛ խնդար, ես ողբերգակ դերասանուհի մը ըլլալու սահմանուած էի, բայց...

- Խնդիր չէ, ողբերգութեան եւ չարլսթօնին մէջ մեծ տարբերութիւն մը չկայ. երկուքն ալ մարդս կըցնցեն...

Աղջիկը պատասխանելու ատեն չունեցաւ, Chouchouն ձեռքէն նետելով դերասանուհիին փոքրիկ անդրավարտիքը, որուն հետ կը խաղար, յանկարծական ոստումով մը խոյացած էր դրան մը վրայ, ճչալով: Այդ դուռը կը պատկանէր պզտիկ սենեակի մը, որուն նմանը կը գըտնուի ամէն լուսանկարչատան մէջ, գործողութեան սրահին ճիշդ մօտ: Այդ սենեակները, աւելի խուց, քան թէ սենեակ, chassisenերը\*\*\* լեցնելու կը ծառայեն, որով կ'ըլլան մութ ու քիչ մըն ալ կը հոտին՝ միշտ գոց պահուելուն համար:

Տղան շուտով դուրս ելաւ անկէ քաշելով երկու փառաւոր պեխեր, որոնք խոշոր խոշոր բացուած ռնգունքներու\*\*\*\* յանդիմանական ականարկին տակ քանի մը գոյն էին եղած: Այդ պեխերը Կոստանինն էին՝ խանութին ծառան: Երիտա-

\* - Լսի՛ր, ջանիկս (Ֆրանս.). փաղաքշական մակդիր:

\*\* Փարիզեան թատրոն:

\*\*\* Լուսանկարչական գործիքի մաս:

\*\*\*\* Քթափող:

սարդը արագօրէն ընկրկելով յառաջացաւ սրահին մէջ եւ կեցաւ միայն այն պահուն, երբոր զգաց, թէ բանի մը կը զարնուէր, բայց չդադրեցաւ բնաւ պոռալէ, ճչալէ, բացականչութիւններ արձակելէ, մինչ իր սրունքները անգոյ պարի մը ձեւերը կը փորձէին: Ծառային մարմինը կը կորանար, վիզը կ'երկարէր, ականջները կը կարմրէին: Բազուկները տարածած՝ խրտուիլակի մը թեւերուն պէս հորիզոնական, մէկ ձեռքէն կը կախուէր քարայծի մը դեղին մորթը, իսկ միւսին մէջ՝ փետրաւելը տակաւ կը դողար: Երիտասարդը շարունակեց չափազանցուած զուարթութեամբ մը, երբոր դերասանուհին, վարագոյրը մէկդի ընելով, իրենց միացաւ, մետաքսին ետեւ իր սարսափած ծիծերով.

- Կը տեսնե՞ս, կը տեսնե՞ս սա մերին Կոստանը, մերին պտըլիկ Կոստանը, տարիքին չես ձգէր, հէ՛. եթէ գիտնաս, թէ ի՞նչ հանած-վարած է, ի՞նչ «կանաչ» է... Գետինը մաքրելու պատրուակին տակ ժամ մըն է, որ բանտարկուէր էր այդ ծակին մէջ կիսաբաց դռնէն մերկ մարմինդ տեսնելու: Ա՛, Կոստան, Կոստան, պիտի ըսեմ դռնապանին, ամէն մարդու պիտի պատմեմ. կը խնդամ, հէ՛. սա վառող աչքերուն նայեցէք, ո՞վ կը հաւատայ, որ յիսունըհինգ տարեկան է: Ահա, ահա՛, կը ներկայացնեմ ձեզ Փարիզ քաղաքի նախկին հրշէջ գունդի ենթասպաներուն է՛ն կրակոտը: Ի՞նչ կրակներ է մարած եւ ի՞նչ հրդեհներ վառած սպասուհիներու սրտին մէջ: Անանկ չէ՛, հակառակը ըսէ նայիմ, դուն չէիր պատմողը, թէ երիտասարդութեանդ դռանդ առջեւ bonicheները\* կարգի կը սպասէին եւ, թէ աւելի վերջը, գաղթավայրերու մէջ, ենթասպայի կարմիր տաբատովդ, խափշիկ կիները կատղեցուցիր ցուլերու պէս...

Դերասանուհին մինչեւ բազմոցը հրեց ծառան որ փետրաւելին հետ ինկաւ հոն, յամառելով անշարժ պահել իր կարմրած դէմքին վրայ խնդացող բերանը: Ահա այդ խնդութիւն մէջ է, որ աղջկան խնամուած մատները կար-

---

\* Սապտուհի:

կանդակներ մխրճեցին Portoի\* ուժով, մինչ ձայնագիրը մէկէն չարլսթօն մը կը նետէր օդին: Տիրող զուարթութեան մէջ դերասանուհին ուսերէն վար սահեցուց շապիկը, գլխի արագ շարժումով մը իր կարճ մազերը յարդարեց ու սկսաւ պարել, պարել փետրաւելէն դուրս ցցուող խոշոր աչքերու առջեւ, որպէս գինով, խելագար, վերնոտ: Պարեց ամբողջութեամբ մերկ, սեղմուած միայն աղուոր կօշիկներու ու բարձր գուլպաներու մէջ, բաներ՝ որոնք մերկ մարմին մը աւելի կը մերկացնեն:

Հակառակ Սէն ժէռմեն տէ Փռէի եկեղեցիին ճիշդ դէմը ըլլալնուն, անկարելի էր իրենց օրուան մէջ ժամերը լսել: Իրիկուան այդ պահուն է, որ միայն, երբոր փողոցի աղմուկները բաղդատաբար կը նուազին, կարելի կ'ըլլար զանգակատան ու հանրակառքի զարկերը չշփոթել իրարու հետ: Եօթն էր. պաշտօնեաները շատոնց է որ մեկնէր էին: Երիտասարդը յարդարեց փողկապը, մազերը, խոզանակ-ւեցաւ, լոյսերը մարեց ու իջաւ սանդուղներէն: Բուն խանութը վարն էր, երկու փողոցներու անկիւնը, խիստ լուսաւոր՝ շնորհիւ իր ապակիէ ճակատներուն եւ թէեւ ոչ շատ արդիականութեամբ, բայց եւ այնպէս ճաշակաւոր դրամագլխով մը յարդարուած: Ինչպէս ամէն լուսանկարչատուն, այս ալ ծայրայեղօրէն խճողուած էր ամէն տեսակ նկարներով, շրջանակներով, գունաւոր անգոյն գլուխներով, ուր իրար կը հրմշտկէին զինուորականները, կուրծքեր, տղաք, պատուանշաններ, սրունքներ, մօրուքներ, ժպիտ, ժպիտ: Մէկդի ըրաւ վարագոյրը հող մտնելու համար, երբոր սանդուղները աւարտեցան: Մէկէն կեցաւ, սակայն անորոշ, ուզեց ձգել վարագոյրը, չկրցաւ. ուզեց չնայիլ, նորէն չկրցաւ: Սաստիկ խռովուած էր. յիշեց քիչ մը առաջուան դերասանուհին, որ զինքը չէր յուզած իր ամբողջ մերկութեամբը, մինչդէռ հոս... աղուոր մը դիտեց ամբողջ իր մարմնով, աչքերը խոշոր-խոշոր բացած: Հոն, լոյսերուն մէջ, դրամարկդին առջեւ, կին մը աջ ոտքը բարձրացուցած էր աթոռի մը վրայ

\* Գինու տեսակ (պորտուեյն):

ծնրակապը յարդարելու դիրքով ու բնականաբար արդէն-  
իսկ կարճ քղանցքը ատելի վեր ելած՝ կը ցուցնէր երկու զմայ-  
լելի սրունքներ: Այդ սրունքները մատամ ժանն կը կոչուէին:

.....

- Դո՛ւն ես, Փիէռ, արբան ի՞նչ եղաւ:

- Ջուրին մէջն է, շաքարավաճառին աղջկանը հետ:

- Շաքարավաճառին աղջկանը հետ. չըսես, որ գլխէ պիտի հանէ...: Երկուշաբթի, չմոռնաս, առաջին գործերնիս ըլլայ. խեղճը տասն անգամ աղաչեց, որ շուտով պատրաստենք, որովհետեւ այս շաբաթ պիտի ամուսնանայ:

- Արբան:

- Mais non!\*, շաքարավաճառին աղջիկը:

Փիէռ գլխարկը գլուխը դրաւ. հանեց. մէկ աթոռէն միւսը գնաց. քակեց շրջանակ մը, որ բնաւ ալ ծռած չէր. նայեցաւ պատկերի մը անանկ հետաքրքրութեամբ, որ կարծես, թէ առաջին անգամն է որ կը տեսնէր. նորէն փողկապը շտկեց. քիթը խնչեց բազմաթիւ անգամներ ու վերջապէս դէպի դուռը գնաց, ըսելով. «Ես կը մեկնիմ»: Ու չմեկնեցաւ: Կինը գլխարկը մէկ կողմ դրաւ տեսնելով, որ ան դռնէն կը վերադառնար. յայտնապէս կ'երեւէր, որ բան մը ունէր ըսելիք: Փիէռ մօտեցաւ, աչքերը խոնարհեցուց չկորսուելու համար այդ աղուոր ակնարկին մէջ, ամբողջ ճիգը ըրաւ իր ձայնին սովորական դրոշմը պահելու եւ սկսաւ իր նախադասութիւնը այնքան ատենէ ի վեր պատրաստուած, այնքան անգամներ սրբագրուած:

- Մատամ ժանն, նախ ներողութիւն պիտի խնդրեմ ձեզմէ, որ չեմ կրնար կոր կատարել պարտականութիւնս. պարտականութիւնս ձեզ ատենին իմաց տալ էր. կ'ուզէի ըսել ձեզ առաջուրնէ, որպէսզի չնեղուիք, բայց կարելի չեղաւ, մի՛ մեղադրէք զիս, գիտէք թէ անհոգ չեմ, բայց չեղաւ... պէտք է որ... գիտէք, թէ ես ձեզի դէմ թշնամութիւն մը չունէի...

---

\* Բայց ոչ:

- Enfin\*! Ի՞նչ ըսել կ'ուզեք:

- Ես երկուշաբթի չպիտի գամ:

- Երկուշաբթի չպիտի՞ գաս. բարեկամդ դեռ հիւանդ է...  
թէ ոչ դուն բան մը ունիս. ըսէ՛, ի՞նչ ունիս:

- Ո՛չ, այդպէս չէ, ըսել կ'ուզեմ, թէ ա՛յլ չպիտի գամ հոս  
աշխատելու:

Մատամ ժանն վայրկեան մը կեցաւ, յօնքերը պոստեց.  
խորհեցաւ ու մէկէն ւաւելցուց.

- Օ՛հ, անպատճառ մէկը ւաւելի խոստացաւ վճարել, այդ  
չէ՛, բայց կրնայիր բացէ ի բաց ըսել. գիտես թէ...

- Ո՛չ, ոչ, բնաւ այդ չէ. միշտ գոհ ձգած էք զիս այդ տե-  
սակէտով, բայց եթէ կ'ուզեք պատճառը գիտնալ. ահա-  
ւասիկ. - ես ա՛յլ ձանձրացայ, ա՛յլ գանեցայ մենաւորի այս  
կ'եանքէն, ճաշարաններէն, պանդոկներէն, առանձնութե-  
նէն, կ'ուզեմ իմ տեղս երթալ, կ'ուզեմ ծնողքիս քով վերա-  
դառնալ:

Լռեցին երկուքն ալ, երկար պահ մը: Կինը, ակնարկը  
հեռուն, կարծես բան մը կը փնտռէր. աջ յօնքը մտածում էր  
եղած. մէկէն ըսաւ.

- Բայց դուն չէիր, որ օր մը երկարօրէն կը պատմէիր,  
թէ քու ալ Պոլիս դարձդ կարելի չէ, թէ հայերը ա՛յլ Թուր-  
քիայ չեն կրնար մտնել, թէ զինուորութենէ փախած ես...

- Այո, բայց այդ երկրին մէջ դրամով ամէն բան կ'ըլլայ:

- Ըսել է, ամէն ինչ պատրաստ է, ու վաղն իսկ կը մեկ-  
նիս:

- Ոչ դեռ, բայց պիտի աշխատիմ...

- Չէ՛, Փիէռ, չէ՛, այդ չէ պատճառը. ճշմարտութիւնը չես  
ըսէր. կրնայիր մինչեւ վերջին օրը աշխատիլ, կրնայիր ինձ  
իմացնել, շատ լաւ կրնայիր...

.....

Մատամ ժանն կասկարմիր էր եղած. Փիէռի ջղայնո-  
տած մատներուն մէջ գլխարկը անդադար կը դառնար:

---

\* Վերջապես:

Քանի անգամներ փողկապը շտկած էր, քանի անգամներ երկուքն ալ աթոռ ու նստարան էին փոխած. ալ ոտքի էին, կարելի չէր նստիլ: Որքան ատեն է, որ կը վիճէին այսպէս: Փիէռի ձայնը փոխուած էր քիչ մը, բայց ալ չէր վախնար անոր ակնարկէն: Միայն դէմի պատին կնոջ մեծ լուսանկարն է, որ քիչ մը կը նեղէր զինքը. այդ կինը իր մօրը կը նմանէր: Ըսաւ.

- Լաւ. պիտի ըսեմ, քանի որ այդքան կը պնդէք. բայց աւելցնեմ որ ինչ որ ընէք՝ անօգուտ է, ալ անկարելի է որ հոս մնամ. բառ մը աւելի չպիտի պահանջէք ինձմէ ու երբոր խօսքս աւարտեմ, պիտի թողուք որ մեկնիմ: Ահա. ես տղայ չեմ. գիտէք, թէ ես բնաւ տղայ չեմ, բայց եթէ օր մը աւելի մնամ հոս, ըրածս տղայութիւն պիտի ըլլայ: Երկարօրէն խորհած եմ եւ գիտեմ, թէ որքան անօգուտ է ունեցած զգացումս, թէ քանի մը չի կրնար յանգիլ եւ թե... թէ միայն զիս տառապեցնելու պիտի ծառայէ. պէտք է մեկնիմ, որքան որ ուշ չէ: Կարծեմ հասկցաք, թէ ինչ կը զգամ ձեզի հանդէպ:

Մատամ ժանն ձգեց որ մարմինը իյնայ թիկնաթոռի մը մէջ, թելերը կախ, գիծերը անշարժ: Փիէռ մօտեցաւ դուռին, թելերը կախ, գիծերը անշարժ, մօտեցաւ դուռին, ձեռքը երկարեց... բայց մէկէն ետ քաշեց զայն: Սարսափելի խնդուք մը պայթած էր ետեւէն, արտակարգ խնդուք մը, քրքիջ մը, որ կարծես ապակիները կը դողացնէր:

- Կ'արգիլեմ, կ'արգիլեմ ձեզ ծաղրելէ. ես ձեզի սիրային յայտարարութիւն մը չըրի, ես ձեզմէ բան մը չպահանջեցի, դո՛ւք էք որ պնդեցիք, որ ըսեմ, եւ հիմա խնդա՛լ եւ հիմա ծաղրե՛լ...

Երբոր ժպիտի վերջին մնացորդն ալ կորսուեցաւ շրթներէն, ոտքի ելաւ, լրջացաւ, ու կեցան դէմ դէմի, աչք աչքի, լռեցին: Լռութեան այդ պահուն, որ կ'երկարէր, մէկէն որոշակի լսուեցաւ ապակիի ձայն մը: Երկուքն ալ գլուխնին այն կողմ դարձուցին: Այն անկիւնը, այն միակ անկիւնը, ուրկէ փողոցը կ'երեւար, որ չէր ծածկուած ցու-

ցափեղկերու վարագոյրովը, աղջիկ մըն էր եկեր, պզտիկ, նուրբ աղջիկ մը որ քիթը փակցուցած ապակիին, մատովը կը թմբկահարէր: Փիէռ ոստումով մը խլեց պատկերակալի մը վրայէն մեծ խաւաքարտ մը որուն վրայ զառամած կրօնաւոր մը կար, ու հաստատեց ապակիին առջեւ, աղջկան դէմքը խորշոմներով ծածկելով:

- Փիէռ, Փիէռ, անգնիթ ես, տղայ ես դուն... Բայց... ան կը սիրէ կոր քեզ. ինչո՞ւ զայն ձգել ու այդպիսի անկարելի ցանկութիւններ ունենալ. բայց դուն չես գիտէր, որ... բայց դուն չես գիտէր, որ ես ազատ չեմ... չէ՛, չէ՛, հոս եկուր, քովս. կ'ուզեմ, որ քովս նստիս... ան, որքան պիտի խնդայի, եթէ այսքան լրջութեամբ չըսէիր... Allons, ատանկ արտայայտութիւն մի առնէր, գիտեմ, որ դիտմամբ ըսիր, հէ՛, ճիշդ չէ՛... ըսէ՛, մոռնամ... մոռնամ...

Այս անգամ աղմկողը հեռաձայնն էր: Կրկին ու կրկին ճչաց: Վերջապէս ժանն ոտքի ելաւ, անցաւ դրամարկղին ետեւ, ձեռքը գործիքին վրայ մնաց պահ մը անշարժ, գլուխը դանդաղօրէն ետեւ դարձուց՝ կարծես թէ բան մը ըսելու նպատակով... մէկէն գործիքը վերցուց: Ու ձայնին իր էն զուարթ շեշտը տալով պատասխանեց. - Այո՛... այո՛... ինչո՞ւ չէ... իրան, ինչպէ՞ս անցաւ, պատմէ նայիմ, շատ հետաքրքիր եմ իմանալ... առանձին էիր, անպիտան... ես ալ կը փափագէի այս գիշեր «Կապոյտ կովին» երթալ, այս աղէկ յարմարեցաւ... եկուր ինձի առ, հոս կը սպասեմ քեզի... անպայման...

Երբոր ետին դարձաւ, մարդ չկար. փողոցին դուռը բաց էր. դրան մէջ եկեր էր անշարժանալ ծիծաղելիօրէն պզտիկ շնիկ մը, որ իրեն կը նայէր իր երկու աչքերով, աններելի համարձակութեամբ մը:

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## 1

Մաքսատան մէկ դրան առջեւ կեցող պահակը իր զէնքովը բարեւեց. պղինձէ գործիքէ մը նօթեր պայթեցան, ու բեռնակիրները դադրեցան իրենց կողովներով վազվռտելէ: Ջօրքերը լռեցին. այդ կապոյտ տղաքը չուզեցին այլեւս աղմկել, վերէն վար իրենց մնացող ընկերներուն անունները պոռալով, կարծես ի յարգանս անոնց որոնք կը մեկնէին վիշտով, կը բաժնուէին մե՛ծ, անսահման վիշտով: Քարափին վրայ մնացողները սկսան հետզհետէ ւաւելի ու ւաւելի պզտիկնալ, խօսքերը կարճցան, շէնքերու թիւը ւաւելցաւ, ու նաւը սուլեց: Թաւ, խորունկ, դողացնող սոյլ մը. շոգին անձրեւի պէս ինկաւ բազմութեան վրայ, շուն մը փախաւ, ու արեւը ջուրի այդ կայլակներուն մէջ ծիրանի մը գծեց: Մինչեւ վերջին վայրկեանը շատերու պէս մնացին հոն, այդ երկու տարեցները, հայր մը, մայր մը, իրենց կիրակնօրեայ մաքուր հագուստներուն մէջ, աչքերնին խոշոր-խոշոր բացած: Անոնք բնաւ թաշկինակ չկրցան շարժել: Մե՛ծ հաց մը կուրծքին սեղմած՝ քարացեր էր նաւուն եզերքը, ու իր բացուած աչքերը կը թրջէին կարծես հովէն, կարծես պաղէն. հակառակ ատոր կրցաւ դեռ երկար ատեն տեսնել իր կարմիր, իր ծոպաւոր ֆէսը, հօրը մատներէն կախուած: Դեռ քիչ մը առաջ է, որ նաւ բարձրանալու միջոցին վերջնականապէս գլխէն քաշեր էր զայն ու տուեր իրեններուն, յանձնարարելով, որ մուճակ շինեն անով: Ուզեր էր խնդալ, ուզեր էր կատակել, այո՛, իրաւ, բնաւ չէին լացած, բնա՛ւ, ինչպէս որ խոստացեր էին. արդէն միայն այդ պայմանով է, որ ձգեր էր անոնց մինչեւ նաւ գալը. բայց ինչո՞ւ չէին խօսած, ինչո՞ւ բառ մը իսկ չէին ըսած: Ամէն բան սկսաւ պղտորիլ, ամէն բան. կը հեռանային: Նաւ մը անցաւ իրենց քովէն՝ սուլելով. ո՛վ չէր ճանչնար «Սէյրը Սէֆային»ի այդ



նաւը, «Գըրլանկըճ»-ը իր յատկանշական սոյլով զոր վերջին անգամ մըն ալ կը լսէր: Հրեայ տղաք սկսան պոռալ. «Եէրէ պաթ Ստամպուլ, եէրէ պաթ»\*. պզտիկ շունէր կան, որոնք հեռանալէ վերջ միայն կը հաչեն: Սարայ Պուրնիի քարափին վրայ կեցած էջ մը գլուխը դարձուց եւ իրեն նայեցաւ երկարօրէն. թրքական թաղն էր, որ իր «երթաս բարով»ը կ'ըսէր: Ահա «Հայ կղզի»ն. բնաւ չէր նշմարած, որ անոր ետեւը ատանկ լերկ է ու կարմիր, կապիկի մը լատակին պէս: Յիշեց այն պզտիկ աղջիկը, զոր սիրած էր հոն եւ որ իրեն այնքան կապկութիւններ էր ըրած: Նաւուն ետեւի կողմն էր. իր եւ Պոլսոյ միջեւ ֆրանսական դրօշակը կար հիմա. աւելի վերջ, երբոր այդ երեք գոյները իջեցուցին, Պոլիսը կորսուած էր, ինչպէս կը կորսուի աճպարարի մը թաշկինակին տակ առասպելական դրամ մը:

Հոս կեանք մը կ'աւարտի:

Հոս կ'աւարտի պետութիւն մը, ու վերջնականապէս կը թուլնայ թաթը տղուն պատկանած ազգին: Մեկնող երիտասարդը իր երակներուն մէջ կը տանի միայն արին մը մաքուր ու առողջ, ինչպէս այն երկինքը, որուն տակ իր առաջին շրջանն էր սկսեր: Միակ զաւակը համեստ ու աշխատասէր զոյգի մը, իր մանկութեան տարիները բոլորեց կիսովին եւրոպականացած Պոլսոյ այդ արուարձանին մէջ: Ահա իրենց փայտաշէն տունը՝ մեծ հայրիկէն մնացած, պարտէզը՝ որուն խորն էր հաւնոցը, ինչպէս որ հորին խորն էր իր ինքնահոս գրիչը, դրացիները՝ հանըմներով, աղաներով, սերկեւիլի ու թութի ծառերով: Ազգային դպրոց, ֆրանսական վարժարան, հանդէս, դափնի: Պզտիկ սէրեր, ընթերցանութեամբ եւ լուսնկայի ցոլքով խոշորցուած, ատելութիւն, վրէժ, զինադադարեան համազգային գինովութիւն...

Դպրոցական նստարաններէն վերջ՝ իր ընդգրկած արհեստը լուսանկարչութիւնը եղաւ, սորվուած ու յետոյ կի-

\* Գեպրիներ մտնես, Ստամբուլ, գեպրիներ մտնես (թրք.):

րարկուած նոյն խանութին մէջ, Բերա, ծանօթ հայու մը քով: Ահա այդ լուսանկարչատան մէջ է, որ ստացաւ Թուրքին յաղթական մոյկի հարուածը, որ զինքը նետեց Փարիզ:

Փարիզ:

Gare de Lyonէն\* դուրս ելած պահուն տեղատարափը սկսաւ իյնալ. բաւական վերջ, համբերութիւնը սպառելով՝ սկսաւ վազել որպէսզի չթրջի: Ահա այդպէս ամէն գաղթական Փարիզ հասնելուն առաջին ընկերակցին իսկ կը վազէ, կը վազէ: Նախ Փարիզի կեդրոնը՝ Saint Michel. յետոյ հայոց եկեղեցին. «Châteletէն changer կ'ընես, եթէ changer\*\* ընել չես գիտէր, մինչեւ Châtelet կը քալես»: «Անի» ճաշարան. «Հօրանք, մի հատ մորթատէյլ, էյ, սուսօն փլաքի չմնաց ըսինք եմ»: Հիացում փայտէ սալայատակներու, հիացում հացագործի խանութներու, հիացում սրունքներու, հիացում թղթատարի եւ ոստիկաններու: «Ինծի չէս ճանչնար կոր ծօ Պետրոս, մէկ մահալլէի տղաք ենք»: Այո՛, նոյն թաղէն էին, միայն թէ ան փողոցները բանջարեղէն կը ծախէր: «Métro մտած ատենդ երրորդ կարգի տոմսակ մի՛ ուզեր եւ երթալիք տեղիդ անունը մի՛ տար»: Carte d'identité.\*\*\* «Ծօ աստեղը հիչ ամօթ չկայ, փողոցները կը պագտուին կոր, հէմ պերնէ». Cordon s'il vous plaît\*\*\*\*: «Հիչ տէրտ չընես ա Պետրոս, contremaître\*\*\*\*\* շէքերի պէս մարդ է. վաղը դուն խութի մը լօխում բեր, եւ մնացածը ինծի ձգէ»: Տուփ մը լօխումը տարաւ եւ մնացածը ձգեց Աստուծոյ:

\* Փարիզի Լիոնի անուան կայարան:

\*\* Փոխել:

\*\*\* Անձնագիր:

\*\*\*\* Խնդրեմ, հերթ կանգնեցէք:

\*\*\*\*\* Վարիչս:

FABRIQUE,

FABRIQUE,

FABRIQUE,

Syphilitiques, fous, rois, pantins, ventriloques,

Qu'est-ce que cela peut faire à la putaine Paris,

Vos âmes et vos corps, vos poisons et vos loques?

Elle se secouera de vous, hargneux, pourris:\*

Պատէն կախուած իմ ջուրակը ինկաւ փշրուեց... Une  
plateforme en arrièrè et c'est complet!\*\* : Եօթուկէս, տիւտիւ-  
կը, ծօ, Պետրոս տիւտիւկը... Chopine\*\*\*, cantine\*\*\*\*, չիւ-  
սաւ - pointage, bleue, vas-y\*\*\*\*\*! Ո՛ր ես, մայր իմ, ո՛ր ես,  
մայր իմ, ո՛ր ես, մայր իմ, ո՛ր ես, մայր իմ, ո՛ր ես, մայր իմ...  
Ծօ ես այս թուղթէն բան մը չեմ հասկնար կոր. pièce\*\*\*\*\*-  
ներուն իլէն. ժամերուն հաշիւը ինտո՛ր պիտի ընենք, 76,  
547 բաժնուած 441 \$ր. 75 սանտիմով, որուն խորանարդը  
հաւասար պէտք է ըլլայ 871. 666-ի քառակուսի արմատին.  
Աստուած մեծ է, Աստուած մեծ է, Աստուած մեծ է, Աստուած  
մեծ է... Ջո՛ր, ջո՛ր, ծօ ասիկայ կը մարի կոր, ծօ ասիկա  
մարեցաւ, Պետրոս, Պետրոս, բան մը չկայ, բան մը չկայ,  
ի՛նչ ըսեմ ես անոնց, քի ասանկ թիւպէնտի կտոր տղաքը  
Ֆաբրիկաները նետեցին, ծօ չէ՛, մեռնողը հայ չէր, Ալճերիա-  
ցի էր, է՛յ, ի՛նչ ընենք, մեռա՛ւ՝ մեռաւ: Նախ լաթ մը նետեցին  
վրան ու յետոյ տարին: Հանգանակութիւն: Աստուած մեծ է,  
Աստուած մեծ է, Աստուած մեծ է...

\* Որովայնախօս սիֆիլիտիկներ, ցնդած արքաներ,  
Պոռնիկ Փարիզը սրանից արդեօք ինչ օգուտ ունի,  
Հոգին ձեր կը տաք, մարմինը, թոյնը, թէ քրջերը ձեր  
Նեխած կռուողներ, նա թափ կը տայ ձեզ հեռու կը վանի:  
(Հատուած Արթիւր Ռենբօյի «Փարիզեան խնջոյք» բանաստեղծութիւնից  
(Ֆրանս. թարգմ. Գուրգէն Գասպարեան)):

\*\* Մի պլապոֆորմ երեւում է եւ լրիւ է:  
\*\*\* Մեծ բաժակ:  
\*\*\*\* Բուֆետ:  
\*\*\*\*\* Նշում, կապոյտ, կորիք գնայ:  
\*\*\*\*\* Կտոր, մասնիկ:

Աւելի վերջ, երբոր քիչ մը ինքզինքը գտաւ, երբոր վարժուեցաւ տեղին, միջավայրին, կրցաւ փափագածը ստանալ: Grands Boulevardsները\* մեծ լուսանկարիչի մը քով, ուր մնաց աւելի քան երկու տարի: Հոդ է, որ կատարելագործեց իր արհեստը, սորվելով նրբութիւններ, պզտիկ խաղեր, որոնց շնորհիւ լուսանկարիչ մը կը հաւակնի արուեստագէտ եղած ըլլալ:

Նախապէս բոզանոցի մը նմանցուցած էր իրենց խանութը, գայթակղած ու զարհուրած կիներու այդ արտասովոր համարձակութենէն, լպիրշութենէն, ներկէն, հագուստներէն: Իրեն խորթ թուեցաւ փարիզուիիներու մօտ ամօթխածութեան այդ պակասը, բայց յետոյ սկսաւ կամաց-կամաց վարժուիլ եւ առաջին օրերու այն հետաքրքրութիւնը, որով կը հետեւէր հագուստներու եւ ներքնաշապիկներու անկումին, նուազեցաւ: Եւ խորհելով, որ հոս բոզ չկայ, քանի որ բոլոր կիները իրարու կը նմանին, առանց խորունկը փնտռելու, իրենց լուսանկարչատունը նմանցուց բաղնիքի: Ամէն օր, եւ գրեթէ ամբողջ օրը մերկութիւններու հետ էր իր գործը: Բայց ա՛լ աչքերը չբացաւ, ձեռքերը չդողացին, ենթակային կրցաւ պէտք եղածին պէս մօտենալ, ափերով բռնել զայն անհրաժեշտ դիրքը տալու համար եւ իզուր ցանկաց մէկը սիրել: Կուրծքերը, պորտերը, սրունքները շփոթուեցան իրարու հետ ու մտքին մէջ մնաց միայն կատարելութեան մը պատկերը, ճարտար մազայարդարի մը հասցէով: Փարիզը անոր վրայ ալ դրաւ իր արտաքին վայելչութեան դրոշմը ու տարիները անցան, այդ կիներուն պէս մերկ, անսէր:

Իրիկուն մը գործէն ելած պահուն դրան առջեւ մէտուիէօ Լեսքիւռը գտաւ: Մէտուիէօ Լեսքիւռը շաբաթը անգամ մը իրենց կուգար իր թերթին համար զանազան տեսակ լուսանկարներ գնելու: Ըստ իր սովորութեան, Պետրոս, որուն անունը շուտով Փիէռ եղած էր, անոր ալ մակդիր մը դրած

\* Մեծ ծառուղիներ:

էր, զայն Troisième Empire\* կոչելով: Իրաւ ալ կարծես այդ շրջանէն մնացած տիպար մըն էր, միշտ մեծ խնամքով հագուած, լամբակին ծաղիկ մը, մազերը ներկուած, արծաթէ կոթով գաւազան, ոտքին «կեթո»եր, մատներուն մատանի, պեղերուն օժանելիք (cosmétique): Խիստ յատկանշական դիմագիծ մը ունէր ան եւ իրապէս տարօրինակ մորթի գոյն մը: Վաւաշոտ շրթունքներ, կանաչորակ աչքեր, որոնք կարծես կեղծ են ու խարդախ, բայց որոնք գիտեն այնքան լաւ ծածկուիլ չափազանցուած ծեքծեքումի մը տակ: Այդ իրիկուն Troisième Empire-ը առաջարկեց Փիէռին սրճարան մը երթալ, ուր երկարօրէն խօսեցաւ, անդադար գաւազանին կոթին հետ խաղալով: Ըսաւ, թէ հայերուն վրայ մեծ հաւատք ունէր, ունէր նաեւ խանութ մը. կ'ուզեր զայն վարելու հոգը իրեն յանձնել: Շատ գեղեցիկ աշխատանոց մըն էր, մեծ պողոտայի մը վրայ, բաղձալի դիրքով եւ որ, սակայն, գետին ձախ եզերքը ըլլալու միակ անպատեհութենէն կը տուժէր: Առայժմ շատ գործ չունէին այն հիմնական պատճառաւ, որ իրենց գլխաւոր պաշտօնեան հին դպրոցի լուսանկարիչ մը ըլլալուն՝ անկարող էր նրբաճաշակներ գոհացնելու: Կը փափագէր, որ Փիէռը անոր տեղը անցնի ու իր նորագոյն արհեստովը գործը յառաջացնէ: Ամէն դիրութիւն պիտի տրուէր իրեն, պահանջածը պիտի վճարուէր եւ թէ խանութին երկրորդ տէրը, կին մը, իր վրայէն պիտի առնէր առեւտրական բաժնին հոգը:

Եւ երբոր Փիէռը ընդունեց, եւ երբոր ժամադրութիւնը որոշեցին, Troisième Empireը դեռ երկարօրէն խօսեցաւ գաւազանին կոթին հետ, ծանրակշռութեամբ: Մեկնելէ առաջ չմոռցաւ սակայն անգամ մը եւս կրկնել, թէ Թուրքերուն\*\* վրայ մեծ հաւատք ունէր:

\* Երրորդ կայսրութիւն:

\*\* Ընդհանրապէս, թրքահպատակներին (Թուրքիայում ապրող այլ-ազգիներին, յարկապէս, երոպացիները թուրք էին կոչում):

## 2

Կեցաւ նախ, զարմացած տիրող լռութենէն, ինք, որ ալ վարժուած էր քաղաքի կեդրոնի թոհուբոհին: Սիրեց այդ լուսաւոր, մաքուր ու կոկիկ խանութը եւ նայեցաւ պատի լուսանկարներուն, կարասիներուն, հեռաձայնի գործիքին, մէկու մը պէս, որ կը պատրաստուի շրջանակի մը մտերմանալ: Ձեռք մը վարագոյրը մէկդի ըրաւ, դրան զանգակէն կանչուած: Եկողը ծառայ մըն էր, կապոյտ աչքերով, տարեց, երկար շապիկով, մէկ ձեռքէն կը կախուէր քարայծի մը դեղին մորթը, իսկ միւսին մէջ փետրաւելը դեռ կը դողար: Անմիջապէս հեռացաւ սակայն, առանց բառ մը ըսելու, իր ներկայութիւնը աւելորդ նկատելով, քանի որ նոյն պահուն իսկ դուռը կրկին կը հնչէր, ձգելով, որ կայծակի պէս ներս նետուի կին մը:

Բաց գոյն, խիստ ճաշակաւոր գլխարկ մը, որուն գաղտնիքը միայն ասոնք ունին, համարձակ, համարձակ ակնարկ աչքերուն, ծանօթ կատուի գոյնով թաւիշէ վերարկու մը սեղմուած իրանին ու ազդրերուն վրայ, մուշտակի լայն երիզներ քղանցքին, թեզանիքներուն ու վզին շուրջ, անթերի կաղապարումը մետաքսէ գուլպաներուն, եւ տոտիկներ եւ բոյր եւ գոյն: Անփութօրէն սեղանի մը վրայ թողուց ձեռքի ծաղիկներուն փունջը, քաշեց աջ մատներուն ծայրէն ձեռնոցը ու նայեցաւ երիտասարդին:

Այս այն պահն է, կարճ, խիստ կարճ պահը, որու միջոցին մարդիկ, միասին ապրելու սահմանուած, կը ջանան դիմացիննին դատել, կշռել, բացատրութիւն մը տալ դիմագիծերու եւ ակնարկի, անձնապէս համոզում գոյացնել յայտնուած կարծիքին ու գուշակել ինչ որ չըսուեցաւ, պահ մը՝ ուր համակրութիւններ կը ծնին, իրարու կը կապուին, եւ կամ թէ բնաւ չեն ծնիր, եւ կամ թէ բնաւ չեն կապուիր, բայց պահ մը՝ որու միջոցին անպայման ժամացոյց մը կը զարնէ: Եւ պատի ժամացոյցը երեք հարուածներ իջեցուց. ժամը առաւօտեան տասն էր:

Մէկզմէկու ինքնութիւն գուշակած՝ աղուոր մը նայեցան իրարու, նախ աչք աչքի, յետոյ վերէն վար ժպիտ մը եկաւ կնոջ շրթներուն, գիտակից, խնամուած ժպիտ մը, որ այդ աղուոր բերանը ձուածել ըրաւ: Եւ ձեռքը երկարած՝ դէպի երիտասարդը ուղղուեցաւ ան, հարցնելով՝

- Monsieur Pierre?

Մէտսիէօ Փիէռ մէկէն իր վրայ նետուեցաւ բազուկներուն ամբողջ ուժովը զայն գրկելով սեղմ, սեղմ: Այլապէս երեսի վրայ գետին ինկած պիտի ըլլար մատամ ժանն անխուսափելիօրէն: Այդ սայթաքումին եւ իրարանցումին մէջ բացուէր էր կնոջ վերարկուն, ու Փիէռի աջ ափը կը սեղմեր անոր կուրծքերէն մին: Այսպէս իրար պլուած մնացին պահ մը անշարժ- ինչ աղուոր կը բուրէր- մինչեւ որ ֆրանսուիին կրցաւ շտկուիլ, հաւասարակշռութիւնը գտնել սրունքներուն վրայ, բաժնուեցան իրարմէ ու գետին նայեցան: Գետինը գորգին հետ կը շփոթուէր կրիայ մը: Կրիայ մը, այո՛, կրիայ մը: Բացականչութիւն, խնդուք, քահքահ: Թաւիշէ վերարկուն ինկաւ աթոռի մը վրայ. ժանն բթամատը քիթն ի վեր սահեցնելով գլխարկը քաշեց քասքէթի մը պէս, պոռալով:

- Կոստան, Կոստան, Կոստան:

Անմիջապէս որ ծառան երեւցաւ վարագոյրին առջեւ, ժանն իր բարկութեամբ սեղմուած կռուիներով սկսաւ արագ-արագ անոր ուսերուն զարնել, ոտքերն ալ գետնին: Պահ մը նոյնիսկ կից մըն ալ իջեցուց, մարդուկին լայն ժպիտէն կատաղած:

- Կրիայ, այսօր ալ կրիայ, երէկ ճագար էր, առջի օր ճերմակ մուկ, այսօր ալ կրիայ... դուն խանութս կենդանաբանական պարտէզ կարծեցիր ինչ, խօսէ նայիմ, պատասխան չտամ, ինչ պիտի ընէիր, եթէ մէկ տեղս կոտրէր, հազար անգամ չըսի՞ քեզի որ սիրելի բարեկամներդ տունդ պահես: Մէտսիէօ Փիէռ, միայն դուք չէիք ճանչնար, դուք ալ ճանչցէք, մենք արդէն ամէն օր իր կենսագրութիւնը կը լսենք. - Համբաւաւոր կենդանասէր Մէտսիէօ Կոստան, Փարիզ քաղաքի նախկին հրշէջ գունդի ենթասպաներէն

էն կրակոտը: Ինչ կրակներ է մարած եւ ինչ հրդեհներ վառած սպասուհիներու սրտերուն մէջ: Յիսուն տարեկան ըլլալուն հակառակ դեռ նշանաւոր կնամուլ. անանկ չէ՞, դուն չէիր պատմողը թէ երիտասարդութեանդ դրանդ առջեւ bonicheրը կարգի կը սպասէին, եւ թէ անելի վերջը, գաղթավայրերու մէջ, ենթասպայի կարմիր տաբատովդ խափշիկ կիները կատղեցուցիր ցուերու պէս...

Վերջապէս գացին երկուքը առանձնանալ խանութին խորը, հողմարգելի մը ետեւ: Փիէռին ով ըլլալը, նիստ ու կացը, պահանջելիքը, ապագայի ծրագիրներ, գնուելիք անհրաժեշտ իրեր, աշխատանոցին պակասութիւններն ու առաւելութիւնները, վերջապէս բաներ որոնց վրայ պէտք էր որ խօսէին: Քով քովի canapéին վրայ նստած՝ երկարորէն զիրար դիտեցին: Ժանն իրապէս գեղեցիկ էր, աղուոր էր, բայց շատ աղուոր էր: Քանի՞ տարեկան կրնար ըլլալ. անելի քան երեսուն. չէր ցուցնէր. փայլուն մազեր, համակ ոսկի, անթերի խարտեաշ մը. յայտնի էր, թէ ծոծրակը նոր էր ածիլեր: Ճաշակաւոր հագուստ մը, վարդագոյն ձեռքեր, հաճելի՝ նաեւ այն շարժումը, որով կը ջանար միշտ հագուստովը ծունկերը ծածկել: Փիէռ դեռ չէր համարձակած պէտք եղածին պէս անոր աչքերուն նայիլ. մինչդեռ ժանն ազատ համարձակ երիտասարդը կը դիտէր: Իր քսանհինգ տարիներէն քիչ մը անելի կը ցուցնէր ան, ըլլալով հասակաւոր ու յաղթանդամ: Լայն ուսեր, նոր ու վայելուչ costumeի մը մէջ սեղմուած, խնամով ետեւ սանտրուած մազեր, թաւ յօնքեր ու սեւ, անկեղծ աչքեր. - հայկական գեղեցկութիւն:

Խօսակցութիւնը երկարեցաւ ու մտերիմ շեշտ մը ստացաւ շնորհիւ անստգիւտ կրիային. առեւտրական կեանքի վրայ նետուած նախադասութիւն մը կտրուեցաւ ժպիտով, զոր ծածկելու համար ժանն ի զուր հագուստը ծունկերուն վրայ քաշեց, եւ Փիէռ շարունակեց խորհիլ. - «Առաջին հանդիպումին իսկ գիրկընդխառնում»: Անգամ մը նոյնիսկ աջ ակիւն մէջ նայեցաւ, զայն գոցելու համար դանդաղորէն...



Քիչ վերջ կրկին եկաւ իրենց առջեւ ցցուիլ Կոստանի հասակը. այս անգամ դժգոհութիւն եւ ծամածռում կար դէմքին վրայ, մէկ ձեռքէն կը կախուէր քարայծի մը դեղին մորթը, իսկ միւսին մէջ փետրաւելը միշտ կը դողար:

- Մատամ ժանն, Մատամ ժանն, ան չկայ, դուք զիս խօսքի բռնեցիք եւ հիմա ան չկայ, ան գացեր է, ան քալէր է... mais oui! la tortue, la tortue, ça marche\*!

.....

Ինչ որ պահանջեց Փիէռ՝ գնեցին. զետեղեցին նոր լոյսեր, լուսարձակներ, փոխեցին ցուցափեղկերը, fondերը, պատերուն վրայէն մօրուքներ ածիլուեցան, բարձրացան քղանցքներ եւ *հուպիկանը* հոս ալ իր բոյրովը տիրապետեց: Հիմա այլեւս առաջուան պէս դուրս գործ տալու չպիտի ստիպուէին, քանի որ Փիէռ պիտի կարենար թէ ուրթուշը ընել եւ թէ լուսանկարել: Սուրիայէն նոր եկած չափահաս որբ մը գտաւ, ուշիմ ու ժիր, տպագրութեան ու մութ սենեակի այլ աշխատութիւններու համար: Սկսան գործի:

Մատամ ժանն նոր սէր մըն էր տուած խանութին: Ալ առաջուան պէս շաբաթը երկու անգամ չէ որ կու գար, այլ ամէն առաւօտ տասնին հոն էր, ծաղիկի իր անխուսափելի փունջովը: Գրի մեքենայ մը գնեց, որպէսզի առեւտրական նամակները անով գրէ եւ այդ առթիւ նամականի մըն ալ առաւ: Անհրաժեշտ տեսաւ իր վերարկուն կախելու համար մասնաւոր տեղ մը շինել եւ գնեց ու կոտրեց ծաղկամաններ: Օր մը, մասնաւորապէս մինչեւ Կալըրի Լաֆայէթ գնաց՝ ինք իր ձեռքով ընտրելու համար Կոստանի նոր շապիկը ու վերադարձին ըսաւ. - «Tu comprends, mon vieux\*\*, ա՛յլ ասկէ վերջ ամէն օր պիտի ածիլուիս, ամէն օր»: Իրաւունք ունէր. խանութին յաճախորդները փոխուած էին: Լեսքիւռ չմոռցաւ խոստումը յարգել: Այս մարդը չես գիտէր ինչպէս առիթը ունեցած էր այդքան ծանօթութիւն հաստատելու, այդքան յարաբերութիւն ստեղծելու, այդքան տեղ

\* Անկասկած, կրիայ ասածդ քայլում է:

\*\* Հասկանում ես, ծերուկ:

մտնել ելլելու: Ինք է, որ յաջողուց քանի մը պայմանագրութիւններ թատրոններու հետ, ու Փիէռի համար «մերկ օրեր»ը վերսկսան:

Կիսաշխարհիկ կիներու ամբողջ լեգէոն մը կայ, սնոտի, ունայնամիտ, որ էն նորելուկ լուսանկարիչին կը վազէ ամէն անգամ, որ փոխէ սիրահարը, ներքնաշապիկը, իր կամ իր շնիկին մազայարդարումը, ամէն անգամ որ մոռցուած հօրաքոյր մը մեռնի կամ խիստ գէշ օդ ընէ, ամէն անգամ, որ գաղտնի ժամադրութիւն ունենայ: Ձայնագիրը սկսաւ իր խօլական արշաւին, Ամերիկան հոս ալ իր յիմարութիւնները թափեց, եւ Կոստանը աւելի ու աւելի կարմրեցաւ, կատղեցաւ, մանաւանդ «Ֆայվ օքլօզ»ին\* համար, քանի-քանի անգամներ բորթոյի գաւաթները կոտրեց, եւ աննախընթաց պարագայ՝ փետրաւելը դրուած տեղը մոռցաւ:

Ժանն խիստ գոհ էր: Յուսացածէն աւելի էր եղած. ամբողջ օրը կը վազվզէր, Փիէռ պոռալով. իր հագուստներով զբաղելու իսկ ատեն չունէր շատ անգամ. այդ պատճառաւ է, որ մէկ տարուան մէջ ստիպուեցաւ վեց կարուիի փոխել:

Փիէռ սկսաւ կամաց-կամաց ճանչնալ շուրջիները: Այդպէս է որ տեղեկացաւ խանութին բարեկամներէն, թէ ժանն իրականին մէջ բնաւ մատամ չէր, քանի որ երբեք չէր ամուսնացած: Բայց երկար ատենէ ի վեր Լեսքիւռի հետ ըլլալուն, աւելի պատշաճ կը նկատէր ինքզինքը այդպէս կոչել: Տասնըութ տարեկանին ճանչցած էր զայն եւ հեռատես աղջիկ՝ միշտ կարելին ըրած էր դրամ խնայելու, մինչեւ խանութ մը գնելը: Որով որեւէ իրաւունք չունէր այդ խանութին մէջ Լեսքիւռ: Թէ այս մարդը ո՞վ էր, Փիէռ պետք եղածին պէս չէր կրցած հասկնալ: Գիտէր, թէ նախապէս շրջուն լուսանկարիչ եղած էր եւ հիմա վրան բաց թերթ մը կը հրատարակէր, լեցուն մերկութեան պատկերներով, որուն կ'աշխատակցէին շատ մը ծածկանուններ, գիտէր, թե... սակայն այդ ծանօթութիւնները իրեն գոհացում չէին տուած: Ինք այն հաւատքը ունէր, որ այս մարդը պղտոր

\* Ժամը հինգը (անգլիացիների թէյելու ժամանակը):

գործեր կը տեսնայ եւ թէ... Բայց Փիէռ կը նախնորէր ժաննին հետ պարել ձայնագրի նոր սկաւառակները փորձելու պատրուակով, զայն սեղմել բազուկներուն մէջ, ուժով, ուժով, գլուխը ծռել անոր ծոծրակին, բոյրը ծծելու համար անաղմուկ ու յետոյ երթալ, բռնաբռնով քիչ մը տաքցած նստիլ քով քովի, ծունկ ծունկի: Օրուան պարտաւորութիւններէն ազատած՝ երեկոյի այդ պահերը լաւագոյններն էին, երբոր երկուքն ալ իրարու դէմ կը վերստանային իրենց մտերիմ շեշտը, կը սկսէին խօսիլ, խնդալ, կատակել, կնոջ բերանը կրկին կը ստանար իր այն աղուոր, անկեղծ ժպիտը, իր գեղեցիկ ձուածելը, մէկէն լրջանալով երբոր կ'ըսէր - Tu sais, Pierrot?\*. Քանի անգամներ պատահեցաւ, որ այդպէս սկսուած նախադասութիւն մը թերաւարտ մնաց, երբոր ժանն ակնարկը բարձրացուցած ատեն կը հանդիպէր երիտասարդին բացուած աչքերուն, կը հասկնար, ինքզինքը կը ձգէր վայրկեան մը անոնց մէջ, յետոյ շուտով հեռանալու համար: Այդպէս է, որ...

Եւ ահա այսօր ալ, մէկէն, Փիէռ կը մեկնէր:

### 3

Ջուարթութիւնը շուտով կորսուեցաւ: Խիստ կարճ պահ մը տեսած էր միայն, պատճառ ըլլալով, որ քայլերը ակամայ արագացնէ, երբոր մեկնէր էր ճաշարանէն: Իրաւ ալ նախ պէտք էր խնդալ այդ պզտիկ կատակերգութեան վրայ: Սմսեղուկի մը երեւոյթը չէր ստացած ամենայն պաղարիւնութեամբ յայտարարելով թէ ա՛լ չէր ուզէր գալ աշխատիլ որովհետեւ կը սիրէր զայն: Օ՛, ինչպէս խնդացած էր. կատակ կարծեց, չէ՛. բայց շուտով լրջացաւ. ուզեց կրկին համոզել, անգամ մը եւս ըսել ինչ որ ինք շատ լաւ գիտէր երկար ատենէ ի վեր, յետոյ կարմրեցաւ, բարկացաւ, որքան աղուորցաւ: Հապա ի՛նք. անճրկէր էր, ձախաւեր ու անփորձ ուսանողի մը երեւոյթն էր ստացեր, խօսքերը կտրա-

\* *Գիտէս ինչ, Պիէռո:*

տուէր էին, նախադասութիւնը չէր կրցած պէտք եղածին պէս աւարտել, մէկ խօսքը քանի մը անգամներ կրկներ էր, մինչեւ փրկարար ընդմիջումը հեռաձայնին: Որո՞ւ հոգ. ինք այդպէս էր, բոլորովին անկարող բեմադրութիւն մը պատրաստելու այդ կարգի յայտարարութեան մը համար: Պէ՛տք էր ըսել, եւ ըսաւ. կրցաւ ինքզինքը հասկցնել, հոգ չէ թէ ոչ լաւագոյն ձեւով: Այն խորունկ համոզումը ունէր ինք, թէ բոլորովին աւելորդ բան է կնոջ մը սիրային յայտարարութիւն ընելը:

Չկայ բան, որ կին մը աւելի շուտ հասկնայ, աւելի շուտ զգայ, քան իր սիրուիլը, երբոր զայն ծածկելու հոգը չենք ընէր երբեք: Եւ ժանն մէկ տարուան մէջ շատ լաւ հասկցած էր, թէ ան կը սիրէ զինքը, թէ իրապէ՛ս կը սիրէ, բայց ոչ մէկ օր առիթը տուած էր, որպէսզի աւելի առաջ երթայ, ոչ մէկ օր ուզած էր արարքով մը տալ երիտասարդին պակասող համարձակութիւնը:

Բնաւ չուզեց բարեկամութեան սահմաններէն անդին անցնիլ: Առաջին օրերէն իսկ շուտով մտերմացան իրարու հետ, նկատեցին, որ բազմաթիւ նախասիրութիւններով ու ճաշակներով կը նմանին իրարու, գործին բերմամբ կեանքերնին խառնուեցաւ, ցերեկները շատ անգամ գացին միասին ճաշել ու կատակել, կամ իրիկունները խմբովին թատրոն մը երթալ, զուարճանալ: Փիէռ ի զուր ջանաց կեանքին հանդարտութիւնը չխռովել, մարել կամ գոնէ մեղմել զգացում մը, որ չէր կրնար ցանկալի արդիւնքի մը հասնիլ: Ժանն միշտ հագուստ հագաւ, ժանն միշտ գլխարկ դրաւ, ձայնագրի նոր սկաւառակներ գնեց, ժանն միշտ խօսեցաւ եւ ամենէն աւելի կատղելիք բանը՝ ժանն միշտ ժպտեցաւ: Եւ յետոյ օրըստօրէ սաստկացող այն զգացումը, զոր կրցաւ վերջապէս ճանչնալ, նախանձը: Լեսքիւռ խանութ կու գար յաճախ, ընդհանրապէս իրիկունները, աղուոր մը կը համբուրէր զայն առանց երիտասարդէն քաշուելու, պեղերը կ'ոլորէր, լամբակին ծաղիկը կը շտկէր եւ ամենէն անտանելի բանը՝ ձեռքի կատակներ կ'ընէր ժաննին:

Քայլերը բնագրաբար իջեր էին այդ պզտիկ զառիվարը, որ Քէ տէ Կռան զ'Օկիւթէնէն ստորին քարափները կը տանի, ջուրին մօտ: Նկարիչներուն սիրական այդ վայրը ամայի էր հիմա, ու վերի լոյսերը տարօրինակ պայծառութիւն մը կ'անձրեւէին: Նստաւ հաստ ցիցի մը վրայ, ուրկէ նաւ մըն էր կախուած երկար շղթայով ու դիտեց կամուրջին լոյսերը, գունաւոր գամերու պէս ջուրին մէջ մխրճուած: «Չէ, - խորհեցաւ, - ինչ որ ալ ըլլայ՝ չպիտի վերադառնամ աշխատելու: Այսչափ տարի է հոգիս հանեցի առանց օր մը դադար ընելու. լաւ վաստկեցայ, շատ աղէկ կրնամ քանի մը ամիս հանգիստ ընել. եկածը ամառ է, վերջը ուր որ ալ ըլլայ՝ գործ կը գտնեմ»: Պահ մը վերջ շարունակեց. «Նայինք անոնք ինչ պիտի ընեն. չհաւատաց, հէ՛. կատակ կարծեց, յուսաց, որ միշտ պիտի կարենայ զիս այսպէս խաղացնել. չպիտի կարենամ բաժնուիլ. տեսնենք՝ երկուշաբթի ինչ պիտի ընէ... պիտի գայ արդեօք զիս փնտռելու... անշուշտ. թերեւս տեղի ալ տայ գործին սիրուն. թերեւս յուսացածէս աւելի ըլլայ. ան ատեն... ան ատեն... Օ՛, խենդ եմ»:

Ու արագ-արագ սկսաւ բարձրանալ սանդուխներէն՝ Սէն Միշել ելլելու համար: Նոյն պահուն վերէն աղջիկ մը անկիւնը դարձաւ ու վազելով քանի մը աստիճան իջաւ: Ակնոցաւոր կաղ տղայ մը հասաւ ետեւէն ու գրկեց զայն՝ հարցնելով. «Ինչո՞ւ, ինչո՞ւ, ըսէ՛, ինչո՞ւ»: «Ո՛չ, ո՛չ, - պատասխանեց աղջիկը, - պէտք չէր որ առաջարկէիր, պէտք չէր, որ առաջին գիշերն իսկ առաջարկէիր»: Երկուքն ալ կը խնդային:

Երբոր սենեակ հասաւ, տրամաբանութիւնը կամաց մը տեղի տուաւ զգացումին առջեւ: Վերջին մեկնումն էր այս խանութէն, ալ չպիտի վերադառնար հոն աշխատելու, ալ պէտք չէ վերադառնար այդքան հաստատամիտ յայտարարութիւնէ մը վերջ, ուրեմն նաեւ ալ Նէնէթը չպիտի տեսնէր  
 ալ չպիտի տեսնէր,  
 ալ բնա՛ւ:

Մեծցաւ, մեծցաւ, ծանրացաւ, մտալկումը պաշարեց

զինքը, սիգառէթը նետեց բազմաթիւ անգամներ, ուզեց չխորհիլ, չկրցաւ, ուզեց պառկիլ, չկրցաւ, ուզեց գրել, նորէն չկրցաւ, առաւ վերջապէս գիրք մը, բացաւ զայն, գոցեց. լոյսը մէկէն մարեցաւ, սկսաւ դառնալ մութին մէջ. ինչպէս չկարենալ ատանկ գիշերներու վանել տառապեցնող մտածումը - Նէնէթ - ինչպէս չկարենալ ցածցող առաստաղին տակ - Նէնէթ - ջնջել ժպտող նոյն դիմագիծը - Նէնէթ - ստել ինքզինքին - Նէնէթ, Նէնէթ, Նէնէթ: Դուռը մէկէն բացաւ. պիտի խեղդուէր: Սանդուխներուն վրայ լոյս կար. սենեակներունն է, որ միայն մարեր էր, «Արդեօք դեռ երկա՛ր պիտի տել», - ըսաւ, բան մը ըսած ըլլալու համար, երիտասարդի մը, որ սանդուխին գլուխը կեցած գիրք մը կը կարդար: Ան ոչինչ պատասխանեց. աւելի ջղայնոտեցաւ. բայց չկրցաւ սենեակ վերադառնալ. մութին մէջ շատ շուտով առանձին պիտի ըլլար ինքզինքին եւ իր մտածումին հետ: Եւ երբոր երկրորդ հարցումին ալ պատասխան չստացաւ բարկացած աւելցուց. «Բայց պարոն, կը հասկնա՛ք, թէ ինչ կ'ըսեմ»: Ան պատասխանեց անգլիացիի արտառոց շեշտով մը.

- Փա փարլէ ֆրանսէ:\*
- Եու ար ինգլիշ:\*\*
- Այ էմ Գանատիըն:\*\*\*

Կարմրէր ու ամչցեր էր տղան: Քսան տարեկան ուսանողի մը երեւոյթ ունէր ու Քէմպրիճ տպագրուած բառարան մը կը կարդար: Քանի մը նախադասութենէ վերջ Փիէռ հարցուց դժուարութեամբ, ինքն իսկ ամչնալով իր տկար ու գէշ անգլիերէնէն:

- Գրամեքենայի մը աղմուկը կ'առնեմ միշտ. արդեօք դո՛ւք էք, որ կը գրէք գիշերները մինչեւ շատ ուշ. այո՛. եւ ի՞նչ կը գրէք անդադար. բանաստեղծութի՛ն, բանաստեղծութիւն կը գրէք մեքենայով եւ այդքան արագ եւ ամէն օր...

\* Ֆրանսերէն չեմ խօսում (բարբառային ոճ):

\*\* Անգլիացի ես:

\*\*\* Ես կանադացի եմ:

Հակառակ իր ճիգին, խնդուքը մինչեւ շրթները բարձրացաւ: Այդ երազատես պատանին գրականութեամբ, բայց մանաւանդ բանաստեղծութեամբ տարուած, սկսաւ արագօրէն խօսիլ իրեն այդ սիրելի նիւթին վրայ, առանց ուշադրութիւն ընելու, որ Հայը շատ հեռու էր իր բոլոր ըսածները հասկնալէ: Շարժումներ ըրաւ, մազերը խառնեց, ոգելորուեցաւ, աստուածացուց քանի մը բանաստեղծներ, ուրիշներ մէկ բառով ջախջախեց (Քէմպրիճը ձեռքէն ինկաւ) եւ ուզեց մանաւանդ իր գրածները արտասանել: Փիէռ ուրախացաւ զուարթութիւնը վերագտնելով: Օ՛, մութը, մութը, առանձնութիւնը. երրորդի մը ներկայութիւնն է, որ միայն կրնար այսպէս զինքը փրկել իր մտալկումէն: Հաճոյքով ընդունեց երիտասարդին հրաւերը, երբոր բաց թողուած դռները լուսաւորուեցան: Անոր սենեակը իրենինէն տարբերութիւն չունէր, պատին վրայ միայն գեղեցիկ աղջկան մը խոշոր լուսանկարը կար եւ վրան, թելերը թիթեռնիկի մը պէս բացած, վարդագոյն սութիէն-կորժ մը\*:

Կանատացին առաւ դէզ մը թուղթ եւ, առանց այլեւս դարդար տալու, սկսաւ իր բանաստեղծութիւններուն անվերջ ընթերցումը: Փիէռ թիկնաթռռին մէջ ընկղմած հետեւեցաւ այդ լեզուին, անգլիերէնին, որ այնքան լաւ կը պատշաճի բանաստեղծութեան իր երաժշտութեամբը, եւ զգացումներու կախօրրանին անձնատուր՝ թողուց, որ հոգին օրօրուի երկարօրէն, լայնօրէն օրօրուի այդ ներդաշնակութեամբ, այդ երգով, մինչեւ որ կարենար ըսել ինքզինքին. «Բարձրագոյն բանաստեղծութիւնը ան է, որ չի հասկցուիր: Կը բաւէ, որ երաժշտութիւն ըլլայ, կը բաւէ, որ գոնէ «սէր» բառը ծանօթ ըլլայ ինձի, կը բաւէ, որ սէր ունենամ ես ու սիգառէթիս ծուխերուն մէջէն դէմի պատին աղջիկը հետզհետէ աւելի ու աւելի նմանի Նէնէթիս, եւ ես պիտի ապրիմ գերագոյն, աստուածային բանաստեղծութիւնը: Հաւատա՛ Նէնէթ, սիրական Նէնէթ, հաւատա՛, էշու կտոր Գանատացի»:

\* Կանացի լանջակալ (կրծկալ):

## 4

Բանալին չոր աղմուկ մը հանեց կղպանքին մէջ, եւ դուռը իր ծխնիներուն վրայ զգուշութեամբ դարձաւ: Նախ գլուխ մը ներս անցաւ բացուածքէն, շուրջը դիտեց վարանումով ու երբոր տեսաւ, թէ ոչ ոք կայ, դուռը ամբողջութեամբ հրեց: Վարէն բան մը չէր ըսուած իրեն, բանալին հոս էր, ինչպէս նաեւ Փիէռին գլխարկն ու վերարկուն: Դուրս ելած չէր կրնար ըլլալ ան. մօտաւոր սենեակ մըն էր թերեւս, բարեկամի մը: Նէնէթ կեցաւ պահ մը դռան մէջ ու յետոյ յուսահատ՝ ներս անցաւ ու դուռը գոցեց: Վերջին յարկի սենեակներէն մէկն էր այս օդաւէտ ու լուսաւոր, կանաչ միագոյն գորգ մըն էր պատած զայն, ու ամէն ինչ մաքրութիւն կը բուրէր: Աջ կողմի անկիւնը լայն անկողին մը կար իր տանձով ու զարթուցիչով, դէմը՝ լոգասեղանին յախճապակիէ սպիտակութիւնը, բարակ ու հաստ կոկորդներով, իսկ վրան ապակիի երկար կտոր մը՝ ուր արդուզարդի պիտոյքներ կային քառանկիւն հայելիի մը առջեւ: Ուրիշ անկիւն մը՝ բարձր հանդերձարան մը՝ որուն քով պզտիկ վարագոյր մըն էր՝ քաշուած հագուստ մը ծածկելու համար: Կեդրոնը սեղան մը կը կլորնար ներկուած փայլուն տախտակէ, կրելով խել մը գիրքեր, որոնք երկու փիղերու մէջտեղ սեղմուած էին: Փիղերէն մէկը կը նայէր մոխրամանին, իսկ երկրորդը՝ իր պատիճը պատին էր ցցած: Նէնէթն ալ ակնարկը այն կողմ դարձուց, նայեցաւ պահ մը անշարժ, դժգոհութեան շարժում մը ըրաւ, բայց ժպիտը հայելիները տեսան: Յետոյ դէպի լուսամուտը ուղղուեցաւ: Պատուհան-դուռ մըն էր այս, որ պզտիկ պատշգամի մը վրայ կը բացուէր. արեւը ողողէր էր զայն. գարնան զմայլելի առաւօտ մըն էր. առողջ ու մաքուր առաւօտ մը, որ ճաշի կ'երթար պզտիկ աղմուկներով: Նէնէթ սկսաւ անհամբերել. վերադարձաւ սեղանին առջեւ, գիրք մը առաւ ու նստաւ, ակնարկը ծանօթի մը՝ Փիէռի գլխարկին: Մէկէն նշմարեց, որ ճիշդ առջեւը սեղանին պզտիկ դարակը կի-



սաքաց է. քաշեց զայն եւ, հաստ տետրակ մը ուշադրութիւնը գրաւելով, առաւ:

Այո՛, ապահով էր: Քիչ մը յուզուած, չես գիտէր ինչու սկսաւ դանդաղօրէն դարձնել այդ էջերը. ֆրանսուհիին հետաքրքրութիւնը կրկնապատկուեցաւ. օրագրութիւն մըն էր: Աչքերը յառած այդ խառնափնթոր գիրերուն, կ'ուզեր գտնել, կ'ուզեր անպայման ճանչնալ իսկական Պետրոսը, երիտասարդը, արեւելքցին: Ինչէ՛ր կը պատմէին այդ էջերը, մտերիմ ինչ յոյզեր, մտածում ու տենչանք կը պարունակէին այդ տողերը, որոնցմէ բան մը չէր կրնար հասկնալ: Հայերէն այդ տառերը բեւեռագրեր էին իրեն համար, «սեւ ու ճերմակ»՝ ինչպէս կ'ըսէր ինք: Ու անկարող իրականութիւնը տեսնելու, աւելի ինքն իր մէջ կը ջանար անձանօթը գուշակել: Ֆրանսերէն բառ մը մէկէն իր ակնարկը կեցուց. «մէրսի». կարծես սենեակին մէջ էր Փիէռ, հոն, իր մօտը եւ իրեն ուղղած առաջին բառը կ'ըլլար՝ մէրսի: Շնորհակալութիւն Նէնէթին, որ եկեր էր զինքը տեսնել, որ զինքը չէր մոռցեր, չէր մոռցեր իր պզտիկ Փիէռոն... Յաջորդ էջերուն մէջ ֆրանսերէն բառերը սկսան շատնալ: Ալ մեծ ուշադրութեամբ ամէն տողի մէջ փնտռեց զանոնք ու իր մտածումը անոնց հետ յառաջացաւ: Ատիէօ փուր թութուր\* . Մեսաժերի Մարիթիմ. Մատոննա, Պիրէոն, Պէյրութ, Աղեքսանդրիա, Մարսէյլ: Յետոյ Փարիզի մէջ հասցէ մը ու գործարանի մը անուն: Ֆրանսերէն ասութիւններ արտառոց հայհոյութիւններ, քովը փակագիծով՝ բացատրութիւնը անշուշտ, թատրոններ ու պտոյտի զանազան վայրեր: Ամիսները կ'անցնէին: Դերասանուհի մը եւ լուսանկարչական քանի մը բառ ըսին, թէ Փիէռ ալ Կռան Պուլվարները հասած է: Մէկէն՝ նախադասութիւն մը. «Ահա՛ այսօր. Պետրոս, յիմարութիւններ չ'ուզեր»: Նէնէթ սեղանին վրայ դրաւ տետրակը, երկու արմուկներուն մէջտեղ ու հետաքրքրութեամբ եւ աճող անհամբերութեամբ սկսաւ կարդալ:

«Աղուոր կիրակի մը: Հրաչին հետ երկու աղջիկ բռնե-

\* Մնաք բարեաւ, ընդմիշտ:

ցինք Լիբսէմպուրկի պարտէզը. անորինը պզտիկ ու կլոր. իմինս նուրբ ու հասակաւոր. զմայլելի սրունքներ. խալ մը աջ այտին ու անտանելի հորաքոյր մը՝ Ռիւ Մատամ. շատ կը սիրէ այս ծառուղին, հոգի կուտայ պարի համար. կը վախնայ հիւանդութենէ: Ռիւ Քիւժաս Սուրէնին նախկին պանդոկը գացինք, 7 թիւ սենեակը. կուրծքը ինծի համար յայտնութիւն մը եղաւ. սեւ նշաններուն համար ըսաւ, թէ Մէթրոյին մէջ կամթէր են. քովէն պատը զարկին. յանցանքը աղջկան էր»:

Նէնէթ գլխարկը քաշեց գլխէն, նետեց սեղանին վրայ ու էջը դարձուց:

«Ռէտմիւռէն նստաւ, պտըլիկ, անուշիկ, դոնդոշիկ, նայեցաւ անգամ մը ինծի ու եկաւ ճիշդ առջեւս կենալ. երեկոյեան այս ժամուն միշտ այսպէս բազմութիւն կ'ըլլայ Մէթրոյի մէջ. փակչելու աստիճան սեղմուեր ենք մէկզմէկու. ես ձեռնոցներս հանեցի. ինք ձեռքի տուփը քիչ մը անդին տարաւ. (հայերէն), Շաթըլէ իջաւ՝ փոխելու. միացայ իրեն. առաջարկեցի դուրս ելլել ու տաքսի մը առնել. ընդունեց. կառքին լոյսը մարեցի ու վարագոյրը քաշեցի. Մարսիլիացիի շեշտ մը խօսուածքին, ու «Ռըփրիզ»՝ ծունկերուն. մէկէն շարժումս կեցնելով ըսաւ. «Կ'աղաչեմ, ուշադրութիւն ըրէք, որ ոտքովնիդ տուփս չկոտրէք. հակառակ իմ ալ փափագիս՝ կարծեմ նորէն վնասուեցաւ, «մոն շեռի»ն արտասանեց փայտէ սալարկում ունեցող փողոց մը: Երկրորդ անգամուան մը համար ժամադրութիւն տալ չուզեց. նշանուած է, ես ալ չպնդեցի. քիչ մը շատ լուրջ աղջիկ կերեւէր»:

Քանի մը էջ անդին.

«Մադամ Լանպէռը ուրիշ է. ոչ մէկ կին ինծի այնքան հաճոյք պատճառած է, որքան ան. արդեօք անոր համար, որ արդէն իսկ հասունցած մանչ մը ունի ու զիս «մոն կոս» կը կոչէ. հասակաւոր, մարմնեղ, ազնուականութիւն ու հպարտութիւն կուրծքին, քայլուածքին ու խօսուածքին մէջ. շատ կը սիրեմ իր ոսկորէ սպիտակ ապարանջանն ու

սեղմիրանը. կ'ուզեմ, որ չհանէ. դժբախտաբար կարելի չէ. ճանչցած կիներէս առաջինն է, որ կրօնասէր ու ճշդապահ է: Երբեմն կը խնդամ ինքզինքիս վրայ, այն օրէն ի վեր, որ գիտեմ, թէ իր ամուսինը առաջնակարգ թաւջութակահար մըն է, կնոջ հելքին մէջ, որ ճիշով մը կ'աւարտի, կը կարծեմ թաւջութակի մը դրոշմը լսել. ինչ խենթ եմ, գոնէ երաժշտութենէ հասկնամ»:

Ուրիշ հատուած մը՝ մադամ Լամպէռի վրայ.

«Ամուսինին պատկերը բերէր է, որպէսզի *ակրանտիսըման* մը շինեմ: Շատ շնորհքով ճաղատ մը կը թուի ըլլալ. խելօք մը կեցեր է քառդ փօստալին վրայ: Այդպէս իր կլոր թաւջութակին քովը՝ ճիշդ *clef de sol*<sup>\*</sup> մը երեւոյթը ունի: Ամենայն լրջութեամբ ըսի. - «Սիրով, միայն թէ գլխուն վրայ անպայման եղջիրներ պիտի աւելցնեմ»: Սարսափած պատասխանեց. - «Փիէռ, չընէս, չընէս, խենդութիւն չ'ուզեր»: Յետոյ աւելցուց, քիչ մը ժպիտ՝ ձայնին. - Այդ աշխատութիւնը ինձի ձգէ, ես աւելի լաւը կրնամ ընել... (հայերէն)... ամբողջ հաճոյքս այս է. կ'ուզեմ, որ շատ դանդաղօրէն հանուի. կ'ուզեմ, որ ես զինքը հանուեցնեմ (հայերէն) անակնկալ. այս անգամ իր կէս մէջքէն սկսող սեղմիրանը, ծնկակապերով, սեփ-սեւ մետաքսէ էր. ներքնաշապիկը նմանապէս. տուած պատճառաբանութիւնը ճիշդ չէր անշուշտ. երբեք չէի երեւակայած, որ... (հայերէն): Շատոնց է, որ պատրաստուած է, բայց դեռ չի մեկնիր. քով քովի նստեր ենք անկողինին եզերքը. ինք ըսաւ. - Մենք պէտք չէ, որ բաժնուինք իրարմէ: Գիտեմ, թէ քեզ վերջնականապէս ինձ կապելու համար պէտք եղած երիտասարդութիւնը չունիմ, գիտեմ, թէ շատ գեղեցիկ չեմ, եւ դուն տաքարիւն ես, եւ դուն անառակ ես, բայց մտիկ ըրէ ինձ, Փիէռ, անոնց ետեւէն մի՛ վազեր, երիտասարդ աղջիկներուն հետ մի՛ ըլլար: Անոնք մարմնական հաճոյքէն զատ ու անկէ աւելի զօրաւոր ուրիշ տենչանք մը ունին, զոր կը գոհացնեն ի վնաս տղոց: Իրենց հպարտութիւնն է այդ, քեզի պէս երիտասարդ մը

\* *Sol* բանալի:

նուաճած ըլլալու ինքնագոհութիւնը: Ես վստահ եմ, որ դուն դեռ փարիզուիիները չես ճանչնար. անոնք քեզիպէսներու սէր կը կեղծեն ու յետոյ շուտով կը հեռանան, անմիջապէս, որ նշմարեն, թէ դուն կը տառապիս... քմահաճոյք է, որ կ'անցնի... մենք պէտք չէ բաժնուինք իրարմէ. միայն գորովի պէտք ունիս դուն, եւ գիտես, թէ ես որքան...»

«Պառա՛ւ», պոռաց Նէնէթ կատաղութեամբ ու էջը վանեց: Յաջորդող ամիսները անցան՝ ամբողջութեամբ հայերէն: Կին չկար: Գրուածքները միմիայն ներքին ապրումներ կը թուէին ըլլալ: Առաջուան պէս ալ մէջը նետուած ֆրանսերէն նախադասութիւն մը դիւրաւ չէր կրնար քողազերծել գրողին միտքը: Մէկ անգամ մը միայն հանդիպեցաւ սեռակիցի մը անուան՝ Լիզ, եւ զարմացաւ, որ աւելի չէր յիշուած այդ պզտիկ աղջիկը, զոր ինքը կը ճանչնար: Փիէռի վերջին բարեկամուիին էր ան, տասնետութ տարեկան կարուիի մը, որ իր ականջներուն գնդաձեւ կեղծ մարգարիտներէն ու շագանակագոյն աչքերուն անմեղութենէն զատ ոչ մէկ բացառիկ գեղեցկութիւն ունէր: Լա փըթիթ\* Լիզը սակայն անկեղծօրէն կը թուէր իր սիրտը տուած ըլլալ երիտասարդին, ու կը հանդուրժէր ամէն բանի, պայմանաւ, որ թոյլատրէր իրեն ատենը անգամ մը գալ Փիէռօն վայելելու: Անկեղծութեան դէմ Հայը չէր կրցած շնական կամ բիրտ ըլլալ, որով նաեւ անկարող՝ այս ալ նախորդներուն պէս դիւրութեամբ լքելու: Այն յիշատակելի շաբաթ իրիկունն էր, որ միայն այնքան կոպիտ վերաբերմունք մը ունեցաւ աղջկան հանդէպ, դէմքին մեծ խաւաքարտ մը նետելով, երբոր ան դուրսէն մատովը կը թմբկահարէր, քիթը ապակիին փակցուցած: Եւ ըսել, թէ դրան առջեւ այնքան սպասէր էր ան...

Երկար պահ մը Նէնէթին երկու մատներէն առկախ մնաց այս էջը, որուն վրայ սակայն միայն երկու բառ կրցած էր կարդալ. Փըթիթ Լիզ:

Եւ ահա վերջապէս մէտսիէօ Լեսքիւռ, Կոստան, մատամ ժանն: Ո՛չ, Նէնէթին յոյսը ի դերեւ ելաւ. բան մը չկար իր

\* Փոքրիկ:

մասին. ոչինչ, ոչինչ: Օրագրութիւնը կեցած էր: Նայեցաւ թուականներուն, անոնք Փարիզ գալէն ի վեր ֆրանսերէն էին եղած, եւ տեսաւ, թէ քանի մը ամսուան ընդմիջումէ մը վերջ է, որ միայն կը վերսկսէր թուղթեր անդին. այս անգամ երկար էջերով: Այն կարճ, լակոնական հատուածները չկային ալ, բայց Նէնէթ ոչինչ կը հասկնար ասոնցմէ: Վերջապէս հատ մը գտաւ.

«Հրաչին շինած անթելը երբեմն կը բանի: Սաղաւարտը գլխիս՝ գիշերուան առանձնութեան պահերս կ'անցընեմ անշարժ, սեղանիս առջեւ: Երկար ժամեր կ'երազեմ, կը մտածեմ Նէնէթին, մերիններուն, գործիս, լճակի մը կամ յեղափոխութեան վրայ: Մօտաւոր սենեակէ մը եկող գրամեքենային աղմուկը երեւակայած գնդակահարումի մէկ տեսիլքս կ'ամբողջացնէ: Մէկէն անթելը կը խանգարուի, յեղափոխութիւնը, ինչպէս միշտ, կրկին կը ձախողի. ամէն բան կ'անհետի, ամէն բան: Միայն Նէնէթը կը մնայ. ինչո՞ւ միայն ան. կը մօտենայ, աւելի, աւելի, աղուոր մը կը ժպտի, բայց բան մը չ'ըսէր, բառ մը չ'արտասանէր: Ինչպէ՞ս կ'ուզես, որ խօսի, երբոր ես չեմ գիտէր, թէ ինք ինծի հանդէպ ի՞նչ կը զգայ»:

Էջեր անդին.

«Ուզեցի գիտնալ, թէ արդեօք պիտի նախանձի: Դիպուածը օգնեց: Ժամերով վերի գործողութեան սրահը մնացինք ճիքիսը եւ ես: Այս դերասանուհին անբաղդատելի մարմին մը ունի. գլուխգործոց մը: Քիչ մը գինով ըլլալուն հաշիշամուլ է- անդադար կատակեց, խնդաց ու պարեց, ես ալ հետը: Նէնէթը վեր իսկ չելաւ նայելու, թէ ինչ կ'ընենք. ձայնը անգամ չառի: Վար իջայ: Մեկնէր էր: Արդե՞օք... Եւ յաջորդ առաւօտը, այսօր, հաճոյքի կատարեալ տօն մը եղաւ ինծի համար: Երկար ատեն է, որ խոստացած էի Կոստանին զինքը լուսանկարել, եւ այս առաւօտ խանութ մտնելուս՝ զարմանքով տեսայ, թէ փետրաւելը եւ քարայծի մորթը ձեռքը չեն:

«Մաքրուեր, ածիլուեր ու սրբուեր է, փողկապին վրայի

ադամանդն ու իր նոր հագուստը զինքը կիրակի են շինել: Պատուանշանը կախեց եւ ցիցի մը պէս անշարժ կեցաւ գործիքիս դիմաց: Խնդուքս հազիւ թէ կրնայի զսպել. եթէ գիտնաս, թէ որքան զուարթախօս, կատակաբան ու անուշ մարդ է: Բայց կեցի՛ր, է՛ն կարելորդ կայ. այս նախկին զինուորը, երկար ատեն գաղթավայրերու մէջ ապրած ըլլալուն, անդիմադրելի սէրը ունի կենդանիներու: Այս անգամ ալ հետը բերէր է իր պաշտելի Brigadier-ն: Այդ տասնապետը լուսաճաճանչ գոյներով զմայլելի թութակ մըն է: Եւ ճիշդ այն պահուն, որ տանձը ձեռքիս մէջ պիտի ճզմուէր, քլա՛ք... դուռն է: Սաստիկ վախ մը կեղծեցի, իբրեւ թէ Նէնէթէն խիստ գաղտնի կ'ուզէի պահել ըրածս, գործիքը անմիջապէս ծածկեցի եւ մէկդի հրեցի նախկին ենթասպան: Ան այլայլած ու շփոթած էր. հիմա վեր պիտի գար տիրուհին եւ Կոստանին հետ նորէն կենդանի մը պիտի տեսներ... նորէն կենդանի մը... ծառան հազիւ ատեն ունեցաւ ինքզինքը քովի մութ սենեակը նետելու, եւ թութակը այդ իրարանցումին մէջ՝ թռաւ: Ա՛... ահա երէկուան ըրածիս արդիւնքը... տեսնես ինտո՛ր աղուորցեր է. զմայլելի, զմայլելի ճանիկ մըն է եղեր. երբեք զինքը այսքան գեղեցիկ չէի գտած. մէկէն ինչ եղայ, չեմ գիտէր, բայց ուզեցի, ախ, այնքան ուզեցի, որ (հայերէն)»։ Նէնէթ կռուփը սեղանին զարկաւ գոչելով. - բայց չշարունակէս: «Դէմս եկաւ պչրանքով, նազանքով, ոտքին մատներուն վրայ պզտիկ շրջան մը ըրաւ, ժպիտը միշտ ինծի- որպէսզի լաւ տեսնեմ, ու յետոյ հարցուց. «Վայլեր է»։ Կօշիկէն մինչեւ գլխարկը նորոգուեր էր, այս քանիերորդ անգամը ըլլալով, եւ իր արդուզարդին բոլոր երանգները կատարեալ ներդաշնակութեամբ մը կը պատշաճէին իրարու: Գոյնին անունը չեմ գիտէր, որ ըսեմ, ամէն պարագայի, քեզի՛ ինչ. գիտցիր, որ զմայլելի էր այնքան: Եւ երբոր հիացած ուզեցի ամբողջութեամբ բանալ վերարկուն, չթողուց. բայց... բայց... նոյն պահուն ձայն մը պոռաց «Ouvre, Nestorr, ouvre»\*։ Հը՛, ինչպէս... Նէնէթ ան-

\* Նեստոր, բաց արաւ:

միջապէս յօնքերը պռստեց, ականարկը ամէն կողմ դարձրնելով: Ես գուշակած էի. ամբողջ ուժովս պլլուեցայ անոր եւ սկսայ բարձրաձայն, բարձրաձայն խնդալ, մինչ վերը վարագոյրներու թելերուն վրայ թառած թութակը կը պոռար. «Rrrigole, Brrigadier, Rrrigole Brrigadier...»\*: Պատուանշանը դուրս նետուեցաւ իր թաքստոցէն: Նէնէթը կատղած էր. առաւ այն երկար եղէգը, որով վարագոյրները կը յարդարենք ու սկսաւ կենդանին հալածել. ան մէկ թելէն միւսը ցատկելով կը շարունակէր ճչալ «Rrrigole, Brrigadier, Rrrigole... !»:

- Mauvais sujet\*\*, - ըսաւ Նէնէթ դէմքը հաւաքած ու անցաւ:

«Տիրուհիին ինքնաշարժը կառատուն տարած աստեն Կոստանը շուն մըն է կոխոտեր. եւ ինչ շուն, աստուած իմ, կենդանապաշտպան միութեան պատկանող շուն մը: Ատոր համար երկու օր է, որ խենդի պէս է. վառարանը այնքան է լեցուցեր որ կարելի չէ շնչել. սաստիկ յոգնած եմ. սպանացի պարուհին այդ ինչ ծանր անուշահոտութիւն մը ձգեց. ապակէ որմին վրայ անձրեւին թաքստութիւնը կը նմանի Չէխօսլովաքի մը կարդացած գրաբարին: Երբոր Նէնէթ վեր եկաւ, աշխատութիւնս աւարտեցի: Ձեռքը ծրար մը կար եւ կը ժպտէր. յայտնի է, թէ բան մը ունի ըսելիք, բան մըն է պատրաստած. ինչո՞ւ այդպէս կը նայի: Ծրարը բացաւ... սկաւառակ մը հանեց. չառաջարկեց, սակայն, որ պարենք. գիտէր թէ՛ կրկին պիտի մերժէի: Վերջէն է որ իմացայ, թէ Սուրէնն է բերեր այդ սկաւառակը, կէսօրին, որպէսզի ինձ անակնկալ մը ընեն: Ձայնագիրը ճամբայ հանելուն պէս ոստումով մը քովս եկաւ բազմոցին վրայ, ձեռքերը՝ ուսերուս, աչքերը՝ իմիններուս մէջ, լայն ու գինովցնող ժպիտով մը: Աստուած իմ, ինչ կրնար ըլլալ, ինչ կուզէր աչքերէս. բան մը չէի հասկնար: Եւ ահա, որ յանկարծ... ահագնադողորդ ձայն մը, որ կը պոռայ. «Եանկընվար... Իսկիւտար

\* Չուարճացիր, տասնապետ, զուարճացիր:

\*\* Վատ թեմա:

տա, Պիլպիլ տերտտե...»\*: Հէ՛, ինչպէ՛ս... էյ միայն այս էր պակաս: Զուարթութիւնս պոռթկաց, պոռթկաց, նամանաւանդ Նէնէթին սոսկումին ի տես: Ան կը յուսար, անշուշտ, արեւելեան մեղեդի մը լսել եւ ոչ թէ այսպէս ոռնոց մը: Օ՛հ, կ'արժէր իր արտայայտութիւնը վայելել, վախեցած փիսիկի մը երեւոյթն ունէր եւ ես առաջին անգամ ըլլալով քիթս մխրճեցի իր վզին մէջ, աչքերս ուժով մը գոցեցի, որպէսզի չտեսնեմ հեռաւոր կամուրջին լոյսերը, ջրհանկիրներուն անցքը, բոցերուն պարը, որպէսզի... բայց Նէնէթ զիս վանեց... ահա՛ այդպէս է, որ հաշտուեցանք: Հիմա ալ անդադար կը պոռայ երեսիս. «Եանկին վամա, տա տա տա, տէ, տէ, տէ...»:

«Նորէն Լեսքիւռը եկաւ: Սաստիկ կատղեցայ: Առանց «գիշեր բարի» ըսելու ելայ դուրս: Չէի կրնար ինքզինքս զսպել. անպայման, անպայման կին մը կ'ուզէի, կարծես Նէնէթի դէմ անհաւատարմութիւն մը գործելու համար, կարծես վրէժս լուծելու համար: Չկրցի ժամանցի տուն մը երթալ ու խենդի պէս ինկայ սենեակ: Աղջիկ մը դէմի դուռը կը զարնէր առանց պատասխան ստանալու: Առաջարկեցի, որ իմ սենեակս գայ եւ սպասէ: Հրաւերս ընդունեց: Բաւական գեղեցիկ, վայելուչ եւ «հաւ»: Գանատացիի մը ընկերուհին է եղեր. կ'ըսէ, թէ բանաստեղծ է ան, բայց բերնին հոտը քիչ մը կը վնասէ այդ պարոնին բանաստեղծութեան: Իր մեծագոյն փափագն է ամուսնանալ ու բոյն կազմել, քանի որ, կ'ըսէ, լուրջ աղջիկ է ինք: Ատոր համար թողուց, որ ուզածս ընեմ: Միայն թէ վերջին պահուն դիմադրեց. չուզեց տեղի տալ: Ըսի թէ՛ կը նողկամ ամուսնութիւնէն ու բանաստեղծութիւնէն: Ճամբեցի: Նէնէթը յաղթանակած էր իր արձակով»:

Եւ ահա, երկար մթութիւններէ յետոյ, վերջին էջը օրագրութեան.

«Ալ որոշումս վճռական է: Եթէ երբեք դեռ վարանումներ ունէի, զանոնք բոլորը երէկ գիշերուան սինէման վա-

\* Հրդեհ է Իսկիւրարում, Պիլպիլ դերեում:



նեց: Առաջին առթիւ իսկ պիտի մեկնիմ առանց այլեւայլի, անվերադարձ կերպով: Հիմա այլեւս բացարձակապէս ապահով եմ, թէ այդ աղջիկը քիթիս կը խնդայ: Գիտէ թէ իրեն հանդէպ զօրաւոր համակրութիւն մը ունիմ, եւ պարզապէս կը շահագործէ այդ զգացումս, երբոր ես ամբողջ նուիրում կ'ըլլամ...»:

Նէնէթ կեցաւ յանկարծ: Նախազգացում էր թէ չէ, իրապէս ճանչցաւ ոտնաձայնը...

Այո՛, կը մօտենար ան: Հազիւ ատեն ունեցաւ տետրակը գոցելով՝ դարակին մէջ նետելու, բայց չհամարձակեցաւ հրել զայն, վախնալով, որ կը ճռնչէ, եւ փախաւ: Ճիշդ ատենն էր: Դուռը բացուեցաւ. կից մը գոցեց զայն: Փիէռ մահճակալին վրայ նետեց ձեռքի ծրարը ու, կզակը օդին՝ երկարօրէն արտաշնչեց. սանդուխներէն շատ արագ բարձրացեր էր, կը հեւար: Անձեռոց մը քաշելով գլուխը կրկին չորցուց ու հայելիին դիմաց սանտրուեցաւ: Սկսաւ քիթին տակէն երգել. «Ես սիրել եմ մի զոյգ աչեր, նման փայլուն աստղերին»: Հանդերձարանին տակի դարակը քաշեց ու տեսաւ, որ «Նրանք խորն են որպէս եթեր, նման յուզուող ջրերին...»: Ճերմակեղէններ առնելով, դարձաւ «ջրերին»- ու ժաքէթը նետեց: Հայելիին մէջ ինքնագոհ ժպիտով մը ինքզինքին վրայ հիացաւ, մինչ մերկ իրանին շուրջ դեռ քիչ մը շոգի կը դառնար, եւ կուրծքի պզտիկ մազերուն մէջ քրտինքի կաթիլներ կը փայլէին: Քիչ մը առաջուան վարը առած լոգանքը դնդերներուն կարծես աւելի ուժ էր տուեր: «Նրանք խորն են որպէս եթեր, նման յուզուող ջրեր...»: «Flûte, flûte»\* պոռաց յանկարծ, բանաստեղծութիւնը արձակի վերածելով: Պատահածը սարսափելի բան մըն էր. աղէտ մը պարզապէս: Թռիքոյին վրայ կոճակ չէր մնացած: Օ՛, այս կոճակի խնդիրը. մղձաւանջը մենաւոր տղոց: Օ՛, դաւաճանութիւնը կոճակներուն, որոնք ամէն շաբաթ երեկոյ կը մեկնին անվերադարձ. ինչպէ՛ս կարել զանոնք. հոգի

\* Սրի՛նգ, սրի՛նգ (համարժէք է Աստուած իմ, Աստուած իմ բացականչութեանը):

քակել, կոճակ կարել: Ճերմակ դերձան գտաւ, բայց ասեղ չկար. ո՛ր կորեր էր խայտառակը, ո՛ր դրած կրնար ըլլալ: Փիէռ փնտրեց զայն նախ մոխրամանին մէջ, յետոյ հագուստներուն վրայ, բառարանին այն էջը, ուր *aiguille*\* գրուած է: Չկար, չկար: Թռիքոն ձեռքը՝ սենեակին շրջանը կ'ընէր, մէկէն պատին վրայի լուսանկարներուն առջեւ կենալով ըսաւ. «Նէնէթ, Նէնէթ, դո՛ւն ըսէ, ո՛ր է ասեղս» եւ յանկարծ յիշեց. դրան վրայ խոթած էր զայն, է՛ն վերը: Ծայրը ժանգոտած էր, բայց խնդիր չէ. սկսաւ կարել մահճակալին եզերքը նստած: «Նրանք խորն են, որպէս եթեր...»: Շնչեց, նորէն շնչեց, ասեղը անշարժացաւ օդին մէջ, ու Փիէռ, բերանը կղպած, ամբողջ ուժովը ներս քաշեց օդը: Աչքերը խոշոր-խոշոր բացաւ: Ուրկէ՞ կու գար այս բոյրը. Նէնէթեն էր, Նէնէթին բոյրն էր, շատ աղէկ կը ճանչնար զայն: Այլեւ ասեղ չէր փնտրածը. ատոր համար աչքերը այդպիսի փայլ մը ստացան ու սկսան արագ-արագ դառնալ: Ինք քարացեր էր, սակայն, վախնալով, որ զինքը շրջապատող անուշահոտութիւնը կը թռցնէ: Եւ ահա ակնարկը գամուեցաւ, ժպիտը մեծցաւ դէմքին վրայ, ու ծունկերն ի վար սահող թռիքոն հետը տարաւ ասեղ ու դերձան: Հանդերձարանին քովի վարագոյրին տակ կ'երեւէին զոյգ մը տոտիկներ եւ սրունքներ: Այդ սրունքները ալ միայն Նէնէթ կը կոչուէին: Ձեռքերը բարձրացուցած մօտեցաւ անշշուկ. ի՛նչ ընել, ի՛նչ ըսել, ինչպէս սկսիլ... ու երկու ձեռքերովը նետուեցաւ վարագոյրին վրայի այն կէտերուն, ուր կ'ենթադրէր ուսերուն վրայ պարապին հանդիպիլ: Եւ պաստառը կաղապարուեցաւ այդ սիրական դէմքի վրայ. ահա քիթիկը, ահա այտերը, ահա թուշը... կը խնդար... Փիէռ իր հոգիէն պոռաց.

- Նէննէթ, Նէննէթ շեռի...\*\*

- Ի՛նչ, ի՛նչ, սա՛ նայեցէք, սա պարոնին նայեցէք, ինձի այդպէս մերկ կ'ընդունիս: Շուտ, հագուէ տեսնեմ:

\* *Ասեղանոց:*

\*\* *Նէնէթ, Նէնէթ սիրելի:*

Երկուքն ալ կը խնդային: Փիէռ վերջապէս գտաւ ժաքէ-  
թը ու հագաւ, մինչ Նէնէթ կը շարունակէր գետնի թրիքոն  
ցոյց տալով.

- Ա՛ս ալ վերցուր անմիջապէս, վերջը նորէն ժամերով  
պիտի փնտռես ու Նէնէթ պոռաս: Ըսէ տեսնեմ, եթէ ես հոս  
չըլլայի, ասեղդ ինչպէս պիտի գտնայիր...

- Բայց հիմա որ գտայ, ա՛լ չպիտի կորսնցնեմ, ալ կարե-  
լի չէ, որ կորսնցնեմ, հիմա որ Նէնէթս գտայ...

- Նէնէթդ գտա՛ր, Նենե՛թդ... Ախ, ինչ համարձակու-  
թիւն... նախ որ խնդիրը Նէնէթին վրայ չէ. ես ասեղ չեմ եւ  
յետոյ Նէնէթ գոյութիւն չունի: Եթէ այդպիսի մէկը կայ, ան  
մատամ ժանն կը կոչուի եւ բնա՛ւ Նէնէթ:

- Բայց միայն ինձի համար...

- Լռէ՛, փորձանք տղայ...

Փորձանք տղան լռեց: Ուրկէ այսքան պայծառութիւն  
սենեակին. Նէնէթին բաց գոյն *tailleur*<sup>ն\*</sup> էր պատճառը,  
թէ չէ տեղ մը սաւաններ էին փռուած: Երիտասարդը պահ  
մը վերջ շարունակեց, աղջկան տատամսումէն օգտուելով,  
քմծիծաղ մը շրթներուն, սրած ակնարկը չարաճճիութեամբ  
լի.

- Գալով բուն խնդրին, իմ ասեղս բնաւ չեմ կորսնցնէր  
ես: (Ի՛նչ ստախօս): Երբեմն այսպէս կ'անհետի ան, օրերով  
զինքը չեմ տեսնէր ու կը խորհիմ, որ ալ կորսուած է ինձ  
համար: Եւ ահա յանկարծ պահու մը, երբ է՛ն քիչը կը սպա-  
սէի իրեն, (ի՛նչ ստախօս) մէկէն դէմս կ'ելլէ դրան մը ետեւ  
կամ վարագոյրի մը ետեւ կամ վարագոյրի մը վրայ... իրաւ  
է, որ սակայն այդ հանդիպումը երբեմն մէկ տեղս կ'արիւ-  
նէ...

- Էյ բաւական է, լռէ ըսի. ես հոս չեկայ քու *boniment*ներդ\*\*  
լսելու ու հետդ կատակելու: Հէ՛, չես հարցնէր անգամ, թէ ին-  
չո՛ւ այս պահուս դէմդ եմ. այնպէս չէ՛, ա՛ գիտես յանցանքդ.  
Չո՛ւտ, ըսէ տեսնեմ, ինչո՛ւ իմ երկու նամակներուս չպատաս-

\* *Կանացի շրջագգեսպ:*

\*\* *Շողոքորթութիւններ:*

խանեցիր, ինչո՞ւ չհաճեցար գոնե երկտող մը գրել ինձ, գոնե բառ մը ըսել... ըսել է քաղաքավարութիւնդ ալ մոռցար. ինձի հանդէպ ունեցած յարգանքդ ալ մէկդի նետեցիր... ալ Նէնէթ չկայ, այլ Նէնէթ չկայ...

Փիէռ շատ կ'ախորժէր անոր այդ արտայայտութենէն. երբոր այսպէս կը կարմրի, յօնքերը կը պռստէ, բառերը արագօրէն ու բարձրաձայն կը յաջորդեն իրարու, կարծես ստեղծելու համար քիչ մը տիրականութիւն եւ իսկական բարկութիւն, երբոր գլխի ու ձեռքերու պզտիկ շարժումներ կ'ընէ... Սակայն երիտասարդը պատասխանեց լրջութեամբ ու պարզ.

- Չպատասխանեցի. որովհետեւ ըսելիք մը չունէի. ինչ որ պէտք էր՝ ըսի շաբաթ երեկոյ: Ալ կարելի չէ, որ խանութ վերադառնամ աշխատելու. ես յամառ եմ: Գիտեմ, թէ այն գիշեր պէտք եղած բացատրութիւնը չունեցանք, բայց երկար բառերու պէտք չկար բնաւ. վստահ եմ, որ հասկնալի դարձայ: Աւելորդ է անգամ մը եւս անդրադառնալ...

- Ես ատանկ բան չեմ գիտեր. վաղն իսկ, կ'իմանամ, վաղն առաւօտ իսկ գործիդ գլուխը պիտի ըլլաս: Երբոր գամ, պէտք է, որ... ինչ, ինչ, մեզի այսպէս լքել ճիշդ գործի եղանակին, առանց նոյնիսկ առաջուրնէ իմաց տալու, առանց գոնէ...

- Եւ խորհեցայ, որ եթէ Փարիզ մնամ, չպիտի կարենամ երթալ Նէնէթս տեսնելու փափաքիս դիմադրել... որով պատրաստութիւններս տեսած եմ եւ երկու օրէն պիտի մեկնիմ Տինառ: Հոն պիտի անցընեմ արձակուրդի ամիսս ու վերջնականապէս հաստատուիմ...

- Պիտի մեկնի՞ս, երկու օրէն պիտի մեկնի՞ս...

Լռեցին: Փիէռ ականարկը գամեց նախ մահճակալի երկաթէ ձողին, յետոյ դրան վրայ ասեղին ձգած ծակին, աւելի ծակին, քան թէ ձողին: Ժանն գլուխը խոնարհեցուց: Անոր ականարկը քանի մը շրջան ըրաւ մոխրամանին շուրջ եւ յետոյ բարձրացաւ պատիճին վրայ: Բայց որովհետեւ այս վերջինը պատին էր ցցուած, ինք ալ գլուխը այն կողմ

դարձուց ու, վերագտնելով իր ինքնավստահությունը, վերադարձաւ քիչ մը առաջուան կիսատ մնացած յարձակողականին, նոյն բարկաճայթ շեշտով.

- Հապա ասո՞նք, հապա ասո՞նք, ո՞վ քեզի իրաւունք տուաւ, որ զիս այսպէս ուզած տեղդ ցուցադրես, ինչ իրաւասութեամբ, ըսէ տեսնեմ, bébé rose, enfant terrible\*! եւ քանի՞ հատ, մէկ Նէնէթ, երկու Նէնէթ, երեք Նէնէթ...

Պատին վրայ քով քովի շարուած էին երիտասարդ կնոջ դիմանկարները, բոլորն ալ Հայուն կողմէ լուսանկարուած, ժպիտով, անժպիտ, ամէնքն ալ լուսաճաճանչ: Փիէռ իր խորհուրդը փոխանակեց զուարթութեամբ եւ, քանի մը քայլ մօտենալով ըսաւ՝ ձեռքը պատին երկարած, առանց հոգ ընելու, որ բացուող ժաքէթին տակ մերկ կուրծքը կը լայննար.

- Այս Նէնէթը առի, որովհետեւ կը սիրէի. այն Նէնէթը առի, որովհետեւ կը սիրէի, այն Նէնէթը առի...

- Լռէ, ես ատունք շատ աղէկ գիտեմ...

Ու այս խօսքը արտասանած պահուն ակամայ ձեռքի շարժումով մը սեղանին կիսաբաց դարակը ցուցուց: Փիէռ հոն նայեցաւ, ժպիտը ինկաւ, աչքերը բացուեցան: Արտայայտութիւնը այս անգամ անկեղծ էր: Նէնէթ անմիջապէս անդրադարձաւ սխալին՝ բայց ուշ. չհամարձակեցաւ բառ մը աւելցնել ու անշարժ կեցաւ: Թողուց, որ ան երթայ սենեակին միւս անկիւնը, պատուհանին առջեւ եւ սիկառէթ մը վառէ: Քիչ մը վերջ պզտիկ քայլերով մօտեցաւ իրեն, մեղմութեամբ սիկառէթը շրթներէն առաւ, նետեց ու թելէն քաշելով՝ մահճակալին վրայ տարաւ.

- La!\*\* Խելօքիկ մը քովս նստէ եւ լրջօրէն խօսինք, ալ հիմա շատ լրջօրէն պիտի խօսինք... Այո, իրաւունք ունիս, ես գիտեմ, ես շատ լաւ հասկցած եմ, թէ ինձի հանդէպ ինչ զգացում կը տածես... բայց դուն չե՞ս գիտէր, որ Լեսքիւռը կայ...

\* Վարդագոյն մանկիկ, սարսափելի երեխայ:

\*\* Այդպէս:

Արագօրէն ձեռքովը ծածկեց աղջկան բերանը, դիմախաղով մը, որ կը նշանակէր. «Մի՛ ըսէր, կ'աղաչեմ, ես գիտեմ արդէն»:

Անշուշտ թէ այս պահուս Պուլրնէի լիճին վրայ կարապները կրկին ապօսներ կը շինեն, անշուշտ թէ տեղ մը յստակ ու վճիտ գետ մը կայ, որուն վրայէն հանդարտօրէն ու անտարբեր խցաններ կ'իջնեն, բայց անշուշտ թէ այդ թռչունը զմայլելի անկիւնադարձներ կ'ընէ ծառուղիներու վերջաւորութեան...

- Նոյնիսկ եթէ երբեք ես ալ համակրութիւն մը ունենամ քեզի հանդէպ, ինչպէ՞ս կ'ուզես, որ...

Արագօրէն ձեռքովը ծածկեց աղջկան բերանը, դիմախաղով մը, որ կը նշանակէր. «Մի՛ ըսէր, կ'աղաչեմ, ես գիտեմ արդէն»:

Փիղերէն մէկը կը նայէր մոխրամանին, լքուած սիկանէթի կապտորակ ծուխին, մինչ երկու ստուերներ պատերու տակէ գաղտագողի բան մը կը հետապնդէին... Նուագածունները եկան, երգեցին ու գացին, մինչ երկու գաղտնի ոստիկաններ պատերու տակէն արեւի ճառագայթ մը կը հետապնդէին... Դուրսը շատցող աղմուկները կ'ըսէին, թէ առաւօտը ճաշի էր գացած, բայց անշուշտ թէ, անշուշտ թէ տեղ մը մեծ սաւաններ էին փռուած...

- Կարելի՞ բան է որ կարենանք, միայն սէրով, դուն ես...

Արագօրէն ձեռքովը ծածկեց աղջկան բերանը դիմախաղով մը, որ կը նշանակէր...

- O la barbe!\*, - պոռաց Նէնէթ ոտքի նետուելով, - պիտի չձգեմ, որ բան մը ըսեմ: Յետոյ եկաւ կրկին նստաւ տղուն քովը ու լռեց:

Մօտաւոր բակէ մը ջութակ մը բարձրացաւ. հին, շատ հին մեղեդի մը բոլորին ծանօթ, որ մինչեւ հոս կ'ելլէր անհաւասար ալիքներով, տատանելով, յամենալով յարկերուն

\* Բացականչութիւն՝ բարկութիւն արտայայտող:

մէջտեղ, մեղեդի մը, որ կ'ուզէր աւելի երկրորդ յարկինը յուզել, քան չորրորդինը, որ ալ պարտասաճ երբեմն կը կառչէր ջուրի խողովակներուն, բայց որ կ'ելլէր, բայց որ կ'ելլէր մինչեւ հոս, այդ հին, շատ հին մեղեդին, բոլորին ծանօթ.

- Tu Sais, Pierrot\*, դուն այսպէս պիտի մսիս...

Եւ երբոր պատասխան չստացաւ, տարաւ իր ձեռքը ժաքէթին տակ, տղուն մերկ կուրծքին վրայ: Փիէռ անմիջապէս անշարժացուց զայն իր դաստակէն ու այդպէս պահեց այնքան, որքան որ ուզեց: Յետոյ հարցուց իր կարգին. «Հապայ դո՛ւն»: Նէնէթ խուսափումի շարժում մը ըրաւ, բայց անշարժացուց տղուն ձեռքը իր դաստակէն եւ այդպէս պահեց զայն այնքան, որքան որ կրցաւ: Մանեակին հատիկները սկսան դողալ երիտասարդին յուզուած մատներուն վրայ, որոնք աջ կուրծքին սպիտակ մետաքսը կը ճզմէին: Միւս ձեռքովը գրկած՝ զայն իրեն քաշեց, սեղմուեցաւ, աւելի, աւելի, շնչառութիւնը կարճցաւ, ու շրթունքները դողացին: Նէնէթ քանի մը անգամ աջ ու ձախ դարձուց գլուխը բերանը փախցնելու համար եւ յետոյ մէկէն յանձնուեցաւ այն անվերջանալի համբոյրին: Եւ երբ զգաց, թէ տղուն կուրծքն ի վեր հեկեկանքով մըն է, որ տենչանքը կը բարձրանայ, աչքերը գոցեց ու ամբողջ ուժովը ծծեց զայն քիչ մը լորձունք միասին:

## 5

Փիէռ իր միսին վրայ զգաց կայտռումը ժպիտներու: Իրեն սեղմուող այդ փորին մէջ պզտիկ գնդակներու պէս, եռացող ջուրի մը խոշոր կայլակներուն նման խնդուքներ կը ցատկոռտէին առանց դուրս ելլել ուզելու:

Աչքերը ժպիտով բացաւ: Կաս-կարմիր էր եղեր Նէնէթ, ու անոր ալ քունքերուն վրայ քրտինքի կաթիլներ կային. չէր ուզէր աչքերը բանալ եւ միայն կը ժպտէր: «Ըսէ՛, Նէնէթ, ինչո՛ւ, ինչո՛ւ...» Ան ուժով մը համբուրեց երիտասարդը

\* *Գիտէս, Պիէռ:*

առաջին հանդիպած տեղէն ու ըսաւ... «Rrrigole Brrigadier, Rrrigole Brrigadier»: Երբոր դադրեցան այդքան բարձրաձայն խնդալէ, երբոր խայտանքը մեղմացաւ, Նէնէթ աւելցուց աչքերը խոշոր խոշոր բացած, անօրինակելի չարածճիւղութեամբ մը. «Եանկին վաճ...»: Շատ իրաւացի էր. սաստիկ տաքցած էին:

Ծիծեր, երկու ծիծեր ատրճանակներու պէս օդին:

- Անշուշտ, թէ դուն տակաւին պէպէք ես... չէ՛, մի՛ ընէր, Փիէռօ, ես շատ շուտ կը խտղտիմ, հաւատա... հաւա... ա... Ուրախ եմ, սակայն, որ օրագրութիւնդ կարդացի. ան ալ իր դերը ունեցաւ: Լաւ է, որ դուն ալ քիչ մը ապրեր ես: Ես ալ ապրած եմ: Բնաւ պիտի չուզէի մայրիկի մը քով մեծցած տղու մը հետ գործ ունենալ: Այսպէս աւելի դիւրութեամբ պիտի կարենանք իրար հասկնալ, եւ ստեղծուած համակրութիւնը այլապէս արժէքաւոր պիտի ըլլայ:

- Այդքան ախորժեցամբ. այն ատեն կեցիր, որ քու վրադ ալ գրեմ նոյն այն լակոնական, այն շնական ոճով, ըսեմ օրինակի համար, թէ ինչպէս...

- Ինչ, ինչ, եթէ համարձակիս, եթէ համարձակիս, Փիէռ, կ'երդնում, որ...

- Ինչ կ'ընես որ, եթէ համարձակիմ:

- Ինչ կ'ընեմ մի՛, ինչ կ'ընեմ մի՛...- փնտռեց, փնտռեց, մէկէն ըսաւ, - Վա՛ղն իսկ, կ'իմանամ, վաղն առաւօտ իսկ Տինառ կը մեկնիմ՝ արձակուրդի ամիսս հոն անցընելու եւ... եւ...: Ու մինչ Փիէռ սաստիկ կը խնդար, իր երկու ձեռքերուն մէջ սեղմեց երիտասարդին գլուխը, իրեն քաշեց ու քիթը քիթին փակցուցած աւելցուց. - Չերթամ, չերթամ, հոս ինչ գործ ունիս, ըսէ տեսնեմ, անպիտան... պարոնը չի կրնար սպասել, պարոնը վաղն իսկ պիտի մեկնի. հէ՛, չպատասխանես...

- Դուն չե՛ս գիտէր, որ բոլոր անոնք, որոնց ականարկը միշտ վերն է, բոլոր անոնք, որոնք միայն երկինք գիտեն նայիլ, ինչպէս սուրբերը, ինչպէս իսկական հաւատացեալ-



ները, անոնք բնաւ չեն կրնար ճամբորդել, անոնք երբեք տեղ չեն կրնար փոխել... Եւ ես կը նայէի եւ ես հաւատացիքու աչքերուդ երկնքին...

Գլուխը ցից, ականարկը սուր եւ յօնքերը պռստած մտիկ կ'ընէր Նէնէթ: Հակառակ պիտի ըլլայ, քիթին ծայրը սովորականէն քիչ մը աւելի օդին էր ցցուած: Պատասխանը գտաւ սակայն.

- Հապա եթէ երբեք երկինքը ճամբորդէ:

- Ես ալ հետը կ'ըլլամ անպայման, եթէ առաջին կարգ չառնէ:

- Ո՛չ, առաջին կարգով պիտի ճամբորդէ. ես այնպէս կ'ուզեմ, առաջին կարգով:

- Բայց սպասէ, ամէն բան կարգով...

Եւ երկիր, եւ երկինք, եւ հաւատացեալ կուռք, չշեղեցան անշեղելի կարգէն:

## 6

- Բնաւ մտքէդ չ'անցընես, թէ քեզ գեղեցկութեանդ համար սիրեցի: Օ՛հ, գեղեցկութիւն... ինծի համար արժէք չունի. բնա՛ւ, բնա՛ւ... Եւ յետոյ այնքան ալ աստուածային գեղեցկութիւն մի չունիս...

Այո, ծոծրակիդ գիծը բաւական ներդաշնակ է, սակայն պէտք է քովնտի նայիլ... Ժպիտդ գէշ չէ, պայմանաւ, որ ժպտիս: Իսկ դունչիդ տակը, ականարկդ եւ մազերուդ փայլը, որոնց այնքան յարգ կ'ընծայես դուն, դիմացի տունէն դիտող մը բնաւ չպիտի կարենայ գնահատել. ինչ հասկացանք... Այո՛, կը կրկնեմ, ես քեզի սիրեցի ոչ թէ գեղեցկութեանդ, այլ քու գէշ բնաւորութեանդ համար: Սարսափելի՛, աղտո՛տ ու զզուելի բնաւորութիւն ունիս: Յամառ ես, ինքնահաւան ես, քմայասէր ու փոփոխամիտ ես, բայց դուն իմին Նէնէթս ես:

Վառվռուն, զուարթ Նէնէթս ես, իմին տաքուկ հոգիս

ես... այո՛, շիրին ես դուն, իքի խավուրմիշ ես, միսիր պույտայ ես... ո՛չ, քեզի չի վերաբերիր. միսիր պույտայ ես, միսիր պույտայ ես... չէ՛, չեմ թարգմաներ... չեմ կրնար թարգմանել... Օ՛, ինչպէս կ'ուզես, որ հիմա քեզի բացատրեմ... ա՛յ, ա՛յ, քիթս... է՛յ, բերանս ձգէ, որ խօսիմ... ահաւասիկ, կը սկսիմ կոր - Միսիր պույտայ կը կոչուի այն ուտելիքը, որ... է՛յ, կարելի բան չէ, որ մէջէն ելլամ... այսպէս ուրեմն, մեր տեղը, այսինքն Պոլիս, ձմեռ երկար գիշերները երբոր հաւաքուին, կրակարանին վրայ կ'եփեն եգիպտացորենը, մանաւանդ պզտիկներուն զուարճութիւն պատճառելու համար, եւ զայն տաք տաք կ'ուտեն: Ո՛չ, քու գիտցած ձեռովդ չէ. կ'առնեն բոլորակաձեւ փայտէ աման մը, որ ճիշդ թմբուկի մը ձեւը ունի, բայց որուն երկու երեսները փոխանակ կաշիի, թել է քաշուած: Մէջը կը դնեն եգիպտացորենը եւ զայն կը բռնեն կրակին վրայ... բայց ո՛չ, ամբողջ չեն դնէր, այլ հատիկներու կը վերածեն... զայն կը բռնեն կրակի վրայ... բայց ո՛չ, թելին ծակերը պզտիկ են, վար չեն իյնար... կրակին վրայ... բայց ո՛չ, փայտէ ածուխ է... եւ կը սկսին երերցնել... բայց ո՛չ, կոթ ունի, կոթէն կը բռնեն, ճիշդ այսպէս... նայէ, նայէ որ սորվիս...

Դէմ դէմի նստեր էին անկողնին վրայ: Նէնէթ կը ժպտէր, զմայլելիօրէն կը ժպտէր: Կարծես յոգներ էր քիչ մը. իր լայն ու լեցուն կոպերը երբեմն կ'իջնէին պարտասաձ, նուաղանօք, արբշիռ... Յամառ տղեկի մը պէս կը շարունակէր ակռաներուն մէջէն Փիէռը գրգռող բառ մը արձակել եւ միւս ձեռքովը տղուն ծոծրակը ճմլել, ճմլել: Երիտասարդը, լաւ բացատրելու իր մարմաջէն տարուած՝ երկու ձեռքերը կը շարժէր անդադար պարապին մէջ, կնոջ ծալուած ծունկերուն վրայ: Եւ Նէնէթին այդ հրաշալի մերկութիւնը, լեցուն ազդրերը, զիստերը, բումբերը կարծես կրակ մը կ'ըլլային հրակէզ, որուն վրայ տղան կ'եփէր, կ'եփէր...

- ...Եւ այն ատեն եգիպտացորենները կը սկսին պայթիլ, չա՛թ, փա՛թ, չա՛թ, փա՛թ...

- Ո՛չ, չեն պայթիր:

- Ինչպէս թէ չեն պայթիր, անշուշտ թէ կը պայթին:
- Ո՛չ, չեն պայթիր:
- Կը պայթին:
- Չեն պայթիր:
- Կը պայթին. բայց դուն միսիր պույտային ինչ ըլլալը ինչ գիտես. կը պայթին, կը պայթին...
- Դո՛ւն ինչ գիտես ինչ ըլլալը. անիկա տաք տաք կ'ուտեն... իսկ դուն ժամ մըն է պարապ խօսք կ'ընես եւ կը ձգես, որ պաղի...

Ժպիտը անսահմանօրէն մեծցաւ Փիէռի հոգիին մէջ: Ան իր ամբողջ ուժովը պլլուեցաւ իր Նէնէթին, պլլուեցաւ իր Նէնէթին ու տապալուեցան բարձերուն մէջ.

Տաք-տաք կերան:

Ահա այսպէս կու գայ վայրկեան մը, երբ ալ կ'ուզենք ըսել այն՝ որ մեր արիւնին ու ոսկորին մէջն է եւ որ չի թարգմանուիր: Որովհետեւ միայն մայրենի լեզուն է, որ բառերուն կրնայ տալ այն անկեղծ ու պարզ շեշտը, որ բնաւ մտածում չի պահանջէր: Եւ սիրտը երբոր կը խօսի, պէտք չէ մտածել: Ահա թէ ինչու Փիէռ ըսաւ մեղմաձայն, կարծես միայն ինքզինքին համար. «Ուտտեմ ես քեզի, իմին Նէնէթս, կռճեմ ես քեզի»: Նէնէթ մտիկ ըրաւ զայն ժպիտով, կրկնել տուաւ, թերեւս հասկցաւ, բայց, ինչ որ աւելին է՝ կարծես զգաց: Փիէռ նետուեցաւ մահճակալէն վար, կեցաւ սենեակին ճիշդ մէջտեղը, թողլով, որ արեւի լեզու մը իր ոտքերուն հետ խաղայ, եւ այդպէս ամբողջութեամբ մերկ, սրունքներն ու թելերը բացած սկսաւ արտասանել պոռթկացող հրճուանքով, յորդող երջանկութեամբ.

*«Ով աստուածն իմ հայրերուս,  
Կը մօտենամ ահա բազնիդ  
Եւ խամութէն քաշելով կը բերեմ էգ մ՝  
Աշխարհներէն տոփանքի:  
Տես, պարարտ է զոհս իմին,*

*Միսերուն մէջ կաթնաթոյր»  
Յեղին ամբողջ կեանքը կայ...»*

Անկողնին մէջ նստած, ցուցամատը օդին, ինքզինքին վարժուիի մը երեւոյթը տալով Նէնէթ ըսաւ.

- C'est bien, c'est très bien, mais ce n'est pas tout à fait cela, il y a une faute!\*

- Oh, Nennette, Nennette chérie! ըսէ՛, ինչէ՛ն հասկցար, ինչէ՛ն հասկցար, որ ճիշդ չէ... Բայց ես դիտմամբ ըրի, ես դիտմամբ փոխեցի...

Փիէռ մէկէն լռեց սակայն: Նէնէթը թողլով՝ ցցուեցաւ անկողնին եզերքը ու ականջ տուաւ: Այո՛, չէր սխալած. աղմուկը կը մօտենար: Ալ որոշակի լսեց Սուրէնին ձայնը, որ կ'ըսէր. «Եւ այն ատեն Հայկական Յեղափոխութիւնը կը լողաւ արիւնի ծովու մը մէջէն...»: Երբոր ոտնաձայները սանդուխը ասարտեցին, Հրաչին ձայնը ըսաւ. «Բացէք զդուռն արքայութեան». թա՛ք, թա՛ք, թա՛ք: Նէնէթ ցաւցնելու աստիճան սեղմեց երիտասարդին թելը, մինչ ան նշան կ'ընէր, որ չաղմկէ: Արքայութեան մէջ աղմուկ: Սուրէն շարունակեց. «Եւ այն ատեն Հայկական Յեղափոխութիւնը կը զարնէր բոլոր գոց դռները»: Թա՛ք, թա՛ք, թա՛ք: Այդ զարկին լռութեան երկար պահ մը յաջորդեց. յաջորդող այդ երկար պահը միշտ այսպէս ճնշիչ ու սմբեցնող կ'ըլլայ, ամէն անգամ, որ Յեղափոխութիւն մը ան բարեհաճ բարձրագոյն դուռ մը զարնէ.

- Առի՛ր հիմա փայդ. աս նորէն հոս չէ: Էյ, մէյ մըն ալ հոս եկողը Արապ ըլլայ...

- Խելքս չի հասնիր, ճանըմ, մէկը աղջիկ ունի՛ տունը չէ, միւսը տանսինկի սիրահար է, տունը չէ, ասդիինը Օփերա-Քոմիքին բռնուած է, տունը չէ, էյ միս ինչ է...

Անկողնին վրայ իրարու սեղմուած մնացեր էին անշարժ, ականջնին ցցուած, մէյ մէկ լայն ժպիտ դէմքերնուն:

\* Լաւ է, շատ լաւ է, բայց կարծես թէ այն չէ, ինչ-որ սխալ կայ:

Նէնէթ աւելի իրեն քաշեց տղան, բերանը ականջին մօտեցուց կարծես բան մը ըսելու համար, բայց պարզապէս խաճաւ զայն իր բլթակէն:

- Էյ ինչ կ'ընենք կոր...

- Mon vieux, ես տեղ մըն ալ չեմ երթար. արդէն ականջս կը ցաւի կոր: Քանի որ բանալին վարը չէր, ըսել է հեռու չէ գացած եւ շուտով պիտի գայ: Բաց սա պատուհանը, նայէ՛, Նօթրը-Տամը կ'երեւայ, զմայլելի տեսարան, օդաւետ դիրք, ասանկ հրաշալի կիրակիով ո՛վ սենեակը կը փակուի. պանդոկը վերէն վար պարապ է: Մէկն ալ մինչեւ հինգերորդ յարկ չի բարձրանար մեզ խանգարելու: Հոս կ'ուտենք, լմնցաւ գնաց:

Պզտիկ աղմուկներ կ'ըսէին, թէ թուղթեր կը բացուէին, գետին կը դրուէին ծրարներ, հաց, շիշեր եւ յետոյ երկու յետոյք:

- Մենք, մենք, քէյֆէրնիս հարամ եղաւ, սա՛ նայէ, իւղերը կը վազեն կոր. է՛ն աղէկ filet de harengը\* առած էի:

- Բաց սա լրագիրը. բաց կ'ըսեմ կոր քեզի, այսօր ալ խմբագրական կարդացած մի՛ ըլլար: Եթէ կ'ուզես՝ գոց ըսեմ. կիրակի օրերը միշտ այլասերման վտանգին վրայ գրուած կ'ըլլայ:

Սկսան ուտել: Բաւական երկար տեւեց ճաշը, որու միջոցին չդադրեցան, նոյնիսկ բերաննին լեցուն, աղջկան պատմութիւններ պատմելէ, խնդալէ, կատակելէ: Հրաչ սաստիկ կը գանգատէր Միսաքէն, զայն իր սիրային վերջին անյաջողութիւններուն պատճառը նկատելով: Այո՛, անկասկած, քանի որ բերնին ոսկիէ ակռան շինելու համար տգեղ հայ աղջկան մը ետ եղած նշանտուքի մատանին գործածած էր: Դաւաճանը...: Հրաչ մէկէն հարցուց.

- Ծօ, չըլլա՛յ աս տղան ներսը աղջիկ նետած ըլլայ:

- Չէ՛, ճանըմ, - պատասխանեց Սուրէն, - ան այս միջոցին բնաւ այն կողմերը չէ. սաստիկ լրջացած է. Լիզը անգամ ճամբեց.

\* Ապիստած ձկան փափկամիս:

- Իրան. բայց ան անուշիկ բան էր. ինչո՞ւ չըսիր, որ ինձի անցընէր:

Ձայնին դրոշմը փոխելով, Սուրեն շարունակեց.

- Կարծեմ Պետրոսը լրջօրէն իր փաթրոնին բռնուած է... ըրածը սխալ է սակայն. ես բնաւ համակարծիք չեմ... պէտք չէր, որ այդքան լրջութեամբ մօտենար խնդրին... ըրածը հայկական սիրաբանութիւն է. Աստուած տունէ տեղէ հեռու ընէ...

- Ինչպէ՞ս է. աղուոր կին է:

- Աղուոր է մի, աղուոր է մի...- Փիէռ այդ պահին Նէնէթի ծոծրակին պզտիկ մազերուն հետ կը խաղար. մատը անշարժացուց եւ անհամբեր սպասեց պատասխանին, որ պայթեցաւ. - Քայմա՛ք, mon cher, քայմա՛ք...

«Քայմաք»ը երբեք չհասկցաւ, թէ ինչու Փիէռ մէկէն զինքը այդքան ուժով սեղմեց, այդքան ուժով, ամբողջ ուժով:

- Պետրոս ըսածդ արդէն ասանկ է. սուսիկ փուսիկ գործը կը տեսնայ: Վայ Պետրոս, վայ, օր մը ինչ ըրաւ գիտես. էյ, նշանաւոր բան մը պատմեմ, նայէ: Կիրակի մը ութ տասը տղայ ժողովարան ենք գացեր: Այն ատեն ժողովարան երթալը Պոլիս մօտա էր: Պրոֆէսէօր Լալկանեան մը ելաւ խօսելու. - Սրբէ՛ սա թուղթը, ես ա՛լ չպիտի ուտեմ, - սկսաւ մեզի ուղտին առակը պատմել: «Եւ այն ատեն, - սրբէ՛ կ'ըսեմ կոր, ես կշտացայ, - եւ այն ատեն ուղտապան մը Նազարէթ կը մտնէր: Ուղտապանը իր ետեւէն կը քաշէր իր ուղտը...»: Կ'ուզես մի Պետրոս մէկէն սկսի երգել, մենք ալ հետը՝ բարձրաձայն. «Չէք, տէվէլչի, տէվէլէրին, սուլանսըն աման...»\*:

Բարեբախտաբար անկողնին ճոինչը կորսուեցաւ խնդուքներու մէջ: Սաստիկ ոգեւորուած էին. Հրաչ սկսաւ երգել. «Աճապա շէն մի սին, քէտէրին վա՛ր մը...»\*\*

- Կու լայ կոր, ըսաւ Նէնէթ:

- Սո՛ւս, չի լար կոր:

\* Բալէ, ուղտապան, ուղտերդ ջուր խմեն...

\*\* Արդեօք ուրախ ես, թէ հոգսեր ունես...

«Ույուսամ, կէօքսիւնին իւսթիւնտէ պիր եէրին վա՛ր մը. նէքատար եօրկունըմ հապէրին վա՛ր մը...»\*

- Նէնէթ, Նէնէթ... ուր որ ալ ըլլաս, ինչպէս որ ալ ըլլաս, ով որ ալ սիրես... եթէ անունս իսկ մոռնաս...

«...Նէ քադար տիւշկիւն իմ հապէրին վա՛ր մը...»\*\*:

Մէկէն լսուեցաւ մօտաւոր դրան մը բացուիլն ու գոցուիլը: Երգը կտրուեցաւ անմիջապէս, եւ Հրաչ բացականչեց.

- Օ, պօնժուռ, մատըմուազել, այս որքան ատեն է զիրար չենք տեսեր, այս ինչ բարեբախտութիւն, Աստուած իմ, ես, որ այն գիշերուընէ ի վեր չեմ դադրած ձեզ փնտռելէ, ձեզ երազելէ...

- Բայց դուք զիս չէք ճանչնար, պարոն:

- Ինչպէս, ինչպէս, արդէն իսկ մոռցա՛ք ձեր պզտիկ Ռումանացին, որուն հետ ամբողջ գիշեր մը պարեցիք Սալ Պիւլիէ եւ կամ թէ Վակո՞ւամ, լաւ չեմ յիշեր... այն որ քանի անգամներ ըսաւ ձեզի...

- Հայտէ, քե՛զ տեսնեմ, Հրաչ, համոզէ սա խայտառակը անտառ տանինք:

- Դուք, որ այդքան գրաւիչ գեղեցկութիւն մը ունիք, այդքան խենթեցնող աչքեր ունիք, դուք, որ այդքան...

- Բայց կը չափազանցէք, պարոն...

- Ո՛հ, հաւատացէք, օրիորդ, որ ես միայն եւ միմիայն ճշմարտութիւնը կ'ըսեմ: Մի՛ մոռնաք սակայն, որ ճշմարտութիւնները քանի մը տեսակ են. կան բացարձակ ճշմարտութիւններ, կան յարաբերական ճշմարտութիւններ, կան տակաւին ճշմարտութիւններ...

Եւ ճշմարտութիւնները հատ-հատ իջան սանդուխներէն: Մէկ հատ մը միայն մնաց գոց դրան ետեւ: Մեծ մը:

\* Թէ քնեմ տեղ ունե՞ս կրծքիդ վրայ...

\*\* Տեղեա՛կ ես, թէ՛ հալումաշ... (թրք.):

Դրան զարնելու իր եղանակէն անմիջապէս ճանչցաւ զայն: Այդպիսի վայրկեաններու յատուկ արագութեամբ մը իրողութիւնը իր մտածումը պատռեց: Ապուշ էր, յիմար էր, օ, իրա՛ւ, որ յիմար էր. ինչպէս մոռցեր էր զայն, ինչպէս կրցեր էր մոռնալ: Դեռ այս առաւօտ ստացեր էր Լիզին նամակը. գրպանն էր. տակաւին չէր համարձակած այդ անկեղծութիւնը պատռել: Հազիւ թէ քիչ մը յանդիմանութիւն կար հոն, կատակի ձեւով... ծածկուած վիշտ մը... գրեթէ աղաչանք: Նամակին վերջը կ'ըսէր, թէ պիտի գար զինքը տեսնել շաբաթ երեկոյ, այսինքն այս գիշեր: Եւ Փիէռ մոռցեր էր տուն չգալ, մոռցեր էր կրկին վար իջնալ եւ բանալին կախել իր տեղը, որպէսզի դուրս ելած կարծէ ու մինչեւ հոս չբարձրանայ... Չէր կրնար գոնէ լոյսը մարել ու մութին մէջ երազել իր Նէնէթին, մութին մէջ վերապրիլ ցերեկուան գինովութիւնը...

Դրան վրայ հարուածները կրկնուեցան: Ընդհատուած արագ շարժումի մը մէջ պիրկ երիտասարդը իր շունչը կը բռնէր աղմկելէ վախնալով: Երկվայրկեանները այս որքան կ'երկարէին եւ ինչո՛ւ ան դեռ կը համառէր: Փիէռ չհամարձակեցաւ դրան նայիլ, իրեն այնպէս կը թուէր, թէ ան անկարող պիտի ըլլար զինքը ծածկելու եւ երբ աչքերը բարձրացնէր՝ պիտի հանդիպէր Լիզի ականարկին: Դէմի սենեակէն Underwood-ը\* անօրինակ արագութեամբ մը կը բանաստեղծէր: Լիզի ականարկին:

Երկար պահ մը վերջ հարուած մը եւս ինկաւ դրան, այս անգամ միայն մէկ հատ մը, խիստ թեթեւ, հազիւ թէ լսելի: Շշուկ. թուղթի ձայն. բա՛ն մը կը գրէր. թուղթ մը ճմռթկուեցաւ. թուղթ մը եւս ճմռթկուեցաւ. վերջապէս Փիէռ լսեց, որ բանալիին ծակին մէջ բան մը կը մտնէր: Ու յանկարծ Լիզի մէկ ձայնը՝ զոր երբեք չէր լսած.

- Մի՛ բանար, խնդիր չէ... բայց երբոր մեկնիլս լսես, ելիր եւ ձգած թուղթս առ... աղէկ կարդայ զայն:

\* Ամերիկեան գրամեքենայի տեսակ:



Ու դանդաղորէն ոտնաձայները մտան բանաստեղծութեան մէջ:

Underwood and Underwood.

Նայեցաւ, կրկին նայեցաւ, մատներուն մէջ քանի մը անգամ դարձուց այդ պզտիկ թուղթը. բան չկար. բան մը իսկ չէր գրուած, ոչ այս կողմը, ոչ այն կողմը: Երբոր գլուխը բարձրացուց, ակնարկը հանդիպեցաւ յանկարծ նրբանցքին միւս անկիւնը նետուած երկու սպիտակութիւններու... Հաւաքեց զանոնք. ճմռթկուած թուղթերն էին: Մէկուն վրայ գրուած էր. «Լուսանկարիչի խանութ չունիմ ես». իսկ միւսին՝ «Ինչ որ ըրիր դուն ինձի, նոյնը պիտի ընէ քեզ, ան»: Երկուքն ալ նետեց Փիէռ: Ձեռքին մէջ մնաց միայն այն վերջինը, որուն վրայ բան չկար, որուն վրայ բառ մը իսկ չէր գրուած, ոչ այս կողմը, ոչ այն կողմը:

Ինչ վայրենի մարդիկ կան, վարի յարկի տղան ամէն գիշեր այսպէս բրտօրէն կը գոցէ իր դուռը:

## 8

Բալի գոյն *թալլաօ*\* մը, վեց ձի, *conduite intérieure*\*\*:  
Ուղղիչ անիւին առջեւ ցից ու անշարժ, Նէնէթ արմուկը կռթնցուցէր էր դռնակին բաց պատուհանին վրայ եւ միւս ձեռքովը վայրկեանը անգամ մը ճշարձակը կը սեղմէր՝ Փիէռը վար կանչելու համար:

Փիէռ փողոց հասած էր արդէն, բայց պանդոկի մուտքի դրան մէջ կեցած՝ իր լայն ժպիտովն ու երջանկութեամբ լեցուն աչքերովը կը լափէր ու արագօրէն եւ անդադար կը համբուրէր իր Նէնէթը, անոր երեւցած բոլոր մասերէն: Կիրակի առտուան արեւին մէջ որքան աղուորցեր էր ան. բոլորովին նոր հագուստ մըն էր հագածը, նորէն բաց գոյն, լազուարթ ու կարմիր խաղերով, թելերը գոց, «քառէ»ն հա-

\* Աւտոմեքենայի տեսակ:

\*\* Ղեկը՝ ներսի կողմից:

մարձակ ու նորէն գլխարկ մը: Ճշարձակը կը շարունակէր «Փիէռ» պոռալ, մինչ Նէնէթ կը դիտէր լայնածաւալ կին մը, որ կզակը վեցերորդ յարկերուն՝ կը կրկներ. «Ֆէէրայլ ա վանտր... շիիիֆօն... շիֆօն...»\*:

- Ինչպէս, եկեր ես ու ձայն անգամ չեմ հաներ, զիս դիտմամբ ժամերով կը սպասեցնես... շուտ, քովս անցիր տեսնեմ: Ո՛չ, ո՛չ... կ'արգիլեմ քեզ իբրեւ պատիժ... մէկ հատ մը միայն... ատկէ չէ՛, ասկե... Dis-donc\*\*, այսօր աղուորցեր ես. միշտ չէ. այսօր բացառաբար... քեզի չի վերաբերիր. ես աւելի համբուրելու իրաւունք ունիմ. ես քեզմէ մեծ եմ. ինծի յարգանք կը պարտիս... ձեռքդ քաշէ՛, շուտ... գիշերը լաւ անցուցի՛ր, խելօք կեցա՛ր... թաթերը վա՛ր... զիս երազեցի՛ր... ո՛չ, ես երբեք չեմ երազեր, կ'ապրիմ: Ալ հետս մի խօսիր եւ անմիջապէս ճամբայ ելլենք: Միայն նայէ, որ Նէնէթդ կառք մը վարել գիտէ՛ թէ ո՛չ: Քայլ առաջ, օն:

Նախ գլխարկը հանեց ու արձակեց ետեւի նստարանին վրայ, արդէն մինչեւ հիմա գլխուն վրայ պահելուն նպատակը զայն Փիէռին ցուցնել էր, յետոյ թեթեւ վզնոց մը նետեց վիզին, ձեռնոցները անցուց ու սլացաւ առաջ:

Այնքան արտասովոր արագութեամբ մը անկիւնը դարձաւ, որ Տիտըռօն իր փետուրէ գրիչը վար առաւ Համայնագիտարանէն եւ երկարօրէն նայեցաւ ետեւնուն, բառը կորսնցուցած: Արեւը ողողէր էր ամբողջ Ռիւ տը Ռէնը. հանրակառքի գիծերը կը փայլէին. հեռուն, Մոնփառնասի կայարանին եռանկիւնը լոյսին մէջ կը հալէր: Արագութիւնը չնուազեցնելու համար Նէնէթ ստիպուեցաւ օձապտոյտ գիծով մը յառաջանալ եւ անդադար աղմկել: Անցաւ միւս կառքերը, շրջանը ըրաւ 29 թիւ հանրակառքին ու ինկաւ V-ին առջեւ: Յուզում: Այդ հսկայ կրիայն ականջ պատռող աղմուկով մը անշարժացաւ, մինչ վարիչը թելերը բացած կը հայիոյէր: Փախուստ:

\* Վաճառքի երկարթելէն (սիֆոն):

\*\* Լսի՛ր:

- Dis donc, mon vieux, դուն դեռ աջէն քալել չսորվեցա՛ր, կ'ուզես, որ ամէն օր քեզ engueule՛r\* ընեմ:

Յանդիմանութիւնը ստացողը հաստափոր մսագործ մըն էր՝ իր արիւնոտած կառքին վրայ, բանան մը ուտելու զբաղած: Արմուկը ցցեց վզնոցին ուղղութեամբ եւ բառերը կերաւ՝ բանանի համով: Փաստէօռի արձանին մօտ Նէնէթ մեքենան կեցուց՝ ծառերուն տակ ամայի անկիւն մը.

- Հասկցայ, դուն այս առաւօտ զիս հանգիստ չպիտի ձգես, կատղէր ես, ուրիշ բան չէ... Ինչ սոված տղայ է, Աստուած իմ... վստահ եմ, որ այս առաւօտ նախաճաշ չըրիր...

Ու, ետեւէն ծրար մը առնելով, քակեց կապոյտ ժապաւէնը եւ կարկանդակներ դուրս հանեց: Փիէռ մերժեց. Նէնէթ պնդեց. Փիէռ կրկին մերժեց. Նէնէթ սպառնաց Փաստէօռը կանչել, անօգուտ, անօգուտ: Այն ատեն երիտասարդ կինը երկար կարկանդակ մը առաւ, խաճաւ մէկ ծայրէն ու գլուխը երկարեց տղուն: Ան անմիջապէս իր երկու ձեռքերուն մէջ գրկեց այդ ոսկի գլուխը եւ սկսաւ ուտել անյագօրէն, անյագօրէն... Երբոր հասաւ շրթներուն, աւելի յամառեցաւ. անոնք աւելի անուշցեր էին: Նէնէթ լեզուին ծայրովը դուրս ըրաւ բերանը մնացած մասը եւ այն ատեն է, որ Փիէռ զգաց, թէ իրապէս անօթի էր. ահա թէ ինչու աւելին ուզեց, աւելին... Եւ Նէնէթ տուաւ ինչ որ բերնին մէջ կար, իր լեզուն: Ան քաղցրացեր էր անուշին հպումով: Երբէք, երբէք այսպիսի նախաճաշ մը չէր ըրած. հաւատա՛ Նէնէթ, հաւատա՛ Փաստէօռ, պաշտելի՛ Փաստէօռ:

Երբոր Բոռդ դը Վերսայլը հասան, թելերը բացած իր ամբողջ ուժովը ճչաց Նէնէթ. - Cordon, s'il vous plaît: Կանաչ համազգեստով պաշտօնեան մօտեցաւ վերջապէս իրենց, տուաւ ելքի թուղթը եւ թալպօն նետուեցաւ լայն ճամբուն մէջ: Մէկիկ մէկիկ ետեւ թողուցին արուարձանները, որոնք հեռանալով գացին կրկին տեղ գրաւել քարտէ-

\* Քեզ մեքենայի տակ կը գցեմ. բառացի՝ ստորացնեմ:

սին վրայ: Փարիզի յետին ցուրքերն ալ հալեցան վերջապէս, ու երեւցաւ անվերջանալի ուղին, այն որ կը կոչուի «Ազգային Ուղի»:

Երկար ատեն չխօսեցան. երկար ատեն բան մը չփոխանակեցին իրարու մէջ: Այս անվերջ գնացքը հոգեկան նոր վիճակի մը մէջ նետեց Փիէռը: Շատ երջանիկ էր, շատ էր այս երջանկութիւնը: Անոր մէջ սուզուած, անով թաթախուած, իրեն այնպէս կը թուէր, թէ կը թուլնար ինք, կը կակուղնար, սաստիկ կը տկարանար: Տղայ էր դարձեր, պզտիկ բանէ մը պիտի պարտուէր, ոչինչ բանով մը պիտի յուզուէր: Հապամ եթէ կորսնցնէր Նէնէթը: Վախցաւ: Անմիջապէս պլլուեցաւ անոր, վար քաշեց վերարկուին մուշտակը եւ գլուխը թաղեց անոր ծոծրակին մէջ: Եւ այնքան մօտէն դիտեց այդ միսը, իրեն միսը: Կը խորհէր ան, չէ՞, կը տեսնէր, կը զգար, անշուշտ թէ կը զգար: Երկարօրէն հոտոտեց ու շնչեց զայն, սկսաւ արթննալ. աւելի սեղմուեցաւ: Նէնէթ պզտիկ շարժումներ կ'ընէր. անհանգիստ էր: Երբեմն գլուխը ծռելով կը սեղմէր երիտասարդին դէմքին վրայ, յետոյ անմիջապէս կը ցցուէր՝ մօտեցող ծառերէն վախցած: Կառքին գնացքը արագացուց հետզհետէ աւելի ու աւելի, եւ անհատնում ճամբան զարհուրելի արագութեամբ մը լափելով գնաց պլորուիլ կառքին ետեւ: Խելայել փախուստ մը կազմակերպեցին եզերքի ծառերը եւ իրենց հետ տարին արածող կենդանիներ, դաշտեր, խաղալիք տնակներ: Ատենը անգամ մը կոճղերուն մէջտեղէն շոգեկառքի մը գոլորշին կը փախչէր կամ թռչունի մը աղելը ճիւղեր կը միացնէր իրարու: Երկուքն ալ գինովցան: Նէնէթ պատուհանը բացաւ ու աչքերը պզտիկցուց: Հովը սկսաւ խաղալ անոր մազերուն ոսկի վէտվէտումին հետ, եւ վզնոցը՝ ծածանիլ: Ան այդպէս օդին՝ գեղեցիկ ստորագրութեան մը տակ նետուած գիծին կը նմանէր: Փիէռ քանի մը անգամներ ըսաւ, յետոյ խնդրեց, աղաչեց, որ մեղմացնէ արագութիւնը, թէ ըրածը պարզապէս խենթութիւն է, արկած մը պիտի պատահի: Նէնէթ պատասխանեց. «Այն ատեն քաշէ

ձեռքերդ...»։ Եւ երբոր հպատակեցաւ, գլուխը դարձուց, ու սարսափելի ակնարկ մը գամեց անոր աչքերուն։

Այդ ակնարկին իմաստը անմիջապէս չհասկցաւ տղան։ Նէնէթին ջղայնոտած մատներուն մէջ ուղղիչ անիւը կիսաշրջանակ մը ըրաւ, եւ կառքը, երկու ծառերու մէջտեղէն անցնելով, գնաց նետուիլ դաշտի մը մէջ։ Հոն երկար մնաց։

Արածող կովերէն մէկը մօտեցաւ կառքին, գլուխը վեր առաւ եւ իր թաց ու խոշոր աչքերով նայեցաւ։ Ետեւի պզտիկ պատուհանին մէջ կախուած չինական պուպրիկը անդադար կը դողար։ Կարծես կը դողար ի տես կովին։ Կովը հեռացաւ անտարբեր։

Տեղատարափը դադրեցաւ։ Պատռուածք մը հորիզոնին՝ ու մեռնող օրուան վերջին ժպիտը ատենուան մը համար կանխահաս մթութիւնը վանեց։ Հորիզոնին վրայ երկնցած այդ երեկոն քնանալէ առաջ ինչ աղուոր աչք մը ըրաւ։

Օդին մէջ դեռ անձրեւի պզտիկ կաթիլներ կը դառնային, եւ աղմուկին յաջորդող սա պարապին մէջ որոշ կերպով կը լսուէր նուագը հոսող ջուրերուն։

Հովը սուլելով կոչնակը պարի կը հրաւիրէր։

Մօտաւոր երդիքէ մը աղանիներու սիրոյ վանկերը լսուեցան, երբոր պարը կը սկսէր։

Ճիշդ զանգակատան քովէն կը քակուէին քանի մը կարմիր ժապաւէններ, բարտիները անցնելով երթալ լազուարթի փոխելու համար։ Պատռուածքը կամաց-կամաց կը կարուէր։

Դեռ լեցուն երկնքին տակ երեկոյի այս լոյսը անբացատրելի խորհուրդ մը կը ստանար, կապարագոյն, թերեւս կարմրորակ, հաւանաբար ոչ մէկը, ոչ միւսը, բայց յուզող, համակող, լոյս մը, որ այնքան դիրութեամբ կը թափանցէր իրերու եւ հոգիներու խորքին, խորհուրդին, որ, մէկէն, անձանօթ դռներ կը բանար լոյսերու վրայ, լոյս մը, որ բառերը կը կեցնէր ի սէր մութին։ Ինչ աղուոր աչք մը ըրաւ։

Նախ առաստաղին հաստ գերանները լուսաւորուեցան, յետոյ՝ քանի մը դեղնած լուսանկար բուխերիկին վրայ. երկար սուր մը պատին՝ երկու փրկիչներու մէջտեղ, Յիսուս ու մարաջախտ: Լայն թիկնաթռոյի մը մէջ ընկղմեր էին երկուքն ալ. իրարու փարած, գլուխնին մէկզմէկու վզին մէջ, երկար ատենէ ի վեր լուռ ու անշարժ:

Հովը սուլելով կոչնակը պարէն կը բերէր: Աւելի սաստկացաւ ու ճռինչով ու աղմուկով պատուհանին փեղկը գոցեց, յետոյ բացաւ: Անոնք բնաւ չշարժեցան, ձգեցին, որ հովը ուզածն ընէ: Տղուն ուսին վրայ Նէնէթին մատանին կը վառէր ու կը մարէր, նորէն կը նայէր, աչքը կրկին գոցելու համար: - Տինկ, տանկ, դին, էս, դին, էս, դին, էս, դին, էս:

Անձանօթ ձեռք մը անդադար փեղկը դարձուց մեծ գրքի մը էջին պէս, բացաւ, գոցեց, անոր երկու երեսին վրայ ալ կարդալու համար: Եւ երբոր հասկցաւ, մէկէն տերեւ մը բերաւ փակցուց պատուհանին թաց ապակիին վրայ, դրոշմաթուղթի մը պէս: - Դին, էս, դին, էս, դին, էս:

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## 1

Լոյսը ետեւէն, շատ բարձրէն կու գար: Լոյսը կու գար վարդաձեւ պատուհանէ մը, ուր գունաւոր ապակիի կտորուանքներ էին նետած: Այո՛, լոյսը անպայման տեղէ մը կու գար: Բարձր, շատ բարձր սիւներուն ու գորթական ոճին մէջ խորհուրդ կար: Պարապութիւններուն մէջ ալ խորհուրդ կար: Անհամար, խուռներամ բազմութիւն. մարդ չէր երեւիր, բայց անկասկած հոժ բազմութիւն կար: Խորան, խաչ ու մոմեր. մոմերուն վրայ աւելորդ բոցեր. քանդակուած կաղնեփայտէ երկար գահաւորակ մը, կաղնեգոյն, որուն վրայ քով քովի կրօնաւորներ էին շարուած նման զգեստաւորուճով եւ շիկակարմիր գդակներով: Կզակները լաւ մը ածիլուած՝ բոլորն ալ իրեն կը նայէին. աչքերնին չէր երեւեր, բայց ինչպէս իրեն կը նայէին: Շփոթած էր ինք. կարմիր փէշ մը ու սպիտակ ժանեկաւոր շապիկ մը կը կրէր, լայն թեզանիքներով: Ոտքերուն շատ մեծ հողաթափներ կային: Մարիամի արձանին առջեւ կը բուրվառէր: Մարիամը թեւերուն մէջ էր բռնած Մանուկը, առ ի քաղաքավարութիւն: Ինչ պէտք եկեղեցիին մէջ խանձարուր դնել. արդէն եկեղեցին մեծ օրօրոց մըն է, կ'ըսեն, առ ի քաղաքավարութիւն: Եւ ահա ճանճ մը եկաւ փակչիլ Մարիամի քիթին. մեծ, դեղին, զզուելի ճանճ մը, երկար մազոտ ոտքերով ու երակաւոր թեւերով գարշատեսիլ բան մը: Իշո՛ւ ճանճ, ձիո՛ւ ճանճ: Ամէն մարդ իրեն կը նայէր, բոլոր ներկայութիւնները զինքը կ'ամբաստանէին եւ ինք անկարող էր շարժելու, բան մը ընելու, ճանճը վանելու: Ըսի՛, թէ ոտքերուն մեծ հողաթափներ կային: Որքան յանդիմանութիւն՝ իր էն մօտը գտնուող սա կրօնաւորին ակնարկին մէջ: Այդ գլուխը հետզհետէ աւելի կը նմանէր Սելէսթէնին, Սելէսթէնը՝ ճաշարանը իրենց սպասարկող ծառան: Շփոթութիւնը մեծ-

ցաւ, եղաւ յուզում ու յետոյ տագնապ, բարկութիւն: Ամբողջ ուժովը կը բուրվառէր, կ'ուզէր պոռալ, կ'ուզէր փչել, առջեւ նետուիլ: Դեղին ճանճը անշարժ էր հոն, քիթին վրայ: Քիթը չէր երեւէր, բայց անշուշտ, թէ քիթին վրայ...

Արթնցաւ: Յցուեցաւ անկողնին մէջ, աչքերը շփեց, քերեց ծոծրակը եւ ըսաւ. «Խենթիս երագը»: Տժգոյն առաւօտ մըն էր. հարբուխ եղած առաւօտ մը, քովի սենեակները դեռ կը քնանային: Ձայն չկար, աղմուկ չկար, կեանք չկար այդ մելամաղձոտ անկիւնին մէջ: Լսելի կ'ըլլար միայն սպասուհիին աւելին աղմուկը, որ սանդուխները կ'իջնէր՝ քունը աչքերուն: Անկողնին եզերքը նստած, մէկ սրունքը տաբատին մէջ՝ Փիէռ աւելցուց. «Խենթիս երագը»: Յետոյ սակայն հետզհետէ կորսուող աւելին աղմուկը կարծես քշեց ու տարաւ թմրութիւնը մտքի: Այն, երիտասարդի մը տեսած երագին խենթը չ'ըլլար, երբոր այդ երագին մէջ կին մը կայ: Թերեւս ատոր մօտիկ բան մը կ'ըլլար, բայց ոչ ճիշդ այդ: Դուռ մը բացուեցաւ: Սուրբ կոյս Մարիամ, սուրբ կոյս Մարիամ. Նէնէթէն զատ ո՞ր կինը կրնար նշանակել: Անշուշտ Նէնէթէն էր: Իսկ մանուկ մը միշտ բեռ, մտատանջութիւն ըսել է. անշուշտ, թէ Նէնէթ մտատանջութիւն մը ունէր. մեծ բեռ մը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ Փիէռին իրեն պատճառած հոգը: Եւ ճանճը, անոր մազերուն գոյնը ունեցող այդ դեղին ճանճը, Նէնէթին հոգին էր: Այն խարդախ, աղտոտ, զզուելի հոգին, որուն դիմաց ի զ՛նր իր սէրն էր բուրվառեր, ի զ՛նր իր գորովն ու տենչանքն էր ծխեր:

Ուզէր էր շարժել զայն, նետուիլ անոր, նոյնիսկ բռնութեամբ ցնցել այդ սիրտը, որ հետզհետէ աւելի կը դեղնէր հոն, քիթին վրայ, հպարտութեան վրայ: Հապա Սելէսթէնը, ճաշարանը իրեն սպասարկող ծառան. Լեսքիւնն էր: Ո՛չ, ո՛չ, Սելէսթէնը բան մը չի նշանակէր. ճաշարանի ծառայ մը բան մըն ալ ըսել չէ: Եզրակացութիւն: Յանկարծական որոշում մը՝ եւ սեղանը իր բեռներէն թերեւցուց, անցաւ անոր առջեւ ու անշարժ մնաց գլուխը երկու ձեռքերուն մէջ,



տխուր, գրեթե անյոյս: Այս առաւօտ ամէն աշխատութիւն անկարելի պիտի ըլլար: Առաջին անգամն է, որ Փիէռ ինքզինքը այսքան ընկճուած զգաց եւ հասկցաւ, թէ տարբեր, բացառիկ ճիգ մը պէտք է ընէ պաղարհինութիւնն ու իր անձին տիրականութիւնը պահել կարենալու համար: Վանեց նախորդ օրերուն ու երէկ գիշերուան յիշատակը եւ մտածումը տարաւ աւելի ետեւ, գարնան առաջին արեւներուն, կորսուած առաջին արեւին:

Ինչպիսի՞ արեւ մը կը ծագէր ամէն անգամ, որ ներս մտնելուն քաշէր գլխարկը գլխէն, եւ իր ոսկի մազերը լայննային, բացուէին, ու գլխի ցնցումով բազմապատկուէին ճառագայթները ժպիտի: Ինչպիսի՞ արեւ մը կը բացուէր իր սրտին, երբոր անոր վերարկուն կը բանար, թելերը կ'անցնէր անութներէն եւ բազուկներուն ամբողջ ուժին մէջ կը սեղմէր զայն ուժով, ուժով, մինչեւ որ ան ճշար, մինչեւ որ ինք ճշար. Նենէթ, շեռի! Յետոյ... Օ, միշտ այսպէս էր, միշտ կը կռուէին: Նէնէթ խիստ հակառակասէր էր, ամէն բանի կ'ուզեր ընդդիմանալ, քիթը ցցել օդին, յօնքերը պռստել. «Այո՛, ո՛չ, անշուշտ, երբէք». մինչեւ որ երկուքէն մէկը նեղսրտութիւն կեղծէր: Երիտասարդը միշտ կը խնդար անոր բարկանալու կերպին վրայ, գիտնալով, որ սիրոյ բարկութիւն մըն է պարզապէս: Նէնէթ բնաւ չէր ուզէր, որ իր բարկացած ատենը ան խնդայ. կը պնդէր, թէ ինք միայն լրջօրէն բարկանալ գիտէ, եւ կ'երթար գլուխը մխրճել բարձերուն մէջ, երբոր Փիէռի գիծերը կախուէին: Յետոյ մէկէն կը ցցուէր Նէնէթ, բերանը կը տեղաւորէր անոր բերնին շուրջ, աչքերը կը քթթէր ու կը խաճներ. - Հասկցա՛ր. հիմա կը սորվիս, թէ ինչ ըսել է ամէն բանի հակառակը պնդել: Յետոյ կը ձգէր, որ Փիէռ ուզածը ընէ, ուզածին պէս իր հետը խաղայ: Կը յանձնուէր, կը թուլնար, մէկէն սաստիկ ուժովնալու համար. - հասկցա՛ր. հիմա կը սորվիս, թէ ինչ ըսել է ամէն բանի հակառակը պնդել: Եւ այսպէս անցան օրեր, շաբաթներ, ամիս: Փարիզի առաջին գեղեցիկ գարունն էր. սենեակը լեցուեցաւ խայտանքով,

սէրով, վայելքով ու երջանկութեամբ: - Հապա՛, օր մը Նէնէթը կլթիկ ունէր: Ըսաւ, թէ ամբողջ օրը նեղուեր է. Փիէռ ուժով մը համբուրեց զայն. Փիէռ այնքան ուժով ծծեց անոր բերանը, որ կլթիկը իրեն անցաւ. հապա՛, իրեն անցաւ: Իր սովորական ժամուն մուրացիկը կու գար քովի բակը, եւ ջութակը կրկին կը մագլցէր ջութի խողովակներէն, տատանելով, յամենալով յարկերուն մէջտեղ, ու կը լսէին այդ հին, շատ հին մեղեդին բոլորին ծանօթ... Օ՛, միշտ այսպէս էր. ամէն անգամուն Փիէռ կ'որոշէր, ամբողջ կամքովը կը մտադրէր դիտել զայն հանուած պահուն, բաց աչքերով նայիլ անոր, երբոր հագուստը վրայէն նետել պատրաստուի, վայելել այդ լաւագոյն պահը, գիտնալ թէ ինչ արտայայտութիւն պիտի առնէ, ինչ դիրք պիտի բռնէ: Եւ ամէն անգամուն չէր ըլլար. ամէն անգամուն զայն կը գտնէր անկողնին մէջ, արդէն իսկ հանուած. չէր ըլլար... Հապա՛, առաջին օրը, ցերեկուան գինովութեան յաջորդող գիշերը, երբոր Փիէռ ա՛լ վերջապէս անկողին մտաւ, բարձր տակալին Նէնէթ կը բուրէր: Ուժով մը գրկեց զայն, քիթը մխրճեց անոր մէջ եւ այդպէս քնացաւ: Հապա՛, չքնացաւ: - Յետոյ, ամառուան առաջին օրերուն, տասնըհինգ օրուան համար գիւղ մը քաշուեցան: Հեռաւոր հովիտի մը անտառներուն մէջ կորսուած անկիւն մը: Կեանքին մէջ առաջին անգամն էր, որ Փիէռ գիւղ եւ քաղաքապետի հրովարտակ կը տեսնէր: Խիստ բարձր անկողին մը ունէին եւ վերի յարդանոցին մէջ մուկեր ամբողջ գիշերը հալածեցին զիրար: Նէնէթ վախցաւ ու կծկտեցաւ երիտասարդին կուրծքին մէջ: Այդպէս քնացաւ ու առաւօտուն Փիէռ զայն նոյն դիրքով գտաւ, գիւղական աներեւակայելի լռութեամբ խուլցած: Ոչխարներ անցան. «Կա՛թ կ'ուզեմ, ե՛ս ալ կաթ կուզեմ», ըսաւ Փիէռ տղու մը պէս զայն սեղմելով, «Ագա՛հ, ագա՛հ» ու Նէնէթ անկողնին մէջ շտկուեցաւ, մինչ ան, երջանիկ՝ գլուխը կը թաղէր աճապարանօք: - Երկանիւները կը ձգէին հող, արահետին եզերքը, ու զառիվերը կը բարձրանային ծառերուն մէջէն, մարգարտածաղիկներ ճզմելով: Բացաստանէն

- գիւղին հովիւը ամէն անգամ Ռոբէսփիէոյ վրայ կը խօսէր ականարկը շունին - բացաստանէն օդանաւ մը կը փախչէր երկու ամպերու հետ, մինչ սկիւռները գեղագրութիւն կ'ընէին: Ձեռք ձեռքի կը բարձրանային մինչեւ վեր սարահարթին վրայ, իրենց սիրական անկիւնը: Հոն, խոտերուն մէջ կը շրջէր զայն ու կը համբուրէր. մինչ վարը գեղագրութիւն կ'ընէին:

Փիէռ ոտքի ցցուեցաւ յանկարծ՝ աչքերը խոշոր մը բացած, ցաւագին արտայայտութեամբ մը: Քովի բակին ջութակը սկսած էր: Աթոռը մէկդի նետեց, քանի մը շրջան ըրաւ սենեակին մէջ, ուզեց մեկնիլ նուագը չլսելու համար, բայց անկարող՝ մօտեցաւ պատուհանին ու վարագոյրը քաշեց:

Տասնըհինգ օրը ամարտելուն՝ բաժնուեցան իրարմէ: Ինք վերադարձաւ Փարիզ, իսկ ան Լեսքիւռին հետ գնաց ծովափ՝ ամառուան երկու ամիսները անցընելու: Առանձին մնալուն պէս Փիէռ խորհեցաւ: Նախ գործի: Լուսանկարչական կարելոր տունէ մը սկսաւ ապակի առնել ու սենեակը ուղթուշ ընել զանոնք, սպասելով բարեկամուհիին դարձին, երբ վերջնականապէս պիտի որոշուէր ընելիքը: Անշուշտ Լեսքիւռը պիտի թողուր Նէնէթ, եւ միասին պիտի ապրէին հոս կամ ուրիշ քաղաք մը, իրենց սեփական աշխատանքը հաստատելով: Անշուշտ: Փիէռ կը ցաւէր ժաննէն վերջնական խօսք մը առած չըլլալուն, բնաւ լրջօրէն չէին խօսած ապագային վրայ, ու բան մը չէր որոշուած: Եւ արդէն կարելի էր միթէ սա առաջին շրջանին: Երկու ամիսները սաստիկ երկարեցան: Երբոր սեպտեմբերը վերջապէս հասաւ, խիստ բարկացած էր Պետրոս. երկու բացիկ միայն ստացեր էր իրմէ, ամբողջ ամառուան ընթացքին (եւ մէկը միայն գունաւոր: Միւսին վրայ կով մը կար. իրաւ, ուրիշ բաներ ալ կային, բայց մանաւանդ կով մը կար):

Ու ժաննի Փարիզ դարձը շաբաթ մը վերջ միայն լսեց: Համբուրուեցան: Մորթը արեւէն այրեր էր: Շատ մը պատկերներ ցուցուց. պնդավարտիքով՝ ջուրերու եւ անձանօթ

երիտասարդներու մէջ, ժպտուն ու երջանիկ՝ կովերու եւ պարող զոյգերու մէջ: Խօսեցան: Յոգնած էր: Բաժնուեցան:

Պետրոս արագ-արագ կը դառնար սենեակին մէջ, ինչպէս դէպքերը իր մտածումին մէջ: Ասկէ անդին այլեւս զանոնք կանոնաւոր շարքով մը չէր կրնար վերյիշել: Իրողութիւնը շուտով ըմբռնելու համար բաւականաչափ կը ճանչնար Փարիզի դիմագիծը եւ առաջին օրերէն իսկ հասկցած էր, թէ ժանն չէր ուզէր իրեն հետ նախկին կեանքը վերսկսիլ, որովհետեւ վերսկսած էր իր կեանքին, զոր պահ մը վրայէն նետեր էր Փիէռին առջեւ: Հայը այնքան չքարկացաւ, այնքան չկատողեցաւ իր նախատեսած բաժանումի հեռապատկերին դիմաց որ օրըստօրէ իրողութիւն մը կը դառնար, որքան երբոր ճանչցաւ ժաննին վարած կեանքը: Այդ կինը աշխատութիւնը նախընտրող ֆրանսուհիներու դասակարգին չէր պատկաներ: Եւ եթէ երբեք բաւական երկար ատեն, գրեթէ կանոնաւորաբար եկած էր խանութ, պատճառը երիտասարդին ներկայութիւնը կրնար ըլլալ միայն, քանի որ հիմա ալ նոյնը չէր: Աշխատանոցը ձգուած էր երրորդի մը, ուրկէ շաբաթը անգամ մը երթալ հաշիւը առնելով կը գոհանար ժանն: Իսկ վարած կեանքը: Պետրոս նախ չհաւատաց. կարծեց, թէ պարզապէս զինքը հեռացնելու, զինքը գանեցնելու համար կ'ընէ այդ բոլորը, գիտէ, թէ իրապէս սիրելուն չպիտի ուզէ շուտով հեռանալ, եւ այդ միջոցին դիմած է ժանն, բայց վերջը տեսաւ որ... ո՛չ, բան մըն ալ չկրցաւ տեսնել եւ նախամեծար համարեց չկորսուիլ խրթնութիւններու, մանուածապատ ենթադրութիւններու մէջ ու իրողութիւնը առնել այնպէս, ինչպէս որ կը ներկայանայ: Խիստ հազուադէպօրէն միայն կարելի էր ժաննը տունը գտնել. գրեթէ միշտ կ'երթար գիշերել Լեսքիւռին յարկաբաժինը, ուր, կ'ըսէր, իր մասնաւոր սենեակը ունի: Ինչպէ՛ս կ'անցընէր կէսօրէ վերջերը. որո՞նք էին այդ բարեկամուհիներն ու բարեկամները, որոնք այդքան շատ զինքը կը զբաղեցնէին. նոր սէր մըն էր սկսած ուրիշի հետ:

Ինչ օգուտ կար ասոնց ու ասոնց նման շատ մը հարցումներուն ճիշդ պատասխանը ունենալուն մէջ: Պետրոս գիտէր, թէ ան թեթեւ ու շուայտ կեանք մը կ'ապրի, ամէն օր ժամանցի եւ զուարճութիւններու ետեւէ է, կ'երթայ, կու գայ, շարժանկարի մը, գուշակ կնոջ, նոր վաճառատան մը բացումին, կարուիիի այն անվերջանալի փորձերուն, մազայարդարին եւ ամէն երեկոյ թալթօն կը քշէ անտառ, խումբ մը ծանօթներու հետ ժամը հինգի թէյը առնելու ու պարելու: Գիշերները Լեսքիւռին կ'ընկերանար անխուսափելիօրէն եւ միասին կ'երթային Փարիզի անհամար cabaretներէն ու boîte de nuitներէն\* մէկը, ուր արարածներ կը խմեն, կ'երգեն, կը պարեն ու կը շնանան:

Եւ ըսել, թէ ինք այնքան բարձր դասեր էր իր Նէնէթը... Անոր մասին որքան հիմնովին տարբեր մտապատկեր մըն էր կազմած: Հակառակ երիտասարդ կնոջ գեղեցկութեան, բարեկեցիկ դիրքին եւ ազատութեան, չէր կրցեր ուրիշներու կարգին դասել ան ալ, շփոթել հեշտասէրներու մէկ տեսակին հետ. դէպք մը չէր եկեր տարակուսանք ու կասկած տալ անակնկալներու վարժուած իր մտածումին ու ինք գերուեր, տարուեր էր անոր անկեղծութեան եւ նուիրումի զգացումներէն: Հասարակ խաբկանքը անփորձառու մէկու մը: Եթէ այո՛, արդարանալի էր մասամբ. քանի որ Պետրոս բնաւ առիթը չունեցաւ իր սիրուիին մտերիմ կեանքի մէջ, իր միջավայրին մէջ տեսնելու, ոչինչ գիտցաւ անոր անցեալէն, ծնունդէն, անցուցած գիշերներէն եւ բնական բերումով մը իր սիրածը եղաւ խանութին Նէնէթը. Նէնէթը այնքան (գեղեցիկ) շէնշող, պարզ, անկեղծ (գեղեցիկ) եւ այնքան բարեացակամ ու գորովոտ իրեն հանդէպ, այնքան... (գեղեցիկ): Եւ սակայն ո՛չ, կարծուածին չափ ալ չէր սխալած. իրաւ է, թէ իր Հայու ըմբռնումով քիչ մը շատ պարզացուց զայն, սիրով կուրցած՝ ուզեց այդ էակը այդպէս տեսնել, ինքզինքը խաբեց նոյնիսկ ու կամովին մոռցաւ ֆրանսու-

\* Գիշերային գիներուն:

հիներու հանդէպ կազմած իր գաղափարը, բայց եւ այնպէս ամէն ինչ խաբկանք չէր բնաւ: Ոչ, Troisième Empireը միայն իր հաճոյքին համար չէ, որ այդ կեանքը կը վարէր ու ժաննը կը քաշէր իր ետեւէն: Պետրոս ալ աւելի քան երբեք կը հաւատար, թէ այս թիփը գաղտնիք մը ունի: Ինչ գաղտնիք: Նախ որ իր հրատարակած «Փարիզեան» թերթին համար ստիպուած է այդպիսի շրջանակներու մէջ ըլլալ, թերթաբարոյ նիւթեր հաւաքել, մտնել այն վոհմակին մէջ, ուր կիներ՝ պարուհիի, երգչուհիի կամ շարժանկարի «աստղ»ի պիտակին տակ կեանքերնին շինել կը ջանան, ստիպուած է մօտենալ անոնցմէ այն երջանիկին, որ հարուստ մըն է ձեռք անցուցած, եւ թերթին մէջ անոր մարմինը ցուցադրել կարելի եղածին չափ մերկ... Այսքան միայն: Ոչ, աստիկա երեւցածն էր, արտաքինն էր, աստիկա դիմակն էր: Այդ կանաչ, աղտոտ աչքերուն, կեղծաւոր նուրբ շրթունքներուն եւ հինգ ֆրանքնոցի մը պէս ճմռթկուած դէմքին ետեւ բան մը կար պահուած: Այդպիսի հաճոյքի տուներու մէջ սովորական եղող «գոգային»ի առուտո՞ւր կ'ընէր արդեօք. դրան ետեւ բարեկամին ձեռքը սեղմած ատեն պիտի տա՞ր ծալուած պզտիկ թուղթը. լուցկիին տուփը սա կնոջ երկարելը միջոց մը չէ՞ր միթէ. ինչո՞ւ ատենը անգամ մը ձեռք լուալու կ'երթար ու վարագոյրին ետեւ այսքան երկար կը խօսէր սա խայտառակին հետ: Անգամ մը բառ մը հասաւ Պետրոսի ականջին. - Պուէնոս Այրէս. - եւ մէկէն՝ հետեւութիւն մը. «Արդեօք բոզարա՞ծ է»: Ինչո՞ւ չէ, ճանչցած կիները բոլորն ալ բոզեր են, եւ անոնցմէ շատեր հետը եզակի կը խօսին. նոյնիսկ դեռ անցեալ օր հատ մը... սակայն բոզարած մը ճամբորդող կ'ըլլայ, մինչդեռ Լեսքիւռ...

Առաջին շաբաթներու խուսափումներէն յետոյ, երբոր Փիէռ աւելի կտրուկ եղաւ իր պահանջքին մէջ, ժանն ստիպուեցաւ բացայայտ կերպով վերջակէտել իր մերժումը: Նախ պզտիկ բառերով սկսան. Փիէռ ըսաւ, թէ սաստիկ կարօտցած էր զայն, թէ իրապէս կը տառապէր, երբեք չէր կրնար խզումի գաղափարն իսկ տանիլ... այո, այսպէս

պզտիկ խօսքերով սկսան եւ յետոյ... կայ վեճ մը, որ այն-  
քան շուտ բուն հանգամանք ստանայ, որքան սիրային  
բաժանումի մը վեճը, երբոր երկու բոցերը միաժամանակ  
չեն նուաղած:

Փիէռ շուտով կատողեցաւ, ուզեց զայն վերաշահիլ ի գին  
ամէն բանի, ջանաց համոզել, փաղաքշել, յետոյ սպառնաց.  
փրփրեցաւ: Ֆրանսուիիին գործելու եղանակը խուսափիլն  
էր. գէշ գործելակերպ մը: Նամակներուն ուշ կը պատաս-  
խանէր, իսկ հեռաձայնի հարուածի մը կ'ըսէր օրինակի  
համար. «Ա՛, դո՛ւն ես... այս գիշեր «Սեւ կով»ին պիտի ըլ-  
լամ. եկուր զիս տես, եթէ կը փափաքիս... թող որ Լեսքիւն  
ալ հոն պիտի ըլլայ... ո՛չ, ո՛չ... բայց այնտեղի ճագը շատ  
աղուոր է, անոր համար...»: Ուրիշ միջոց չկար. Փիէռ ստի-  
պուած կռնակը կ'անցընէր սնոքինկը եւ կ'երթար: Արտա-  
քուստ բան մը յայտնի չէր սակայն, միշտ սիրալիր էին իրեն  
հանդէպ. զինքը իրենց սեղանը կ'առնէին, Նէնէթ միշտ  
կատակներ կ'ընէր, իսկ Լեսքիւն ամէն անգամ նոր բարե-  
կամ մը ունէր իրեն ներկայացնելիք եւ նոր «մարսիլիական  
պատմութիւն» մը՝ ծամծմելիք: Բայց երբոր Փիէռ ու Նէնէթ  
կ'ելլէին պարել, երիտասարդը կարծես հեւքն է որ կ'ար-  
ձակէր կնոջ ծոծրակն ի վար. «Այո՛, այո՛ ըսէ, Նէնէթ, այո՛  
ըսէ...»: Նէնէթին «այո»ն երբեք չէր լսուեր, յանցանքը ճա-  
զինը չէր. շատ աղուոր ճագ մըն էր: Իրենց ունեցած վիճա-  
բանութիւններուն ընթացքին կնոջ գործածած լեզուն էա-  
պէս կարելի է պարզել. «Ես կարծածիդ նման քմահաճոյքէ  
մը մղուած չէ, որ մօտեցայ քեզի, միայն մարմնական հա-  
ճոյքի որոնումին մէջ չէի, քեզի հանդէպ ունեցածս անկեղծ  
էր. բայց եթէ երբեք առաջին օրերուն իսկ քու զգացումիդ  
ընդառաջ չեկայ, պատճառը այն էր, որ գիտէի, թէ դուն ալ  
անկեղծ էիր, լուրջ էիր եւ մեր կեանքերուն միացումը ան-  
կարելի ըլլալով, օր մը բաժանումի այս ցաւը անխուսափելի  
պիտի դառնար: Նոյն բանը կ'ուզէի ըսել քեզ, երբոր առա-  
ջին անգամ սենեակդ եկայ, բայց չուզեցիր զիս լսել: Եւ ես  
տեղի տուի: Պէտք չէր, որ տեղի տայի, գիտեմ, մեծագոյն

յանցանքս եղաւ. ինքզինքիս երբեք չպիտի ներեմ, բայց... ըսի թէ ես ալ քեզի հանդէպ զգացում մը ունէի: Ինչ ընեմ, ազատ չեմ, շատ մը կապերով միացած եմ Լէսքիւռին. անկարելի է, որ կարենամ զինքը ձգել: Միամտութիւնը չունենաս կարծելու, թէ ան մեր երկուքին յարաբերութիւնները չէր գիտէր. ան ամէն բան գիտէ. ըսաւ ինձ՝ երբոր ամառը քեզմէ բաժնուելէ վերջ գացի իրեն միանալ Տովիլ: Աւելի ուշ՝ բաժանումնիս շատ ավելի դժուար պիտի ըլլայ թէ՛ քեզի եւ թէ՛ ինձի համար... այո, այո, ոչ մի՛ ըսէր. լաւ բարեկամներ մնանք միայն, դուն նորէն իմ Փիէռօս եղիր...»:

Ո՛չ, առաջարկուած այդ բարեկամութիւնը Փիէռ չէր կրնար ընդունիլ: Մնաց միայն քաղաքավարութիւնը: Ան ալ շուտով պիտի կորսուէր: Վերջին անգամ, երբոր առիթը ունեցաւ ժաննը առանձին գտնելու, իրենց տեսակցութիւնը խիստ դժնդակ եղաւ: Փիէռ շուտ ինքնիրմէն ելաւ, կորսնցուց նոյնիսկ կշիռը արտասանած խօսքերուն, յետոյ պարտուած, խորտակուած, ակնարկը պղտորեցաւ, յուզումը զինքը պաշարեց, կառչեցաւ անոր յոյսի դեռ պզտիկ նշոյլով մը. «այո՛, այո՛...»: Ամէն բան վերջացաւ: «Օ՛հ, ալ թող աւարտի, թող ալ աւարտի...»: Սակայն անցնող յուզումը կատաղութիւնը սաստկացուց: Փիէռ տակաւին ուզեց զայն տեսնել, դեռ պոռալ անոր երեսին, ամբողջ նողկանքը շարտել դէմքն ի վեր: Դեռ ըսելիք ինչէր կային: Փիէռ ուզեց ցաւցնել զայն, վրէժ լուծել: Գիտէր թէ այս գիշեր ուր կրնար անոր հանդիպիլ. պէտք էր զայն տեսնել, պէտք էր: Պատրաստուեցաւ, գնաց:

Գիշեր. Troisième édition d'Intran\*. սին, սին անձրեւ. փայլուն ասուալթ, երկարող ցուքեր. կանաչ (կեցնոր), կապոյտ, (նամակ), կարմիր (կը կենայ). Rochechouart 23 37 G 7 պողոտայ. թրջած լոյս, գունաւոր կայծակներ՝ գիրի ձեւ ունեցող ապակիէ խողովակներու մէջ քոնսերվայի պէս պահուած. Concorde\*\* կորթողին ծայրէն ահեղ ձեռք

\* «Էնթրանսիժան» թերթի երրորդ հրատարակութիւն:

\*\* «Համերաշխութեան» հրապարակ Փարիզում:



մը բռնած՝ հրապարակը արագօրէն կը դարձնէ ափսէի մը պէս. Champs Elysées\*. լապտերներու տողանցք՝ զօրավար «երրորդ արագութեան» կողմէ. ինքնաշարժներու մէջ սրունքներ, ծունկերու վրայ ձեռքեր: Restaurant Volterre. Rue Balzachs\*\* անկիւնը. պզտիկ խափշիկ, հսկայ հովանոց, մարաջախտ-դռնապան: Փիէռ խիստ վայելչակազմ ու բարեձեւ է. անթերի սմոքինկ մը, լուսթռին կօշիկներ. մազերը կը փայլին, բերնին անկիւնները թեթեւ մը վար են քաշուած եւ կարծես դէմքին դժգունութիւն մը կայ: Հայելիներ ամէն կողմ, լոյսեր՝ հայելիներուն, առաստաղին ու սեղաններուն վրայ: Ձեղնաջահ եւ լուսարձակ: Նուագախմբի կազմ ունեցող երկու աղմկախումբ, մէկը փարիզեան, միւսը արժանթինեան: Սրունքներու մէջ սրունքներ, աչքերու մէջ խոնաւութիւն, մերկ կարելիութիւններ: Կին շիկերէ, աննկարագրելի գեղեցկութեամբ, սրտակեր՝ ակնարկով ու երախով, երկար ատենէ ի վեր սովալլուկ: Չարլսթօն: Նէնէթին ուսերն ու բազուկները մերկ են, կռնակն ալ. իր մարգարտափայլ զգեստը մինչեւ ծունկերուն իջնելով տարտամօրէն մանիշակագոյն կ'ըլլայ. կուրծքերուն վրայ՝ սպիտակախայտ: Քովի երիտասարդին հետ անդադար կը խօսի ան, կը խնդայ, բաժակը շրթներուն կը տանի, կը ծխէ: Պարեցին, չպարեցին, աղմուկը շատցաւ, սեղաններու վրայ գտնուող սառը դոյլերուն մէջ շիշերը փոխուեցան: Փիէռն ալ փոխուեցաւ յանկարծ, աղջիկ մը գտաւ ու անդադար ու արագօրէն պարեց: Ունքըլլէյի: Փիէռ սովորականէն աւելի խմեց: Ունքըլլէյի: Փիէռ շրջուած էր. ոտքերը վեր, գլուխը վար էին. վար դարձած գլուխը հաստատուած էր դաշնակի պտուտակաւոր աթոռի մը վրայ, որ անդադար կը քակուէր: Մօտեցաւ Նէնէթին. ան նախ անշարժ մնաց, յետոյ մէկէն ոտքի ցցուեցաւ. քովի տղայադէմ երիտասարդը դէմքը ծածկեց ժպիտի մը մէջ եւ սիկառին ծուխը դուրս արձակելու համար մէկ աչքը գոցեց: Նէնէթ շառագունեցաւ. Փիէռ

\* Ելիսէեան դաշտեր՝ փարիզեան զբօսայգի:

\*\* Ռեստորան «Վօլթեր»՝ Բալզակի անուան փողոցում:

ինչ ըսաւ. Troisième Empire-ը հեռուէն ականարկով կը հետեւէր. Փիէռ ինչո՞ւ այդքան բրտօրէն կնոջ դաստակը սեղմեց. Լէսքիւռ մօտեցաւ ու լսեց միայն վերջին նախադասութիւնը. «Ֆրանսացի պիտի չըլլայիր, եթէ բոզ չըլլայիր», ձեռքը ինկաւ Հայուն ուսին. ան ետեւ դարձաւ անմիջապէս, դէմքին սադայելական ժպիտ մը եկաւ, շրթներուն անկիւնները դողացին, աչքերը արտակարգ փայլ մը ստացան. ինչ ըսաւ. ինչո՞ւ այդքան ուժգին ըսաւ. Լէսքիւռ անմիջապէս ապտակ մը իջեցուց, արագ, շատ արագ, խարազանի հարուածի մը պէս:

### (ՎԱՐԱԳՈՅՐ)

Փողոցին անկիւնը հովի ուժգին յորձանք մը զինքը կեցուց: Գլխարկը հանեց եւ դէմքը այդպէս հովին ու անձրեւին՝ թոքերուն ամբողջ խորութեամբը ներշնչեց: Լիզող ցուրտ հովը եւ այտերն ի վար իջնող կաթիլները անկարող էին սակայն իր ջերմը մեղմելու, տենդը քունքերէն վանելու: Զգաց, որ յոգներ էր. անշուշտ ժամեր կային, որ փողոցէ փողոց կը շրջէր այսպէս, կատաղութեամբը հալածուած: Ո՛ւր էր. դիտեց շուրջը, չճանչցաւ. կարդաց անկիւնի նշանատախտակը. տասնըհինգերորդ թաղամաս. ըսել է գետը անցէր էր, բնաւ չիշեց: Նորէն սկսաւ դէպքը կրկնել ինքզինքին, ծայրէն, այս անգամ իրապէս էն ծայրէն: Երբոր ապտակին հասաւ, քայլերը արագացան ակամայ: Ինչպէս կրցին այդքան շուտ միջամտել եւ բաժնել զիրենք. ինչպէս չկրցաւ պատասխանել այդ հարուածին, կոկորդին նետովիլ, բան մը ընել, գոնէ... եթէ զինքը այդքան շուտ դուրս չառաջնորդէին... չուզեց գայթակղութիւն հանել... Հապա այն խճուքը, այն խճուքը հապա, զոր Լէսքիւռ անմիջապէս վերջը աւելցուց. «Այս խնդիրը այսպէս կ'աւարտի»: Կ'աւարտի...: Դեռ բաւական քալել պէտք եղաւ մինչեւ ծանօթ պողոտայ մը հասնիլը: Անձրեւը միշտ կը շարունակուէր, եւ փողոցները մարդ չկար: Ատենը անգամ մը հեծելանուորդ

ոստիկաններ կ'անցնէին զոյգ զոյգ, անձայն, անխօս: Փողոցին միւս անկիւնը տակաւին մարմնեղ, բայց լղրճուած ու որդնոտած աչքերով պոռնիկ մըն էր կեցած մայթին կասկարայածել այն մասին վրայ, ուրկէ ընդերկրեայ ելեկտրաշարժի գետնուղին կ'արտաշնչէ: Սրունքները բացած՝ ան կը թողուր, որ այդ նեխոտ, բայց տաք օդը պլլուի իր բումբերուն, գգուէ, շոյէ զանոնք, բարձրանայ վեր, ծունկերէն, զիստերէն, ազդրերէն, գաղջութեամբը լիզէ իր մերկ միսերը, յոգնած, ճանկոտուած: Ատենը անգամ մը կը հազար, կը թքներ, յետոյ փորին վրայէն հագուստը բռնելով կը քաշէր, տեղ տալու համար ջերմութեան, որ պորտին վրայէն սողոսկի, բարձրանայ կուրծքերուն, մինչեւ որ լղրճուած ու որդնոտած աչքերը գոցուին հեշտանքով, ալ կորսուած այն հին հեշտանքով:

Երբոր Փիէռ զայն նշմարեց, կանչեց հեռուէն.

- Բաս'դ: Նէնէթ...

- Mon chéri!\*

Երիտասարդը բառ մը աւելի չկրցաւ ըսել սակայն, եւ թողուց, որ հանրութիւնը թելը մտնայ ու զինքը տանի:

## 2

Թէրէզն է, որ դուռը բացաւ. ժպիտի մը հետ պզտիկ բացականչութիւն մը արձակեց ու զինքը ընդունեց սիրալիր: Ո՛չ, Լէսքիւռը հոն չէր, բայց շուտով պիտի գար, իսկ ժաննը երկու օրէ ի վեր բնաւ չէր երեւցած: Երկո՛ւ օրէ ի վեր. ըսել է ապտակին գիշերուընէն ի վեր...

Թէրէզը Լէսքիւռին միակ սպասուիին է: Սպասուիիէ աւելի բան մը անշուշտ, քանի որ այդ մարդուն ծառայութեանը մէջ է անցուցած գրեթէ իր ամբողջ կեանքը եւ հաւատարիմ կենդանիի մը պէս չէ լքած զայն նոյնիսկ դժուարին շրջաններ: Ինչպէս որ կը պատահի այսպիսի պարագաներու, տարիներու բոլորումով կամաց-կամաց ելած

\* Սիրելիս:

է՛ ան իր ծառայի հանգամանքէն՝ ամուրիին սա պարապ տանը մէջ կիսկատար տանտիրուի մը դառնալու համար: Կարճ հասակի մէջ անորոշ տարիք, ներս քաշուած պզտիկ աչքեր, սուր քիթ, անարժէք բերան: Գլխուն եւ կուրծքին միջեւ ճաշակի տարակարծութիւն. մէկուն վրայ շլնիք՝ անցեալ նորաձեւութիւն, կուրծքը տափակ՝ ներկայ նորաձեւութիւն: Փիէռ պուվար Սէն Ժէռմէն եղած ատենը անգամ մը լուսանկարեց այս կինը, յետոյ զայն տեսաւ հոս ըրած քանի մը այցելութիւններուն ընթացքին, մինչեւ որ դէպք մը եկաւ տեսակ մը մօտիկութիւն ստեղծելու իրենց միջեւ: Անցնող վերջին շաբաթներուն Փիէռն է, որ առաւօտեան դէմ մինչեւ հոս, իր տան դուռը ընկերացեր էր Լէսքիւռին, երբոր ան գինով, սանդուխներուն վրայ կը տատանէր:

Հիրասենեակին մէջ առանձին մնալուն պէս, Փիէռ ոտքի ցցուեցաւ թիկնաթոռէն, գլխարկը արձակեց մէջտեղի սեղանին վրայ, ու դէմքին արտայայտութիւնը փոխուեցաւ: Ճիգ մը ընելու պէտք չկար բնաւ՝ նախկին տրամադրութիւնը գտնելու համար: Հոգեկան այդ վիճակը երկու օրէ ի վեր իր պատուախնդիր երիտասարդի եսը կը դաշունահարէր, կը խեղդէր: Պէտք էր վերջանար այս տառապանքը, եւ մէկ անգամէն: Դադրեցաւ սեղանին շուրջ դառնալէ, կեցաւ շրմինէին առջեւ, ինքզինքը դիտեց հայելիին մէջ: Դեղնած էր ու անքնութիւնը աչքերէն մէկուն մէջ քիչ մը կարմիր էր ձգած: Հիմա պիտի գար անշուշտ Լէսքիւռը եւ նորէն պիտի ըլլային դէմ դէմի, ալ այս անգամ բոլորովին առանձին. բան մը պիտի չըսէր, բառ մը պիտի չարտասանէր, որոշած էր. ահա կռուիք, այս կռուիք, ուղիղ՝ քիթին բերնին: Այս խնդիրը այսպէս կ'աւարտի: Իսկապէս Հայ էր ան այս պահուս. բան մը չէր մնացած մեծ ոստանին իրեն պարտադրած կեղծ քաղաքավարութենէն, ծեքծեքանքէն, ձեւակերպութիւններէն: Արիւնը քանի մը վայրկեան զսպուած ըլլալուն համար կարծես աւելի կ'եփէր երակներուն մէջ, ու արթնցած ջիղերը կը թրթռային: Փիէռ անզսպելի կատաղութիւնը ունէր խաճնելու, ճանկռտելու, բզքտելու: Սար-

սափելի արագութեամբ բան մը կը դառնար ու կը սպառէր կուրծքին տակ եւ որ պիտի լռէր անկասկած, եւ որ պիտի գոհանար միայն այն ընկալիքին, երբոր իր թելը բարձրանար: Ինչ պիտի ըլլար Troisième Empireին այդ կարկտանուած դիմագիծը, ինչպէս պիտի տատանէր արդեօք իր անուժ սրունքներուն վրայ, ինչպէս հարուածին տակ պիտի պարպուէր հպարտութենէ պայթած բալոնի մը պէս... Օ՛, Փիէռին այնպէս կու գար, որ այդ պահուն Նէնէթին արհամարհանքն է, որ պիտի տատանէր, անոր ակերող ժպիտն է որ պիտի լռէր: Ո՛չ, ո՛չ, Նէնէթին բան մը կարելի չէ ընել, բայց ասոր, այս արարածին: Այո՛, որոշումը վճռական է, ահա կռուիք, այս կռուիք, ուղիղ՝ քիթին բերնին: Լէսքիւռ կ'ուշանար սակայն, եւ իր համբերութիւնը շուտով սպառեցաւ: Սպասուիին ստե՛ց արդեօք: Յանձնարարուած էր, ծանօթ էր դէպքին եւ զինքը դիտմամբ առաջնորդեց հոս, որպէսզի իր տէրը միւս կողմէն մեկնի: Աղմուկ մը լսեց. իր անցած դռնէն զատ սենեակը երկու դուռ եւս ունէր: Մէկուն առջեւ լայն վարագոյր մը կար, գիտէր, թէ ան ննջասենեակ մը կ'առաջնորդէ, իսկ միւսը, ձախ կողմինը, ամբողջութեամբ չէր գոցուած:

Հրեց զայն: Կարճ նրբանցքի մը ծայրը կը նշմարուէր գրասենեակ մը: Փիէռ երկու քայլով հոն հասաւ. մարդ չկար. կեցաւ, շուրջը դիտեց, անվախ, համարձակ, յարձակողական: Պատուհանին առջեւի կապոյտ լամբով գրասեղանը ծանրաբեռնուած էր տետրակներով, թուղթերով, գրիչներով. այդ սեղանին վրայէն շատ աշխատութիւն էր անցած: Բացաւ տետրակ մը, ուզեց պրպտել, հասկնալ, բայց այդ անուններով ու հաշիւներով զբաղելու ի վիճակի չէր երբեք: Գոցեց, հեռացաւ: Երկու գրադարաններ կային գրասեղանին ետեւ, բարձր, թեթեւ, գեղակազմ: Պիտի մօտենար Փիէռ, երբոր ականարկը մէկէն կառչեցաւ պատին՝ շրջանակի մը: Վայ... խայտառակ... գեղեցիկ է... շատ գեղեցիկ է... Մօտեցաւ, կեցաւ ճիշդ դէմը ու դիտեց աչքերը բաց: Բաւական մեծ շրջանակ մըն էր, փայլուն կաղնեփայ-

տէ, ուր Նէնէթ կը ժպտէր զմայլելիօրէն, իր էն կենդանի, էն յատկանշական ժպիտով: Խիստ յաջող իւղաներկ մըն էր, անշուշտ լուսանկարի մը վրայէն պատրաստուած, ակադեմիական կատարելութեամբ մը: Նէնէթ իր մերկ ուսերը հաւաքած մուշտակի մը մէջ, գլուխը թեթեւ մը կը հակէր քիչ մը առաջ եւ, ակնարկին խորութեանը համար, եւ երկու լուսարձակներու մէջտեղ մազերուն վէտվէտումները կը սպառէին ամբողջ ոսկեգոյն երանգապնակէն: Պատկերին առջեւ Հայր կը տատանէր, կը տատանէր: Մէկէն հեռացաւ, գնաց պատուհանին վարագոյրները քաշել՝ սենեակը աւելի լուսաւորելու համար: Փափաքեցաւ նկարը առնել, հետը տանիլ, բայց ինչպէս, ո՞ր պահել որպէսզի դուրս ելած պահուն չնշմարուի: Առանց որոշում մը տուած ըլլալու, բարձրացաւ աթոռի մը վրայ եւ շրջանակը հանեց իր կեռէն: Անմիջապէս իր բարձրութենէն վար նետուեցաւ սակայն, շփոթած, շլմորած: Անակնկալի յայտնութեան առջեւ կարծես անմիտ՝ վիզը ցցելով՝ կը նայէր իր դէմը, առանց ըմբռնելու, իւղաներկը սեղմած կուրծքին: Շրջանակը բռնող կեռը իր բեռէն թեթեւնալուն պէս չոր աղմուկով մը նետուած էր վեր ու պատը անմիջապէս շարժած: Բացուողը գաղտնի դռնակ մըն էր, գոց վիճակին մէջ բոլորովին աննշմարելի՝ պատի թուղթին խաբող գիծերուն տակ: Փիէռ մօտեցաւ անցած դրան, ականջ տուաւ. ձայն չէր լսուէր. այս անգամ ուժ ստացած՝ կրցաւ որոշում մը տալ եւ շրջանակը գետին դնելով դէպի դռնակը յառաջացաւ: Խիստ պարզ կառուցուածք մը ունէր ան. վերէն կեռն էր բռնողը, որ ազատուելուն պէս տակը հաստատուած զսպանակին կը թոյլատրէր դռնակը հրել: Քաշեց ու բացաւ զայն ամբողջութեամբ: Մեծ ու խորունկ որմնախորշ մըն է մէջտեղ ելած, որուն բազմաթիւ դարակները ամբողջութեամբ բեռնաւորուած էին տուփերով: Փիէռ անմիջապէս ճանչցաւ Guilleminothին\* այդ կապոյտ տուփերը, որոնց մտերմութեանը մէջ էր ապրած երկար ատեն: Զարմացաւ սակայն, որ անոնց վրայ թիւեր

\* Տոյրօսապակիների ընկերություն:

չէին դրուած, ինչպէս որ կ'ընէր ինք եւ ինչպէս սովոր է ընել ամէն լուսանկարիչ: Մէյմէկ տառ կար միայն պզտիկ թիւի մը առջեւ, որ տասնաւորը չէր անցնէր: Քաշեց ըստ բախտի տուփ մը, մօտեցաւ պատուհանին, դրաւ գրասեղանին վրայ ու բացաւ:

Աչքերուն առջեւ բարձր բռնած ապակին սկսաւ դողալ մատներուն մէջ, եւ որպէսզի վար չիյնայ, տղան ձեռքը իջեցուց: Յայտնութեամբ մը լուսաւորուած իր ակնարկը կը շարունակէր նայիլ դիմաց, անձանօթին մէջ, այս անգամ իրապէս ծանօթին մէջ: Զարմացումի ըրպէն շատ շուտով անցաւ: Փիէռ անմիջապէս ըմբռնած էր: Ապակին կրկին բարձրացուց ու նայեցաւ, այր մը եւ կին մը, ամբողջութեամբ մերկ, մարդկային, այսինքն աւելի քան կենդանային դիրքով մը: Ապակիներու վարժուած մէկու մը ճարտարութեամբ պարպեց տուփը ափին մէջ, սկսաւ արագ-արագ նայիլ ամէնքն ալ: Մէկ շարք մըն էր, նոյն ցած անկողնին առջեւ առնուած, նոյն դերակատարներով, անոնց դիրքերն է, որ միայն ամէն անգամ կը փոխուէին: Փիէռ թողուց յանկարծ բոլորը, վերադարձաւ որմնախորշին եւ երկրորդ տուփ մը առաւ, յետոյ երրորդ մը, չորրորդ մը: Տեսաւ, որ պիտի շփոթէր. ճիգ մը ըրաւ միտքը հաւաքելու, նայեցաւ տուփերուն որոշելու համար այն տառերը, զորս տեսած էր ու զբաղեցաւ միւսներով: Ո՛չ, առանձին սովորական մերկութիւններ գրեթէ չկային. այլ միայն մարմնական յարաբերութիւններու բոլոր ձեւերը, դիրքերը, եղանակները պատկերացնող տեսիլներ: Միշտ զոյգ մը, ուրկէ սակայն շուտով այրը հեռացաւ: Հակառակ ամէն բանի Փիէռ չկրցաւ բնաւ այդ երկու կիներուն հետեւիլ. իսկ երկու այրերը իր նողկանքն ու կատաղութիւնը աննախընթաց աստիճանի մը հասցուցին: Ապակի մը օդին բարձրացուցած, Հայր ըսաւ խուլ ձայնով մը. «Troisième Empire, Troisième Empire, ահա քու Սըտանդ»: Իր յուզումին, արտորանքին եւ անհամբերութեանը մէջ ձեռքերը կը դողային ու անկարելի պիտի ըլլար նայիլ յաջորդներն ալ, ուր դերակատարներուն թիւը

երեքի կը բարձրանար: Ակնարկ մըն ալ սակայն ամենէն վարիններուն, ուր այրը մօրուք ունի եւ գլխարկը կ'ըսէ, թէ կրօնաւոր մըն է, իսկ կինը իր սպիտակ գլխանոցով ու մերկ կուրծքին վրայի խաչով, իբրեւ թէ կրօնաւորուիի ծայտում է ստացած: Շարք մըն ալ, ուր կը սկսի աներեւակայելի տողանցումը կապանքներու տակ տանջանքի ենթարկուած կիներու, զմայլելի, հպարտ գեղեցկութիւններու... Մէկէն ամէն բան դարակները... Ո՛չ, հատ մը գոնէ պէտք է առնել իբրեւ օրինակ, իբրեւ ապացոյց: Փիէռ առաւ հատ մը, յետոյ ձեռքը խորեց աւելի ետեւ որմախորշին մէջ, տպագրուած օրինակներ գտնելու յոյսով: Անոնց փոխադրութիւնը աւելի դիրին պիտի ըլլար: Մատները տուփի մը հանդիպեցան. փոշեպատ էր ան եւ առանց թիւի. բացաւ ու տեսաւ, որ շատ հին ապակիներ էին, քիչ մը դեղնած, ուր առանձին աղջիկ մը կերելար... ոտնաձայն: Փիէռ չկրցաւ տուփը գոցել, մատները մէջ մէջի անցան եւ արտորանքին մէջ աղմուկը աւելցուց, շփոթեցաւ... մէկէն կրցաւ պաղարհինութիւնը գտնել սակայն ու ցցուեցաւ ոտքի: Թէրէզը դրան մէջ էր հասած արդէն, ձեռքը խնձորին վրայ անշարժացած, աչքերը անհաւատալիօրէն լայն ու մեծ: Թէրէզը այդ պահուն միայն աչք ունէր: Բայց ի՞նչ, ի՞նչ պիտի ընէր. յայտնի էր, թէ անսպասելիին առջեւ չէր կրնար որոշում մը տալ, մտածումը կը տատանէր, եւ բաց մնացած բերանը անկարող էր բառ մը արտասանելու: Պիտի փախչէր, մէկէն դուռը վրայէն կղպելով, պիտի նետուէր սենեակին մէջ: Փիէռ մեծ ճիգ մը ըրաւ քիչ մը ժպտելու եւ, կարելի եղածին չափ սովորական ու զուարթ դրոշմ մը տալով խօսքին, ըսաւ.

- Այդ ի՞նչ զարմացում է, Թէրէզ, այդ ի՞նչ վախ է... անհոգ եղիր, ես անձանօթ չեմ, ես ալ իրենցմէ եմ, եթէ այդպէս չըլլար, կրնայի՞ այսքան դիրութեամբ գաղտնի որմախորշը գտնել... Կ'ուզէի դեռ սպասել, բայց հաւանաբար մէտօսիտօ Լէսքիւռը տակաւին պիտի ուշանայ...

Խօսելով հանդերձ՝ գոցեց դռնակը, ժաննին դիմանկարը կրկին կախեց իր գամէն եւ զատած ապակին գրպա-



նը դրաւ: Նոյն պահուն նշմարեց, որ վերջին փոշեպատ տուփէն դեղնած ապակի մը եւս մնացած էր դուրսը, ան ալ առաւ ստիպուած, դռնակը բանալու աշխատութիւնը չվերսկսելու համար: Իր շարժումներն ու խօսքերուն շեշտը հեռու էին սակայն կատարեալ հանդարտութիւն մը արտայայտելէ, ու Թէրէզ բնաւ համոզուած չէր թուեր: Ան քարացած էր միշտ դրան մէջ եւ կարծես մտադրած՝ տղուն ելքը արգիլելու: Փիէռ ըսաւ.

- Թող որ փնտռածս չկրցի գտնել: Աւելի լաւ է, որ անմիջապէս հեռաձայնեմ ժաննին. այդպէսով դուն ալ ապահովուած կ'ըլլաս ու կ'ազատիս մտատանջութենէդ: Կարծեմ ժաննը խանութն է ըսիր, այնպէս չէ...

Խաղը յաջողեցաւ: Արագ քայլերով անցան հիւրասենեակ, ուր Փիէռ անմիջապէս վերցուց հեռաձայնի գործիքը: Ալ հոս ամէն բան յայտնի պիտի ըլլար սակայն եւ անակնկալի մը չգալու համար տղան ակնարկը չէր հեռացնէր սպասուիիէն, որ կրկին անշարժացած էր ելքի դրան առջեւ, նոյն անորոշ ու մտահոգ արտայայտութեամբ:

- Ա՛ճ, ա՛ճ... ժա՛նն. ես եմ, Փիէռ: Հիմա դուրս ելայ Լէսքիւռին տունէն ու անմիջապէս կը հեռաձայնեմ քեզ ըսելու համար հետեւեալը. -

- Նկարագրածիդ համաձայն շատ դիւրութեամբ գտայ գաղտնի որմախորշը եւ քանի մը ապակի առի... լռէ՛ եւ միայն մտիկ ըրէ... այդ ապակիները գրպանս են այս պահուս, եւ ես անմիջապէս պանդոկս կը վերադառնամ: Եթէ երբեք ճիշդ կէս ժամէն չգաս զիս հոն գտնել, ուղղակի ոստիկանատուն պիտի երթամ... լռէ՛ կ'ըսեմ, խենթը ես չեմ... շատ վճռական եմ այս պահուս ու ամէն բան աչքս առած: Վերջին անգամ մըն ալ կը կրկնեմ. եթէ ճիշդ կէս ժամէն սենեակս չըլլաս ու ջանձնուիս, պիտի մատնեմ...

Մինչ այս՝ դրան զանգակը հնչած էր եւ Թէրէզ խենթի մը պէս նետուած դուրս: Քանի մը նախադասութիւն՝ նախասենեակին մէջ իրարու ետեւէ արձակուած, արագ, շատ արագ, խեղդուած ձայնով մը: Եւ Լէսքիւռ սենեակ մտաւ

ճիշդ այն պահուն, երբոր Փիէռ հեռաձայնի գործիքը կրկին կը կախէր կեռէն: Հոսի յորձանքի մը պէս մէկ դռնէն մտնելով կորսուեցաւ միւսին մէջ, բայց գրեթէ նոյնքան շուտով վերադարձաւ իր գրասենեակէն ու սկսաւ Փիէռին առջեւ երթելէն պզտիկ, զսպուած քայլերով, որոնք ջղագրգռութիւնը կը ջանային սանձել: Գերագոյն ճիգ մը կ'ընէր պաղարհինութիւնը վերագտնելու եւ հետզհետէ կը յաջողէր ալ կարծես, բայց դէմքին գոյնը եւ աչքերուն փայլը զինքը կը մատնէին բարձրաձայն: Փողկապը շտկեց բազմաթիւ անգամներ՝ վիզը երկարելով, ժաքէթին կոճակները կոճկեց ու քակեց, մատները շարժումներ ըրին անդադար եւ կրկնեց երկու անգամ նոյն միավանկը. «էյ, ինչ»: Երիտասարդը, ձեռքերը քիչ մը բանալով, գլխի թեթեւ շարժում մը ըրաւ ծաղրական ժպիտի մը ընկերացող յօնքերու անթերի խաղով մը: Այն ատեն է, որ միայն Լէսքիւռ անդրադարձաւ ու գլխարկը հանելով գաւազանին հետ դրաւ մէջտեղի սեղանին վրայ: Փիէռ վերցուց գաւազանը եւ սկսաւ խաղալ անոր հետ մարդուկին ինքնայատուկ եղող շարժումներով, կռնակը տուած շըմինէին: Լպիրշ, արհամարհական, հրապարակ կարդացող կեցուածք մը, որուն կու գար միանալ տակաւին դիմագծերուն յաղթական ու ծաղրող արտայայտութիւնը: Բառ մը չէր արտասաներ, բան մը չէր ըսեր, գիտնալով, որ փրկութիւն մը պիտի ըլլար այդ մարդուկին համար, որ կատարելապէս մութին մէջն էր այս պահուս, անձանօթ կացութեան, մտադրութիւններու, որ չէր գիտեր ինչպէս սկսիլ, ինչ դիրք բռնել, ինչ ձեւով մօտենալ տղուն: Երկար պահ մը վայելելէ վերջ այն փոթորիկը, որ անելի մը մէջ ինկած այդ մարդուն մտածումը կը տապալէր գետնէ գետին, որ գիծերը ուզածին պէս կը քաշկռտէր դէմքին վրայ, կը պզտիկցնէր, կը մեծցնէր, կը պաղեցնէր անոր աչքերը, Փիէռ վերջապէս արտասանեց իր երկար նախադասութիւնը, բառերը հատհատ հնչեցնելով ու անոնց տալով դասական կեղծ ձեքծեքանք մը, զսպուած կատաղութեան մը մէջ:

- Ընդունեցէք, մեծայարգ եւ արժանապատիւ տիար,

իմ խորին, խորին յարգանացս հաւաստին... ընդունեցէք զանոնք, ո՛վ բարձրատաղանդ ու մաքրամաքուր պարոն պոռնկագիր...

Յետոյ ձայնին շեշտը մէկէն փոխելով՝ բարձրաձայն.

- Կ'ուզեմ, որ նախ ներողութիւն խնդրես: Կ'ուզեմ, որ հիմա՛, անմիջապէս ներողութիւն խնդրես առջի գիշերուան ըրածիդ համար:

Լէսքիւռ ինքզինքը գտաւ: Պատասխանին համար չաճապարեց բնաւ. թողուց, որ նախ երկար պահ մը անցնի: Յետոյ թեթեւ ժպիտ մը ուրուագծեց շրթներուն ծայրերը, կզակը քաշեց ետեւ ու այնքան հաշտարար, որքան տակաւին տիրական ձեւով մը պատասխանեց.

- Եղածը ինչ էր, որ: Եթէ էրիկ մարդ մը ըլլայիր, պիտի գիտնայիր, թէ բառով մը ներուելիք յանցանքները յանցանք չեն համարուիր...

- Իրա՛ւ: - Ու Փիէռ քայլ մը առաջ նետուեցաւ գաւազանը օդին՝ շրթունքները ուժով մի կատաղութիւնը խաճաճ: Այդպէս մնաց սակայն անշարժ- շարժանկարի տեսիլի մը պէս, որ գործիքի յանկարծական խանգարում է ունեցած- բոլորովին անտարբեր առած դիրքին: Յետոյ աչքերը պզտիկցուց, յաղթական ժպիտի մը նմանող ծամածռութիւն մը պարզեց եւ, բարձր բռնած գաւազանը մատներուն մէջ խաղցնելով, ըսաւ.

- Շնորհակալութիւն՝ ձեր խորհուրդին համար: Այո՛, պէտք չէ ներեմ. այդպէսով ինքզինքս աւելի ազատ պիտի կարենամ զգալ արարքիս գործադրութեան մէջ:

Եւ սակայն պոռնկագիրը իրմէ առաջ հասաւ դրան առջեւ:

- Ո՛ր, Փիէռ, ո՛ր կ'երթաս, կեցիր տեսնենք, ինչ կայ, ինչ եղար, իրար հասկնանք, ինչո՛ւ այդքան կատղէր ես, դուն տակաւին տղայ ես եղեր, ես քեզ հասունցած մէկը կը կարծէի, նստէ նախ խօսինք...

- Ես ըսելիք մը չունիմ:

- Բայց ես ունիմ, չեմ ուզեր, որ ինձի դէմ այդպէս բարկացած մեկնիս. պէտք է հասկացողութեան մը գանք, ես միշտ համակրութիւն ունեցած եմ քեզի հանդէպ. շատ լաւ գիտես, թէ համակրութենէ աւելի բան մը ունեցած եմ քեզի հանդէպ, ժաննը կրնայ վկայել... պէտք է, որ խօսինք...

- Կարճ ըսէ:

- Այսինքն թէ այո՛, խիստ անպատշաճ բան մըն էր նախորդ գիշեր պատահածը, որուն մէջ յանցաւորը միայն ես չէի անշուշտ. դուն ալ պատասխանատուութեան բաժինդ ունիս, սակայն ես ամբողջ կարելիս պիտի ընեմ դարմանելու համար, ես ամբողջ կարելիս պիտի ընեմ, որպէսզի այդ գէշ յիշատակը ջնջուի մտքէդ: Կ'ուզեմ, որ ներես ինձ... ես քեզմէ տարէց եմ, տէս... այդպիսի պարագաներու, մղուած չես գիտէր ինչ ուժերէ, զորս միջավայրն ու ծանօթներու ներկայութիւնը...

Փիէռ կեցուց զայն չոր ու կտրուկ.

- Կ'ուզես, որ ներեմ. լա՛ւ, ներեցի: Ու աւելցուց.

- Եւ հիմա, թող որ մեկնիմ:

Լէսքիւռ վարանեցաւ պահ մը, բայց կրցաւ վերսկսիլ աւելի ուժգին, աւելի արագ.

- Ո՛չ, Փիէռ, ո՛չ, ճշմարտութիւնը չես ըսէր, աչքերուդ մէջ կը տեսնամ, որ անկեղծ չես այս պահուս. ես քեզ այսպէս չեմ ճանչցած. եթէ այդ խօսքը սրտէդ գար, պիտի չվարանէիր ապացոյցը անմիջապէս տալու:

- Ի՛նչ ապացոյց:

- Ապացոյցը, որ ինձի դէմ ա՛լ բան մը չունիս, թէ կ'ուզես, որ կրկին լաւ բարեկամներ մնանք: Տուր այդ ապացոյցը ինձ, - ու ձայնը ցածցնելով, - վերադարձո՛ւր ներսէն առած ապակիներդ:

Փիէռ քայլ մը ընկրկեցաւ անմիջապէս եւ արտառոց քահ-քահ մը արձակեց. բարձր ու կեղծ քահ-քահ մը, որ կարծես մարմարէ աստիճանէ կ'իջնէր մետաղէ պարապ տակառի մը. «Հա՛, հա՛, հա՛...: Ririgole, Brrigadier, Rrrigole

Brrigadier...» եւ ձեռքը միշտ գրպանին վրայ՝ շարունակեց. - Ջզուելի՛ արարած, զիս այնքան միամիտ կարծեցիր, որ քու այդ քանի մը զարդարուն նախադասութիւններէդ խաբուիմ, այնքան մանուկ՝ որ տեղի տամ այսքան դիւրութեամբ, հիմա, որ վերջապէս կրցի ձեր վրայ գերակշռութիւն մը ձեռք անցընել, ձեզ ունենալ այսպէս ափիս մէջ, հիմա որ ալ իմ կամքէս ու քմահաճոյքէս է կախուած ձեր ամբողջ ճակատագիրը...

- Ինչ պիտի ընես...

- Ինչ պիտի ընեմ: Օ՛հ, անհոգ եղիր, ամենէն առաջ դուն պիտի լսես ըրածս. ամենէն առաջ քեզի պիտի գան իմացնել անհրաժեշտ բոլոր ձեւակերպութիւններով...

- Պիտի մատնէս զիս...

- Հապա կը սպասէիր, որ պաշտպանեմ քեզի պէս աղտեղութիւն մը, կղկղանք մը, մէկը որ բարոյականին ինչ ըլլալն ալ չի գիտէր: - Օ՛, այդպիսի շարժում մի՛ ընէր, գիտեմ, որ այդ բառը քեզի համար իմաստ չունի, բայց ինձի համար ունի: Դուն, որ ամբողջ հարստութիւնդ եւ դիրքդ ուրիշներուն թշուառութեամբ, խեղճ ու տկար կամքերու շահագործումով ես դիզեր, միտքեր ու մարմիններ ես քանդեր, փշրեր... Ասկէ աւելի մեծ ոճիր ինչ կայ, երբոր տարիներով աշխարհի վրայ կը նետես համակ թոյն եղող այդ զարհուրելի պատկերներդ... Sadique... !\*

Դաս մը արտասանելու պէս պոռնկագիրը պատասխանեց հատ հատ.

- Անբարոյականութիւնը չի փոխանցուիր: Ան զգացում մըն է, որ կրնայ զօրանալ կամ տկարանալ, բայց չի ծնիր, բայց չի մեռնիր: Ճիշդ մեր՝ Աստուծոյ հանդէպ ունեցած հաւատքին պէս:

- Դժբախտաբար ես շատ Արեւելքցի եմ եւ շատ Հայ, այդ խօսքին իմաստը կարենալ ըմբռնելու համար: Ես քեզ առիթը պիտի տամ, որ դուն զայն կրկնես քո՛ւ ազգակիցնե-

\* Սադիստական:

րուդ: Տեսնենք ոստիկանութիւնն ալ համակարծիք պիտի գտնուի՞ քեզի: Առ այդ...

- Ինչ, ինչ, ըսել է խնդիրը լուրջ է. պիտի մատնէս զիս, պիտի մատնէս զիս... բայց ես քեզի ինչ ըրի, թշուառական, ես քեզի ինչ ըրի: Ատանկ ոչինչ բանի մը համար կ'ուզես իմ տոննս քանդել, կ'ըմբռնես ըրածիդ ահաւորութիւնը. պիտի կործանիմ, պիտի փճանամ, բան մը չպիտի մնայ, ես բանտերը պիտի մեռնիմ, պիտի առնեն ապակիներս... ապակիներս... Փարիզի էն կատարեալ հաւաքածոն է... ասկէ լաւը չկայ... ինչ ըրի ես քեզի, ըսէ, ինչ ըրի, թշուառական...

Այս անգամ իր երկու ձեռքերուն ամբողջ ուժովը կառչած էր տղուն, ալ բոլորովին անտարբեր՝ իր կեցուածքին: Տարեց անդամները կը դողային ըրած այդ անսովոր ճիգին ու ջղագրգռութեանը մէջ. ինչպէս կը դողար վարի կախ շրթունքը, աչքերուն պէս թաց: Տարօրինակ գոյն մը ստացած էր դէմքը, եւ գլխուն վրայի քառասունըտօթը մազերէն ոմանք ոտքի կանգնած կը նայէին: Փիէռ բան մը չէր ըսէր ալ ու ականարկը յառած կը մնար Լէսքիւռի ոտքին, որ դրան դէմ էր դրուած:

Troisième Empireին աչքերը մէկէն փայլեցան սակայն կարծես յայտնութեան մը առջեւ, ու նոյն հատանուած շարժումներով գրպանէն բան մը հանեց: Փիէռ անմիջապէս ճանչցաւ չէքի տետրակը, խլեց զայն եւ նետեց սենեակին միւս անկիւնը: Մէկէն կատաղի ու անդիմադրելի ուժ մը բարձրացաւ տղուն մէջ, խորունկ եւ մեծ ալիքի մը նման: Յանկարծական եւ ուժգին շարժումով մը թելերը ազատեց, ու նետուեցաւ դիմացինին վրայ: Իր ուժեղ ձեռքերուն մէջ առաւ անոր գլուխը, եւ բթամատերուն ամբողջ զօրութեամբը սկսաւ ճնշել ականջներուն տակի փափուկ կէտին վրայ: Վիրաւորուած կենդանիի նման գէշ ճիչ մը արձակեց Լէսքիւռ, թելերուն կապը թուլցուց ու ծրարի մը պէս գնաց իյնալ պատին՝ աթոռ մը տապալելով: Փիէռ անմիջապէս զղջաց սակայն: Հակառակ իր ամբողջ կատաղութեան, հակառակ մեկնիլ ուզելու իր փափաքին՝ մարդուն այդ

խղճալի տեսքը կարծես արգիլեց, որ կարենայ անմիջապես փախչիլ: Մնաց, ու նոյն պահուն իսկ դուռը բացուեցաւ մէկէն, ու կրկին երեւցաւ Թէրէզ, սարսափած, դողդոջուն: Ոտնաձայն չէր լսուած բնաւ, ինչ որ կը նշանակէ, թէ դրան ետեւն էր ան ու ամէն բան մտիկ կ'ընէր:

- Կորսուէ՛, - գոչեց Լէսքիւռ, - դուն խոհանոցդ կորսուէ, ցնդած պառաւ:

Դուռը կրկին գոցուեցաւ, ու սպասուիհին կիսակօշիկները փախան նախասենեակէն: Եւ մինչ Ֆրանսացին ոտքի կանգնած փողկապն ու մազերը կը յարդարէր, Հայը տկարացաւ: Մտածումէն դէպի զգացում սահեցաւ ան: Չկրցաւ աւելի երկար դիմադրել զինքը տառապեցնող նիւթին մօտենալու փափաքին: Երեւակայութեան պաստառը ամբողջութեամբ ստացաւ սրտէն քակուող ժապաւէնը, եւ արագօրէն, շատ արագօրէն եկան ու անցան Նէնէթներ, Նէնէթի գլուխներ, ժպտուն, անժպիտ, անտարբեր, մերժող, բայց մանաւանդ մերժող: Քիչ մը մը մօտեցաւ Լէսքիւռին ու անանկ ձայնով մը ըսաւ.

- Ինչո՞ւ ժաննը ձեռքէս առիր, ըսէ՛, ինչո՞ւ առիր...

Խաղը չէր կորսուած բնաւ ու կարելի փրկութեան մը յոյսը պոռնկագիրին կուրծքը ուռեցուց: Ան վերստին անցուց ամբարտաւան, շնական մարդու իր դիմակը, որ հիմա աւելի անհանդուրժելի էր դարձած հարուածին տակ ստացուած ծամածռութեամբ: Գլուխը դարձնել իսկ չբարեհաճեցաւ ու քովնտի ակնարկով մը պատասխանեց.

- Պէտք էր պահել գիտնայիր...

- Սո՛ւտ ես, յանցաւորը ես չեմ բնաւ. ոչինչով կրնամ ինքզինքս մեղադրել. գիտէի թէ ինչ միջոց պէտք էր զայն վերջապէս ինձի կապելու համար, բայց այդ միջոցը կը պակսէր ինձ: Դրամ չունէի: Միայն այդ չունէի եւ բնականաբար ամէն բան կորսուեցաւ: Միտքէս իսկ չանցուցի քեզի պէս ապօրինի ու ոճրային միջոցներու դիմել, հակառակ անոր, որ գիտեմ, թէ ձեր այս կիները բոլորն ալ կը գնուին պարզապէս... Այո, կը գնուին, երբոր չեն ծախուիր...

- Այդ որքան քիչ ես ճանչցեր ժանեթը... Ուրիշներու համար թերեւս, բայց ան...

- Ինչպէս, ինչպէս... Քիչ մը վերջ իրողութիւնը պիտի գայ հաստատել, թէ երկուքէս ո՞րը չի սխալիր: Ես հեռաձայնեցի իրեն, յայտնեցի նպատակս, սպառնացի: Գիտէ, թէ ոչինչ կրնայ արգիլել իմ այսօր ոստիկանատուն երթալս: Եւ դուն կ'ըսես, թէ ան միայն սրտին անսացող աղջիկ է... Եւ դուն գիտես նմանապէս, որ ալ ոչինչ կայ անոր ու իմ միջեւ, թէ Նէնեթը ալ բնաւ զիս չի սիրեր... Որով ես ազատ եմ, ուզածս պիտի ընեմ, քանի որ այդ հաշուով հաւանական չէ, որ տեղի տայ, գայ յանձնուի ինծի...- Ո՛հ, լռէ՛, կը բաւէ որքան որ ատեն կորսնցուցի հոս: Գիտես, թէ ժամադրութիւն ունիմ. պէտք է որ մեկնիմ:

- Լա՛ւ, լաւ, մեկնէ, բայց ալ ձգէ՛ ապակիները. այլեւս անոնց պէտք չունիս դուն: Հիմա, որ զիրար հասկցանք, հիմա, որ պայմանիդ տեղեկացայ, ալ խնդիրը դիւրացած է:

- Վա՛յ...

- Այսինքն՝ թէ... ըսել կ'ուզեմ, որ աւելի պարզացած է... Ամէն պարագայի մէջ, առնուազն քանի մը օրուան պէտք կայ: Անհրաժեշտ է, որ նախ ես ժանեթը տեսնեմ, զրոյց մը ունենանք, շօշափեմ իր տրամադրութիւնները...

- Եւ միւս կողմէ ամէն բան փախցնես ասկէ ու ճիրաններէս պրծիս... գորտի ձագ: Այսօր իսկ. կ'իմանա՛ս, այսօր իսկ պէտք է ամէն ինչ աւարտի, պէտք է, որ գայ...

- Բայց համբերէ, կու գայ, անշուշտ թէ կու գայ:

- Անշո՞ւշտ թէ...

- Է՛յ. - գոչեց Լէսքիւռ նեղսրտութեամբ, դիմակը կրկին կորսնցուց. - Ի՛նչ կ'ուզէք ան ըրէք, ինծի՛ ինչ... բայց զիս հանգիստ ձգեցէք, զիս հանգիստ ձգեցեք...- Ո՛հ, ո՛հ, սպասէ... օր մը, գոնէ օր մը միջոց տուր...

Երկուքն ալ անշարժացան յանկարծ դրան առջեւ, ապանջները ցցելով: Զղայնոտ մատ մը դուրսի դռան ելեկտրական կոճակը կը սեղմէր անդադար: Երբոր ծառան գնաց



բանալ, անմիջապէս ճանչցաւ այդ ջղայնոտ մատը, իր ձայնէն: Նէնէթն էր: «Լնու, - ըսաւ Փիէռ՝ մատը շրթներուն տանելով, - ես միւս կողմէն կը մեկնիմ»- ու նետուեցաւ աջ կողմի դրան մէջ, որ ննջասենեակ կ'առաջնորդէ եւ որուն առջեւ կանաչ լայն վարագոյր մը կար կախուած: Անոր ետեւ կեցաւ սակայն պահ մը եւ սպասեց: Լսեց դրան բացուիլն ու կանացի ներբաններուն կճռտութիւնը: Բնու չէր արտասանէր: Վերջապէս Լէսքիւռի մէկ ձայնը աղերսեց. - «Ժանէթ, ժանէթ... փրկէ՛ զիս»: «Օ՛հ, մի՛ դպիր, մի՛ դպիր»- ըսաւ Նէնէթ: Երիտասարդը ոտքի ծայրերուն վրայէն կտրեց անցաւ ննջախուցը, միւս կողմէն հասաւ նախասենեակ, եւ երբ կը պատրաստուէր զգուշութեամբ քաշել ելքի դուռը, իմացաւ Նէնէթին ձայնը, որ կը պոռար.

- Շնուտ, Թէրէզ, լազուարթ «թայեէճոր»ս, նոր կօշիկներս, միւս գլխարկս, շնուտ, շնուտ...

\* \* \*

Զնրկ, Կովկաս, թէեւ գիտեմ, թէ, զնրկ, Կովկաս, թէեւ գիտեմ, թէ, զնրկ, Կովկաս, թէեւ գիտեմ թէ... Դարձաւ, դարձաւ, դարձաւ... ծխնելոյզներու վրայ կեցած հրշէջ զինուորներու պէս, վայրկեանները տեղ-քայլ ըրին անդադար... ախ, ըլլայի՛, ըլլայի՛, դա դա դա դա դա դա դա, ան մէկ բանը ըլլայի, սպասումիս եւ յոյսիս հետ այն գիշեր, սպասումիս եւ յոյսիս... եւ յոյսիս... Եւ ինք դարձաւ, դարձաւ: Որքան որ սեղանին շուրջ քայլերը արագացուց, ժամացոյցին սլաքները այնքան իրենց գնացքը դանդաղեցուցին: Գերմանական զարթուցիչները բոլորն ալ խոտոր համեմատութեան կանոնը գիտեն:

Ու պարտուած՝ ալ նստաւ: Աթոռը տապալէր էր անկիւն մը եւ ինք համբերութիւնը չունէր մինչեւ մահճակալը յառաջանալու. ահա թէ ինչու գետինն է, որ նստաւ Փիէռ, գրեթէ ինկաւ: Ձեռքերը կապեց ծալուած ծունկերուն շուրջ եւ այս անգամ ճշմարիտ ճիգով մը սկսաւ մտածումները դասաւոր-

րել: Նախ պետք էր ժամը նայիլ. սեղանին վրայ չորս ժամ կար, ինչ որ կը նշանակէ, թէ երեքն է, քանի որ ժամ մը առաջ տարած էր զարթուցիչը: Ուրեմն... ուրեմն ժամանակամիջոցը լրացած է լիովին, եւ Նէնէթը հոս չէ այս պահուս... հոս չէ այս պահուս, քանի որ չեկաւ: «Վայ, չեկար հա՛, այդպէս ուրեմն, չէս գար, չէս գար... բայց այն ատեն ինչո՛ւ նոր հագուստները ուզեց. մանաւանդ լազուարթ «թայեթոր»ը... լազուարթ «թայեթոր»ը, է՛ն սիրելին... իրաւ է, թէ կիները շուտով չեն կրնար հագուիլ. ալ ատիկա առածի կարգ անցած բան մըն է... եւ սակայն թալքօն վարն էր, դրան առջեւ... Ճի՛շդ ժամ մը առաջ տարած էի, այնպէս չէ՛... Վայ, չեկար, հա՛, չեկար, հա՛...»:

Մտածումները յորձանապտոյտ կը դառնային: Երիտասարդը զգաց, որ խաղը վերջնականապէս կը խուսափէր մատներէն, եւ իր անհամբերութիւնը յուզումի փոխուեցաւ:

Այրող, խարանող ցաւ մը, որոշում չկարենալ տալու մտալկումը եւ քանի մը ժամէ ի վեր այսքան սաստկացած յուզումը տղան ճմռթկեցին չգանձուելիք մուրհակի մը պէս: Ինք ապահով էր իր յաղթանակին, բացարձակ վստահութիւնն ունէր, թէ Լէսքիւռ եւ ժանն տեղի պիտի տան սպառնալիքին առջեւ ու բնաւ անկեղծօրէն չէր խորհած մատնութեան. ոստիկանապետին պատկերը երբեք մտածումէն չէր անցած: Մատնէ՛լ, բայց ինք շատ լաւ կ'ըմբռնէր, թէ ինչ հետեւանք պիտի ունենայ այդքան անխորհուրդ արարք մը: Անոնք վայրկենապէս պիտի փճանային, այո՛, բայց ինչ պիտի շահէր ինք: Նէնէթը պիտի կորսնցնէր վերջնապէս, վերջնապէս... Յաջորդող խղճի խայթը հապա: Եւ ըսել, թէ միայն այսօր է, որ գործելու կարելիութիւնն ունի, եւ վաղը արդէն իսկ ամէն ինչ ուշ պիտի ըլլայ: Օ՛, եթէ գոնէ խորհելու ժամանակ ունենար, անդրադառնար ակելի վերջ, հանդարտ միտքով...

Բայց ինչո՛ւ, ինչո՛ւ չեկաւ: Ըսել է Լէսքիւռ իր կարծածին չափ տկար ու վախկոտ մէկը չէր բնաւ. կրցաւ վերջին րոպէին հակառակ ոստում մը ընել եւ արհամարհել սպառ-

նալիքը, կրցաւ չճկիլ, չխոնարհիլ, ինքզինքը պարտուած ջայտարարել: Եւ չթոյլատրե՞ց... բայց ուրեմն ի՞նչ բանի է վստահած. ինչո՞ւ զինքը կը մղեն գործելու. ինչո՞ւ աղէտը անխուսափելի կը դարձնեն: Քիչ մը տկարութիւն, քիչ մը աղերս ու գորով պիտի կարենային...

Սանդուխներուն վրայ ոտնաձայն լսելուն պէս, Փիէռ նետուեցաւ ոտքի եւ դուռը բացաւ: Վեր ելլողը պանդոկին սպասուիին էր, աւելներով ու ջնջոցներով ծանրաբեռն: Երիտասարդին տեսքը զայն կեցուց աստիճանի մը վրայ:

- Դուք հո՞ս էք դեռ, - ըսաւ զարմացած, - ձեր բարեկամուիին վարը ձեզի կը սպասէ... Եւ երկար ատենէ ի վեր: Կառքովը եկաւ, նայեցաւ, թէ բանալին իր տեղը չէ ու գնաց նորէն կառքին մէջ նստիլ: Կը կարծէի, որ ժամադրութիւն ունիք եւ տեղեակ էք, որ...

Փիէռ չլսեց վերջին բառերը: Սենեակ վերադառնալով բոլորովին շփոթեցաւ: Ուրեմն իր կարծածին պէս չէր եղած. եկած էր ան, սակայն զինքը կը փորձէր, գիտնալու համար, թէ որոշուած ժամուն պիտի երթայ մատնէ, թէ ոչ: Եւ եթէ չերթայ... Ըսել է Նէնէթը պիտի մեկնի ապահով, առանց վեր ելլելի՞ւ, առանց տեղի տալի՞ւ, առանց յանձնուելի՞ւ... Անզուսպ ջղագրգռութեան մը նշաւակ երիտասարդը չէր գիտէր ինչ ընել: Արդեօք սպասել քիչ մըն ալ, մինչեւ որ ան վեր բարձրանայ: Հապա եթէ մեկնի անտարբեր, հապա եթէ մեկնամ՞ծ է արդէն իսկ... Վերջնական որոշումով մը երիտասարդը խլեց գլխարկը ու նետուեցաւ սանդուխներէն վար:

Հակառակ այն կողմ չնայելուն, տեսաւ բալի գոյն թալպօն, լսեց Նէնէթին կանչը, սակայն բոլորովին անտարբեր՝ սկսաւ յառաջանալ գլուխը կախ, արագ, շատ արագ քայլերով:

Չոր աղմուկով մը կառքին դռնակը բացուեցաւ անմիջապէս, եւ Նէնէթ զինքը կեցուց քանի մը քայլ անդին, մարմնովը ճամբան խափանելով: Եւ առանց թոպէ մը ատեն տալու, սկսաւ բառերը իրարու ետեւէ արձակել արագօրէն,

խիստ արագորէն, գոց ձայնով մը... Միավանկեր, բացա-  
գանչութիւններ, խօսքեր, որոնց իմաստին հետեւելու պէտք  
չունէր տղան՝ ըսածը ըմբռնելու համար: Իր յուզումին մէջ  
բոլորովին անկարող էր բան մը ընելու, պատասխանելու,  
զայն լռեցնելու, եւ հիմա իրապէս անկեղծօրէն կը փափա-  
քէր երթալ իր նպատակին, մէկդի նետել այդ արգելքը եւ  
յառաջանալ: Խափանուած ճամբան զինքը աւելի կը մղէր  
գործելու, իրեն քիչ մը աւելի ուժ կու տար եւ սիրուիին ար-  
համարհելու չափ կատաղութիւնը կը սրէր: Ու իր թելերուն  
կառչած կանացի այդ ձեռնոցներէն յաջողելով վերջապէս  
զսպել, անշարժացնել, կը պատրաստուէր փախչիլ սրունք-  
ներուն ամբողջ ուժգնութեամբը, երբոր խօսք մը մէկէն  
զինքը կեցուց: Նէնէթ տղուն փարելէն ի վեր չէր դադրած  
ձեռքերը անոր մարմնին վրայ պտտցնելէ, բոլոր գրպան-  
ները դուրսէն խուզարկելէ, եւ հիմա կ'ըսէր.

- Վրադ չեն ապակիները, չես առէր զանոնք: Օ՛հ, ես  
վստահ էի... ես վստահ էի, որ այդպիսի բան մը չպիտի  
ընես, անկարող ես դուն այդ արարքին, անանկ չէ՛, Փիէ-  
նօ... չէ՛ Փիէնօ... ըսէ՛, անցա՛ւ բարկութիւնդ, ալ նեղացած  
չես ինծի դէմ... թող, որ ալ հանգիստ սրտով մեկնիմ... այո՛,  
այո՛, մեկնիմ...

- Ինչ, ինչ, դեռ դուն կատակ կը կարծես, դեռ կը վարա-  
նիս հաւատալու եւ կ'ուզես անմիջապէս մեկնիլ զիս կրկին  
մայթին վրայ լքելով... բայց ես. ես երդուրնցայ քեզ տառա-  
պեցնել, քեզ ցաւցնել, փչացնել քեզ, եւ ես... Օ՛հ, մի կար-  
ծէր, թէ պարկեշտութիւնս կամ սէրս է, որ արգիլեց. մոռ-  
ցայ պարզապէս... Սպասէ՛, վայրկեանի մը գործ է, մոռցայ  
պարզապէս...

Եւ վազելով վերադարձաւ պանդոկ:

Երբոր մահճակալին տակ պահուած ապակին առնե-  
լով ցցուեցաւ ոտքի, Նէնէթը ետեւէն հասած էր արդէն:  
Ներս մտաւ ան, սենեակին դուռը գոցեց, կղպեց ու բանա-  
լին առաւ: Երկուքը մնացին դէմ դէմի, անշարժ: Այս վերել-  
քը քիչ մը շատ արագ էր եղած ֆրանսուիիին համար, որ

կարմրեր էր եւ որուն կուրծքին ելեւէջները որոշ կերպով կը տեսնուէին: Ան պատրաստուեցաւ գլխարկը գլխէն քաշել, բայց բարձրացող ձեռքը ինկաւ յանկարծ եւ մնաց կողնի վար կախ, անշարժ: Նէնէթը գլուխը ցցեց ու իր բացուող աչքերուն էն լեցուն ականարկը, լայնօրէն, առատօրէն ու դանդաղօրէն պտտցուց սենեակին մէջ, մէկ անկիւնէն միւսը, մահճակալէն մինչեւ պատերը, լայնօրէն, դանդաղօրէն: Փիէռ չկրցաւ շարժում մը զսպել, երբոր ըմբռնեց իմաստը այն ականարկին, որ իր շրջանակը կը վերագտներ, որ վայրկեան մը գոնէ կը յուզուէր կարծես ի տես այն իրերուն, որոնց մտերմութեանը մէջ ապրէր էին օրեր, օրեր...

Պահ մը:

Երիտասարդ կինը դանդաղօրէն յառաջացաւ քանի մը քայլ ու ականարկը մերկ պատին՝ ըսաւ.

- Ու՛ր են իմ լուսանկարներս...

Այդքան դժուարութեամբ Նէնէթին ձեւաւորած այդ ընկալէն իր վերջալուսային խորհուրդը կորսնցուց, երբոր տղան հայիտութիւն մը արձակելու շեշտով պոռաց. - «Դերասան»: Յետոյ գլխարկը քաշեց յօնքին վրայ, ապակին թուղթի կտորի մը մէջ փաթթելով տեղաւորեց գրպանը, մօտեցաւ կնոջ ու ըսաւ.

- Եւ հիմա, տո՛ւր սա բանալին:

- Երբե՛ք:

- Գիտես, թէ կրնամ առնել, եթէ ուզեմ: Տո՛ւր սա:

- Երբեք:

- Հէ՛, երբե՛ք, երբե՛ք, ըսել է զիս իմ սենեակիս մէջ բանտարկել է միտքդ, զիս լռութեան դատապարտելու միակ միջոցդ այդ է... Մի՛ ստիպեր զիս. գիտես, թէ քեզմէ ուժով եմ. տո՛ւր:

- Երբե՛ք. չպիտի համարձակիս:

- Պիտի՞ չհամարձակիմ, պիտի չհամարձակիմ վրադ բռնանալ... Է՛ս... Լա՛ւ, շատ լաւ... նայէ կրնամ պանդոկապետը վեր կանչել, թէ ոչ:

- Ոչ, Փիէռ, չեմ ձգեր... չեմ ձգեր...

- Մի՛ մոռնար, որ Հայ եմ. գիտես յամառ ըլլալս, բայց չես գիտէր, թէ մենք որքան ոխակալ ենք, աններող ենք: Ըսի թէ պիտի երթամ, եւ պիտի երթամ:

Չկրցաւ սակայն պատուհանը բանալ: Նէնէթ իրեն պլլուեցաւ ամբողջ ուժովը եւ իրական աղէտին դիմաց վերջապէս վտանգը ըմբռնելով, սկսաւ աղերսարկու դառնալ, ձայնին շեշտը փոխել ու մարմինը սեղմել տղուն:

- Կը յուզուի՞ս, վայ, կը յուզուի՞ս... վերջապէս: Բայց յիմար աղջիկ, դուն չկրցա՞ր խորհիլ, որ այսպիսի պահու մը ուժով չէ, որ կրնաս ինծի յաղթել, այլ տկարութեամբ... Ես, որ լքուած ու պարտուած մը ըլլալու վիշտը ունիմ, քու կրաւորականութեանդ, կանացի աղապատանքիդ եւ տկար շեշտիդ առջեւ միայն կրնայի տեղի տալ, մինչդեռ դուն իմինիս հաւասար ուժով մը կը ներկայանաս ինծի: Փոխանակ անմիջապէս գալ յանձնուելու, անկարողութիւնդ խոստովանելու, դեռ զիս կ'ուզես փորձել, կը սպասես վարը, բոլորովին անտարբեր իմ տառապանքիս, եւ երբոր կը ստիպուիս վեր բարձրանալ, այս հրամայական շեշտը կու գայ միայն շրթներուդ... Դեռ կը կռուի՞ս: Գիտցիր, որ ալ շատ ուշ է սակայն. այլեւս ոչինչ, ոչինչ պիտի կարենայ արգիլել զիս...

- Չէ, Փիէռոս, չէ, պիտի չընես, եթէ զիս կը սիրես...

- Եթէ քեզ կը սիրե՞մ... Օ՛հ, հեռո՛ւ ալ ինձմէ, հեռո՛ւ... Բայց ըսէ տեսնեմ, դուն չէ՞ր ինծի սորվեցնողը, թէ իմ սիրելիս արժէք չունի բնաւ... Դուն զիս չես սիրէր եւ երբեք ալ չսիրեցիր: Եկար նետուեցար անկողնիս վրայ քմահաճոյքիդ, տռփանքիդ համար միայն. խաղացիր հետս, այո՛, տռփանքիդ համար միայն, «հաւ»ու մը պէս...

- Կ'արգիլեմ, Փիէռ, կ'արգիլեմ: Սո՛ւտ ես. գիտես, թէ ես քեզ անկեղծօրէն սիրեցի եւ կը սիրեմ ալ միշտ...

- Այն ատեն ատելի՛ լաւ. քանի որ ուժը ձեռքս է այս պահուս, պէտք է որ ջախջախեմ, փշրեմ, անհետացնեմ այն միւսը, պէտք է որ վերջապէս կորսուի «թութի ամանը» եւ դուն իմս ըլլաս ամբողջութեամբ:

- Չեմ ձգեր, որ անոր դպիս:

- Չե՞ս ձգեր. կը պաշտպանե՞ս զայն եւ կ'ուզես, որ ե՞ս ալ պաշտպանեմ այդպիսի աղտեղութիւն մը, կղկղանք մը... Օ՛հ, եթէ իմ սիրած Նէնէթս ըլլայիր, պէտք էր զարհուրէիր այդ պատկերներուն առջեւ, միայն նողկանք ու գարշանք պէտք էր ազդէր ան քեզի, թքնելով ու պոռալով պէտք էր փախչէիր քովէն: Եւ փոխանակ ատոր, կը պաշտպանե՞ս զայն. մէկը, որ իր ամբողջ հարստութիւնն ու դիրքը ուրիշներուն թշուառութեամբ, խեղճ ու տկար կամքերու շահագործումով է դիզեր, միտքեր եւ մարմիններ է քանդեր, փշրեր... Ասկէ աւելի մեծ ոճիր ի՞նչ կայ, երբոր մարդ տարիներով ու տարիներով աշխարհի վրայ կը նետէ այդ զարհուրելի թուղթի կտորները, համակ թոյն:

Գոց մը արտասանելու պէս Նէնէթ ըսաւ.

- Անբարոյականութիւնը չի փոխանցուիր. ան զգացում մըն է, որ կրնայ զօրանալ կամ տկարանալ, բայց չի ծնիր, բայց չի մեռնիր: Ճիշդ մեր՝ Աստծոյ հանդէպ ունեցած հաւատքին պէս:

- Դո՞ւն ալ... Ճիշդ անոր խօսքերը... դո՞ւն ալ: Եւ սակայն աւելի լաւ. գոհ եմ ես. ատիկայ կը նշանակէ, որ այս ըսածներուս արդէն անդրադարձեր ու կրկներ ես իրեն: Հոս գալէդ ի վեր արտասանած խօսքերուդ միակը եղաւ, որ քեզի նպաստաւոր է: Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ կը պաշտպանես զայն... Ա՛, սպասէ՛... հիմա շատ լաւ կ'ըմբռնեմ... ալ գաղտնիքները կը պարզուին ինծի համար. յստակօրէն կը տեսնեմ քեզ, քու գործունէութիւնդ, մեղսակցութիւնդ...

- Ոչ, ես անոր մեղսակիցը չեմ:

- Բայց սպասէ՛, դուն չէիր, որ ամէն անգամուն մեր պէտք ունեցածեն երկու անգամ աւելի թուղթ ու քարտ փոստալ կը յանձնարարէիր ժէվայեռթ-ին, դուն չէիր... նոյնիսկ օր մը միամտաբար զարմացումս յայտնեցի, ըսելով, թէ մենք այդքան բանի պէտք չունինք եւ դուն պատասխանեցիր ինձ... «Ուրիշին համար է»: Իրաւ ալ ամէն անգամուն թուղթի այդ ծրարները նոյն գիշերն իսկ մեկնած,

անհետացած կ'ըլլային... Ա՛, որպէսզի գեղչէն օգտուիք, որպէսզի ան միշտ մութին մէջ մնայ, կասկածի չենթարկուի եւ չբռնուի... Այս մեղսակցութիւն չէ: Ըսէ նայիմ, ինչ դրամագլխով գնեցիր խանութդ, ինչո՞վ ապրեցար:

- Ճիշդ չէ, ճիշդ չէ...

- ...Եւ հիմա, եթէ մատնեմ, դուն ալ պիտի ձերբակալուիս Լէսքիւռին հետ, դուն ալ պիտի դատապարտուիս... Ատոր համար այդքան շատ կը պաշտպանես զայն, ատոր համար գոյնդ կը նետես ու կը դողաս... Ա՛, մօտեցիր, նայէ անգամ մը հայելիին մէջ, գանձ ինքզինքիդ վրայ, աղտոնտ Նէնէթ... Ես որ, ես որ... ո՞վ պիտի կարենար կասկածիլ այս զմայլելի գեղեցկութեանդ առջեւ... Ես, որ սա պժգալի...

Եւ մէկէն լռեց:

Յուզումի այդ բարձրութեան վրայ չկըրցաւ բառ մը եւս անելցնել եւ մնացին երկուքը դէմ դէմի, անխօս: Տղան արհամարհող, հայիոյող ականարկը զգուանքով կ'իյնար կնոջ վրայ, զայն կը չափէր գլխէն մինչեւ ոտքերը, կը դառնար կուրծքերուն, մնալու համար փորին սատափ կոճակէն կախուած: Տղան զգաց, որ Նէնէթին համար անելի ճնշիչ էին լռութեան այս պահերը եւ կարծես զղջաց իր երկար նախադասութիւններուն վրայ, ուր սիրոյ ճշմարիտ տառապանքը պատճառ եղած էր որ մտածումները չափազանցուին: Փիէռ ականապիշ կը նայէր անոր, անոր, որուն թրջած աչքերը արտակարգօրէն կը փայլէին, կը սպառէին եւ որ կ'ուզէր մօտենալ, կ'ուզէր խօսիլ, կ'ուզէր շնչել...

- Փիէռ, եթէ ընես՝ պիտի ատեմ, պիտի ատեմ քեզ...

Հաւատա՛, որ պիտի անիծեմ քեզ:

Եւ երբոր տեսաւ, թէ տղան իր վրայ կու գայ, նահանջեց քանի մը քայլ եւ կռնակը դուռին տուաւ, ձեռքերը պահելով: Գլխարկը նետած էր գլխէն ու իր ոսկէ մագերուն փունջը այն օրերուն պէս բացուեր էր կրկին: Վեր խուժող արիւնը եկեր էր գունաւորել ամբողջ վիզը, թուշը, այտերը եւ ժաքէթին քակուած կոճակներուն տակ կուրծքը կ'ուռեր: Փիէռ չնայեցաւ, չուզեց նայիլ ու միշտ առանց բառ մը ար-



տասանելու, բռնեց զայն թելերէն, դաստակը գտաւ, քաշեց...

Կարծես պատնէշ մըն է, որ քանդուեցաւ, վարագոյր մը, որ աղմուկով պատռեցաւ վերէն վար: Նէնէթ նետուեցաւ տղուն վիզին եւ այս անգամ բարձրաձայն, բարձրաձայն, մանուկի մը պէս, պատժուած աղջնակի մը պէս սկսաւ աղերսել, խնդրել, այլեւս առանց հպարտութեան, առանց ձեւականութիւններու, երիտասարդին վրայ մինչեւ այդ պահը ցոյց տուած իր գերազանցութիւնը նետելով մէկդի: Իր բազուկներուն եւ ձեռքերուն հելքին մէջ տղան կը ջանար մղել ետեւ, առանց սակայն բառերու իր տարափը դադրեցնելու, առանց բնաւ անոնց շարքը կորսնցնելու:

- Գիտեմ, գիտեմ, որ անարժան եղայ քեզի, քեզի ցուցի, տառապեցուցի, ըրէ՛ ինչ որ կ'ուզես ինձ, բայց խորհէ, որ ինձի հետ ուրիշ մըն ալ պիտի հարուածես... Չեմ ուզեր այդ, չեմ ուզեր... Ես շատ տառապանք տեսած եմ, գիտեմ թէ ինչ կ'արժէ դժբախտ մանկութիւն մը, եւ չպիտի թողում, որ զայն դժբախտ ընես... Անմեղ է ան. չպիտի ընես Պիպիին համար, միակ զաւկիս համար:

Նախադասութիւնը սխալ ըմբռնեց Փիէռ եւ քայլ մը ընկրկելով, նայեցաւ կնոջ մարմնին զարմացած:

- Ո՛չ, այդպէս չէ... Մեծ, մեծ մանչուկ մըն է ան հիմա. ալ ութ տարեկան պիտի ըլլայ... պահեցի քեզմէ. չուզեցի ըսել. քու քովդ շատ մեծ պիտի երեւայի. վախցայ, որ նուազ կը սիրես զիս. չուզեցի ըսել... բայց հիմա, որ գիտես մայր ըլլալս... Տեսնես ինչ անուշիկ մանչուկ մըն է. ան ալ խարտեաշ է. ճիշդ ինձի կը նմանի... Ամէն մարդ կ'ըսէ, թէ ճիշդ ինձի կը նմանի...

Փիէռ մտիկ կ'ընէր անշարժ, ակնարկը պատուհանէն անդին, հեռուն, շատ հեռուն, խարտեաշ անհամար լակոտներու:

- Փիէռօ, իմին պզտիկ Փիէռօս, ալ մոռցիր ամէն բան, ալ ինքզինքդ մի՛ տանջեր: Տեսնես հիմա որքան երջանիկ պիտի ըլլանք մենք. առաջուրնէ աւելի, անշուշտ շատ աւելի:

- Սո՛ւտ ես, - գոռաց մէկէն Փիէռ անոր դառնալով, - այդ զակի պատմութիւնը ամբողջութեամբ հնարեցիր դուն, սո՛ւտ ես:

- Կ'երդնում, որ չէ, կ'երդնում: Եւ ժանն, սեղանին վրայէն պայուսակը առնելով, բացաւ ու մէջէն պատկեր մը դուրս հանեց: Եւ մինչ կ'երկարէր զայն երիտասարդին, ան զարկաւ ձեռքովը, պատկերը գետին նետեց ու պոռաց.

- Զաւակ, փի՛ճ մը ըսէ սաւոր, փի՛ճ... Խօսէ նայիմ, որմէ է. Լէսքիւռէն... ո՛չ, ո՛չ... Հապա որմէ, չըսէս:

Նէնէթ պատասխանեց ուսերու շարժումով մը, որ կը նշանակէր. «ի՛նչ օգուտ»:

- Թէ չէ դո՛ւն ալ չես գիտեր որմէ ըլլալը, դո՛ւն ալ չես գիտեր...

Յետոյ սակայն տեսաւ ինքզինքը մեծ հայելիին մէջ եւ ստացած դիմագիծէն դժգոհ՝ կեղծ ձայնով մը խնդաց ու անելցուց.

- Ի՛նչ խենթ եմ, կարծես թէ առաջին անգամն է, որ այսպիսի պատմութիւն մը կ'իմանամ: Կատարեալ ֆրանսացի է, ի՛նչ պիտի ըլլայ...: - Եւ սակայն... Եւ սակայն զայն կրել ի՛ր անձին վրայ, այդ կեանքը տեսնել ի՛ր սիրածին վրայ...

Գնաց նստիլ մահճակալին եզերքը:

Երկա՛ր, երկա՛ր, երկա՛ր լռութիւն:

Բաւական վերջն է որ միայն, երբոր տակաւին կը շարունակուէր թիքթաքներու անվերջանալի պարապը, Նէնէթ զգաց, թէ տղան իր բարկութեան վիճակը կորսնցուցած էր ա՛լ: Պզտիկ ու անձայն քայլերով մօտեցաւ անոր: Կեցաւ Փիէռին ճիշդ քովը, ձեռքը դանդաղօրէն բարձրացուց անոր հակած գլխին վրայ, մատները մօտեցուց մազերուն, բայց չհամարձակեցաւ դպիլ անոնց (թիքթաքներու անվերջանալի պարապը). կրկին փորձեց, այս անգամ միջնամատովը միայն եւ նորէն չկրցաւ: Այն ատեն լռիկ մը նստաւ մահճակալին վրայ, տղուն քով: Անոր պահած լռութիւնն ու անշարժութիւնը կամաց-կամաց համարձա-

կուրթին տուին իրեն, եւ Նէնէթ աւելի մօտեցաւ, աւելի, քիչիկ մը աւելի: Նախ երիտասարդին ուսին վրայէն մազ մը վերցուց, յետոյ մատներովը շօշափեց ժաքէթին կերպասը, խաղաց պզտիկ կոճակներուն հետ եւ վերջապէս թելը նետեց վիզին: Փիէռ լուռ էր միշտ, կարծես պարպուած, կարծես անզգայ: Յոգնած եւ ընկճուած այդ վիճակին մէջ շարժում մը չէր ընէր բնաւ զայն վանելու, սակայն իր մորթին վրայ կնոջ մատներուն հպումը ներքին խռովքը կ'աւելցնէր: Պիտի ուզէր, ճիշտ, այնքան պիտի ուզէր, որ այդ պահուն, երբոր ալ իր հոգին որբացած է, իր Նէնէթը քովը ըլլար, ճիշդ քովիկը եւ ինք գլուխը թաղէր անոր կուրծքին մէջ, գլուխը թաղէր անոր վիզին մէջ ու լռէր, լռէր, ա՛լ չխօսէր: Ան միւսը տղուն առանձնութիւնը չկրցաւ զգալ: Չկրցաւ զգալ եւ շարունակեց խաղալ անոր միսին հետ: Շոյեց, գգուեց, սիրեց, հոտոտեց, հետզհետէ աւելի: Ժամացոյցին սլաքները սկսան իրենց գնացքը դանդաղեցնել կրկին, ու անցաւ, անցաւ, անցաւ: «Այնպէս չէ՛, Փիէռօ, պիտի սիրես դուն զիս նորէն. առաջուրնէ քիչ մըն ալ աւելի պիտի սիրես, չէ՛: Ա՛լ միշտ կանոնաւորաբար պիտի գամ հոս. պիտի տեսնես, այլեւս ան չպիտի կարենայ մեզ բաժնել: Տեսնես, Փիէռօ, որքան ընկճուած է ան, հաւատա՛, որ սաստիկ ընկճուած է: Բայց այսպէս աւելի լաւ եղաւ. այլապէս չպիտի կարենայի օձիքս իրմէ ազատել: Օ՛, դուն չես ճանչնար զայն, դուն անոր օձի գոյն կանաչ աչքերը չես տեսած. սարսափելի մարդ է, սարսափելի: Զիս կապած, կաշկանդած է իր կամքին տակ. դուն չես ճանչնար զայն: Այո՛, այո՛, Փիէռօ... ըսէ, նորէն կլթիկս պիտի ծծես... պիտի փչես նորէն ականջիս մէջ... ըսէ՛, ըսէ՛ տեսնեմ - Nennette, Nennette chérie: Ու շոյեց, գգուեց, սիրեց, հոտոտեց, հետզհետէ աւելի:

Արթնցաւ երիտասարդին միսը եւ փարեցաւ կնոջ: Փիէռ գլուխը թաղեց անոր կուրծքին մէջ, գլուխը թաղեց անոր վիզին մէջ ու լռեց: Եւ անցաւ, անցաւ, անցաւ: Հճճանքով մըն է, որ յետոյ մխրճուեցաւ կիրքին ծոցը: Նորէն իր բազուկները, ձեռքերը, ափերը անբաւական եղան ու շրթունք-

ները անյագորէն պտտցուց անոր դէմքին վրայ, կոպերուն, այտերուն, բերնին, յետոյ կզակին տակերը, ականջներուն, ծոծրակին մէջ: Ակսաւ խաճնել, ծծել ու համբուրել կատաղորէն: Կարօտն առնելէն աւելի, կարծես կը յանդիմանէր, կը պատժէր, կը ծեծէր իր Նէնէթը: Մատները կը ճմլէին ու կը ցաւցնէին անոր միսը, եւ կնոջ ինքնապաշտպանութեան շարժումները իր խենթութիւնը կ'աւելցնէին: Կը փարէր մանաւանդ անոր տաք շրթներուն խորունկ ներշնչումէ մը յետոյ ու կը սպասէր, որ անոր շունչը սպառի, բռնուած թռչունի մը պէս տապալտկի բազուկներուն մէջ, արիւնը խուժէ այտերուն եւ ճիչ մը գայ կոկորդը ուռեցնել: Օ՛հ, այդ բոյրը, այդ բոյրը: Կատաղորէն համբուրեց: Աչքերը գոցած էր ու ժով մը, բայց անոնք հազիւ թէ կը տեսնէին նոյնիսկ, երբոր մնային կիսաբաց: Իր հանդարտութեան կարճ ըրպէններուն այտը կը դնէր անոր այտին ու ջերմութեանը հետ հծծանքը կը բարձրանար ալիքի մը պէս:

Այդպէս հանդարտութեան պահու մըն է որ, երբ Փիէռ քաշեց ձեռքերը անոր միսերէն դուրս, Նէնէթ ցցուեցաւ ոտքի ու հագուստը կռնակէն նետեց: Հագուստը կռնակէն նետեց արագորէն, շատ վարժ շարժումով մը: Սակայն Փիէռ տեսաւ: Այս անգամ Փիէռ իրապէս, բաց աչքերով տեսաւ անոր հանուիլը, տեսաւ անոր արտորանքը: Հագուստէն վերջ Նէնէթ ուսերէն սահեցուց ներքնաշապիկն ալ ու մնաց մերկ: Մետաքսէ վարդագոյն գուլպաները զմայլելիորէն կը գրկէին ազդրերը, կը փայլէին երկար գիծերով, եւ կնոջ կուրծքին վրայ մնացած լանջակալը (soutien gorge) ամբողջ մերկութիւն մը կ'ապրեցնէր:

Ու նետուեցաւ մահճակալին վրայ:

Բայց այն պահուն, որ իր ձեռքերը պիտի կապուէին տղուն կռնակին՝ Փիէռ մէկէն ծունկերուն վրայ ցցուեցաւ ու այդ յանձնուող ոսկի գլուխը երկու ափերուն մէջ սեղմած՝ բարձրացուց վեր, իր դէմքին մօտիկ, մօտիկ, ամբողջ ուժովը թքաւ անոր քիթին բերնին եւ զայն կրկին նետեց վար, անշահ իրի մը պէս, բրտօրէն:

Շապիկով էր եւ առանց օձիքի: Կը նայէր պատուհանէն դուրս՝ անշարժ: Պատուհանէն դուրս բան չէր երեւեր: Ձախ ձեռքը տաբատին գրպանը մխրճած բան մը կը սեղմէր մատներուն ամբողջ ուժով, կարծես սրունքները զսպելու համար: Անոնք կը զարնուէին սակայն իրարու, երբեմն գետնին, ջիղերը պրկուած: Կը ծխէր արագ-արագ, սիգառէթը կը կոտրէր մատներուն մէջ ու կը վառէր միշտ նոր մը:

Հեկեկանք մը սկսաւ: Պատուհանէն դուրս բան մը չէր երեւեր: Հեկեկանքը սաստկացաւ - բան չէր երեւեր - ու յորդեցաւ լացով: Ան լացաւ դառնօրէն, - չէր ուզէր այն կողմ նայիլ - դառնօրէն - հետզհետէ ինքզինքը կորսնցուց - դառնօրէն - բայց ինչո՞ւ հոս բան չէր երեւեր: Պատառոտող, աղեկտուր այդ լացին աղմուկը սենեակը լեցուց, եւ տղան ետեւ դարձաւ: Գրպանին մէջ ուժով մը կը սեղմէր լուցկիին տուփը, ակնարկը գամած սեղանին վրայի լուցկիի տուփին: Անկեղծ, խորունկ, անդիմադրելի լաց մը: Ամբողջ մարմնովը կը ցնցուէր Նէնէթ, ջղային նոպայի մը մէջ: Նստեր էր մահճակալին էն վարի ծայրը. եզերքին: Մերկ էր միշտ եւ ծունկերուն վրայ էր վարդագոյն ներքնաշապիկը: Ուժերը կը հատնէին, ձայնը կը սպառէր ու ճիչեր եկան խեղդուիլ կոկորդին մէջ: Շնչառութիւնը դժուարացաւ, դժուարացաւ, ձայնը դարձաւ խռպոտ... Փիէռ վախցաւ, որ պիտի մարի: Մօտեցաւ, հեռացաւ շփոթած, կրկին մօտեցաւ, անձեռոցը թրջեց, ջուր ըրաւ երեսին: Անօգուտ, պիտի մարէր: Սաստիկ շփոթեցաւ, բայց գտաւ Eau de Cologneի շիշը, որ ձեռքին մէջն էր: Ափը լեցուկ այդ հեղուկով ու սկսաւ շփել դաստակները, յետոյ վիզը, ճակատը, քունքերը: Տեսաւ, որ անոր քիթին քով իր թուրքէն քիչ մը մնացած էր տակալին: Անձեռոցովը սրբեց զգուշութեամբ, անոր աչքերուն էն խորունկը նայեցաւ, առանց յայտնի ընելու եւ ափովը նորէն Eau de Cologne տուաւ, որպէսզի շնչէ:

Կամաց-կամաց հանդարտեցաւ Նէնէթ: Փիէռ նստաւ քովը եւ շարունակեց անոր մարմինը շփել: Երբոր կինը աչ-

քերը կրցաւ բանալ, գլուխը դարձուց ու նայեցաւ Փիէռին: Անոր սրուակը բռնող աջ ձեռքը կը դողար օդին մէջ, եւ դիմագիծը ան չէր: Նէնէթ հեկեկանքին տակ ցնցուող ուսերուն մէջ յօնքերը վեր քաշած նայեցաւ անոր աչքերուն, էն խորունկը նայեցաւ, սուզուեցաւ, ակնապիշ ու ըսաւ միայն. «Դո՛ւն»: Յետոյ կարծես իր մերկութենէն ամչնալով ուզեց հագուիլ, սակայն ուժ չունէր: Տղան կնոջ գլուխը առաւ իր կուրծքին, որպէսզի ալ չհեկեկայ: Ան կը շարունակէր կրկնել կտրտուած վանկերով. «Դո՛ւն, դո՛ւն, իմին Փիէռօս...»: Կը դողդղար, կը թրթռար, միշտ թրջող աչքերը կը չորցնէր տղան լաւ տեսնելու համար եւ չէր դադրէր կրկնելէ նոյն բառերը. «Իմին Փիէռօս, իմին... Փիէռօս...»:

- Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այս բոլորը պատահէր... Ըսէ՛, ինչո՞ւ զիս լքեցիր, ինչո՞ւ անկեղծ չեղար ինծի հանդէպ: Եթէ զիս իրապէս կը սիրէիր, պէտք էր գոնէ ամէն ինչ պատմէիր ինձ, գաղտնիք չպահէիր, որպէսզի իմ սէրս այսպէս օր մը չմեռնի, չսպաննուի: Նայէ, այս ամէնը չէր բաւեր, հիմա ալ զաւակ մը մէջտեղ ելաւ. հիմա ալ ուրիշ մէկը մէջտեղ ելաւ: Բայց ըսէ՛, ո՞վ ես, ի՞նչ ես, ինչպէ՞ս ապրէր ես... նա՛, հիմա աչքիդ առջեւ կոտրեմ սա անիծուած ապակին ու լմննայ երթայ:

Փիէռ կեցած էր կնոջ ճիշդ դիմացը, քիչ մը առջեւ հակած, ձախ ձեռքը ծունկին վրայ, իսկ աջը՝ օդին մէջ բարձր՝ ապակիին հետ: Երկար պահ մը լուռ մնաց Նէնէթ, գլուխը կուրծքին վրայ հակած, ձեռքերը ծունկերուն մէջտեղ: Յետոյ պատասխանեց նոյն կտրտուած բառերով, հեկեկալով, կարծես բոլորովին անտարբեր ըլլալիքին, որպէս մթին երազի մը մէջ:

- Je... je... je suis une pu... pille de la nation... pupille de la nation...\*

Օդին մէջ բարձր բռնուած ապակին սահեցաւ մատներէն ու ինկաւ, փշրուեցաւ: Ձեռքը մնաց սակայն օդին՝ բարձր, անշարժ:

\* Ես որք երեխայ եմ (ես... ես... ես եմ, աշակերտ ազգի):

- Մայր... հայր... ղվ... չկայ... մայրիկս զիս լքեր է. անունն անգամ չէ ձգեր... յետոյ մանկութիւն... յետոյ պատանեկութիւն... սեւ գոգնոց... Pupille de la nation...

Մեքենագիր էի, երբոր պատերազմը ծագեցաւ: Անգործ մնացի... մէկը չունէի շուրջս, մարդ չկար: Եւ շատ մեծսիրտ էի, որովհետեւ գեղեցիկ էի ու թշուառ... անգործ մնացի: Ես ալ ուրիշներու պէս պիտի սայթաքէի անկասկած... երբեք, երբեք... Անձրեւոտ գիշեր մըն էր, Լէսքիւռին հանդիպեցայ... ան զիս սիրեց, վստահ եմ... մոլեգնօրէն սիրեց... Տեսայ, որ վտանգը չունէի լքուելու... կը սոսկայի ատկէ, միշտ նոր պաշտպան մը փնտրելէ... Այդ էր պատճառը, որ միացայ իրեն... Ան զինուոր չեղաւ ֆիզիքական թերութեանը շնորհիւ... Շրջուն լուսանկարիչ էր. բանակատեղիներն ու զօրանոցները կ'երթար, լաւ կ'աշխատէր: Օր մը... Օր մը Ճոնի մը իրմէ մերկ կնոջ պատկեր է ուզէր. պատրաստեց... Այդպէս սկսաւ... շատ շահեցաւ... վերջը ալ գրեթէ բնաւ լուսանկարով չէր զբաղեր. ձեւակերպութեան համար միայն տուփը կ'առնէր միասին... Խափշիկներուն, Սենեկալցիներուն, վայրենիներուն հետ շատ գործ չըրինք, բայց մաքրակրօն Անգլիացիներն ու Ամերիկացիները: Ես ու Թերեզը իրեն կ'օգնէինք... շատ: Վերջը ես ուզեցի բաժնուիլ ու իմ բաժինս պահանջեցի, որովհետեւ նկարներուն սեռը փոխեց, սկսաւ խումբերու... Մեծ խնդիր ելաւ: Լէսքիւռ չէր ուզէր համակերպիլ ոչ թէ դրամին համար, այլ որովհետեւ այդպիսով պիտի կորսնցնէր զիս: Ես կ'ուզէի մեկնիլ, կ'ուզէի մեկնիլ... Սպառնաց, ըսաւ, որ պիտի մատնէ, պիտի փչացնէ ինքզինքը, զիս ալ կորստեան տալու համար: Չէի ուզէր կառավարութեան հետ գործ ունենալ. pupille de la nation.

«Եւ փախայ, հիւանդապահուիի եղայ. որբանոցը սորվեցուցած էին մեզ: Մառնի երկրորդ ճակատամարտին էր, հիւանդանոցի վերածուած եկեղեցիի մը մէջ էի, վիրաւորի մը քով. մահամերձ էր ան. նոյն գիշեր պէտք էր, որ մահճակալը պարպուէր: Զարհուրելի գիշեր... եկեղեցիին գու-

նաւոր մեծ պատուհանները կը լուսաւորուէին անդադար պայթումներու բոցով: Չեմ գիտէր ինչու լացի, լացի... Մէկէն տեսայ, որ մահամերձը ցցուէր էր արմուկին վրայ եւ ինծի կը նայէր մեծ, խոշոր, երկնքի գոյն աչքերով: Սիրեցի այդ անմեղ, բարի աչքերը, որոնք ինծի կը նայէին: Չմեռաւ ան. խիստ բարի մարդուկ մըն էր. իմ գերիս, իմ հաւատարիմ շունս եղաւ: Կը ճանչնաս զինքը, Կոստանն է: Ան է, որ հետս տարի Լէսքիւռին, եւ երբոր այս վերջինը կրկին մերժեց, ատրճանակը քաշեց Կոստան: Օ՛հ, եթէ Brigadier-ի այն կապոյտ աչքերը տեսնէիր այդ պահուն, պիտի համբուրէիր զանոնք անմիջապէս: Դրամները առի եւ բացի խանութս: Հաշտուեցանք Լէսքիւռին հետ... հաշտուեցանք. դեռ շատ պէտք ունէի իրեն: Յետոյ... յետոյ...

Գլուխը ցցէր էր Նէնէթը, դէմքը վեր, ճակատը բաց, աչքերը հեռուն: Հաւաքեց իր ականարկը ու զայն տուաւ Փիէռին: Ան ինկեր էր աթոռին վրայ, մտածումը երկու ձեռքերուն մէջ մեծցած:

- Եւ յետոյ... յետոյ, իմին Փիէռու... իմին պզտիկ Փիէռու: Չկրցի քեզ պահել, չգիտցայ քեզ պահել: Ալ առաջուան պէս պիտի չսիրես զիս: Գոնէ այսօր պէտք չէր, որ յանձնուէի... պէտք չէր: Դուն զիս գէշ դատեցիր, սխալ դատեցիր: Բայց հաւատա՛, հաւատա՛, Փիէռու, որ ես քեզ սիրեցի, անկեղծօրէն սիրեցի: Չար աղջիկ չեմ... բայց դուն: Տարեց մէկը պիտի կարենար ըմբռնել. դուն սակայն չես ներեր ինծի... չես ներեր: Ըսէ՛, ալ չե՛ս ուզէր զիս, չե՛ս ուզէր, լմնցա՛ւ...

Երիտասարդը ոչինչ պատասխանեց: Ելաւ նստած տեղէն, գնաց պատուհանին առջեւ ու կռթնեցաւ հոն, կռնակը դարձուցած: Նէնէթ սկսաւ յագուիլ դանդաղօրէն, պարտուած, խորտակուած:

Երբոր գլխարկը դրաւ, մօտեցաւ քիչ մը տղուն եւ ըսաւ.

- Կը ձգես որ մեկնիմ, այսպէս... բան մը չե՛ս ըսէր, չես ուզէր, որ... ըսել է իրապէս լմնցաւ ալ, լմնցա՛ւ... վերջին անգամ մը չե՛ս համբուրէր զիս, Նէնէթիդ անգամ մը...



Տղան մնաց անշարժ ու անխօս: Այն ատեն Նէնէթ դէպի դուռը յառաջացաւ, բանալին անցուց կղպանքին մէջ, դարձուց, կրկին փորձեց ու մանկունակ շեշտով մը ըսաւ.

- Չի՛ բացուիր կոր, դուռը չի՛ բացուիր կոր...

Փիէռ մօտեցաւ, բացաւ դուռը ու կրկին հեռացաւ:

Իրիկուան տկար նշոյլները կը հաւաքուէին պատուհանին մէջ, ու սենեակը կը լեցուէր ստուերներով: Մութը կը բարձրանար անկիւններէն, կարասիներու տակերէն ու կը մեծցնէր ամէն ինչ: Հազիւ նշմարելի կ'ըլլար Նէնէթ, դրան գորշ քառակուսիին մէջ կորսուած, ձեռքը խնձորին վրայ անշարժ՝ դեռ անկարող մեկնելու:

Մօտաւոր բակէ մը ջութակ մը բարձրացաւ. հին, շատ հին մեղեդի մը բոլորին ծանօթ, որ մինչեւ հոս կ'ելլէր անհաւասար ալիքներով, տատանելով, յամենալով յարկերուն մէջտեղ, մեղեդի մը որ կ'ուզեր աւելի երկրորդինը յուզել քան չորրորդ յարկինը, որ ալ պարտասաճ, երբեմն կը կառչէր ջութի խողովակներուն, բայց որ կ'ելլէր, բայց որ կ'ելլէր մինչեւ հոս, այդ հին, շատ հին մեղեդին, բոլորին ծանօթ...

.....

Փիէռ նետուեցաւ պարապ դրան վրայ, ուզեց, չուզեց, բայց ո՛չ, չուզեց զայն, գոցեց զայն, այսինքն դուռը, վերջին դուռը:

Օ՛հ, այլեւս այսպէս չխորհիլ, չմտածել, գտնել ուրի՛շ բան, նորը, ինչ որ կ'ուզէ ըլլայ, միայն թէ կարենայ մտածումը հանել ոտքի, անոր ողնասիւնը շտկելու, փախցնելու հեռու, անդին:

Ինկած էր սեղանին վրայ ու գիրքերուն առջեւ պահարան մը նշմարեց: Թրքական դրոշմաթուղթ կար վրան եւ գոց էր դեռ: Մոռցուէր էր նոյնիսկ ան: Բացաւ, սկսաւ կարդալ... Եւ հակառակ անոր, որ հեկեկանքը առաջին բառերէն իսկ կուրծքը ուռեցուց, պոռթկալէ առաջ տղուն թոյլատրեց քանի մը նախադասութիւն արտասանել, հոգ չէ թէ ինչ ձայնով.

«Անուշիկ չօճուխս իմին... Տեսնես պարտեզնիս ինչ աղուորցեր է. խասըմ չիչէյիները ամէնքն ալ բացուեր են. ճիշդ եղանակն է... Առջի օր կատունիս մեռաւ. գիտեմ, պիտի ցալիս. դուն Մինէն շատ կը սիրէիր... Քեզի համար մասնաւոր տոկուն կերպասէ բաղնիքի քեսէ մը կարեցի, չէվիրմէյի անուշին հետ կը դրկեմ... Իմին փաշա մանչս, իմին...»

### 3

...Խափշիկները մեզ յանկարծ լքելով փախան ու պահու-  
լըտեցան չես գիտէր ուր: Ընկերս կը դողար իր բոլոր ան-  
դամներով եւ վախէն ակռաները իրարու կը զարնուէին: Եւ  
այն ատեն - մացառներուն մէջէն յովազը ոստումով մը նե-  
տուեցաւ դուրս, ճիշդ մեր դիմացը, թաթերը օդին, երախը՝  
բաց, աչքերը՝ սարսափելի... Օ՛հ, սարսափելի, ահաւոր...  
Եւ այն ատեն... բայց մտիկ չէք ընէր կոր, պարոն Փիէռ...

- Si, si, շարունակէ:

- Եւ այն ատեն, առանց պաղարհինութիւնս կորսնց-  
նելու, նշան առի, կրակեցի... Եւ այն ատեն, կենդանին  
ինքն իր վրայ դարձաւ, գետին ինկաւ, սկսաւ տապալտկիլ  
ու մռնչալ... սարսափելի, ահաւոր... Ես վրան նետուեցայ,  
հրացանիս կոթը մխրճեցի անոր երախին մէջ, այսպէս,  
որպէսզի չխաճնէ եւ պոչէն քաշելով զայն տարի ծառի մը  
տակ. ճիշդ այսպէս: Խոշոր, հսկայ ծառ մըն էր, թերեւս  
պօսպապ մը: Ուրիշ ծառեր ալ կային հեռուն, որոնք ան-  
վերջանալի տողանցումով մը կը յառաջանային, ճամբան  
աղեղները եզերելով: Ատենը անգամ մը ինքնաշարժ մը կը  
փախչէր բուներուն մէջէն եւ տերեւաթափ ճիւղերը կը սու-  
լէին: Ընդարձակ, անհատնում դաշտեր, լերկ ու պարապ:  
Աշնանավերջ է եւ հողը ալ կը հանգչի թրջած տերեւներու  
վերմակով: Անձրեւէն լուացուած տուներ իրենց կիրն ու  
աղիւսը կը փայլեցնեն ջրակոյտերու մէջ եւ գորշ, հնամե-

նի ագարակներ, ուրիշ դարէ մը մնացած, հանդարտօրէն կը մխան, անգործ մշակի մը ծխամորճին պէս: Ճահիճները մեծցեր են հիմա եւ բադերու ու սագերու անհմաստ կանչը ունին միայն, իսկ ջուրի ճամբաները լեցուն են կարծես սպիտակ փետուրով: Հեռագրի փախչող ձողեր վայրկեանները նշանագրեցին անվերջանալիօրէն եւ թելերը իջան ու ելան, իջան ու ելան: Նորմանդին կը սկսէր:

Դէմ դէմի են պատուհանի առջեւ Փիէռ ու Կոստան: Սա համաչափ ու միօրինակ ցնցումը շոգեկառքին տեսակ մը թմրութիւն կու տայ իրենց եւ մելամաղձոտութիւնը կ'աւելնայ վագոնին կիսաստուերներէն ու դուրսի ցած, աղտոտ երկինքէն: Տեղատարափը Փարիզ մնաց, բայց դեռ պզտիկ կաթիլներ կը դողան ապակիներուն վրայ: Փարիզ շատ բան մնաց, սակայն զուգահեռական սա երկար գիծերուն տակաւին կ'ընկերակցէին ծանր ու գորշ ամպեր, ինչպէս նաեւ զանազան խմիչքի ազդեր: Կոստանը կը շարունակէր իր սպանած յովազին պոչէն քաշել, այսպէս, զայն տանելու համար պասպապին տակ, եւ Փիէռին մտածումը կը ցատկէ խրճիթ խրճիթ, տանիքէ տանիք, կը յառաջանայ շոգեկառքէն շատ աւելի արագ, հասնելու համար Պիպիին: Ահա Պիպին, ահա անոր խարտեաշ գլուխը, կապոյտ աչքերը, շարժումներն ու խօսելու ձեւը, անառակութիւնը: Եւ Փիէռին մտածումը կը փախչի մէկէն ետեւ, կ'իյնայ Փարիզ, կ'իյնայ Նէնէթին, շուտով վերսկսելու համար այս ճամբան՝ դէպի Սէն-ժորժ: Իրաւ, այս երրորդ անգամն է, բայց այլեւս վերջին անգամը պիտի ըլլայ: Այլեւս չպիտի երթայ այդ գիւղը, Նէնէթէն բան մը փնտռելու. այլեւս պէտք պիտի չունենայ: Գնացքին անիւներուն միօրինակ աղմուկը կարծես ըսել կ'ուզեր. «Չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի»:

Փիէռ մտիկ չէր ընէր դիմացինը, Փիէռ մտիկ չէր ընէր ոչ իսկ իր անձը: Ներքին յաւիտենական տրամախօսութիւնը լռած էր կարծես: Պարապ էջեր՝ որոնք կ'անցնէին: Պէտք է անոնք շատ արագ անցնէին: Ան այս վիճակին մէջ կը նմանի վատուժ, սպառած հիւանդի մը, որուն երակներէն

արիւնը պահ մը խոյս կու տայ ամբողջութեամբ, եւ դիտող  
աչքերը անկարող կ'ըլլան իրենք զիրենք տեսնել հայելիին  
մէջ: Ապաքինութեան շրջանը պիտի սկսի անշուշտ եւ եր-  
բոր ամպի պէս սա վարագոյրը կամաց կամաց փարատի,  
երիտասարդին աչքերը կրկին պիտի տեսնեն նոյն ժպի-  
տը, սիրական Նէնէթին դէմքը լուսաւորող: Պիտի տեսնեն  
զայն ներքին հայելիին մէջ իսկ, պիտի վերադառնայ ան  
անշուշտ իր Փիէռոյին, դարձեալ պիտի նետուի իր բազուկ-  
ներուն, ինչպէս որ նախորդ անգամուն եկաւ, եկաւ ճիշդ  
առջեւ, արիւններուն մէջ, դաշոյն մը մինչեւ երախակալը  
մխրճուած անոր զմայլելի ծիծերուն մէջտեղ...

- Հէ... Ինչ, ո՞վ...

- Բայց զիս մտիկ չէք ընէր կոր, պարոն Փիէռ...

Որքան յուսահատութեամբ արտասանեց Կոստան իր  
այս նախադասութիւնը: Յետոյ սմբած ու տխուր քաշուեցաւ  
իր անկիւնը եւ լռեց: Սաստիկ առնուած էր: Երկար պահ մը  
վերջ Փիէռ ըսաւ.

- Նորէն կը կրկնեմ, Կոստան, տիրուիդ բան մը պէտք  
չէ գիտնայ: Չեմ ուզէր, որ իրեն ըսես, թէ Պիպին տեսնելու  
գացի:

Բաց՝ ինչպէս կ'ըլլայ ամէն մաքուր աչք, նախկին են-  
թասպայի կապոյտ աչքերը աւելի լայնցան եւ ուսերու ու  
ձեռքի շարժումի մը հետ իրենց զարմացումը յայտնեցին:  
Ո՛չ, պէտք չէր տարակուսիլ, պէտք չէր կասկածիլ Կոստա-  
նի վրայ: Ան սովորական՝ համակրութենէ աւելի մեծ զգա-  
ցում մը կը տաճէր երիտասարդին հանդէպ, որ հակառակ  
որսորդութեան պատմութիւններէ ախորժող մը չըլլալուն...  
այո՛, հակառակ իր պատմութեանը է՛ն անուշ կէտին ընդմի-  
ջած ըլլալուն, սովորական համակրութենէ աւելի մեծ զգա-  
ցում մը կը տաճէր իրեն հանդէպ:

Երբոր պարապ ու երկար թոպէները սկսան աւելնալ, եւ  
նոյն անձին շուրջ երկուքին կողմէ ալ չարտասանուած նա-  
խադասութիւնները եղան ճնշող, երբոր վերջապէս դուրս  
ելան փապուղիի մը մթութենէն, Կոստան լռութիւնը խզեց

ծայնով մը, որ իր նոր զգեստներուն պէս պաշտօնական պարագաներու միայն կը գործածէր, ըսաւ.

- Մատամ ժաննը ես շատ կը սիրեմ, զաւակի մը պէս: Ես զինքը շատ կը յարգեմ: Եւ սակայն կը խոստովանիմ, որ ձեզի հանդէպ պէտք եղած վարմունքը չունեցաւ... Ո՛չ, պարոն Փիէռ, ձեզի հետ լաւ չվերաբերուեցաւ: Գալով Պիպիին, ճիշտ, շատ, շատ սխալ կ'ընէ. պիտի զղջայ օր մը: Մօր սրտի գո՛րծ է այսպիսի մանչուկ մը գիւղերը ձգել: Ամէն ամիս զիս կը դրկէ, որպէսզի դրամ տանիմ եւ պէտքերը հոգամ:

«Ես ինչ կ'արժեմ, ես ինչ կրնամ ընել... պէտք է, որ ինք... Եւ ինք տարին երկու անգամ երթալ տեսնելով կը բաւականանայ: Ո՛չ, ո՛չ, պիտի զղջայ օր մը, տղան իր դէմը պիտի ելլէ, ես կը խոստովանիմ բացէ ի բաց»:

...Չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի, չըսսի՞ քեզի, չըսսի՞...

Յաջորդ կայարանէն մարդուկ մը բարձրացաւ իրենց վագոնը: Հաստ, կլոր եւ կարմիր դէմքով մէկն էր ան ու կը հեւար: Ծրարները մեծ դժուարութեամբ զետեղեց վերի ցանցին մէջ, ամէն մէկ շարժումի բացականչութիւն մը ու քանի մը խօսք արձակելով: Ո՛հ, այս մէկը հարաւի ծնունդ էր, ատոր կասկած չկայ: Անմիջապէս խօսակցութեան մտաւ Կոստանի հետ, ու երկու տարեցները շուտով մտերմացան:

Հեռագրաձողի գումարտակներ անցան:

Բաւական վերջ, երբոր ալ հանգրուանին կը մօտենային, Փիէռ սթափեցաւ իր վշտոտ մարդու թմրութենէն, ծրարները իջեցուց, գլխարկը դրաւ եւ սկսաւ շարժումներ ընել, ընդարմացած անդամներում քիչ մը առույգութիւն տալու համար: Տեսաւ, որ Կոստանը դէմը չէր: Ձայնը կը լսուէր սակայն: Այն միւս մարդուկին հետ ետեւի նստարանը անցէր էին, զինքը չնեղելու գովելի փափկանկատութեամբ, ու Կոստանը կը պատմէր.

- ...Ես վախեա կը դողայի իմ բոլոր անդամներովս, ու ակռաներս իրարու կը զարնուէին: Սակայն ընկերս առանց պաղարհինութիւնը կորսնցնելու նետուեցաւ վրայ, հրացանին կոթը մխրճեց անոր երախին մէջ ու պոչէն քաշելով տարաւ ծառի մը տակ: Կարծեմ պատպապ մըն էր:

.....  
Մօրը կատարեալ մանրանկարը:

Դիմագիծերու, խօսուածքի, շարժումներու, նոյնիսկ քայլուածքի բացարձակ նմանութիւն: Նոյն ոսկի մազերը եւ մորթի գոյնը: Պիպիին աչքերն են, որ միայն կը տարբերին: Կապոյտ են անոնք, խիստ գեղեցիկ, գոց կապոյտ մը՝ որ մազերու փայլին հետ աննման ներդաշնակութիւն մը կը կազմէ: Գիւղին ամենէն գեղեցիկն է եւ ամենէն ալ անառակը: Համարձակ՝ կարծես մօրմէն ալ աւելի, համարձակութիւն մը, որ այս տարիքի տղոց քով շատ շատ անգամ լրբութեան ալ կ'երթայ, մանաւանդ երբոր ծնողքէ զուրկ ըլլալով ակնածանք ազդող մէկը չունենան իրենց քով: Խիստ ծեր, բայց դեռ վազվզող պառաւ մըն է զինքը մեծցնող կինը, Թաթան: Նորմանտուիի մը պէս ագահ ու գծուծ, սակայն վերջին ծայր տկարամիտ, անխելք: Այնպէս որ տունին տէրն է եղած կարծես Պիպին, որ իր արտակարգ սրամտութեամբ, տարիքը գերազանցնող խելացութեամբ, ուզածին պէս կը կառավարէ պառաւը: Տան միւս երկու այր անդամները, նմանապէս տարէց, դաշտերն ու պարտեզները կ'անցընեն իրենց բոլոր պահերը եւ անկարող են օրուան անվերջանալի դէպքերուն միջամտել: Բանէ մը վախն ալ չի գիտէր չարաճճին, երբեք չընդունիր պարտուած ըլլալը, եւ նոյնիսկ բացորոշ յանցանք մը գործած պարագաներուն - բան մը, որ յաճախ կը պատահի - ինքն է, որ կարծես կ'ուզէ դիմացինը յանդիմանել: Լացը իրեն համար գոյութիւն չունի: Քաղաքի ծնունդ եղող տղու իր ուշիմութեամբ ուզած ձեւովը կը վարէ սա պզտիկ գիւղին կիսով կենդանի մանուկները: Վերը, հեռուն, երկու հովիտնե-

րու մէջ կորսուած գիւղ մըն է Սէն-ժորժը, որ քաղաքին կէս ժամով մը կը միանայ, ինքնաշարժի արագութեամբ:

Կատարեալ փոթորիկ մը փրթած էր, երբոր Փիէռ ու Կոստան ներս մտան տնակէն: Դրացի մը եկեր էր քիչ մը խիստ ու ծանր բառերով գանգատիլ Պիպիին ըրած մէկ անառակութեանը համար: Դեռ մարդուն պոռչտութիւն տպաւորութեանը տակ՝ Պիպին կեցեր էր սենեակին մէկ անկիւնը անշարժ, աչքերը խոշոր մը բացած: Թաթան վերջին ծայր շուարած, բոլորովին ապուշցած էր. դէպքը Փիէռին կը պատմէր անգործածելի ձայնով մը, մեծ սենեակին մէկ անկիւնէն միւսը երթալով, խիստ բարկացած, բայց անկարող բան մը ընելու, յուզումէն դողդոջուն:

Փիէռ անզուսպ փափաք մը ունէր խնդալու, սակայն պատշաճութիւնը յարգելու համար բարկացած մէկու մը դիմագիծը առաւ ու գոչեց բարձրաձայն.

- Պիպի՛, հոս եկուր տեսնեմ, շնուտ, հո՛ս, առջեւ... Ըսէ նայիմ, ինչո՛ւ պարոն Ֆաթուին էշը ներկեցիր:

- Պարոն Ֆաթու...ի՛ն:

- Այո՛, էշը:

- Պարոն Ֆաթուին է՛...շը:

- Այո՛, այո՛, պարոն Ֆաթուին է՛շը: Ինչո՛ւ ներկեցիր...

- Բայց ես ամբողջութեամբ չներկեցի՛...

- Ինչ, ինչ, հապա ամբողջութեամբ պիտի ներկէիր: Սա անպիտանին նայեցէք, ըսել է կ'ուզէիր ամբողջ էշը ներկել: Չորս ոտքով, երկու ականջով, մէկ քիթով, մէկ պոչով այդ խոշոր էշը, եւ միայն երկու ոտքերը ներկած ըլլալդ արդարացում կը նկատես... թէ ոչ քիթիս կը խնդաս կոր, հէ՛, քիթիս կը խնդաս կոր... ամբողջ էշը ներկել...

- Բայց արդէն ներկը չէր բաւեր, որ...

Փիէռ անմիջապէս ետեւ դարձաւ խնդուքը ծածկելու համար, իսկ Կոստան աթոռի մը վրայ իյնալով սկսաւ կարմրիլ ու մարմրիլ բարձրաձայն, բարձրաձայն: Թաթան ալ չկրնալով բարկութիւնը զսպել, սկսաւ լալ, հանգստեան

կոչուած ձայնով մը, եւ ձեռքին պղինձէ մեծ սանը՝ բոլորովին շուարեցաւ:

- Ըսէք տեսնեմ, սիրելի պարոնս, ասոր հետ ես ինչպէս գլուխ ելլեմ... Դեռ այս բան մը չէ, կ'երթամ էշը կը լուամ ու ամէն բան կ'աւարտի. այս բան մը չէ: Առջի օր ուրիշ փորձանք մը իջեցուց գլխիս, հին հովանոցիս թելերովը աղեղ մը եւ նետ մը շինէր է, քաշելուն պէս աքաղաղին աչքը հանեց... Հապա՛, աչքը տեղէն հանեց...

- Ինչ, ինչ, - գոռաց Փիէռ նորէն սաստիկ բարկանալով, - ան, դո՛ւն, հոս եկուր տեսնեմ, հոս, առջեւ, քեզի պիտի սորվեցնեմ, թէ ես ո՛վ եմ, թէ անառակ տղաքը ինչպէս կը պատժեմ: Ըսէ նայիմ, ինչո՛ւ աքաղաղին աչքը հանեցիր...

- Աքաղաղի՛ն...

- Այո՛, աչքը:

- Աքաղաղին աչ...քը...

- Էյ, նորէն չհասկնալու մի գար. այո՛, աքաղաղին աչքը, ինչո՛ւ տեղէն հանեցիր:

- Բայց ես չհանեցի, ան ինքնիրենը մէկ աչքը գոցեր է...

- Oh, Jésus Marie! Oh! Jésus Marie. այս ի՛նչ ստախօս. մի՛ հաւատաք, պարոն Փիէռ, մի՛ հաւատաք, ամբողջ սուտ է: Ուրիշ անգամ մըն ալ հաւու մը ոտքը կոտրեց եւ ըսաւ, որ կենդանին ոտքը վեր է քաշեր... Օհ, մի՛ հաւատաք, ես ա՛լ պիտի չհաւատամ...

Փիէռ նուէրներ էր բերած պզտիկ Նէնէթին: Շաքար, շոկոլա, մանկական պատկերազարդ գրքոյկներ եւ մայթանիւ մը (trotinette): Պիպին ձգեց ամէն բան ու միայն մայթանիւնը առնելով՝ ելաւ դուրս: Ճկուն եւ արագաշարժ՝ սկսաւ երկար ճամբուն մէկ ծայրէն միւսը վազվզել, երջանիկ: Գիւղին տղաքը հաւաքուած կը նայէին հիացումով: Երբոր փափագն ու հպարտութիւնը գոհացուց, սկսաւ իր պզտիկ առուտուրին: Մայթանիւով մինչեւ եկեղեցի երթ ու դարձ՝ մէկ քարեգնդակ, մէկ շոկոլայի պատկեր եւ կամ ուրիշ բան մը: Ճշարձակը սեղմելն ալ ձրի՛...

Մօրը կատարեալ մանրանկարը:



.....

Կէս օրուան ճաշէն անմիջապէս վերջ ազատ արձակեցին Պէռթան, մեծ ընկուզենիին տակ կապուած սեւ շունը եւ Պիպին պտոյտի տարաւ իր Փիէռ «զարմիկը»: Մեծ շրջան մը ըրին գիւղին շուրջ: Առջեւէն կը վազէր շունը, միշտ կորսուելով ու վերերեւնալով, ետեւէն կու գար Պիպին եւ ամենէն վերջը Փիէռ՝ որ հազիւ կը հասնէր երկու անգապելի արարածներուն: Շատ մը տեղերէ անցան, բարձրացան զառիվեր մը, իջան կրկին. Հայը մտիկ ըրաւ պատմութիւններ, հին դէպքեր, ստիպուեցաւ նայիլ ժայռի մը խոռոչին մէջ, ուր «մարդու հաստութեամբ օձեր կային», ստիպուեցաւ քարկոծել խեղճ թռչուն մը, որ «անգղ մըն էր շատ վնասակար»: Ամէն դաշտի կամ տնակի քովէ անցնելուն, Պիպին տուաւ տիրոջ անունը, մինչեւ որ եղելիններու անտառը հասան: Վերը, բլուրին վրայ, քարէ մեծ խաչին քով, Փիէռ ուզեց քիչ մը հանգչիլ, առջեւը տարածուող լայն հորիզոնին դիմաց, բայց կարելի չեղաւ: Պէտք էր տեսնել դեռ ան ալ, դեռ ան ալ. հոն Պառթէլենց խնձորենին կար, որուն մէկ ճիւղը տանձենի էր, ասդին, գետակը կը լայննար եւ մէջը պզտիկ ձուկեր կ'երեւէին. իսկ այն միւս հորին մէջ էր ինկած իր վէգը: Հապա՛, ինք վէգ ներկել ալ գիտէ, հաւատա՛, Փիէռ զարմիկ, հաւատա՛...

Փիէռ մէկէն գրկեց տղան, բազուկներուն մէջ ուժով մը սեղմած նստաւ ճամբուն եզերքը կոճղի մը վրայ եւ սկսաւ խենթի մը պէս համբուրել զայն, արագ-արագ, խենթի մը պէս: Մանչուկը նախ թողուց, որ ան ուզածն ընէ, բայց յետոյ երբոր տեսաւ, թէ անոր աչքերը կը թրջին, ուրիշ կերպով մը կը նայի իրեն եւ շնչառութիւնը կը փոխուի, կարծես վախցաւ եւ ուզեց ազատիլ անոր գիրկընդխառնումէն: Այն ատեն աչքերը գոցեց Փիէռ ու անոր պզտիկ գլուխը իր այտին սեղմած՝ մնաց անշարժ, սակայն թրթռուն: Յետոյ արագ, շատ արագ քայլերով տուն վերադարձաւ, Պիպին միշտ գրկին մէջ: Շունը առջեւէն կը վազէր հաջելով:

Երբոր Թաթան լաւ մը սրբեց ու մաքրեց պզտիկը իր

ստացած ցեխերէն, փոխեց կօշիկները եւ գոգնոցը հանելով նոր հագուստները հագցուց, միւս սենեակը անցան: Ամէն գիւղական տան մէջ այսպէս մասնաւոր սենեակ մը կայ, կէս մը ննջարան, կէս մը հիւրանոց: Կիրով ճերմկցուած պատեր, քանդակուած կաղնեփայտէ բարձր ու լայնածաւալ մահճակալ մը, նուրբ եւ արժէքաւոր ձեռագործ ծածկոյթով: Թաւիշէ մեծ եւ պզտիկ շրջանակներ, կեղծ ծաղիկներով բեռնաւոր, շքմիներէն վրայ ապակիէ զանգակի մը տակ զմռսուած բու մը, քովը փայլուն խեփորներ, պզտիկ սուրբեր, դեղնած պատկերներ, զարդեր, որոնցմէ ամենէն նորը 1900ի ցուցահանդեսէն է մնացած: Եւ սակայն, հակառակ այս բոլոր անճաշակութիւններուն, անքննադատելի մաքրութիւն մը՝ եւ կարգ ու կանոն դնելու սէրը: Սեւ խաչ մը իր բարձունքէն կը հսկէ բոլորին:

Փիէռ ծունկերուն վրայ առաւ պզտիկը, որուն այտերը կարմրէր էին տաք ջուրի շփումին տակ եւ որ բոլորովին տարբեր պուպրիկ մըն էր եղած իր գեղեցիկ զգեստին մէջ: Յոգնած էր ան եւ ատոր համար է, որ այսպէս խելօք մը նստաւ երիտասարդին գիրկը: Փիէռ սիրեց, գգուեց, շոյեց ու համբուրեց զայն, երբեմն ուժով, երբեմն ալ խիստ թեթեւ հպանցումով մը: Կարծես Նէնէթին մէկ թաթիկն է, որ կը համբուրէր:

- Զիս կը սիրե՞ս, Պիպի:
- Այ՛ո:
- Որքան կը սիրես:
- Շատ:
- Ինչո՞ւ համար զիս շատ կը սիրես:
- Անոր համար...

Եւ գիտնալով, որ սիրող աչքեր զինքը կը դիտեն, ծամածռութիւն մը ըրաւ, յետոյ միմոսութիւններ, բաներ մը փնտռեց կարծես ու իր պզտիկ ձեռքերով երիտասարդին գլուխը սկսաւ շոյել, աւելցնելով...

- Աղուոր տղայ ես դուն. շատ մաքուր ես... մաքուր ես... Ըսաւ, թէ Կոստանն ալ կը սիրէ, Պէռթան ալ: Իսկ Թա-

թան... այո՛, ինչու չէ... միայն թէ շատ ծեր է ան ու տգեղ: Ինք կը սիրէ մանաւանդ Կի հորեղբայրը: Ինչպէս, չէս ճանչնար Կի հորեղբայրը: Ծեր կինը սենեակ մտած էր այդ պահուն եւ, վերջին բառը լսելով, աւելցուց.

- Օ՛հ, դրացի մըն է. ինք հորեղբայր կը կանչէ: Արդէն իր սիրած բոլոր մարդիկ հորեղբայր են իրեն համար:

Երբոր պառաւը հեռացաւ, Փիէռ հարցուց վերջապէս.

- Հապա՛ մայրիկդ... մայրիկդ չէս սիրէր:

Տղան չպատասխանեց բնաւ: Անշարժ մնաց, ակնարկը պատուհանէն դուրս, դիմագիծը պաղ, խոհուն: Պէտք եղաւ, որ Փիէռ կրկնէ իր հարցումը. սակայն ան կրկին չպատասխանեց ու գոհացաւ միայն կախ սրունքները օդին մէջ ճօճելով: Յետոյ մէկէն ծունկերէն վար ցատկեց, աթոռի մը վրայ բարձրանալով, պզտիկ պատկեր մը առաւ շըմինէին վրայէն եւ բերաւ Փիէռին: Նէնէթն էր. ուրիշ Նէնէթ մը: Աւելի նուրբ ու կարծես ավելի հասակաւոր, թեթեւ երիտասարդ, երկար, բայց սեղմ հագուստով մը՝ ուրկէ յայտնի կ'ըլլար, թէ պատերազմին սկիզբները առնուած լուսանկար մըն էր, անոր մայրութենէն առաջ: Փիէռ երկարօրէն նայեցաւ պատկերին, մինչ մանչուկը, կրկին ծունկերուն վրայ ելլելով՝ կ'ըսէր դանդաղօրէն, հատ-հատ բառերով.

- Maman n'est pas gentille... Elle n'est pas gentille.\*

Բարեբախտաբար շուտով պահը փոխեցին: Սակայն անկարող՝ նիւթէն ամբողջութեամբ հեռանալու, անցան պզտիկ սեղանին առջեւ, որպէսզի Պիպին մօրը երկտող մը գրէ: Փիէռ թուղթ ու մատիտ տուաւ եւ դիմացը անցնելով երկարօրէն դիտեց զայն, կզակը երկու ասփերուն մէջ: Զառիթափեր իջաւ. անգոյն, սակայն լարծուն զառիթափեր: Ինկաւ ջերմիկ դոնդողէ օրացոյցի մը մէջ: Ինկաւ անկողնի նմանող մեծ օրացոյցի մը մէջ: Մխրճուեցաւ, մխրճուեցաւ, հոն պիտի խեղդուէր: «Պզտիկ սիրական մայրիկս». տակը՝ «Պզտիկ սիրական մայրիկս». տակը «Պզտիկ սիրական մայրիկս»: Յետոյ Պիպին օդանաւ մը գծեց, չուզելով

\* Մայրս բարի չէ, նա բարի չէ:

նամակը շարունակել: Օդանաւէն վերջ՝ ճագար մը, քահանայ մը, աքաղաղ մը եւ դեռ ուրիշ բաներ, որոնք պէտք էր գուշակել: Բայց երբոր տեսաւ, թէ երիտասարդը սեղանէն ելլելով կը հեռանայ, մեծ ցանկութեամբ նայեցաւ ձեռքի գեղեցիկ մատիտին զոր Փիէռ իրեն փոխ էր տուած, նայեցաւ լաւ մը եւ անմիջապէս տաքատին գրպանը մխրճեց զայն: Փիէռ շըմինէին առջեւն էր այդ պահուն ու առանց յայտնի ընելու ժաքէթին ներսի գրպանը կը սահեցնէր Նէնէթին լուսանկարը: Երբոր երկու դէմքերը իրարու դարձան, առանց որ մէկը միւսին գողութենէն տեղեկութիւն ունենայ, երկուքն ալ ժպտեցան, եւ Պիպին եկաւ երիտասարդին գիրկը նետուիլ: Իրենց էն անկեղծ համբոյրը եղաւ: Երկուքն ալ երջանիկ էին:

.....

Մինչեւ վերջին վայրկեանը չսպասեց Պիպին: Կառքէն վար նետուելով գնաց քակել Պէռթային շղթան ու երկուքը մէկ ծառերուն մէջ կորսուեցան վազելով: Բարձրացան ցից մրգաստանը, հովիւին տնակին ետեւէն դարձան, իրենց շունչը սպառեցաւ հաճարի դաշտը կտրելով, մինչեւ որ սկսան սահիլ եղեւիններու տակ: Բարձր ու ցից գագաթ մըն էին հասած, որուն երկու կողերն ի վար կ'իջնէր սոյլը մշտադալար եղեւիններուն: Ճիշդ մէջտեղը ժայռ մը կը կորանար կրիայի մը պատեանին պէս, որուն վրայ բարձրացաւ Պիպին: Երկար շրջան մը ընելէ վերջ, ինքնաշարժը իր առջեւէն պիտի անցնէր, վարէն, ճիշդ դիմացէն: Բայց երբոր երեւցաւ ան, Պիպին տեսաւ, որ մէջքի գօտիին անցուցած սպիտակ մեծ թաշկինակը չկար: Մասնաւորաբար հետը առէր էր, որպէսզի նշան ընէ, եւ հիմա չկար. ինկեր էր, քանի որ չկար: Պիտի ճշար անշուշտ բարկութենէն, երբոր մէկէն նշմարեց, որ Պէռթային բերանն է: Շունը հաւաքէր էր:

Մայրամուտին մէջ, ուր այլեւս եղեւիններուն տակ կը մթնէր, ու կանաչները հորիզոնին լուսեղէն գիծերուն հետ ուրիշ համերգի մը կը սկսէին, պզտիկ տղան ձեռքը դեռ

բարձր մնաց, թաշկինակին հետ, որ մազերուն պէս կը տատանէր հովին, սոյլին: Տղուն ճիշդ քով իր յետոյքին վրայ նստած շունը կը նայէր մէյ մը կառքին կորսուած կէտին, մէյ մը անշարժ պզտիկին: Կը հաջէր, կը հաջէր:

#### 4

Ժամանակը զանոնք բաժնեց իրարմէ: Աղէտին առաջին ամիսները անսահման սէրով ու գորովով իրարու սեղմուած, իրարու կապուած էին Փարիզի մայրերը նետուած երիտասարդները, մեծ մասամբ տակաւին մանուկ: Ծննդավայրէ, ընտանիքէ, ապագայէ խլուած հայ տղաքը այդ օրերուն մէկզմէկու կառչեցան ուղեկորոյս, մինչեւ որ ատեն անցաւ, կրցին քայլ նետել, մինչեւ որ պեխեր բուսան: Թաւալող տարիները հետզհետէ բաժնեցին սակայն զանոնք իրարմէ: Կազմուող նկարագիրները հեռացան զատուող ճամբաներու հովահարով, եւ դժուարին կենսաշահութիւնը, կեանքի պահանջքները, մանաւանդ սա եռուզեռ կեանքը փչեցին այդ տկար խումբին վրայ ու ցրուեցին. փետուրներ թռան: Մառիանն իր անդիմադրելի հմայքով մօտեցաւ անոնցմէ իւրաքանչիւրին եւ քաշելով տարաւ հոն, տարաւ հոս: Հոն թէ հոս, յաղթանակը միշտ նոյնը մնաց. միշտ նոյն Նէնէթը, Մանոններու, Նինոններու, Նանաներու թռնուիին: Ոմանք ամուսնացան, շատեր ապրեցան բարեկամուիներով, պարպուեցաւ Հայոց եկեղեցին, մեկնող նամակներու թիւը նուազեցաւ եւ, անշուշտ, հեռուն մայրեր լացին:

Հիմա կը մնան միայն պզտիկ խումբեր, կազմուած ճշմարիտ, անկեղծ բարեկամներէ, որոնց հոգիներու միացումին մէջ տակաւին կը պլպլայ հայութիւնը, շիջումի զանիթափին վրայ սա յորձանքէն դժգունած: Ան կը պլպլայ, մինչեւ որ մարի:

Ահա այսպիսի խումբ մըն են կազմած սա հինգերը, որոնց ապահովաբար վերջին հաւաքոյթն է այսօրուանը:

Վերջինը՝ քանի որ Միսաք պիտի մեկնի: Օրապահիկը շահելով հանդերձ ան հետեւեցաւ մեծ զոհաբերութիւններով ատամնաբուժական վարժարանի դասընթացքին ու կրցաւ վերջապէս վկայականը շահիլ: Հիմա ալ կ'երթայ Մարսէյ, ուր պիտի աշխատի հօրեղբօր հետ, որ հոն կօշկակար է: Պիտի մեկնի նաեւ Պետրոս: Երբ, ո՞ր, ի՞նչ ընելու: Ոչ մէկ բացատրութիւն: Պետրոս անշուշտ պիտի չզիջեր խոստովանիլ, ոչ իսկ իր ընկերներուն, թէ պիտի վազէ Նէնէթին ետեւէն: Այո, դէպքին յաջորդ օրուրնէ ի վեր Պետրոս կը սպասէ հետզհետէ շատցող անհամբերութեամբ մը, Նէնէթին մօտեցող քայլերուն, Նէնէթին մօտեցող բոյրին: Սպասեց, սպասեց, հեւքով, տառապանքով, սիրով, բայց ան չեկաւ, ան բնաւ չվերադարձաւ: Եւ հետզհետէ աւելի ձեւ, գոյն ու բոյր ստացող կարօտը բացակայ այն ոսկի գլուխին, դիրութեամբ ցրուեց անպաշտպան մտածումներ: Ահա այդպէս, երկրորդ նպատակի մը ծառայելու համար խոշորցուած ու չափազանցուած խորհրդածութիւնները հեռանալով, երիտասարդը ձգեցին առանձին ինքզինքին հետ, իր սէրին հետ, իր սիրական Նէնէթին հետ: Հիմա ալ սպառած են ուժերը, հիմա ալ սպառած է հպարտութիւնը, եւ ան պիտի վազէ միւսին աւելցող ջերմութեան: Ի՞նչ պիտի ընեն: Հրաչը շատ լաւ արեւելեան կերակուրներ պատրաստել գիտէ, առատ իւղով, քանի մը ֆրանկով, խեղկատակութիւններով: Իրա՛ւ, իր սա երկու սենեակնոց յարկաբաժինին մէջ ամէն ինչ կնոջ մը բացակայութիւնը կը պոռայ, սակայն այր մարդու մը համար խիստ գովելի կոկիկութեամբ մըն էր յարդարած ճաշասեղանը, որ հիմա աւերակոյտի մը երեւոյթն ունի: Պնակներ, կերակուրի մնացորդներ, իրար խառնուած աղանդերներ, կէս մը լեցուն գաւաթներ, փրցուած հացի կտորներ եւ գետինը, ոտքերու տակ թաւալող գինիի շիշեր:

Կերան, կըշտացան, խմեցին, յղիացան: Սեղանին շուրջ մարմինները ցցուեցան այլեւս, աթոռները ճոնչեցին ու գլանիկներու ծուխը բարձրացաւ: Ամէն անգամ, որ այդ-

պէս հաւաքուին Հրաչին սենեակը, նախ կը խօսին «տուն»է եկած նամակներու եւ գործի վրայ, իրարու կը պատմեն աղջկան դէպքեր, սիրարկածներ, յետոյ երկարօրէն կը վիճին պատահած վերջին փարիզեան ոճիրներուն եւ դատավարութիւններուն շուրջ, զանոնք աւարտելու համար երգով: Գինիի առաջին գաւաթներուն յաջորդողը երգը կ'ըլլայ. «Ես սիրեցի մի զոյգ աչեր»ը ու այդ խռպոտ համերգը կ'աւարտուի «Հէր եէր գարանլըք»\*-ով: Հիմա լուռ են ալ: Սուրէնն է, որ պիտի խօսի: Անոր պզտիկցած աչքերը կը փայլին արտակարգօրէն եւ մատները մազերուն մէջ թաղելու այդ ձեւը իր վիճակը կը մատնէ: Հինգին մէջէն ամենէն աւելի բարձր, իմացականութեան տէր երիտասարդն է ան: Ընկերները տեսակ մը ակնածանք ու հիացում ունին անոր մտաւորական լայն պաշարին հանդէպ, որ իր անձանօթով կարծես կ'իշխէ այդ պարզ տղոց ակնարկներուն վրայ: Կատարեալ գրագէտ մը ըլլալու սահմանուած մէկն է ան, որ սակայն չի գրեր, որովհետեւ կը կարդայ եւ կը ժպտի: Խիստ հազուադէպօրէն կ'արտայայտուի այս ընկերութեան մէջ, ուր մտաւորական յարաբերութիւններէ տարբեր դրացնութեան մը գոհացում տալու կու գայ միայն: Սակայն գինին կարծես տկարցուց զինքը եւ զարմանալի անկեղծութիւն մը տուաւ իր խօսքին: Սանձարձակ արձակեց մտածումները, թափ տուաւ անոնց, արադացուց եւ թողուց, որ ջերմութեան տակ շեշտուին, սաստկանան:

Սուրէն շեղակի նայեցաւ Պետրոսին ու ըսաւ.

- Դո՛ւն ալ մարդ չեղար... թո՛ւհ... Լուսանկարիչ, լուսանկարիչ... տասնոց չ'արժէր: Մենք ամէն երկիր ունեցած ենք եւ ունինք լաւ լուսանկարիչներ, կաղապարի վարպետներ, սակայն ո՛ր է էականը, բարձրագոյնը, գեղեցիկը: Դուն ալ կատարեալ մարմնացումն ես հայութեան: Հայը ունի լաւ նկարիչներ, բայց ո՛չ նկարչութիւն. Հայը ունի լաւ դերասաններ՝ բայց ո՛չ թատրերգութիւն. յոգնիլ չգիտցող ճամբորդներ՝ բնա՛ւ նաւապետ. Հայը ունի զմայլելի բանաստեղծներ,

\* Ամէն տեղ խաւար է (թրքական երգ):

բայց ոչ գրականութիւն. Աստուածներ՝ ոչ դիցաբանութիւն. խնկելի յեղափոխականներ՝ բայց ոչ յեղափոխութիւն. Հայը ունեցած է ազատութիւններ, երբեք՝ անկախութիւն:

Յետոյ գինիի գաւաթը մէկ ումպով պարպելով շարունակեց արագօրէն, առանց շրթունքները չորցնելու.

- Հայը ամուլ է, անծին, անպտուղ: Հայը դատարկ է, փուճ, ունայն, սնուրի:

«Ապրելու իրաւունք չունի ան, քանի որ չէ ծնած»:

«Բէօհ, օր մը թերեւս ծնի, եւ մեր յուսացածէն տարբեր գոյնով մը. կարմիր, դեղին կամ թէ սեւ:՝ Սակայն մենք հայութեան այս թելը, դատապարտուած ենք կորստեան:

Մենք չենք ծնած: - Boy, Cocktail!»\*\*

Գաւաթը լեցուցին ու պարպուեցաւ:

- Կ'ըսեմ ձեզ, վստահ թէ հասկնալի պիտի դառնամ, քանի որ դո՛ւք ամէնքդ ալ դժբախտ սէր մը ունեցած էք ձեր ատենին:

«Սիրահար մը, մանաւանդ դժբախտ եւ զգայնոտ սիրահար մը, գոնէ մէկ անգամ մահուան պիտի խորհի անխուսափելիօրէն: Պիտի ուզէ տապալիլ սիրուիին ոտքերուն առջեւ, մահուամբ հարուածուած իյնալ անոր բազուկներուն մէջ ու ոգեվարիլ: Պիտի ուզէ տեսնել եւ վայելել այդ անտարբեր աղջկան յուզումն ու անձկութիւնը: Ինչ գոհունակութեամբ պիտի հետեւի անոր լացին, աղերսանքին, փրկութեան ճիգերուն... Սակայն անօգուտ, անօգուտ. ուշ է ալ, եւ մանչը պիտի մեռնի, աչքերը հետզհետէ պիտի գոցուին, պիտի երթայ, պիտի մեկնի: Եւ անշուշտ իր այդ մահէն վերջն ալ պիտի վայելէ սիրուիին ցաւը: Անշուշտ:

«Եւ մենք, եւ ե՛ս, ահա, նոյն այդ անգութ հրճուանքը ունիմ, անսահման հրճուանք մը, ժանտահոտ, թոյներով պատրաստուած գինովութեան մը պէս: Վրէժ եմ լուծելու, ուրիշին ցաւին ու տառապանքին վրայէն հեշտանք գող-

\* Ընդգծուած հատուածը կրճատուած է 1962, 1982, 1983 թ.թ. հրատարակութիւններից:

\*\* Մանչուկ, մի կոկտեյլ:



նալու ամենաբարբարոս ծամածռութիւն մը: Թո՛ղ ան հիմա լայ, ակռաները կրճտէ, ձեռքերը գալարէ, ան, մեր ազգը, Հայր: Թող մեր պետերը գրեն, ըսեն, հաւաքոյթներու մէջ պոռան, ճչան, անօգուտ, անօգուտ: Պիտի այլասերինք ամէնքս ալ, պիտի կորսուինք բոլորս ալ:

«Ուրիշներու պէս մենք ալ մեր կրօնքը ու հաւատքը թաղեցինք պատերազմի ընթացքին: Անկախութեան մը յոյսը հալեցաւ, կորսուեցաւ յանձնուած բերդաքաղաքին հետ:՝ Ու հիմա կը հարուածուի մեզ վրայ բռնող մեծագոյն եւ հիմնական սիւնը՝ ընտանիքը: Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքուած, ան, որ անհրաժեշտ էր մեր արիւնին, հակառակ իր տգեղութեան, իր չոր հպարտութեան եւ անմիջապէս մայրանալու ու ծերանալու հակամիտութեան: Ասոնք առաւելութիւններ են ուրիշի մը համար, մինչ երիտասարդ մը...»

«Այն երիտասարդը տեսաւ ֆրանսացի աղջիկը, Գերմանացին, Իտալացին, Յոյնը, Ռուսը, օր մը անոր բոյրը ծծեց, օր մը միւսը, գիշեր մը այս պանդոկը մնաց, ուրիշ առաւօտ մը տարբեր սանդուխներէ իջաւ, սիրուեցաւ քանի մը անգամներ, մինչեւ որ ինք ալ սիրեց օր մը, դուռ մը ետեւէն գոցելով:

«Այժմ հայուհին իր յիշողութեանը կը ներկայանար միայն երկու հաստ սրունքով ու քիչ մը պեխով:

«Ի՛նչ փո՛րթ, ի՛նչ փո՛րթ»:

«Ներքինիներ են մեր բոլոր պապերը. անոնք ոչինչ կրցեր են քանդակել միսին վրայ, անոնք ոչինչ կրցեր են քանդակել միտով: Մեր մէջ մեծ պակաս մը կայ, զոր պէտք էր լեցնել գիտնային: Մենք Հայաստան չենք ապրած, անոր հողն ու օդը անձանօթ են մեզի. անոր բարքերն ու սովորութիւնները մեզ չեն կռած եւ բնական է, որ մենք սիրենք մեր ծննդավայրը միայն, այսինքն երկինք մը օտար: Մեր նախնիքներուն իրարու յաջորդող անվերջանալի սերունդները չեն կրցեր մեզ փրկել, չեն կրցեր մեզ այն մեծ

\* Կ'ակնարկուի Կարսի անպայքար գրաւումը:

սէրը տալ: Պոռոտախօսութիւնները կը ցնդին բոլորն ալ. ճշմարիտ հայրենասիրութիւնը կարօտ է - մանաւանդ մեր պարագային - անցեալի մը, մեծութեան, օրինակներու:

«Ըսի, հայրենիքի մը գաղափարը շատ անգամ գարշապար մըն է:

«Հայրենիքի մը գաղափարը շատ անգամ հերոս մըն է:

«Հայրենիքի մը գաղափարը շատ անգամ ամանդավէպ մըն է:

«Այդ մեծ սուտին տեղ մենք դրեր ենք կեղծիքը - Մեր ամբողջ պատմութիւնը ապացոյց:

«Հերոսին տեղ դրեր ենք մշակներ - Մեր պարապ եղունգները ապացոյց:

«Հաւաքական ճիգին տեղ դրեր ենք հայդուկներ - մեր բոլոր վանքերը ապացոյց:

«Աղիքներու ճիչին տեղ դրեր ենք արցունքներ - մեր բոլոր բանաստեղծները ապացոյց:

«Աստուածային կիրքին տեղ դրեր ենք հարսներ - մեր բոլոր արախչիները ապացոյց:

«Գաղափարականին տեղ դրեր ենք կաղապարներ - Մեր բոլոր գիրքերը ապացոյց:

«Պայքարին տեղ դրեր ենք կռուազանութիւն - մեր բոլոր կուսակցութիւնները ապացոյց»:

«Անոր տեղ դրեր ենք այդ - մեր հոգին ապացոյց»:

«Ձուլուեցէք, ձուլուեցէք, ձուլուեցէք, - Boy, Cocktail!»:

Լեցուցին ու խմեց: Միսաք ըսաւ.

- Աղէկ, որ այդ խօսքերդ ուրիշին չես ըսէր. քեզ անմիջապէս դաւաճան, ազգուրաց, վատասերած պիտի անուանէն: Յանցանքը քուկդ չէ սակայն. գինիինն է: Կարծեմ քիչ մը շատ փախաւ...

- Անհոգ եղիր, ան գինով չէ, - պատասխանեց Պետրոսի լաւագոյն լրջութեամբ. - գինովի կամ դաւաճանի խօսքեր չեն ասոնք: Ընդհակառակն, ես պիտի ուզէի, որ մեր աղաները իմանային այս ըսածները եւ փոխանակ հաջելու կամ հայիոյելու, վերջապէս ըմբռնէին տիրող մթնոլոր-

տին ծանրութիւնը, ըմբռնէին աղէտը եւ դարմանին խոր-  
հէին եթէ կարելիութիւնը կայ... եթէ կարելիութիւնը կայ...

Հրաչ՝ որ իր խառնուածքով հակառակ է սովորականէն  
քիչ մը բարձր նիւթեր խորացնելու, որ անընդունակ է չա-  
փազանցուած ճշմարտութիւն մը ըմբռնելու, սկսաւ նեղու-  
իլ: Պէտք էր, որ իր Հայու հանգամանքով վարժուած ըլ-  
լար այսպիսի նախադասութիւններու ուռուցիկ շեշտին, սեւ  
յոռետեսութեան եւ ազգ մը քանի մը նախադասութիւնով  
դատելու սովորութեան, սակայն սկսաւ նեղուիլ եւ ուզեց  
նիւթը փոխել՝ գոչելով մանուկի մը պէս.

- Հա-յաս-տանի պատ-կեր-ն է, պան մը տուէք, նա-յե-  
ցէք: Հա-յաս-տանի պատ-կեր-ն է: Բան մը տուէք, նայե-  
ցէք. Հա-յաս-տանի պատկերն է...

Լռեցուցին զայն, եւ Սուրէն շարունակեց.

- Հայաստանի պատկերն է, ճիշտ, նայեցէք, տուէք ինչ  
որ ունիք, բայց նայեցէք, որովհետեւ ձեզմէ ոչ ոք տեսած  
է զայն եւ դեռ պիտի չտեսնայ... Քանի-քանի անգամներ  
փորձութիւնը ունեցած եմ կերտելու այդ մեծ պատկերը,  
այնպէս, ինչպէս որ պէտք է, այնպէս, ինչպէս որ ես պէտքը  
կը զգամ... Ծայրէն սկսիլ մեր պատմութիւնը, գոնէ միայն  
ինծի համար, գոնէ միայն իմ նմաններու համար:

«Որքան որ մտածումս ետեւ տանիմ, Հայերը կը տես-  
նեմ միշտ այնպէս, ինչպէս որ են այսօր: Պզտիկ, գաճաճ,  
տխեղծ: Իւրաքանչիւրը անդիմադրելի պաշտամունքը ունի  
ի՞ր կաշիին, ի՞ր մորթին: Եսամուլ, անձնասէր, անմիաբան,  
նպարավաճառ... մինչեւ այն օրը, երբոր չեմ գիտէր, որ  
հարսնիքին, երկնքէն ոսկի, արծաթ ու մարգրիտ տեղաց  
ամբողջ օր մը եւ գիշերն ողջոյն... ոսկի, արծաթ, մարգ-  
րիտ. Boy Cocktail!

«Հոն, ուր ահագին հարստութիւն կայ, հոն ծայրայեղ  
թշուառութիւն կայ»:

«Այն երկիրը ուր խոր թշուառութիւն կայ, հոն ազատու-  
թիւն կու գայ»:

«Եւ եղաւ ազանտ, եւ եղաւ ազատ»:

«Մեր այն թագաւորը, որ կը կոչուէր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, հաւաքեց իր երկրին բոլոր այն անձերը, որոնց համար կ'ըսէին, թէ խելացի են, իմաստուն, պայծառատես եւ լուսամիտ: Հաւաքեց բոլորն ու ջարդեց: Հայը շատ իմաստուն մարդ ունէր. ատոր համար օրէր, օրէր, օրէր ջարդեց - cocktail!: Յետոյ պահանջեց, որ Ազգային Երգ մը գրուի: Ամէն ոք եկաւ ու երգեց իր երգը. չհաւնեցաւ ոչ մէկին, որովհետեւ խոլ ըլլալուն լաւագոյն հասկացողութիւնը ունէր: Այն ատեն մղեց անվերջանալի պատերազմներ, թշուառացուց, տառապեցուց եւ արիւնեց իր ազգը երկա՛ր, երկա՛ր տարիներ, մինչեւ որ օր մը մեծ Երգը պայթեցաւ բոլոր բերաններէն նոյն զմայլելի, վսեմագո՛յն վանկերով: Այսինքն մէկ վանկով - «ՄԵՆՔ»:

«Յաջորդ թագաւորը, որ կը կոչուէր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, կոյր էր: Ան կը բնակէր բարձր սարահարթի մը վրայ կառուցուած մեծ պալատը, որուն առջեւ իր մայրաքաղաքը կը խորանար երկու լեռնաշղթաներու կազմած հովիտին մէջ: Երբոր արշալոյսը ծիրանի կ'ուտար լեռներու շրջագիծին, հովիտը կը լեցուէր մշուշով, սպիտակ, թանձր, անթափանց մշուշով մը, որ կարծես բամբակի ծով մը ըլլար: Պալատին մարմար սանդուխներէն իջնելով՝ թագաւորը իր արօրը կը լծէր ու կը մտնէր այդ դաշտին մէջ: Երկա՛ր, երկար ակօսներ կը բանար մշուշին վրայ, եւ ճակատը արշալոյսին՝ բուռ բուռ կը ցանէր ձիւն ակօսներուն մէջ ներքին ձայներ եւ լռութիւն... Վարը դեռ քնացող իր զաւակներուն համար բուռ բուռ ձայներ, ներքին ձայներ եւ լռութիւն:

«Ըսի թէ կոյր էր ան. եւ որպէսզի լաւ տեսնէ, իր ամբողջ գահակալութեանը ընթացքին թռչնիկի մը երկու պզտիկ թելեր անցուց իր ականջներուն»:

«Իր որդին սակայն, որ կը կոչուէր Աբգար, Գագիկ կամ Խոսրով, սիրեց Գեղեցիկը: Հրամայեց, որ իր մարդիկը մտնեն ամէն տունէ, ամէն օջախէ ներս եւ սպաննեն այդ ընտանիքին էն սիրական անձը, հայր, մայր թէ որդի: Ամ-

բողջ երկիրը եղաւ սգաւոր, զմայլելի, վեհ, ազնուադրոշմ: Մաքրութիւն, մաքրութիւն: Ծնան հանճարներ, ծնան մարդիկ: Այդպէս է, որ մէկը հայկական տառերը մոռցաւ, եւ այդպէս է, որ մէկը թագուհիին ծնրակապը փրցուց իր ակռաներով:

«Թագաւորը չհաւնեցաւ իր քաղաքներուն, անոնց բթամատներուն, շուրջի ակնարկներուն, հրամայեց, որ անմիջապէս նորոգութիւններ սկսին ամպերու վրայ»:

«Հրամայեց, որ ամէն ոք իր ամենօրեայ աղօթքը պոռայ կանացի գուլպաներու մէջ միայն»:

«Հրամայեց, որ կարաւանները հանգրուանի մը մօտեցած ատեն իրենց գնացքը արագացնեն, որպէսզի ոչ մէկ ճամբորդ հասնի իրենց»:

«Հրամայեց, որ իր հպատակներէն ոչ մէկը նայի երջանկութեան յետոյքին»:

«Հրամայեց, որ նաւերը մեկնելով հոսկէ հասնին հոն, սակայն կայմերու վրայ միայն առագաստ պարզուի»:

«Հրամայեց, որ մարդիկ պտըտին խցհաններով եւ չնստին բնաւ սանդուխներու վրայ»:

«Հրամայեց, որ կիները ծնին զաւակներ, սակայն այդ զաւակները աշխարհ մտած ատեն չիյնան իրենց ծունկերուն վրայ»:

«Հրամայեց, որ ոչ ոք չսկսի հաշուել հարիւրմէկէն մեկնելով»:

«Հրամայեց, որ ոչ ոք ամպ մը չդնէ լուսնին շուրջ եւ չլայ, եւ չխնդայ»:

«Այլ միայն, բայց միայն... Boy, boy!...

Խոկումի երկար պահէ մը վերջ Միսաք ըսաւ.

- Սուրէն, պէտք է, որ գրես այդ ըսածներդ. պէտք է, որ ակ լրջօրէն աշխատիս եւ արտադրես: Քիչ մը առաջ կ'այպանէիր Պետրոսը, սակայն դուն ալ նոյն արիւնէն ես: Մի՛ մնար «անծին, անպտուղ»: Ինչո՞ւ կը շարունակես խորհիլ ուրիշներու պէս, թէ վատնելիք ճիգդ բանի մը պիտի չճանայէ, անօգուտ է եւ թէ պարզ սպառում մը պիտի ըլլայ: Մի՛

ըլլար այդքան դիրազգաց եւ քանի մը տխմարներու կարծիքով մի՛ ուժաթափուիր, մի՛ յուսալքուիր: Հայոց կարծիքը մի՛ փնտռեր, մանաւանդ թերթերուն մէջ, եւ խորհէ, որ թերեւս օր մը...

Լռեց սակայն, Սուրէնին արձակած ակնարկէն ըմբռնելով, որ մտածումը սխալ ճամբու մը մէջ էր: Իսկ Հրաչ, որ չէր անդրադարձած, ուրախութեամբ ճչաց.

- Էյ, խըեախ կ'ըլլայ. անունն ալ կը դնենք «Թէ ինչպէս կորաւ մեր ազգին գահը»...

- Դուն լռէ. խնդիրը երբոր սիրաբանութեան վրայ չէ, դուն կարծիք չունիս:

- Ինչ ըսիր, mon chéri!

- Անշուշտ, չէս հասկնար, որ ճիշդ հակառակը ըսել կ'ուզէ, թէ ալ բան մը պիտի չկորսուի, քանի որ կին կայ, եւ սէր, եւ մերկութիւն, եւ լռութիւն...

Սուրէն, որ սկսած էր ժպտիլ իր այն մութ ժպտով, նիւթը հեռացնելու համար ըսաւ.

- Այն նաւը, որուն վրայ կնոջ պաշտամունք կայ, այն նաւը չի կորսուիր նոյնիսկ, երբոր ընկղմի:

Այս խօսքէն ուժ առած՝ Հրաչ վերսկսաւ իր հանկերգը նոյն մանկապարտիզեան շէշտով.

- Հա-յաս-տա-նի պատ-կեր-ն է. պան մը տուէք, նա-յե-ցէք. Հա-յաս-տա-նի պատ-կեր-ն է. պան մը տուէք, նա-յե-ցէք...

- Էյ, Աստուծոյ սիրուն, ցուցուր սա պատկերդ, լմննայ երթայ:

Հրաչ ոտքի ելաւ, սակայն վարանեցաւ, չուզեց ցուցնել եւ կարծես զղջաց ըրած առաջարկին համար: Բայց երբոր ամէնն ալ պնդեցին, զուարճալիք նիւթ մը գտած ըլլալու յոյսով, սկսաւ ամօթխած աղջկան մը ձեւերը առնել եւ իր էն անգիտակից խնդուքովը փթթիլ: Մէկէն ձիթապտուղի կուտ մը ինկաւ իր բաց բերնին մէջ, փթթումը ընդհատելով: Այն ատեն Հրաչ գոցեց բերանը եւ բացաւ դարանը: Մէջէն մեծ խաւաքարտ մը վերցուց ու զայն կուրծքին սեղմած դարձաւ.

տղոց, կրկին խնդաց «հի՛, հի՛, հի՛» եւ թերթուսիկ շեշտով մը ըսաւ.

- Միայն թէ տակաւին պէտք եղածին պէս չէ աւարտուած... Պետրոսին ձեռքը կը համբուրէ... սանկ պզտիկ retouche մը...

Երբոր խաւաքարտը իր երեսը դարձուց սեղանին, չորս բերաններէն միաժամանակ նոյն բացականչութիւնը թռաւ:

Բաւական մեծ agrandissement\* մըն էր, որ կը ներկայացնէր երիտասարդ աղջիկ մը, ոտքի, դասական ձեքծէքուն կեցուածքով, թւերը քիչ մը բաց, ժպիտը դէմքին եւ ամբողջութեամբ մերկ:

Տղաքը կը պատրաստուէին մէյ մէկ ածական նետել կնամով Հրաչի երեսին, երբոր Փիէռ վեր նետուեցաւ իր աթոռէն ու պատկերը խլեց առաւ:

- Ծօ դուն ո՛րտեղէն առիր աս...

- Քու սենեակէդ:

- Իմ սենեակէս...

Փիէռ այնպիսի շեշտով մը արձակեց իր բառը, որ ոչ ոք տարակոյս ունեցաւ սխալ մը պատահած ըլլալուն մասին: Հրաչ նախ զարմացաւ ու յետոյ շփոթեցաւ, վախնալով, որ թերեւս անդարմանելի վիշտ մը կը պատճառէր իր ընկերոջ. եւ դէպքերուն անձանօթ՝ չգիտնալով ինչ դիրք բռնել գոնէ իր պատասխանատուութիւնը փրկելու մտադրութեամբ, աւելցուց մեքենաբար.

- Քու սենեակէդ... Չէս յիշէր ինծի խոստացած էիր մերկ կնոջ պատկեր բերել... այն գիշեր երբոր կօշիկներդ բերի, լուսթռին կօշիկներդ, որ Տիկնանցի պարահանդէսին համար փոխ էի առած քեզմէ, մահճակալին տակը դրած ատենս գտայ... Հոն նետեր էիր ապակին:

Երկու ձեռքերուն մէջ բռնած, Փիէռ նայեցաւ այդ պատկերին, նայեցաւ... Ի զուր Միսաք ջանաց զուարթութիւնը կատակներով շարունակել. բոլորը մէկ լռեցին: Քանի ան-

\* Մեծարում:

գամ, որ Հրաչը համարձակեցաւ ակնարկը բարձրացնել Փիէռի դիմագիծին, զղջումը եւ շփոթութիւնը ւելցաւ:

- Էյ, ինչ ընենք, Պետրոս, ատոր համար մի նեղանար... կը պատռենք կը լմննայ... Ես ինչ գիտնամ, ապակիին վրայ ալ «անգործածելի» գրուած էր... Ես ինչ գիտնամ...

Բայց յանկարծ Պետրոս շառագունեցաւ: Արիւնը այնպիսի ուժգնութեամբ մը խուժեց այտերուն, գլխին, ականջներուն, որ Միսաք վախնալով ուզեց պատկերը ձեռքէն առնել. չկրցաւ բնաւ: Պետրոս գամուած էր կեցած տեղը եւ ձեռքերը կը դողային: Յետոյ նոյնքան շուտով դեղնեցաւ, եղաւ տժգոյն, սպիտակ... ուզեց բան մը ըսել, սակայն ֆրանսերէնը խառնուեցաւ հայերէնին հետ եւ հայիոյութենէ մը զատ բան մը չհասկցուեցաւ: Երբոր գլուխը բարձրացուց, ակնարկը ինկաւ Սուրէնին վրայ, որ կզակը մէկ ափին մէջ, պատառաքաղովը ձուկի մը պոչի հետ կը խաղար: Փիէռ փախաւ խենթի մը պէս:

Երբոր փողոց հասաւ, չուզեց իր աչքերուն հաւատալ. կրկին նայեցաւ պատկերին, բայց միշտ չուզեց հաւատալ:

Յետոյ վազեց, վազեց, անձրեւին տակ, հովանոցներու զարնուելով: Ամէն վայրկեան կ'ուզեր նայիլ, չէր համարձակէր. շատ անցորդ կար. չէր համարձակէր... Յանկարծ գտաւ միջոցը. միզարան. հոն առանձին պիտի ըլլար: Անդադար փողոց դարձաւ, մինչեւ որ գտաւ հատ մը. ներս մտաւ, նայեցաւ, նայեցաւ... ձեռքը տարաւ գրպանին բան մը առնելու համար, բայց... երբոր դուրս ելաւ, իրեն այնպէս թուեցաւ որ մարմնին սեղմած խաւաքարտը պէտք եղածին պէս չէր կրնար ծածկել եւ անցորդները կը տեսնէին: Կոտրեց զայն ծունկին վրայ եւ վազեց, վազեց:

Սենեակ հասնելուն պէս, հանեց գրպանէն այն պզտիկ պատկերը, որ Նէնէթին երիտասարդութիւնը կը ներկայացնէր եւ զոր գողցեր էր Սէն-ժորժ ըրած վերջին այցելութեան ընթացքին: Հիմա այլեւս կասկած չկար, թէ մերկ աղջիկը Նէնէթն էր. կասկած չկար Նէնէթն էր: Եթէ երբեք առաջին օրն իսկ Փիէռ չէր ճանչցած զայն ապակիին վրայ, պատ-



ճառը արտակարգ retoucheն էր, այդպիսի աշխատութիւններու համար անհրաժեշտ: Մինչդեռ հոս, ամբողջութեամբ լուացեր էին զայն, միսին բոլոր մանրամասնութիւնները ունենալու համար անեղծ: Օհ, Հրահ, Հրահ... ինչպէս, այո՛, Տիկնանց, լուսթռին կօշիկներ, ձուկին պոչը, «անգործածելի»: Բայց այն ատեն ինչո՞ւ Լէսքիւռ պահէր էր այդ դեղնած ապակիներուն տուփը. միշտ Նէնէթին կարենա՛լ սպաննալու համար... «անգործածելի», Նէնէթը, Նէնէթը... Բայց ան ստիպուած էր. դրամագլուխ չունէին առաջին ամիսները, երբոր Ճոնին մերկ կնոջ պատկեր ուզեց. եւ քանի որ չունէին, ինք եղաւ ենթական... Միշտ այդպէս... այդպէս առանձին լուսանկարուեցաւ. թէ յետոյ... Ոհ, երբե՛ք, երբե՛ք ան միւսները... «Խափշիկներուն եւ Սենեկալցիներուն հետ, յետոյ Ամերիկացիները», զինուորներ, զինուորներ, կոպիտ, քաղցած, անասնական կիրքեր, սպաննուածներու վրայ Նէնէթի պատկերներ, ծածկուած եւ արիւնոտ Նէնէթներ... անոնք, որոնք խրամին մէջ անկիւն մը պիտի գոհանան... որոնք գոհացան Նէնէթով...

Նէնէթով... ի՛ր Նէնէթով...

Ինկած էր մահճակալին վրայ իր ամբողջ երկայնքին ու կը ցնցուէր, կը ցնցուէր, կը ցնցուէր...

Դեռ այսպէս պիտի անձրեւէ երկա՛ր մթնշաղներ, եւ դեռ այսպէս պիտի անձրեւէ երկա՛ր, անվերջանալի տեսիլներ:

## 5

Դժուարին ոստում մը ընկրկում կը պահանջէ: Պէտք է նախ խօսիլ, անդադար, անվերջանալիօրէն խօսիլ որեւէ մէկուն հետ, որպէսզի յետոյ լռութեան առջեւ մեր խօսքերը մենք չիմանանք:

Կարծես ճիշդ ատոր համար է, որ Փիէռ դէպի Նէնէթը ընելիք իր ոստումին կարենալ պատրաստուելու համար, փախած էր իր պանդոկէն: Երեք գիշեր Միսաքին սենեակը անցուց, այդ սիրելի ընկերոջ մտերմութեան մէջ մոռնա-

լու համար անցեալ օրերու տառապանքը եւ գողնալու քիչ մը ժպիտ՝ Մոնմառթերեան շէնշող բարձունքներէն: Տանիքի մը քմահաճոյքներուն մէջ սեղմուած ծառայի սենեակ մըն էր այն, աստղաբաշխութեան մօտիկ, Միսաքին անսպառ զուարթութեամբը ու գաջէ ակռաներովը լեցուն: Հոդ անցուցած անվերջանալի եւ անմոռանալի երեք գիշերներուն գործը անմիջապէս քանդուեցաւ, կորսուեցաւ, չքացաւ սակայն, երբոր երէկուան իրենց ընկերական հաւաքոյթին Հրաչ կնոջ մերկ պատկեր ցուցուց: Պետրոս կրկին ինկաւ բրտօրէն իր պատեանին, իր ցաւին մէջ, իրականութեան մէջ: Երբոր կը խոյանար սանդուխներէն վեր, մտածումէն հալածուած ու բազրիքը դողացնելով, չլսեց բնաւ պանդոկապետին կանչը, որ ծրար մը ձեռքին՝ իր անունը կը պռռար: Խաւաքարտէ այդ չարաշուք շերտին հետ առանձնանալու տենչանքը կուրօրէն կրկին իր խուցը կը նետէր, քանի մը օրուան բացակայութենէ յետոյ, նորէն առանց Նէնէթի, նորէն Նէնէթով:

Դժուարին գիշերը անցաւ: Յաջորդ առաւօտուն կանուխ պանդոկին սպասուիին անձամբ մինչեւ վերը բերաւ այդ ծրարը, պահարանով մը միասին: Չուանը փրցնելէ վերջ, Պետրոս զարմացումով նայեցաւ ծրարին պարունակութեան, առանց բան մը հասկնալու: Յետոյ աճապարանքով սկսաւ նամակը կարդալ: Քանի մը տող՝ եւ արդէն իսկ բառերը դանդաղեցան, շրթունքներու ակամայ շարժումը հալեցաւ, եւ տղուն ակնարկը գնաց իյնալ փիղերէն մէկուն կռնակին: Հոն օրօրուեցաւ, տատանեցաւ, ցնցուեցաւ, մինչեւ որ այդ ցնցումներէն մէկը զինքը վար նետեց: Մեծ զգուշութեամբ, կարծես վախով դարձուց թերթը ու նայեցաւ այդ ստորագրութեան... այն ստորագրութեան, որ այնքան անգամներ բարձրացեր էր սա սանդուխներէն, որ այնքան անգամներ եկեր էր հոս, իր առջեւ, իր, որ նոյնիսկ գիշեր մը բախեր էր գոց դրան... Պետրոս նայեցաւ այդ պզտիկ, շատ պզտիկ ստորագրութեան, ինչպէս ճերմակ ու անարիւն թաթիկի մը, որ կ'ըսէ. - Փըթիթ Լիզ:

«...Հապա՛ Փիէնօ, մեր տարեդարձն է այսօր: Չէս յիշէր, երկու տարի առաջ ճիշդ այսօր է, որ առաջին անգամ... այն գիշեր ժանգի գոյն հագուստ մը հագած էի եւ միշտ քեզի հետ պարեցի, թէեւ այն ատեն դեռ լաւ պարել չէիր գիտէր: Միտքդ է, որքան ոտքերուս վրայ կոխեցիր... Հաւատա՛, Փիէնօս, ես քեզի սիրեցի ամբողջ իմ... Միշտ յուսացի, որ պիտի վերադառնաս ինձ, քու փրթիթ Լիզդ չպիտի մոռնաս... անկեղծ եմ, չէ՛, Փիէնօ... Կ'ըսէիր, թէ իմ գլուխս պզտիկ է եւ սիրտս մեծ... Յուսացի... Խնայողութիւններ ըրի, որպէսզի մեր տարեդարձին բան մը նուիրեմ քեզ, պզտիկ յիշատակ մը: Երբոր զիս լքեցիր, շարունակեցի խնայել, որովհետեւ վստահ էի, թէ պիտի վերադառնաս... յուսացի... չկրցայ ուրիշ բանի ծախսել. այդ դրամը քեզի համար էր... Յիշէ՛ զիս... նոյնիսկ եթէ հիմա ալ չգաս, վստահ եղիր, որ լաւագոյն եւ անմոռանալի յիշատակով մըն է, որ...»:

Մազերը խառնիխուռն, աչքերը անքնութեամբ ուռած եւ տակաւին գրեթէ մերկ, Պետրոս ինկած էր աթոռին վրայ, նամակը մէկ ձեռքին, քակուած ծրարը ծունկերուն: Երկարօրէն կը նայէր պաղած աչքերով այդ Pull overին\* զոր կարենալ գնելու համար ով գիտէ որքան անասելի զոհողութիւններ էր ըրած խեղճ աղջիկը, ով գիտէ որքան զրկումներու էին ենթարկուած իր պտըլիկ ձեռքերը, ով գիտէ որքան էր քալած...

Աղու՛ր, աղու՛ր Pull over մը, իսկական մետաքսի փայլով, իր ամէնէն աւելի սիրած գոյնով... բայց ինչո՛ւ, ինչո՛ւ Փրթիթ Լիզ, ինչո՛ւ «պզտիկ գլխով ու մեծ սիրտով» փրթիթ Լիզ... Հարուածին յաջորդող այս գաղջ շունչը, տառապանքէն անմիջապէս վերջ եկող փայփայանքը գորովի, միամիտ սիրոյ, զինքը խորապէս կը խոցէր, վերքը աւելի կը բանար, կը խորացնէր եւ սրտին սաստկացող սեղմումները մտածումները կը ճմռթկէին անդիմադրելի ուժով:

Դող մը երիտասարդին ուսերը ցնցեց: Փիէնօ ոտքի նետուեցաւ անմիջապէս եւ սկսաւ յագուիլ, կարծես անտե-

\* Բրդեայ, հիւսածոյ բաճկոն:

սանելի ներկայութեան մը հաւատացնելու համար, թէ այդ դողը ցուրտին արդիւնքն էր: Հապճեպով, մեծ հապճեպով սկսաւ հագուիլ, որպէս թէ անմիջապէս բան մը ընել որոշած ըլլար, որպէս թէ իր աչքերը նշմարած ըլլային հեռունքիչ մը ջուր, կամ պատուհան մը չգամուած: Երբ աւարտեց, մնաց սակայն անորոշ, երկբայական: Անդադար դարձաւ սենեակին մէջ, ակնարկը սեղանին վրայի բաց ծրարին, ակնարկը սեղանին վրայի բաց, ամբողջութեամբ բաց սիրտին:

Հակընդդէմ ալիքներու պէս երկու տարբեր կիներէ մեկնող ակնարկներ, երկու տարբեր ժպիտներ կը բախէին իրարու, մէկը միւսը ծածկելով, մէկը միւսը յանդիմանելով փոխնիփոխ:

Փիէռ կրկին նամակը կարդաց, եւ Լիզին նուիրուած անցեալ օրերու յիշատակը մտածումին ներկայացաւ անսպասելի երանգաւորումով մը: Պարասրահի մը մէջ էին հանդիպեր իրարու. ան նուրբ էր, թեթեւ, փոքրակազմ եւ իր անվերջ ժպիտովը եկաւ կծկուիլ երիտասարդին բազուկներուն մէջ: Հայը անդադար կոխեց անոր տոտիկներուն վրայ, մինչ Լիզ («ո՛հ, զիս կը կոչեն Փըթիթ Լիզ») մինչ Լիզ կը շարունակէր ժպտիլ ու կը կարմրէր, կը շառագունէր, որպէս թէ կոխողը ինք ըլլար: Ըսաւ, թէ ինք Փարիզի մէջ... ո՛հ, ըսաւ, թէ առաջին օրը այդպիսի հարցում չեն ուղղէր, այլ միայն կը ժպտին եւ կը ջանան հաճելի ըլլալ... Օրեր վերջ ըսաւ, թէ ինք Փարիզի մէջ առանձին էր, թէ գլխարկ կը շինէր, թէ մեծ, այո՛, շատ մեծ աշխատանոցի մը մէջ կ'աշխատէր, եւ թէ...: Ժանգի գոյն հագուստը Փիէռ ուրիշ անգամ մը բնաւ չտեսաւ Լիզին վրայ: Անոր ընկերուհիներէն մէկն է, որ միշտ կը հագնէր զայն. Լիզ այդ օրը փոխ էր առած: Ո՛վ չի ճանչնար Փարիզի *միտիներուն*\* կեանքը. կամ ո՛վ իրապէս, ամբողջութեամբ կրնայ գիտնալ այդ ճնճուկներով լեցուն աշխատանոցներուն առասպելը: Այդքան խեղճ ամսականով մը ինչպէ՛ս, ինչպէ՛ս կրնար ապրիլ տասնետութ

\* *Դեռապի գործաւարուհիներ:*

տարեկան սա պուպրիկը, միշտ ժպտուն, միշտ թարմ, միշտ թեթեւ, գետնէն գտնուած կոճակի մը պէս:

Իրենց բարեկամութեան սկիզբի շրջանին էր, երբ օր մը յանկարծ Փիէռ մեծագոյն անակնկալը գործեց երթալ զինքը առնելով: Ճիշդ կէսօրին ճշմարիտ թռչնիկներու պէս խումբ խումբ դուրս նետուեցան *միտիները* աշխատանոցին ետեւի մեծ դռնէն: Լիզ, զինքը նշմարելով, զարմացումէն եւ երջանկութենէն անշարժացաւ յանկարծ, կարմրեցաւ ու յետոյ վազելով եկաւ նետուիլ վիզին: Համբոյրէն վերջ ետեւ դարձաւ, ժպիտ մը արձակեց ընկերուհիներուն, կարծես ըսել ուզելով. «Կը տեսնէք իմինս»: Նոյնիսկ անոնք, որոնք շրթունքնին ներկելու էին զբաղած, նոյնիսկ անոնք, որոնց քիթին վրայ էր այդ պահուն բրնձափոշիին աշխատութիւնը, անոնք անգամ վեր առին իրենց գլուխները եւ ժպիտով մը նպաստաւոր կարծիք տուին, չմոռնալով ճչալ, ճռվռալ: Նախ բացարձակապէս մերժեց Լիզ, յետոյ պնդեց, նորէն պնդեց եւ երբոր տեսաւ, թէ չպիտի յաջողի, սկսաւ աղաչել, որպէսզի հոն չերթան, որպէսզի Փիէռ զինքը այդ ճաշարանը չտանի, թէ հարուստի տեղ է, մեծվայելուչ է, թէ ինք պէտք եղածին պէս չէ հագուած, թէ իրապէս կ'ամչընայ: Փիէռ անդրդուելի մնաց իր արեւելքցի կնահաճութեանը մէջ եւ գրեթէ բռնի Լիզը ուզած ճաշարանը տարաւ: Զմայլելի ճաշ մը ըրին. շուտով զուարթացան երկու երիտասարդները եւ սկսան կատակել, սիրոյ քողարկուած խօսքերու ետեւէ սրամտութիւններ արձակել, երբեմն իրարու ձեռք սեղմել երկարօրէն... Երիտասարդ աղջիկը ընտանեքար պատրաստեց աղցանը, ինքն իրեն տանտիկինի հովեր տալով եւ դեռ ընելով այսպէս, եւ դեռ ընելով այնպէս... Փիէռ, որ տաքցած էր ընկերուհիին նման այդ զօրաւոր գինիին ազդեցութեանը տակ, մէկէն քմահաճոյքն ունեցաւ աղջկան պայուսակը խառնելու: Ինչ կրնար պարունակել, - շրթունքներու կարմիր ներկը, անխուսափելի վարդագոյն բրնձափոշին, ժանեկազարդ նուրբ թաշկինակ մը, քանի մը նամակներ:

Ո՛չ, Լիզ չթողուց որ նայի. սակայն Փիէռ, որ պայուսակին մէկ անկիւնէն բռնած էր, յամառեցաւ իր տղայական հետաքրքրութեանը մէջ: Անմիջապէս լրջացաւ Լիզ եւ ուզեց անպայման, անպայման փրկել պայուսակը: Հայը բերանը ամբողջութեամբ բացած՝ տխմարօրէն կը խնդար առանց աղջկան դիմագիծը կարդալու եւ կը պնդէր, նոյնիսկ գրաւի կու գար, թէ ան լեցուն է սիրային նամակներով: Ու մէկէն շատ ուժով, գրեթէ բիրտ շարժումով մը խլեց առաւկանացի այդ առարկան աղջկան պզտիկ ձեռքերէն: Այդ շարժումին մէջ պայուսակը բացուեցաւ սակայն, ու մէջէն գետին ինկաւ պզտիկ հաց մը եւ կտոր մը շոքուլա...

...Սեւ, սեփ-սեւ կատու մը սեղանին տակ կ'ուտէր հացի այդ կտորը, մինչ անդին երկրորդ մը, այս անգամ ճերմակ, ճեփ-ճերմակ, թաթիկովը կը խաղար շոքուլայի կտորին հետ...

Եւ հիմա ինչո՞ւ, ինչո՞ւ, Փըթիթ Լիզ, ինչո՞ւ «պզտիկ գլխով եւ մեծ սիրտով» Փըթիթ Լիզ... Օ՛հ, կարելի չէր, երբեք կարելի չէր, որ այժմ այս նուէրը ընդունէր անկէ. պէտք էր վերադարձնել անմիջապէս: Եւ ըսել, որ երեք օրեր անցած են արդէն իսկ եւ ան կը կարծէ իրաւամբ, թէ պատասխանելու փափկանկատութիւնն իսկ չունեցաւ ինք: Երկա՛ր, երկար որոնումներէ յետոյ, Փիէռ վերջապէս որոշեց նամակով մը Լիզին պանդոկը տանիլ ձգել այդ առարկան: Բայց երբոր անցաւ թուղթին սպիտակութեան առջեւ, ուրիշ արգելքի մը բախուեցաւ: Գորովալից, քնքուշ եւ ցաւոտ տողերուն զանիթափը անխուսափելիօրէն տարաւ Նէնէթին: Այն ոսկի գլուխն է, որ եկաւ մտածումին առջեւ, ամէն անգամ, որ ուզեց սիրոյ խօսք մը ըսել, եւ ակամայ տողերը եղան տկար, պէտք եղածէն շատ աւելի տկար: Պատռեց:

Աչքերը արցունքով լեցուելու աստիճան յուզուած էր, սիրոյ այս հազիւ թէ քողարկուած հեկեկանքին դէմ եւ իր առաջին մտածումն էր եղած անմիջապէս Լիզը գտնել, պլլուիլ անոր, ուժով մը, իր ամբողջ ուժովը պլլուիլ անոր,

ըսել, ըսել... Թէ ինք տառապեցաւ, զարհուրելիօրէն ապրեցաւ սիրոյ ցաւը, խաբուեցաւ կեղծ, մութ, երկդիմի սէրերէ, թէ արժանի է կարեկցութեան, խղճահարութեան, թէ հիմա միայն կրնայ ըմբռնել եւ իր ամբողջ գերարժանիքին մէջ տեսնել պզտիկ Լիզին անխարդախ, պարզ ու մեծ հոգին: Կարօտն ունի անոր հեզութեան, անոր փափկութեան եւ բացարձակ անշահախնդիր նուիրումին: Այո՛, միայն ան է, որ պիտի կրնայ իրեն մոռցնել Նէնէթը, այն անհծուած Նենէթը: Օ՛, ինչպէս պիտի նախանձի այս վերջինը, եթէ գիտնայ, եթէ տեսնէ իրենց վերածնող բարեկամութիւնը: Փիէռ իր ամբողջ կարելին պիտի ընէ, որպէսզի Նէնէթ իր աչքերով տեսնէ, թէ ինք ինչպէս... որքան պիտի կատրի արդեօք, քանի որ իր Փիէռօն կը սիրէ դեռ... ըսաւ, թէ իր Փիէռօն կը սիրէ, եւ Նէնէթը չի ստեր. ո՛չ ան չի ստեր: Միայն թէ... միայն թէ ոչ անմիջապէս. դեռ յիշատակները շատ թարմ են կարենալ այսքան շուտ նետուելու համար Լիզին: Ո՛չ, քիչ մը ատեն պէտք է անցնի, պէտք է աստիճան մը գոնէ իր միտը պաղի: Ահա թէ ինչու Փիէռ իր գորովալից նամակին մէջ ըսաւ թէ... ոչ, վճռական բան մը չըսաւ: Նախադասութիւնները թողուց երկդիմի, կարելիութիւններով եւ հաւանականութիւններով լեցուն, երբեմն անորոշ, սակայն ոչ առանց սիրոյ: Երբոր այդ անհաւասար տառերով ու առատ կէտադրութեամբ էջերը աւարտեց, ծրարին հետ նետուեցաւ դուրս աճապարանքով:

Պանթէոնէն անդին, Ռիւ Մուֆտարի կողմերը կը բնակէր Լիզ: Երիտասարդը ոչ փողոցին անունը կը յիշէր. ոչ ալ շէնքին թիւը, սակայն քանի մը անգամներ մինչեւ իր պանդոկին դուռը բարեկամուհիին ընկերացած ըլլալով, շուտով պիտի կարենար գտնել զայն: Փիէռ արագ քայլերով կը բարձրանար այդտեղ, դարձդարձիկ ու աղտոտ փողոցներէ որոնք պարսպածեւ շէնքերու մէջտեղէն կը մագլցին վեր եւ որոնց իւրաքանչիւրին անկիւնը մարդ կը կարծէ յանկարծ ծովի պատառ մը նշմարել: Իրաւ ալ նաւահանգիստի մը բազմամբոխ ու խեղճ մէկ թաղին տպաւորութիւնը կը

թողու Փարիզի այդ անկիւնը, ուր սակայն ամէն փողոցի վերջաւորութեան ծովուն տեղ թշուառութիւնն է որ կը բացուի իր անսահմանութեամբ եւ ուր տակաւին կը խաղան ու պիտի խաղան Հիւկոյի հերոսները «Թշուառներ»էն քանի մը տեսիլ: Կապելաներ, կրպակներ, նորէն կապելաներ, շէնքեր նեղ, ծռած, կքած, որոնք կը քրտնին անդադար եւ որոնց պատուհանները այնքան շատ կը նմանին հիւանդի աչքերու: Այստեղի շեղ մայթերը լիզող ջուրը անվերջանալի տրտունջ մը կը տանի մինչեւ վար, վառած ու մարած լուցկիներով, ըսուած ու չսուած խօսքերով:

Յանկարծ նետուեցաւ:

Յանկարծ նետուեցաւ դրան մը մէջ:

Բնագրական, որով նաեւ շատ արագ ուստումով մը Փիէռ նետուեցաւ յանկարծ դրան մը մթութեան մէջ ու հոն մնաց անշարժ, պատին հետ նոյնացած: Քանի մը քայլ միայն մնացեր էր պանդոկը հասնելուն եւ ահա որ անկէ աղջկան մը դուրս ելլելը կը նշմարէր: Լիզն էր: Շունչը բռնած, թոպէ մը այդպէս քարանալէ վերջ, երիտասարդը ուզեց դուրս ելլել իր մութ թաքստոցէն - մտածումները զինքը կը հրէին: Այո՛, այդ աղջիկը Լիզը չէր. անշուշտ, թէ Լիզը չէր. նմանցուցած էր ինք պարզապէս: Եւ արդէն հեռուէն մէկ ակնարկով ինչպէս կարելի է չսխալիլ. եւ արդէն Լիզը այս ժամուս հոս գործ չունի. պէտք է աշխատանոցը ըլլայ... Նոյնիսկ եթէ ան էր, ինչո՞ւ փախչիլ այսպէս: Ինչ արդարացում, եթէ իրապէս ան էր եւ տեսաւ իր պահը... մութ դրան լուսեղէն քառանկիւնին մէջէն եկաւ ու անցաւ այդ աղջիկը: Այս անգամ կարելի չէր տարակուսիլ. Լիզն էր:

Մութ կանաչ պզտիկ գլխարկ մը եւ popelineէ\* խեղճ վերարկու մը՝ երկուքն ալ անձանօթ իրեն: Հովանոցին կոթն է, որ միայն կը ճանչնայ, ինչպէս նաեւ աղջկան նուրբ ու կանոնաւոր սրունքները: Մեծ, բաւական մեծ ծրար մը կը տանի Լիզ, որուն ծանրութիւնը քիչ մը կը բեկանէ իր նուրբ մարմինը եւ քայլերը կ'արագացնէ զառիթափին վրայ:

\* Կտորի տեսակ:



Ինչո՞ւ Փիէռ անմիջապէս չմօտեցաւ անոր: Որովհետեւ... որովհետեւ ըսելիք չունէր, բառերը չէր պատրաստած, չէր նախատեսած այսպիսի հանդիպում մը: Լաւ է, որ մէկէն դէմ դիմաց չգտնուեցան եւ հիմա տղան պիտի կարենայ գոնէ քանի մը նախադասութիւն կազմ ու պատրաստ ունենալ լեզուին տակ, գոնէ անգամ մը բեմադրութիւնը փորձել մտքին մէջ: Ի՞նչ պիտի ըսէ. ինչպէ՞ս պիտի մօտենայ: Այո՛, շատ պարզ կերպով, թեթեւ ու մելամաղձոտ ժպիտով մը եւ պիտի ըսէ, թե... խօսքերը ամէնը մէկ փախան: Իր որոնումովը մտազբաղ՝ քայլերը դանդաղեցուցեր էր ակամայ եւ մէկէն նշմարեց, որ աղջիկը կորսուէր էր իր տեսողութիւնէն: Այո՛, ահաւասիկ հոն է. պէտք է մօտենալ, պէտք է անպատճառ մօտենալ, գոնէ ծրարը առնել ձեռքէն եւ բան մը ըսել, հոգ չէ, թէ ինչպէս, հոգ չէ թէ ինչպէս...

Բայց ի՞նչ: Քանի տղան կը խորհէր ծագելիք խօսակցութեան, (Նէնէթ) այնքան դժուարին ու դժնդակ կ'երեւար ան իր մտածումին: Այո՛, դժնդակ՝ քանի որ անկասկած պիտի պատասխանէր իր ըսածներուն, պիտի ըսէր, թէ շատ տառապեցաւ, թէ արժանի չէր այսպէս լքուելու, թէ պէտք է միանան (Նէնէթ) անմիջապէս: - Կարծես թէ նիհարցեր է քիչ մը եւ բոլոր հագուստները փոխուեր են իր վրայ: Գուպաներու ետեւի repriseներն\* են, որ միայն նոյնն են մնացեր... Խեղճ Լիզ, խեղճ Լիզ... Հապա եթէ յանկարծ գլուխը ետեւ դարձնէ ու զինքը նշմարէ: Նորէն Փիէռ քայլերը դանդաղեցուց: Մանաւանդ որ պիտի չուզէ իր նուէրը ետ առնել. այդ անկարելի է, անկարելի է: Եւ յետոյ տղան պիտի չկարենայ նամակը տալ: Հապա եթէ ըսէ պարզապէս մէջի գրածները: Դարձեալ անկարելի է. ամէն գրութիւն չ'արտասանուիր, ինչպէս որ ամէն խօսք չի գրուիր:

Փիէռ կ'ուզեր մէկէն ետեւ դառնալ ու փախչիլ, կորսուիլ, սակայն անկարող էր եւ կը հետեւէր միշտ անոր, երբեմն մօտիկէն, ճիշդ ետեւէն, երբեմն ընդհակառակն՝ անջրպետը բանալով: Երկու կավոռշիկներ, որոնք կ'անցնէին

\* Կանացի գուպայի հարակար:

իրենց սիկանդերուն հետ, կարծեցին թէ Փիէռ կնորսութեան է ելած, սակայն դեռ համբակ ու ամչկոտ՝ չի համարձակիր մօտենալ աղջկան:

Տղաքը սկսան վրան խնդալ, կատակել, եւ քանի մը քայլ հեռանալէ վերջ իրենցմէ մէկը պոռաց. - «Va-s-y Toto, va-s-y!»\*: Երիտասարդը սաստիկ ամչցաւ ու մայթը փոխեց: Բայց երբոր Սէն-Միշէլի հրապարակը հասան, Լիզ մէկէն անհետացաւ բազմութեան մէջ: Մերթօ մտաւ, հանրակաճք առաւ, թէ անկին մը դարձաւ կրկին: Հայը չուզեց փնտռել, ընդհակառակն գոհ եղաւ այս արդիւնքէն եւ նոյնիսկ ատոր մէջ ինքնարդարացում մը գտնելու համարձակութիւնը ունեցաւ, երբոր աղջկան պանդոկը դառնալու համար անգամ մը եւս Սէնթ-ժընըվիէի բարձունքը կ'ելլէր նախկին ծրագիրը գործադրելու:

Նրբանցքին խորը, սանդուղներուն տակ էր կծկտած պանդոկին գրասենեակը: Պանդոկապետուհին այդ պահուն դեղձանիկին ջուրը փոխելով էր զբաղած: Անշնչելիօրէն հաստ, տձեւ ու խափանիչ գիրութեամբ կին մըն էր ան: Իր մէկ աչքը այնքան մեծ էր, ուռած, գորտի աչքի մը պէս դուրս ցցուած եւ գրպանիկներով, որ բնաւ պէտք չէր զարմանալ միւս աչքին պայթած ըլլալուն: Դեղձանիկը իրեն պէս միականի չէր անշուշտ, սակայն երկուքն ալ իրենց մէյմէկ աչքով նայեցան Փիէռին, ծրարին ու պահարանին: Այդ երկու դիտողներէն մէկը ըսաւ.

- Քիչ մը ուշ մնացիք, պարոն, պէտք չէր, որ վայրկեան մը առաջ գայիք:
- Խնդիր չէ, կ'ուզեմ միայն այս ծրարը...
- Ինչպէս թէ խնդիր չէ. ան գնաց, մեկնեցաւ...
- Գիտեմ, տեսայ զինքը, բայց մասնաւոր ըսելիք մը չունէի: Կ'ուզեմ միայն այս ծրարը...
- Ես ալ կ'ըսեմ, որ այդ ծրարը հիմա ալ կարելի չէ...
- Կարելորութիւն չունի, թող իրիկունը ըլլայ...
- Օհօօ, իրար չենք հասկնար կոր... բայց սիրելի պա-

\* Դէ գնայ, Թօթօ, դէ գնայ:

րոնս, ձեզի կ'ըսեմ, որ ան հիմա մեկնեցաւ պանդոկէն, մեկնեցաւ Փարիզէն, իր քաղաքը պիտի երթայ...

- Ինչպէս, ինչպէս, բայց հիմա... քիչ մը առաջ է, որ...

- Այո՛, այո՛, հիմա, քիչ մը առաջ... կայարան գնաց, 10.30-ի շոգեկառքը պիտի առնէ. Աստուած իմ, այս ինչ դժուար բան է եղեր չինարէն խօսիլը...

Ու խափանիչ գիրութիւնը այնքան գոհ մնաց իր այս սրամտութենէն, որ մէկ աչքը աւելի բացաւ, եւ կարծես բազմաթիւ գորտեր նայեցան Փիէռին: Ան այդ պահուն կը նմանէր մէկու մը, որ իր ականարկը կը սուզէ բնանկարի անհուն խորութեանը մէջ, եւ երբ յանկարծ, չես գիտէր ինչ ուժով մը այդ «թապլօ»ն կ'իյնայ իր կեռէն, դիտողին ականարկը կ'երթայ փշրուիլ պատին դատարկ սպիտակութեանը վրայ: Մինչ երիտասարդը այդպէս քարացած կը մնար ծրարին ու պահարանին հետ, շատախօսներու շառաւիղը շարունակեց.

- Տեսէ՞ք, իր կոտրած հին պայուսակն ալ հոն է. պէտք է, որ ելլեմ ու նետեմ զայն: Կարծես թէ ես ուրիշ ընելիք բան չունիմ... Կարծեմ Թուլօնի կողմերէն է, այնպէս չէ՞, դուք ինձմէ լաւ պէտք է գիտնաք... Շատ աղէկ ըրաւ մեկնելով. շատ լաւ ըրաւ: Ես իրեն հարիւր անգամ ըսի, որ հոս բժշկուելիք բան չէ, ունեցածը թերեւ բան մը չ'երեւար կոր, հանգիստ կ'ուզէ, օդ կ'ուզէ. շատ լաւ ըրաւ մեկնելով: Արդէն տասնհինգ օր է, որ անկարող էր աշխատելու... Ելլեմ սա պայուսակը նետեմ. կարծես թէ ես ուրիշ ընելիք բան չունիմ...

Եւ որովհետեւ ուրիշ ընելիք չունէր, սկսաւ երկնային ձայնով մը քնքուշ խօսքեր ըսել դեղձանիկին:

Սեւ, սեփ-սեւ կատու մը սեղանին տակ բան մը կ'ուտէր, մինչ անդին...

## 6

Յաջորդ օրերը ուրուականի մը պէս անցան: Փիէռ փախաւ խելացնոր այդ յորձանքին տակ, որ կ'աւլէր, կը քշէր,

Կ'անհետացնէր ամէն ինչ: Ամէն ինչ կը պղտորէր ու կը հեռանար երիտասարդին առջեւ, որ կեանքին մէջ առաջին անգամն է, որ այսքան սոսկումով մը կը նայէր շուրջը մեծցող պարապին, զինքը լքող բազուկներուն, անոնց ջերմութեան, եւ հակառակ իր կատաղի ու դաժան ակնարկներուն, կը սարսափէր, կը սարսափէր անկէ, առանձնութենէն: Առանձին... միս մինակ էր ալ, կողերուն շուրջ բան չկար, բան չէր մնացած: Իր սիրոյ առարկան է, որ միայն չկար, եւ կը կարծէր ամէն ինչ կորսնցուցած ըլլար անդարձ: «Ահա՛, - կը գոչէր ինքզինքին, - ահա սրահ մը լեցուն բազմութեամբ, ահա բեմը իր բաց վարագոյրով, ահա հոն են դերասանները իրենց տարազներով, իրենց շպարով... լոյսն է, որ միայն մարեցաւ, միայն ան է, որ շիջաւ ու ալ բան չկա»: Եւ սակայն հակառակ ատոր, մութին մէջէն դերասան մը շարունակեց: Դերասան մը շարունակեց լալ, լալ եւ յետոյ հազիւ թէ լսելի ձայնով մը դանդաղօրէն վերադարձաւ իր պատմութեան: - Փիէռ տուաւ ինչ որ ունէր իր Նէնէթին: Անոր յանձնեց իր սիրտը ամբողջութեամբ: Եւ դեռ տուաւ իր մտածումները, իր հոգին, իր ամբողջ էութիւնը, առանց խորհելու, որ այդ աղջիկը կրնար օր մը մեկնիլ, եւ այդ բոլորը առնել ու հետը տանիլ: Չխորհեցաւ, որ ինք այն ատեն պիտի մնար պարպուած, անդէկ, անկայմ ու անլոյս: Եւ որովհետեւ չխորհեցաւ, հիմա պիտի կորսուէր անխուսափելիօրէն: Դերասանը սակայն խօսեցաւ: Այո՛, Փիէռին միայն այդ կը մնար ընելիք: Պէտք էր կրկին նետուիլ կեանքին մէջ, պէտք էր կրկին մաքառիլ կեանքի կռիւին մէջ, հոգւով մարմնով լծուիլ աշխատութեան, յոգնեցուցիչ, սպառող, չարաչար տքնութեան: Անոր միօրինակութեանը մէջ թմրիլ ու մոռնալ ինքզինքը, Նէնէթը, անցեալը, բոլորը, բոլորը անխտիր: Անվերջանալի ամիսներէ ի վեր տելող իր գրեթէ անգործ վիճակը պատճառ եղած էր, որ անդադար զբաղի իր սիրտով միայն եւ սաստկացող տառապանքին տակ ըլլայ հեղձ ու տկար: Եւ յետոյ մանաւանդ, որ իր դրամը սպառած էր գրեթէ ամբողջութեամբ: Նիւթական վիճա-

կովը չէր զբաղած բնաւ, որովհետեւ կեանքը ապահովելու չափ դրամ շահիլը խիստ դիրին կը թուէր իրեն: Այլեւս մտերիմն էր Փարիզին, կատարելապէս տէրն էր արհեստի մը եւ վաղն իսկ պիտի կարենար լուսանկարչատան մը մէջ կրկին գործ գտնել: Լուսանկարչատան մը մէջ. ինչպէս, դարձեալ լուսանկարչատան մը մէջ:

Փիէռին մտածումը անշարժացաւ մէկէն այդ հեռապատկերին առջեւ: Նոյն վայրկեանին իր դիմագիծը կարդացող մը պիտի կարենար ըմբռնել ամբողջ կատաղութիւնն ու նողկանքը այդ զարնուած հոգիին, պիտի կարենար ըմբռնել մեծութիւնը տառապանքի մը՝ որ անգամ մը եւս կը ցցուէր իր ամբողջ ծաւալով: Ո՛չ, պարզ անկիւնադարձ մը չէր կատարուելիքը. սովորական ճամբորդ մը չէր ինք, որ կենդանին յոգնած ըլլալուն ցատքէ երկրորդի մը վրայ ու չանդրադառնայ իսկ փոփոխութեան եւ կամ թէ ալիքներուն դէմ մաքառելէ ուժաթափ՝ սկսի այս անգամ ալ կռնակի վրայ յառաջանալ ինքզինքը լքած, թոյլ ու անհոգ: Պէտք էր փախչիլ, փախչիլ ամէն բանէ, մանաւանդ ինքզինքէն, եւ պէտք էր, որ այդ փախուստը ըլլար կատարեալ, ամբողջական, վերջնական: Չէր բաւեր միայն փոշիները թօթափելով գոհանալ ու կրկին քայլ առնել աջով թէ ձախով. չէր բաւեր բնաւ միայն շապիկ փոխել: Պէտք էր այդ տարազը վրայէն հանել քաշկռտելով, պատռտելով, եւ դեռ փոխել մորթն ալ, կաշին ալ, մինչեւ որ կարելի ըլլար մարել կամ գոնէ մեղմել ինչ որ կայ հոգիին մէջ:

Ինչպէս, կրկին վերադառնալ աշխատանոց, ուր ամէն ինչ իր կորսնցուցած Նէնէթը պիտի յիշեցնէ, ուր ամէն ինչ նախկին օրերը պիտի վերակոչէ: Վերադառնալ աշխատանոց, այն կեանքին, որ զինքը այս կէտին էր հասցուցած: Երբեք, երբեք կարելի չէր, որ վերստանձնէր իր կաւատի դերը, նախկին ծեքծեքանքը, զարգացած կեղծիքը, վճարուած ժպիտը, բոլոր գարշանքը այդ մթնոլորտին: Ալ երբեք կարելի չէր որ կարենար յանդուրժել ներկայութեանը այն կիներու, որոնց բարոյականի երանգները կ'ուզէր այլեւս ան-

գիտանալ եւ զանոնք կը խմբէր մէկ բառի մը տակ - «Պոռնիկ»: Ա՛լ չպիտի կարենար լուսանկարել անոնց քմահաճոյքները, անհանդարտ ծունկերը, բոյրերը, եւ պիտի չկարենար սրամիտ խօսք մը ըսել շնիկին. ոչ ալ ժպտիլ այրերու կիրթ սրիկայութեան, կատարելագործուած շնականութեան, գնուած արժանիքին: Օ՛հ, չտեսնել անկումը հագուստներու ու ներքնաշապիկներու, ա՛լ չծծել գինովցնող բոյրեր. չլսել, ճի, չլսել անվերջանալի ոռնոցը չարլութօններու:

Կը մեծնար, փոթորիկի մը պէս նողկանքը կը մեծնար երիտասարդին մէջ: Ան կը նմանէր բոզանոցէ մը դուրս ելլող պատանիի մը, որ կը թքնէ, անվերջանալիօրէն կը թքնէ: Անշուշտ Փիէռ կը չափազանցէր ամէն բան: Շատ դիրաւ կարելի էր այս կացութեան լուծում մը գտնել, պարզապէս հեռանալով մեծվայելուչ աշխատանոցներէն: Պէտք էր հեռաւոր ժողովրդական թաղերը կամ արուարձանները երթալ, ուրտեղի լուսանկարչատուններուն մէջ այս կեանքէն ոչինչ կարելի է գտներ: Եւ սակայն զգացումները չափազանցել, ծայրայեղութեան մղել ու զանոնք իրականութեան չկարենալ պատշաճեցնելը երիտասարդութեան յատկանիշն իսկ է: Առարկայ մը պէտք էր Հայուն սիրոյ տառապանքովը կազմուած կատաղութեանը արժանի. բան մը, որուն վրայ կարենար իր լորձունքը սպառել: Այդ առարկան իր ապրած կեանքը եղաւ: Իրեն այնպէս կը թուէր, թէ մինչեւ այս պահը բանտարկուէր էր պարկի մը մէջ: Իրա՛ւ, հիւսկերէն ներանցնող աղօտ լոյսով նշմարած էր շուրջը, սակայն սիրովը կուրցած՝ ստիպուէր էր հաճոյքով տանիլ ամէն բան: Հիմա դուրս կը նետուէր անկէ. բայց որովհետեւ տակաւին կառչած կը մնար բանի մը, պատճառ կ'ըլլար որ պարկը շրջուի, մէջը դուրս դառնայ: Արեւի լոյսին տակ ի՛նչ աղտերութիւն: Օ՛, փախչի՛լ, փախչի՛լ ինքզինքէն, վերադառնալ այն վիճակին, ուր կը գտնուէր երբոր ինկաւ Փարիզ, ըլլալ նախկին Հայը, իր կոշտութեանը մէջ գեղեցիկ, իր պարզութեանը մէջ վսեմ: Բայց ինչպէս, ինչպէս:

Եւ երբոր Փիէռ նշմարեց փրկութեան ուղին, իրեն այնպէս թուեցաւ, որ սրունքներուն վրայ կը մեծնար, անհունօրէն կը մեծնար ու կը մաքրուէր: Հպարտութեամբ նայեցաւ բազուկներուն, երկարօրէն դիտեց իր դիմագիծը հայելիին մէջ ու ժպտեցաւ տարտամօրէն: Գրեթէ երջանիկ էր:

Երկու օրը բաւական եղաւ, որ Փիէռ հաշիւը մաքրէ սենեակի առարկաներուն: Ծախեց ինչ որ կրցաւ. սմոքինկը, լուսթռին կօշիկները, քիչ մը շատ վայելուչ վերարկու մը ու խել մը գիրքեր: Եւ նետեց ինչ որ չկրցաւ ծախել: Փիէռ շատ բան նետեց: Յետոյ հեռացաւ Փարիզէն ու պանդոկէն՝ իր միակ պայուսակին հետ, առանց նոր հասցէն ձգելու: Տխուր առտուան մը մշուշը զինքը նորէն գտաւ Պիյէանքուռ, Ռընոյի մետաղէ մեծ դուռին առջեւ. քասքէթը քաշած էր մինչեւ յօնքերուն եւ մօրուքով սեւցած: Երբ իր կարգը եկաւ, ներկայացուց նախկին վկայագիրները, Tourneur!\*: Ընդունուեցաւ: «Պլէօ»ները հագաւ ու հետեւեցաւ շէֆին: Երբոր անցաւ մեքենային առջեւ...

Այսպէս է, որ ուրիշները կը խոնարհին խաչելութեան մը դիմաց:

\* \* \*

«Հայերը գիրք մը ունին: Անոնց ամէնագէշ, զգուելի, ամենասխալ, վատառողջ, եւ ամէնէն աւելի անբարոյական գիրքն է ան - Նարեկը: Կ'ամբաստանեմ զայն իբրեւ ամենամեծ թշնամի հայութեան, կ'ամբաստանեմ այն թշուառականը որ անոր տողերը թքաւ: Եւ ըսել թէ որքան փառահեղ ճակատագիր մը ունեցաւ այդ թունաւորիչ հատորը: Հայերը զայն ընդունեցին, իրացուցին, ընդգրկեցին: Ոչ մէկ սերունդ խորհեցաւ զայն ջնջել, որովհետեւ անոր լեզուական եւ բանաստեղծական ինչ ինչ յատկութիւններէն խաբուելով ծածկուած թոյնը չնշմարեց: Ընդհակառակն փոխանցեցին որդիէ որդի, արիւնէ արիւն, ու ան եկաւ

\* Խառապ:

մինչեւ մեզ: Թունաւորուեցանք, ազգովին թունաւորուեցանք: Ահա թէ ինչու պարտուածներ ենք: Պարտուածներ ենք որովհետեւ այն վանականին հաշմանդամ հոգիին պէս արհամարհեցինք ու անգիտացանք գոյութիւնը մեր եսին, մեր ուժին, կամքին, անհատականութեան. - չկռուեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնէական վարդապետութեան անոր սխալ ու թերի մեկնութիւնը ընդունելով եղանք անմտորէն կրաւորական, համակերպող, աղերսարկու, անգիտակից: Մենք մեր անձէն դուրս չելանք, չունեցանք նպատակ. խմբովին չսլացանք դէպի կարելիութիւնը անկարելին եւ մեծ իտէալ մը մեզ բոլորս իր ճանկերուն մէջ չշաղուեց: Կ'ամբաստանեմ այն թշուառականը որ...»<sup>\*</sup>

\* \* \*

Պոռնկագրութեան վրայ խօսած ատեն, օր մը, Սուրէն այսպէս կ'արտայայտուէր Փիէռին:

Եւ խորհրդածութիւններու այդ զառիթափին վրայ նետուած պահուն ըրած իր այս առաջին բոմբինէն յետոյ, ձայնին կրակը մեղմելով կը շարունակէր՝ իմացականութեան պայծառութիւնը վերստին գտած.

- «Որքան ալ տարօրինակ թուի ազգի մը տկարութեան պատճառները բացատրելու այս եղանակս, պէտք չէ ուրանալ հոն ծածկուած ճշմարտութիւնը: Նարեկացին սկզբնապատճառ նկատուի թէ ոչ, իրողութիւն է որ շատ մը բաներ կու գան լիովին կ'արդարացնեն իմ յախուռն մտածումս, որ իր ազգասէրի տառապանքին մէջ կ'ուզէ անպայման մէկը նետել ամբաստանեալի աթոռին վրայ: Ամէն ազգ, ամէն դարու, ամէն ժամանակաշրջանի, գիւղացի, անտաշ եւ անգրագէտ ամբոխէն զատ ունեցած է «պզտիկ» մարդեր, «ընտրեալ» կոչուած դասակարգին մէջ իսկ: Սակայն Հայոց մօտ

\* Ընդգծուած հատուածները երեւանեան 1962, 1982-1983 թ.թ. հրատարակութիւններում կրճատուած են:



անոնց թիւը ջախջախիչ, գերապապիկ, յուսահապական համեմատութիւն կը ստանայ: Ահա թէ ինչու, էս, Սուրէն, կ'ուզեմ անգիտանալ փոքր խումբը բացառութիւններու, եւ ամբողջ հայութիւնը կը նկատեմ Նարեկով թունաւորուածներ, հաշմանդամներ: Եւ սակայն այո՛, կը բաւէ որ գիտնանք մեր շուրջը նայիլ, կը բաւէ որ նայինք ապրող սերունդին եւ անոր մէջ պիտի հանդիպինք ակնարկի մը որուն համարձակօրէն պիտի կարենանք պոռալ. - անհաւաք: Հաւաքքը չունի ան. հաւաքքը՝ կիրքին կարմիր մոլեգնութեամբը գրուած. հաւաքքը՝ որ մեծ հոգիները կը կերտէ, որ բարձրագոյնին տենչանքը ունեցող ազգերէն կը ծնի: Այս Հայը բան մը իր իրէալը չ'ըներ եւ չի պայքարիր անոր համար: Հոգւով մարմնով չի նուիրուիր գաղափարի մը իրագործման, աւելին տալու շտապին մէջ ինքզինքէն դուրս չ'ելլեր խենթութեամբ եւ իր էութիւնը յարատեւ բարձրացումի մը չի հպատակիր: Աստուածային կիրքը բացակայ է իր մտածումներէն եւ զգացումներէն, որոնք անվերջանալի միօրինակութեան մը մէջ կը մրափեն: Խելացի, ուշիմ եւ գործունեայ ցեղի մը զաւակը ըլլալուն հակառակ, այդ յարկութիւնները ի սպաս կը դնէ միայն իր կաշիին շահերուն: Հաւաքականութեան հանդէպ պահած իր անտարբերութիւնը թանձր ու անթափանց կեղեւի մը պէս կու գայ իր հոգին կը չէզոքացնէ, կը բթացնէ: Ի՛նչ անհանդուրժելի նեխութիւն, երբ մանաւանդ զարգացում մըն է ստացած. դպրոցէն հեռանալուն պէս դասարանի ու փողոցի կեանքերը բաժնող մեծ անդունդը կը տեսնէ եւ իր առաջին հոգը կ'ըլլայ մոռնալ ինչ որ սորված էր, իբրեւ անտեղի, աւելորդ, անհետեթ: Եթէ կրցաւ մոռնալ, անոր տեղ բան մը չի դներ բնաւ. միայն կը ջանայ իր պարապութիւնը ոսկեզօծել: Թողէք զայն, ոսկերիչ պիտի ըլլայ: Եթէ չմոռցաւ, դեռ պիտի շարունակէ կարդալ, հետաքրքրուիլ, առանց սակայն իր չէզոքի դերէն հրաժարելու: Թողէք այս ալ. նորէն խարդախ ոսկերիչ՝ այս անգամ բառի:

«Վհապ, թոյլ ու ողորումէն առաջ իսկ կղզիացած սա հոգին, ամբողջ հայութիւնը հիմնովին սարսող դէպքերէ վերջ

երկու գիծով միայն կը տարբերի նախորդ սերունդներէն: Աւելի քիչ կը հաւատայ անկախութեան, եւ նուազ կ'ապէ թուրքը: Նուազ կ'ապէ, որովհետեւ կը ճանչնայ մարդկային մտքին բոլոր կարելոր արտայայտութիւնները, զանոնք միշտ դատելով իր մեկուսացած պզտիկութենէն, առանց ճիշի, առանց գիրկընդխառնումի, առանց ճակատագրական մեկնումի: Ինք կը ճանչնայ բոլոր իմաստասէրները եւ բոլոր վարդապետութիւնները. մէկ քանին կարդացած է: Սակայն անոնցմէ ոչ մէկուն առջեւ ըսած չէ. «ահա են եմ, ահա այսպէս»: Գիտէ թէ Աստուած եւ կրօնք ըմբռնումներ են, երբեմն սփոփարար ուժեր են որոնք մարդկութեան հետ պիտի մեռնին: Գիտէ թէ հայրենիքը ներկայ օրերու միջազգայնական գաղափարներուն առջեւ գէշ արգելք մըն է, իսկ ի՞ր հայրենիքը՝ գորդեան հանգոյց մը անլուծելի: Գիտէ թէ բարի, չար, տգեղ, գեղեցիկ, բարոյական, անբարոյական բոլորն ալ յարաբերական բաներ են, թէ արուեստը միայն մեծ ազգերու առանձնաշնորհն է, քանի որ բարձր միջավայրի եւ երկար ժամանակի կը կարօտի: Վերջապէս գիտէ նաեւ թէ սէրը փորձանք մըն է, կինը դրամ է, իսկ դրամը ամէն ինչ է: Հիացում եւ առատ ներբող ունի օտարին բոլոր արժէքներուն, արժանիքներուն, մեծութիւններուն: Շատ անգամ կուրօրէն կը փառաբանէ զանոնք. սակայն երբոր հաճի ակնարկը դարձնել իր ազգին, անմիջապէս տարակոյտով եւ թերահաւատութեամբ լեցուն քննադատի մը կը ձեւափոխուի: Կը խորշի, կը կը սոսկայ հպատակութեան գաղափարէն. պզտիկութիւն կը համարէ ուրիշի մը մտածումը բաժնելով միաբանիլ եւ գործակցիլ անոր, երբոր հրամայողը ինք չէ: Ինք ինք է եւ ինք բան չէ»:

«Ինչ պէտք, ինչ պէտք սակայն ըսել այս բոլորը, որ արդէն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու դժգոնութիւնը ունի: Ինչ պէտք մանաւանդ զբաղիլ պարագաներով, որոնց լաւագոյն դարմանը բառերուն եւ խօսքերուն ուժը չի կրնար կազմել բնաւ: Այո՛, այս տիպարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծնունդ չէ. սակայն մինչ-

դեռ անցեալի մէջ կարելի էր մասամբ զինքը անտեսել, իր վատառողջ մեղկացումը չէզոքացնել, թողլով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դերը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ անտարբեր մնալ: Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի, որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն: Կռիւը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան: Իրաւ, բազմաթիւ չեն այսպիսի զարգացած անտարբերներ, սակայն անդին կամ ամբոխները անտաշ, անմիտ եւ ուժացած մարդոց, որոնք կարծես բնազդաբար, կարծես արիւնով ու ծուծով ճիշդ նման են նախորդին: Անոր պէս առաջինը կ'ըլլան ընկրկող, մոռացող, ուրացող: Եւ կը կազմուի ահեղ զանգուածը անոնց, որոնք կը նահանջեն ու այդ մեծ հոսանքին մէջ կը քշեն կտանին միւսներն ալ, ցանցառ բացառութիւններն ալ:

«Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղայ, մեղայ Արարատին:

«Եղան Հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ, որոնք տուին հաւատք, կուսութիւն. եղան անոնք, որոնք լքեցին տուն, տեղ, երկինք. եղան դեռ վատեր, որ ուրացան ազգ ու լեզու, եւ հերոսներ՝ որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մենք, կը վճարենք իբրեւ վերջին փրկագին այն, որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ,

ապագայի սերունդներ, որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն, որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղայ, մեղայ Արարատին»:

\* \* \*

Ահա այսպիսի նահանջող ազգակիցներու մէջ ինկաւ Փիէռ: Ոչ սակայն անմիջապէս: Այն առաջին խուճապէն ի վեր տարիներ անցէր էին եւ հիմա, այս աշխարհ-գործարանը պարպուէր էր հայ պատահական բանուորներէն: Անոնք մեծ մասամբ տեղին, միջավայրին ու լեզուին մտերմանալով, կամաց-կամաց կրցեր էին փախչիլ մեքենաներու կենսակուլ երախէն եւ նուիրուիլ աւելի նպատակայարմար արհեստներու, պաշտօններու: Կը մնային բացառութիւններ: Փիէռին աշխատած անկիւնը ոչ մէկ Հայ կար. ձախ կողմինը քառասուննոց ճաղատ մարդուկ մըն էր, որ ամառ կիրակիները գետեզերք կ'երթար ձուկ որսալու, իսկ ամբողջ ձմեռը այդ ձկնորսութեան պատմութիւնները ընելով կ'անցընէր: Մեքենաները իր լրացուցիչն էին, ինք անոնց մէկ մասն էր, եւ երկաթի այդ առեղծուածէն հեռանալուն պէս կը դադրէր արժէք մը ունենալէ: Ատոր համար է, որ ձուկ չէր կրնար բռնել եւ այնքան շատ բան կ'ունենար պատմելիք: Իսկ աջ կողմինը առաջին օրն իսկ մտերմացաւ Փիէռին ու անոր սիգառէթներուն: Այս շիկահեր եւ յաղթանդամ երիտասարդը, որ անխոնջ ընթերցող մըն էր մարզական օրաթերթերու, Փիէռին արտաքինէն դատելով՝ կարծեց գաղափարակից մը գտած ըլլալ, եւ ամէն օր սկսաւ գրաւի գալ սա կամ նա մարզիկին յաղթութեանը ի նպաստ: Բայց երբոր տեսաւ, թէ ամէն օր ալ կորսնցնողը ինքն է, հասկացաւ, որ Փիէռ բնաւ մարզական թերթ չէր կարդար եւ չէր հետաքրքրուէր այդպիսի բաներով: Անմիջապէս իր բարեկամութիւնը կիսով խզեց: Կիսով միայն՝ քանի որ շարունակեց դեռ բարեկամ մնալ սիգառէթներուն:

Խաղաղութիւն խաղաղութիւնը հոգիի: Փիէռ այն հաստատ համոզումն ունէր, թէ պիտի կարենայ զայն գտնել հոս, պիտի կարենայ տիրանալ անոր այս կեանքին մէջ, որ հակառակ յոգնեցուցիչ ըլլալուն, միօրինակ էր, անփոփոխ ու անվերջանալիք: Այդ փափաքին հասնելէ առաջ սակայն, նախ երեք փուլերէ անցաւ: Առաջին այն քանի մը օրերը սահեցան կատարելապէս անգիտակից, անբան եւ անզգայ տպաւորութեան մը տակ: Փարիզէն իր փախուստը, կրկին մութ ու նեխոտ պանդոկ մը իյնալը, գործ փնտռելը եւ անոր անգամ մը եւս վարժուելու ճիգը, անդրադարձումի ամէն կարողութիւն ջնջեցին իրմէ: Անմիջապէս յետոյ ինկաւ անսահման, անզուսպ կատաղութեան մը մէջ. օրերը, գիշերները, իր բոլոր պահերը անէծքով, ատելութեամբ ու թոյնով լեցուեցան: Կ'ատէր, սարսափելիօրէն կ'ատէր իր Նէնէթը, ակռաներուն մէջէն անէծքը անվերջ կը սուլէր, այլեւս առանց ինքզինքը զսպելու: Դեռ սաստիկ, սաստիկ կը տառապէր: Գիշերները ճաշէն վերջ անկարող կ'ըլլար սենեակ վերադառնալ եւ այն մութ ու անծայր փողոցներու երկայնքին ցուրտին հետ կը տանէր իր տենդը, գրեթէ բարձրաձայն կրկնելով. «Անիծուիս, անիծուիս դուն, Նէնէթ. տառապիս դուն, կ'ուզեմ, որ տանջուիս եւ փնտռես զիս. ինչպէս, ինչպէս տարուեցայ ես, խաբուեցայ անկէ: Ինչ էր որ, միւսներուն պէս «հաւ» մըն ալ ինք. բացառիկ ինչ ունէր որ. ոչինչ: Նախ որ ինձմէ շատ տարէց էր. քանի մը տարիէն ալ պիտի ծերանայ. արդէն խարտեաշները շուտով կը խամրին: Որքան տղայ եմ եղեր, չկրցայ բաց աչքերով իրականութիւնը տեսնել, հմայուեցայ իր շպարէն, վայելչութենէն, գեղեցիկ զգեստներէն, նուրբ ճերմակեղէններէն: Իրաւունք ունին եղեր Ֆրանսացիները զանոնք կոչելու. «Կնոջ ծանր հրետանին»: Այո՛, հով ունէր, արտաքին տեսք մը ունէր, բայց արդէն կիրքը ինչ է որ. անճկելի հպարտութիւն մը բռնաբարել է. զօրաւոր անհատականութեան մը տիրանալ ու տիրապետել է. կիրքը կարող է ուշիմ դաստակներ անշարժեցնել, կապել է. խելացի գլուխ մը թմրեցնել, ցաւի եւ հեշտութեան

արտայայտութիւնը անոր վրայ վայելելն է. այո՛, կիրքը կեցու-  
ածք մը բռնաբարել է: Խեղճ Լիզ, խեղճ Լիզ, ինչպէս քեզի  
չճանչցայ... անիծուի՛ս դուն, այո, քեզի եմ, Նէնէթ, քեզի...»:

Եւ օրերը դարձան, դարձան: Մեքենաները անկապ բա-  
ռեր եւ թերի նախադասութիւններ կրկնեցին իրեն անվերջ,  
որոնց բացատրութիւն մը կամ երբեմն ալ պատասխան  
մը գտնելու իր ճիգին մէջ երիտասարդը մոլորեցաւ, ինկաւ  
հակասութիւններու գիրկը, մինչեւ որ լռեց: Հեռաւոր խար-  
տոց մը կը Ֆշշար իր ականջին. - «Խօլ շուայտ, խօլ շու-  
այտ, խօլ շուայտ, խօլ շուայտ...» Կամ ասդին, աղմկարար  
մեքենայ մը իր բոժոժները կը հնչեցնէր կրկնելով. - «Ինչու  
չըրինք չարիք, ինչու չըրինք չարիք, ինչու չըրինք չարիք,  
ինչու չըրինք չարիք ...»: Փիէռ լռեց, որովհետեւ նախ ան-  
լորդ ու անօգուտ գտաւ ատելութիւնը, որ միայն իր հոգին  
մրոտելու պիտի ծառայէր, իսկ ուրիշ պահու մը վախցաւ  
անկէ, որպէս թէ անէծքին ազդեցութիւնը անխուսափելի  
ըլլար: Ինք իր անէծքէն վախցաւ ու հեռանալով գոհացաւ  
արտասանել մեղմաձայն. աղօթքի մը պէս.

Grands yeux dans ce visage,  
Qui vous a placés là?  
De quel vaisseau sans mâts  
Etes-vous l'équipage?  
Depuis quel abordage  
Attendez vous ainsi  
Ouverts toute la nuit?\*

\* Խոշոր աչքեր՝ այս դէմքի վրայ,  
Ո՞վ է քեզ այդտեղ տեղակայել,  
Անկայմ ո՞ր նաւի  
Անձնակազմն էք դուք,  
Որ սպասում է այսպէս  
Մեկնումից ի վեր,  
Ողջ գիշերը բաց:

ժ. Սիւպերվալի  
բանաստեղծութիւնից հատուած

Եւ երբոր Նէնէթին անուան անմիջապէս յաջորդող այն երկու բառերը, «Chérie» եւ «Անիծուիս», դադրեցան արտասանուելէ, երիտասարդը էապէս փոխուեցաւ:

Նոր հանգրուան մը կը հասնէր: Կարծես ան կը հաւաքուէր ինքն իր վրայ, կը կծկուէր, կը խտանար: Կզակը եղաւ բռունցք եւ ակնարկը սլացաւ հեռուն, տարածուեցաւ, զօրակոչի մը պէս: Երիտասարդին մէջ մարդն է, որ կը կազմուէր, կը կաղապարուէր, մարդոցմէ եւ ընկերութիւններէ հեռու: Պատանի մը ոգեւորող պզտիկ երգերը, սիրուն եւ քնքուշ անելորդութիւնները դադրեցան զինքը հետաքրքրելէ եւ զգաց, որ կեանքին ու իրերուն կը նայէր արհամարհանքով, սակայն բարձրէն, բոլորովին նոր ակնարկով մը: Կը կարծէր թէ հիմա կը քալէ առանց քշուելու, կ'ապրի առանց կառչելու:

Ահա այս շրջանին է, որ Հայերուն խառնուեցաւ: Անոնք կէսօրները մօտակայ ճաշարան մը կը հաւաքուէին, յետոյ խմբովին երթալ գրաւելու համար սրճարանի մը նոյն անկիւնը: Անոնց մէջ կային նախ յաւիտենական մանուկները, թեթեւօլիկներն ու կնամուլները, որոնք աշխատութենէն վերջ տաքատ կը փոխեն եւ կը նետուին պարասրահ: Կային իրենց պատեանին մէջ կծկտած, անտանելի գծուծները եւ քանի մը տարէց գաւառացիներ: Անոնց մէկը, հակառակ Ֆրանսացիի մը եւ անոր կնոջ հետ «երեքնոց ընտանիք» մը կազմած ըլլալուն, գլուխը կախ կը խորհէր, կը խորհէր, անթափանց կնճիռներ ճակտին: Կարծես թէ աղիւսակը արձակի կը վերածէր: Ուրիշ տարէցի մը շուրջ տղաքը դեղին շրջագիծ մըն էին քաշած: Մեծ նախազգուշութեամբ կը մօտենային անոր. այսինքն՝ բնաւ չէին մօտենար: Ատենը անգամ մը կ'ըսէր. «Նօրէն կնիկէս նամակ եկաւ, հոս գալ կ'ուզէ կոր: Ես ինտոր բերել տամ...»: Պատճառը չէին հարցնէր բնաւ. ամէնքն ալ գիտէին, թէ խեղճ մարդը ահաւոր ախտէ մըն է վարակուած: Կային դեռ երկու նախկին վարժապետներ, հազիւ երեսուննոց, որոնց մէկը դեռ կը համառէր յանգեր գտնել իր գիւղին հարսներուն, եւ ոտքեր՝

եզներուն: Իսկ երկրորդը անդադար նամակ ու խնդրագիր կը տեղացնէր ամէն կողմ, աղաչելով, որ զինքը շուտով փրկեն այս դիարանէն, ապա թէ ոչ անձնասպան պիտի ըլլայ. այո՛, անձնասպան պիտի ըլլայ:

Պետրոս կրցաւ բարեկամանալ - անշուշտ պոլսահայերու նոյն ընկերային խաւին պատկանելուն - նուրբ, տկարակազմ, քիչ մըն ալ բժախնդիր սկիւտարցիի մը՝ Խնտամեանին հետ: Այս վերջինը սաստիկ կը տառապէր, կը չարչարուէր, կը խաչուէր իր ընկերային դիրքը կորսնցնելով գործարանի մը աղտեղութեան մէջ ինկած ըլլալուն համար: Կ'ըսէր. - «Ես քիչ մը դրամով եկայ Փարիզ. ընկերոջ մը հետ փաստըրմայի մը գործ սկսանք. վիճակս լաւ էր այն ատեն. տակ գացինք. տասնոց չմնաց. եւ հիմա... բայց իրաւունք ունիմ դժգոհ ըլլալու, իրաւունք ունիմ այս կեանքը ատելու. անիկա ամէն երեսով իմ խառնուածքիս ճիշդ հակոտնեան է: Ես կը սիրեմ լռութիւնը, երկար լռութիւնը եւ այդ լռութեան մէջ խորունկ ձայները. զանգակը, *էզանը*, գորտերը, էշը... Եւ ես կը սիրեմ բնութիւնը, զմայլելի արշալոյսները, որոնց մէջ թլփատուած լակոտ մը իր *եալէյը* կը նետէ: Ես կը սիրեմ վարդ միսերը կնոջ, մաքուր, շուշան կուրծքերը, բոյրերը, գեղեցիկ ճերմակեղէնները... Ինչ աղէկ է ան փաստըրմայի գործը, մէղք, մէղք...»:

Սակայն կար ուրիշ մը, զոր Պետրոս անմիջապէս սիրեց: Սիրեց՝ առանց սակայն անոր շատ մօտենալու, առանց մտերմութեան ազդանշանը տալու, ոչ թէ որովհետեւ անի կարեկցութիւն եւ արգահատանք կար այդ զգացումին մէջ, այլ որովհետեւ այդ տղուն բուռն եւ արտասովոր նկարագիրը շատ հեռու էր դիւրահաղորդ ըլլալէ: Նախկին կեդրոնականցի մըն էր, քահանայի տղայ, եւ զինքը կը կոչէին *լօխում*: Անոր դասընկեր Խնտամեանը կը պատմէր, թէ մանուկ եղած ատեն ճեփ-ճերմակ միս, կակուղ նկարագիր եւ քաղցր բնաւորութիւն մը ունենալուն՝ զայն այդպէս են անուանէր: Խիստ անխնամ արտաքին մը, միշտ ծխող բարակ շրթունքներ, պզտիկ, աղտոտ ակռաներ, իսկ խարտեաշ



ու գանգուր մազերուն շրջագիծը՝ հարցական նշաններով, փակագիծերով, կախման կետերով: Ինչ հակասութիւն սակայն իր կրած մակդիրին հետ: Հիւանդագին ըլլալու աստիճան չափազանցուած ջղայնոտութեան մը կը թրթռացնէր զինքը: Չէր խօսէր, այլ կը փրփրէր, կ'ոռնար, կը կռուէր: Արդէն միայն կռիւի արժանի նիւթերով կը զբաղէր, իր նախադասութիւնները հայհոյութեամբ ստորագծելով: Պետրոս անգամ մը ներկայ եղաւ անոր այսպիսի մէկ յորդումին:

- «Ինչ, ինչ, - կը գոռար ան, - նորէն ֆրանսերէն թերթ, նորէն ֆրանսական թատրոն. ատոնց հայերէնը չկայ: Պիտի չըլլայ, որ դուք սանկ մէյ մը ցնցուիք, գիտակցիք մեր վիճակին. պիտի չըլլայ որ կռուիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դէմ: Մարած մոխիրներ բոլորդ ալ, կաշիի վաճառականներ բոլորդ ալ. միայն ձեր պզտիկ շահերուն կը նայիք, միայն ձեր մատներուն վրայ կը դողաք: Մենք ալ հայրենիք մը ունինք. պէտք է պատրաստ կենանք հոն երթալու: Զբաղեցէք անով. պէտք է, որ ճահիճները չորցնենք, պէտք է, որ ջրանցքներ բանանք, որպէսզի... Վատէր, թոյլէր... Պոլիս ալ այսպէս էիք, ձեր հայրերն ալ այսպէս էին: Երբոր հոն մէկը փողոցեն կ'անցնէր վազելով, սարսափի ու ցաւի արտայայտութիւնը դէմքին գիտէի՝ թէ մէկը չէ սպաննուած, խաբուած ամուսին մը իր հակառակորդը չէ բզբտած, կին մը իր մանուկները չէ խեղդած, սիրահարներ անձնասպան չեն եղած ինչպէս որ հոս կ'ըլլայ, այլ պարզապէս արեւելքցի մը գետինն է ինկած՝ կաթուածահար: Հարիւրին իննսուն այսպէս կը մեռնէին. փտածութեամբ, անշարժութեամբ: Իսկ դո՛ւք, հոս... ինչպէս ձեզմէ կայծ պիտի հանենք, երբոր ժամը հնչէ, դուք, որ մարած մոխիրներ էք հիմա: Ուրկէ՞ կրակ պիտի գտնենք երթալու համար կռիւի. որովհետեւ, այո՛, կռիւ պիտի ունենանք մենք, որքան ատեն, որ տակաւին ոտքի կաթողիկէ մը ըլլայ եւ ձիւնազարդ գագաթ մը լեռան, որքան ատեն, որ մեր երակներուն մէջ արիւնին հետ եռացող «Մեր հայրենիք» մը ըլլայ, որքան ատեն, որ մեր հայրենիքը չըլլայ...»:

Պետրոս կը լռէր: Իսկ անոնք, որ կը նեղուէին եւ կը բարկանային. լաւագոյն կը համարէին մեկնիլ, անգամ մը եւս տեղի չտալու համար ասկէ առաջ պատահած այնքան ցաւալի վէճերու, կռիւներու: Այս խօսքերուն պատճառած անբացատրելի անհանգստութենէն զատ, Պետրոս խորունկ ցաւ մը կը զգար ի տես այն տառապանքին, որ խարտեաշ տղան կը ցնցէր ամբողջ էութեանը մէջ, անոր ամբողջ մանկական պարզութեանը եւ միամտութեանը մէջ: Պոռացած ատեն ձեռքերը կը դողային ու իր ակնարկը կարծես կու գար երկու խոշորացոյցներու ետեւէ: Երկրորդ Սուրէն մըն էր այս, բայց նուազ գիտուն, նուազ դերասան, նուազ արուեստագէտ:

Այս օրուրնէն շաբաթներ յետոյ Պետրոս կարծեց հազ մը ճանչնալ գիշերուան մը մութին մէջ: Սիգառէթներու երկու կարմիր կտուցները մօտեցան իրարու: Լոխումն էր: Հազի թէ քանի մը քայլ յառաջացած էին յոգնած ու լուռ, երբոր նորէն Լոխում փրփրեցաւ եւ սկսաւ գոռալ.

- «Ծօ այս ինչ անաստուածային, հակամարդկային, հրէշական, բարբարոս օրէնք է. զոր անիծուած ձեռքը արձանագրեր է զայն, զոր չորնալիք ուղեղը պարտադրեր է մեր գլխին: Ես մայր մը ունիմ. ես հայր մը ունիմ, ինչո՞ւ անոնցմէ հեռու մնամ, ինչո՞ւ անոնք իմ կարօտովս հիւծին, եւ ես չկարենամ վայելել անոնց մօտիկութիւնը: Մենք ասոնց պէս չենք. մեզի համար ծնողքէ աւելի մեծ ու նուիրական ինչ կայ. զոր սէրն է, որ մայրական սիրոյն տեղը կրնայ բռնել. մայր, մայր... ամէն բան է ան ինծի համար: Ես ինչո՞ւ չկարենամ Պոլիս երթալ. զի եմ ես, ինչ եմ, որ պետութիւնը զբաղի ինձմով, մեզմով: Բոլոր իմաստասէրները, բոլոր բարոյագէտները, բոլոր մարդասէրները եւ նոյնիսկ կենդանապաշտպանները պէտք է թողուն ամէն ինչ ու զբաղին միայն ասով, միմիայն այս զուլումով...»:

Նոյն գիշեր իսկ Պետրոս որոշեց այլեւս բնաւ այս տղուն չմօտենալ: Խօսքեր կան, զորս չենք ուզէր լսել. ցաւեր կան, որոնց չենք ուզէր անդրադառնալ. կը փախչինք անոնցմէ,

որովհետեւ իրապէս մեծ են: Կարօտի անսահման կսկիծով սենեակ ինկաւ Պետրոս եւ հայիոյեց նոյնիսկ ան տղուն դէմ, որ այնքան մանկութեամբ իր սիրտն էր պատռեր, երկու սիրտ էր պատռեր: Նախկին լուսանկարիչը պէտք չունեցաւ սակայն մօտիկութենէ մը խուսափելու, որովհետեւ Լոխումն է, որ անհետացաւ մէկէն, Ռընոյի իր պաշտօնը ձգելով: Ան Խնտամեանին պանդոկը բնակելուն կարելի եղաւ օրեր յետոյ պատահածները լսել: Ռուսական դեսպանատուն է գացեր Լոխում, պահանջելով, որ Հայաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերժէր են: Ըսէր է, թէ կ'ուզէ իր հայրենիքը ապրիլ. մերժէր են: Ըսէր է, թէ կ'ուզէ ճահիճներու չորացումին եւ ջրանցքներու բացումին համար իր բազուկները տանիլ. մերժէր են: Ըսէր է նոյնիսկ, թէ կ'ուզէ Արարատը տեսնել ու շնչել զայն. նորէն մերժէր են: Այս անգամ վազեր է թրքական հիւպատոսարան: Մահիկաւոր դրօշը, անոնց գիրերը եւ թուրք գլուխները տեսնելով բոլորովին կատաղէր է. պահանջէր է, որ անմիջապէս, անմիջապէս անցագիր տան իրեն... թէ մայրը մահամերձ է, պիտի մեռնի, թէ ինքն ալ հիւանդ է, ջղային նոպաներ ունի, թէ պէտք չէ, որ իր ապագան խորտակեն. իր տեղը հոս «Ֆաբրիկա»ներուն մէջը չէ, թէ պէտք չէ, որ... Սկսէր է հայիոյել, ոռնալ, անիծել: Ստիպուէր են քանի մը հոգի մէկէն վրան իյնալ զինքը դուրս կարենալ նետելու համար:

Խաղաղութիւն, խաղաղութիւնը հոգիի: Քանի օրերու շարքը երկարեցաւ, Փիէռ այնքան աւելի վազեց այդ խաղաղութեան ետեւէն: Չհասաւ բնաւ: Զգաց եւ ըմբռնեց, թէ անգամ մը եւս սխալած էր: Գործարանը իրեն կրցաւ տալ հպարտութիւն, մաքրութիւն եւ մասամբ ալ կարծեցեալ ազատութիւն, սակայն ոչ այն, զոր ինք կը ցանկար: Որովհետեւ հակառակ իր կազմուած եւ ուժեղ էութեան, այս կեանքին միօրինակութիւնն իսկ պատճառ կ'ըլլար, որ բոլորովին առանձին մնայ ինքն իրեն հետ եւ ներքին տրամախօսութիւնը վերսկսի: Կ'ըսեն թէ որքան որ յաճախակի ըլլայ յիշատակներու վերակոչումը, այնքան շուտ անցեալը

կը ձեւափոխուի, որովհետեւ ամէն անգամուն յիշատակներուն վրայ կ'աւելցնենք սուտ ու կեղծ տարր մը, որ կը մնայ: Այդպէս ալ Փիէռին համար ճշմարիտ տառապանք մըն էր այժմ իր սիրոյ վերջին օրերը վերապրիլը: Իրեն այնպէս կը թուէր, թէ երկար ատեն Նէնէթին հետ շնչած էր հեղձուցիչ, գրեթէ ոճրային մթնոլորտ մը: Իրաւ է թէ կը յաջողէր այս մթին մտածումներէն հեռանալ, բայց կ'ըմբռնէր, որ հոգիի խաղաղութիւնը պիտի գտնէ միայն այն ատեն, երբոր սամիօրինակութիւնը աւարտի, կեանքը վերսկսի, եւ նոր ապրումներ գան անցեալը քողարկեն: Փիէռ կ'ուզեր անգամ մը եւս փախչիլ: Կ'ուզեր եւ վճռեց: Եւ սակայն նախորդ անգամուանին պէս պարզ փախուստ մը չպիտի ըլլար այս, այլ արշաւ մը, խոյանք մը, արդէն իսկ գծուած ճամբու մը մէջ: Պիտի սլանար նպատակի մը, իդէալի մը, պատճառի մը: Բայց անոնը ատոր:

Իր ճանչցած հայ բանուորները բոլորն ալ, բացի Լոխումէն, նահանջողներ էին: Եւ սակայն, եթէ կայ տարր մը, որ ազգին հանդէպ ընկրկելուն համար էն քիչը արժանի է մեղադրանքի, ան ալ սա գործաւոր դասակարգն է: Ով որ կը ճանչնայ անոր տաժանքը, բնաւ չպիտի համարձակի այպանել: Եւ այդ լուռ ու ներողամիտ ակնարկով է, որ Փիէռ կը նայէր տղոց եւ ինքզինքին, քանի որ ինք ալ նահանջող մըն էր: Բայց հիմնական բանով մը կը տարբերէր իր բոլոր ընկերներէնէն: Կը տարբերէր՝ որովհետեւ ոչ միայն անշահախնդիր էր եւ բարձրագոյն լինելութեան մը գիտակցութիւնը ունենալուն կրցաւ իր դիրակեցութիւնը արհամարհել, այլ որովհետեւ ուժ մը կար իր մէջ, ուժ մը, որ կը խտանար, կը սաստկանար, կ'ուզեր ինքզինքին գիտակցիլ, եւ որ պատրաստ էր նուիրումի, զոհաբերումի: Ան գետին մը, գործունէութեան դաշտ մը փնտռեց. ուղի մը, որ վեր ըլլար առօրեայ պզտիկութիւններէն, որուն վրայ ամէն սրունք չզօրէր վազել, եւ ուր կարենար ըսել ինքզինքին -«Ես, իմ անցեալէս բարձր»:

Բնականաբար Պետրոսին առաջին մտածումը գնաց

իր ազգին: Պիտի նուիրուէր ազգային գործունէութեան: Խորհեցաւ, խորհեցաւ: Պատասխանը եղաւ ժխտական: Պետրոս կ'ըսէր հեռաւոր խօսք մը վերյիշելով. - «Մարդկութիւնը կազմուած է ողջերէ եւ մեռելներէ: Մեռելները անհամեմատօրէն աւելի բազմաթիւ են, քան մենք: Եւ անոնք ավելի զօրաւոր են իրենց կատարած աշխատութիւններուն գումարով: Անոնք մեր տէրն են ու կը կառավարեն մեզ: Կը բնակինք այն շէնքը, զոր հանգուցեալ ճարտարապետ մը շինեց, կը յուզուինք այնպէս, ինչպէս ան միւս գրագէտը յուզուեցաւ, կ'ապրինք առածի կարգ անցած այն նախադասութիւնները, զոր օր մը օտար հայրենասէրը ճառեց եւ կ'ըլլանք այն, ինչ որ անոնք մեզ կ'ընեն:

«Հապայ ուրեմն ինչպէս մենք պիտի մնանք հայ, երբոր մեր մեռելներն ալ չունինք, երբոր մեր մեռելները հետերնիս չբերինք: Ինչպէս մենք պիտի չըլլանք օտար, երբոր այս մեռելը այնքան լաւ ճառեց...» Եւ կը կրկնէր Սուրէնին խօսքերը. «Պիտի ձուլուինք, բոլորս ալ պիտի ձուլուինք. դարման չկայ ատոր: Այո՛, գիտեմ, թէ կարելի է սերունդ մը փոխել, նոյնիսկ ամբողջ ազգ մը ուզուած կաղապարի մը մէջ թափել, սակայն ատոր համար անհրաժեշտ է, որ այդ ամբողջը մեր թաթերուն մէջ ըլլայ եւ ստիպուի մեզ հպատակիլ: Պոլիս կարելի էր, սակայն հոս, գոնէ ինծիպէսներու համար ազգային գործունէութեան կարելիութիւն չկայ, քանի որ ոչ գրագէտ եմ, ոչ ալ բեմբասաց: Պէտք է, որ առնուազն կուսակցական ըլլամ, ինչ որ բնաւ չեմ փափագիր: Օ՛հ, ուրիշ բան, ուրի՛շ, բայց ոչ այս»:

Տրամաբանելու այս եղանակը պէտք չէ իր հոգեկան վիճակին հակասումը նկատել: Իր վիճակը ունեցող երիտասարդ մը շատ ավելի սիրով ու կամեցողութեամբ կը նետուի անձանօթին մէջ, քան ծանօթ ուղիին: Շատ ավելի հրճուանքով կ'երթայ նոյնիսկ երբեմն իր խառնուածքին, իր արիւնին հակոտնեայ գործունէութեան մը, որ նոր է, քան թէ ճանապարհի մը, որուն կրցեր է ծանօթանալ գիտակցութեան գալէն ի վեր, որուն վրայ շատ անգամ քայլ

ան քայլ հետեւեր է ուրիշներու յառաջխաղացումին, եւ ուր կը խորհի՝ թէ աւելի տիրմ կայ քան ուրիշ բան:

Անմիջապէս յետոյ Պետրոս մտածէց իր ծնողքին, իր մօրը: «Ապրելու համար մօրդ պէտք ունիս - տղայ ես դեռ...» ու հեռացաւ: Յատկեց կրօնքին վրայէն եւ նայեցաւ գիրքերուն: Գրական եւ զուտ երեւակայական գործերը սիրած էր ատենօք, բայց հիմա չէր կրնար հանդուրժել անոնց: Եւ որովհետեւ անկարելի էր նմանապէս զբաղիլ սիրոյ պատմութիւններով, կը մնային իմաստասիրական երկերը: Պետրոս զանոնք կրելու ոչ պատրաստութիւնը ունէր, ոչ ալ սէրը: Կը պատկանէր այն բազմաթիւ մարդոց դասակարգին, որ կը խորհի. «Կեանքին հանդէպ յայտնուած բոլոր կարծիքներու մէջ, ես կը նախընտրեմ կեանքը»:

Երիտասարդ հայուն այս մտային դեգերումները եւ անփափաքելի նպատակէ մը խուսափելու համար գործածած թերի պատճառաբանութիւնները խռովեցին իր հոգին եւ մտածումը, որ ի լինելութեան էր: Կրկին ինկաւ տագնապի մը մէջ, եւ իր անանուն տենչանքները զինքը մղեցին անկարելի հորիզոններու: Մտածեց որեւէ պաշտօն մը գտնել նաւու մը վրայ եւ երթալ երկիրներէ, ծովերէ ու քարափներէ անդին. երթալ հիւսիսի սառոյցներուն, խարտեաշ եւ հասակաւոր գեղուիներուն, կամ դէպի հարաւ, սեւաչուի լեցուն ողկոյզներուն. երթալ հասարակած, մինչեւ վայրենիներուն մէջ, ուր անշուշտ պիտի կարենար կիները ցանկալ: Երեւակայութեանը առջեւ բերաւ վայրի գեղուի մը հաստ շրթունքներով, ցից կուրծքերով եւ անթիւ ապարանջաններով: «Այո՛, - ըսաւ, - կամ պէտք է այդպէս անբան կին մը վայելել, եւ կամ բնաւ կին չվայելել: Որովհետեւ այն վայրենիին անասնական պարզութիւնը աւելի կ'արժէ, քան մեր կիներուն երկդիմի, անմիտ ու դատարկ վարուելակերպը: Եւ յետոյ, թերեւս հոն ես բռնի պիտի տիրանամ այդ մեծ օղերով կնոջ: Ահա այդ է, որ արժէք ունի եւ ոչ թէ փոխադարձ հաւանութեամբ ստացուած սէրը: Պէտք է բռնութեամբ, անոր կամքին հակառակ տիրանալ ցանկալի էա-

կին: Ահա այդ ուժեղ դիմադրութեան որոնումին մէջ չէն անոնք, որ կ'երթան ընկերութենէն արգիլուած համբոյրներու»:

Եւ հայուն մտածումը կը զարնուէր պատէ պատ, կը դառնար կապուած ձիու մը պէս, կը շրջէր, կը տապալտկէր, կ'ըլլար սպառող, անսանձելի: Այս անգամ Պետրոս բռնորոպին տարբեր գետնի մը վրայ ինկաւ, ուզեց նուիրուիլ ոգեհարցութեան, հոգեփոխութեան եւ այլ մութ սենեակի որոնումներու: Օր մը վերջ փափաքեցաւ քովի խարտեաշ ֆրանսացիին օրինակին հետեւիլ եւ ըլլալ մարզիկ: Հազի թէ ակնարկ մը նետած էր մարզական թերթի մը վրայ երբ որ ծրագիրը փոխեց, ուզեց ձիարշաւներու երթալ, խաղալ բախտին հետ, ահագին դրամ շահիլ: Նոյնիսկ գաղափարը ունեցաւ դրոշմաթուղթ հաւաքելու, ալբոմ կազմելու, եւ... պոռագ, պոռագ...

Վերջապէս կրցաւ որոշում մը տալ: Անդրադարձաւ որ իր այս տագնապին պատճառը առանձնութիւնն էր, թէ պէտք էր վերադառնար Փարիզ եւ խառնուէր իր մտերիմ ընկերներուն: Ինչո՞ւ կը փախչէր բոլորէն. ինչո՞ւ լքած էր նոյնիսկ Սուրէնն ու Հրաչը: Եւ սակայն իր Փարիզ այցելութիւնը տեղի ունեցաւ բոլորովին տարբեր պարագաներու տակ: Ռընոյի բանուոր-վարժապետներէն մէկը, այն, որ ամէն կողմ նամակ կը տեղացներ ըսելով թէ պէտք է զինքը շուտով փրկեն, այլապէս անձնասպան պիտի ըլլայ, ահա այդ վարժապետը քահանայ պիտի ձեռնադրուէր կիրակի օր: Այդ խեղճը անկարող էր անձնասպանութեան ուրիշ կերպ մը երեւակայելու: Ռընոյի բոլոր Հայերը որոշեցին խմբովին ներկայ ըլլալ այդ արարողութեան: Պետրոս Պիյեանքունէն կիրակի առաւօտ ճամբայ ելաւ ութ հոգինոց խումբով մը, որուն պարագլուխը եղաւ անմիջապէս, ու իր չափազանցուած, բռնագբօսիկ, եւ սակայն խիստ հաճելի զուարթութիւնը անմիջապէս շուրջիններուն փոխանցեց: Երգելով, կատակելով, պոռապալով հասան վերջապէս եկեղեցի, ուր տարի կար որ Պետրոս ոտքը չէր դրած: Ռիւ ժան Կուժոն,

դեռ դրան առջեւի բազմութեան չխառնուած՝ կեցնել տուաւ իր ընկերները զինուորական անշարժութեան մը մէջ եւ քանի մը քայլ հեռանալով հրամայեց.

- Շունչ... ա՛ռ:

Ութը մէկէն մեծ աղմուկով իրենց քիթերը վեր քաշեցին:

- Խունկի հոտ առի՞ք, - հարցուց Պետրոս:

- Ի՛նչ խունկի հոտ, ես փաստըրմայի հոտ առի, mon vieux, փաստըրմայի...

Խօսողը, աւելորդ է ըսել, Խնտամեանն էր, նախկին փաստըրմայի վաճառականը, որ անմիջապէս կորսուեցաւ բազմութեան մէջ: Իրաւ ալ եկեղեցիին առջեւ կը ծախէին բոկեղ, բակլաւա, ապուխտ, դդումի կուտ եւ այլ օգտակար ու հաճելի բաներ: Շուտով Խնտամեան դուրս ելաւ բազմութենէն, չորցած միսի կտորի մը հետ, եւ տղաքը կրկին խմբուելով՝ գացին դէմի պզտիկ սրճարանը, ձեր բոլորին ծանօթ: Փաստըրմային հետ անշուշտ պէտք էր օղի խմէին եւ խմեցին: Նոյնիսկ պահ մը խորհեցան երթալ դէմէն կանչել իրենց քահանայ ընտրուելիք ընկերը, սակայն անդրադարձան, որ անպատշաճ է: Որով, ի բացակայութեան, զայն «օծեցին, ջրեցին, կնքեցին, օրհնեցին, թաղեցին», եւ խմեցին: Երբոր դուրս ելան երթալ արարողութեան ներկայ ըլլալու եկեղեցին շատոնց աւարտած էր: Դդումի կուտ մը իսկ չէր մնացած: Ի՛նչ փոյթ սակայն. մեր տղաքը կրկին վերադարձան Պիյեանքուռ եւ խմեցին, երգեցին, պոռացին:

Այդ օրը ճակատագրական եղաւ Պետրոսին համար: Երբոր սենեակ դարձաւ, կէս գիշերեն վերջ, կատարելապէս գինով էր: Սկսաւ խօսիլ Նէնէթին հետ: Անոր պատկերը դէմը առաւ, եւ պատմեց, կատակեց, խնդաց, եւ... եւ մէկէն սկսաւ լալ տղու մը պէս:

Այո, անգամ մըն ալ երբեք այսպիսի բան չպատահեցաւ, սակայն Պետրոս շարունակեց խմել: Դեռ շաբաթ մը չէր անցած այն կիրակիէն ի վեր եւ արդէն իսկ ան ամէն գիշեր տուն կու գար ճշմարտապէս գինով: Շուտով բարեկամացաւ Ֆրանսացիներու, շուտով սորվեցաւ խմիչքի



անուններ, եւ խմեց յօժարութեամբ: Շատ անգամ առաւօտները չէր հասներ եօթ ու կէսին ետեւէն, եւ այլեւս իր վատակը բաւական չէր գար ծախքերուն: Ինչ փոյթ սակայն. կը բաւէ, որ ամէն գիշեր կ'օրօրուէր ալիքներու վրայ: «Օհօ՛ճ, - կ'ըսէր անդադար ինքզինքին, - վստահ եմ, որ հեռուէն զիս դիտող մը պիտի կարծէ, թէ սայթաքեցայ, ղեկս կորսնցուցի, Կարսը յանձնեցի. չեն գիտէր, թէ ես կը խմեմ պարզապէս տեսնելու, դիտելու, կեանքը ճանչնալու համար: Ես ուզած պահուս կրնամ վերստանալ նախկին վիճակս, բայց կը կրկնեմ, բաւական չէ...»:

Այո՛, ալ բաւական չէր ո՛չ գինին, ո՛չ օղին, որով փնտռեց արբեցնող աւելի ուժեղ տարրեր:

Անձրեւ, ցեխ, մութ փողոցներ: Բաւական քալեցին երկուքը անխօս, մինչեւ որ հասան սա զուտ գործաւորական արուարձանին չինական թաղը: Թաղերուն ամէնէն աղտոտը, ամենաթշուառը, ամենագարշելին: Վերջապէս իրենց քայլերը դանդաղեցուցին պզտիկ խրճիթի մը առջեւ, որուն փեղկերուն մէկ ճեղքէն տկար լոյս մը կ'անձրեւէր: Ֆրանսացին երկու անգամ զարկաւ փեղկին եւ, ճամբան շարունակելով, մտաւ քովի անելին մէջ, ուր պզտիկ դուռ մը բացուեցաւ իրենց առջեւ: Նստան երկու կարմիր գաւաթներու դիմաց եւ բաւական մը սպասեցին: Ֆրանսացին բաներ մը ըսաւ տիրոջ, եւ երբոր ուրիշներ մեկնեցան, սենեակին խորը գտնուող վարագոյրը մէկդի ընելով երկուքը մէկ իջան սանդուղներէն ու մտան գետնափոր մը: Ա՛հ, հոտը... Նախապէս Պետրոս բան մը չկրցաւ տեսնել. յետոյ նշմարեց գետինը դրուած կարմիր լոյս մը, կրակ մը, որուն առջեւ ծալապատիկ չինացի մը, նմանապէս կաս-կարմիր դէմքով, ծխափողեր կը լեցնէր: Երբոր Պետրոս ինկաւ բազմոցի մը վրայ, ֆրանսացին յանձնարարեց, որ լաւ ծառայեն նորեկին եւ մեկնեցաւ: Կին չկար. այրեր էին, պառկած, երկարած կամ նստած: Կը ծխէին: Հազիւ թէ Պետրոս շունչ մը ներս էր քաշած իր ծխափողէն, երբ քովինը ցցուեցաւ եւ դժուարաշարժ լեզուով մը կրկին մուխ ուզեց: Պետ-

րոս սարսափելիորէն ցնցուեցաւ այդ ձայնէն, անմիջապէս բռնեց քովինին թելը իր մատներուն բոլոր ուժով, եւ անկարող ձայնը մեղմելու գրեթէ պոռաց.

- Ծօ, ծօ Լոխում... ծօ դուն հոս ինչ գործ ունիս...

Ան գլուխը դարձուց, նայեցաւ անտարբեր եւ, ծուխը դուրս տալով, դանդաղորէն պատասխանեց.

- Դուն ինչ գործ ունիս:

Այո, ինք ինչ գործ ունէր: Պատասխանը մեռաւ յապաղումի մը մէջ, մինչ կարմիր Չինացին դժոխային չաստուածի մը շունչը կը ստանար: Պետրոս շատ փոխուած գտաւ իր ընկերը. անոր ռունգները մեծցեր էին, շրթունքները շատ ուժով ներս կը քաշէին թոյնը, եւ ակնարկը ունէր լոխում չէր յիշեցնէր: Ինչո՞ւ այսքան աղտոտ էր, թափթփած ու քայքայուած: Ինչո՞ւ անգործ էր:

- Բայց դուն աղէկ ajusteur\* էիր. ինչո՞ւ գործ չգտնես, չես փնտռեր կոր. ինչո՞ւ, ինչո՞ւ ինքզինքդ ձգէր ես: Քալէ դուրս ելլենք, Լոխում, Աստուծոյ սիրուն, դուրս ելլենք: Կը սպանես կոր ինքզինքդ, գոնէ մայրիկդ մեղքցիր. գոնէ մայրիկդ... Գիտեմ, թէ ինչ տառապանքներ ունիս, ես շատ լաւ կը հասկնամ քեզ, բայց փրկութեան ճամբան այս չէ. քեզի խրատ տալու պէտք չունինք, դուն գիտես... Մեղքցիր մայրիկդ... Այս օրերը կ'անցնին, պէտք չէ, որ մեր յոյսը կտրենք...

- Ո՛չ, - ըսաւ Լոխում, - Ո՛չ. ես ա՛լ չեմ ուզեր յոյսով ապրիլ:

- Հապա ինչո՞վ...

- Ես կ'ուզեմ ապրիլ:

Պետրոս բառեր կը փնտռէր իր ընկերը համոզելու համար, բայց միեւնոյն ատեն կը վախնար ալ՝ խորհելով, որ միգուցէ կրկին փրփրի, նորէն կատղի: Անկարելի եղաւ սակայն խօսակցութիւնը աւելի շարունակել, որովհետեւ ներկաները սկսան դիտողութիւն ընել աղմուկին համար: Պետրոս վճարեց ու գրեթէ բռնի դուրս տարաւ Լոխումը:

\* Ստրուգորդ:

Անձրեւը վերսկսած էր: Քով քովի գացին երկու ստուերնե-  
րը ուսերնին ցցած, օձիքները վեր: Երկարօրէն, երկարօրէն  
խօսեցաւ Պետրոս. «Ինչ, - կ'ըսէր ան, - կը կարծես թէ կա-  
րելի՞ է դիւրութեամբ վերադառնալ նախկին վիճակին, երբ  
մարդ գերին է դարձած այս թոյներուն: Կարելի՞ է դիւրու-  
թեամբ մոլութիւններու ճիրանէն ազատիլ: Ինչ կ'արժենք  
մենք, երբ մեր ցաւը մեղմելու համար այսպիսի միջոցներու  
պիտի դիմենք. ո՞ր կը մնայ մեր կորովը, մեր կամքը, մեր  
ուսումն ու դաստիարակութիւնը, երբ չպիտի կարենանք  
տառապագին օրերու դէմ դնել: Պէտք է մաքառինք եւ եր-  
բեք չարհամարիենք ցաւը որովհետեւ ան է, որ մեզ պիտի  
կռէ, ճկէ ու կազմէ:

«Դուն ինձի մի՛ նայիր. ես եկայ պարզապէս հետաքրք-  
րութեան համար, պարզապէս այս կեանքը մօտէն տեսնե-  
լու եւ զայն ուսումնասիրելու համար: Կարելի բան չէ, որ ես  
ինքզիներս այս ճախճախուտին մէջ ձգեմ. երբե՞ք, երբե՞ք...»:

Անհաւատալի պարագայ, բառ մը իսկ չէր պատասխա-  
նէր Լոխում: Պետրոս անդրադարձաւ, որ անոր խօսելէ  
աւելի իր անձին է, որ կ'ուղղէր այս նախադասութիւնները:  
Բնաւ վստահ չէր անոնց ընկերոջը վրայ կատարելիք ազ-  
դեցութեան, սակայն կ'ըմբռնէր, որ այդ պահուն իր անձն  
է, որ դուրս կը քաշէ տիղմէն, բազուկներուն ամբողջ կա-  
րողութեամբը: Քովինը հայելի մը կը դառնար, եւ Պետրոս  
անոր մէջ որոշ կը տեսնէր այն վիճակը, ուր պիտի իյնար  
ինք ալ անվրէպ, եթէ ուժը չունենար անմիջապէս փախչե-  
լու, սանձուելու, հաւաքուելու: Լոխում կանգ առաւ յանկարծ  
ու ըսաւ.

- Գործ չունիմ. փարայ չունիմ. ինձի տասը ֆրանք տուր:

Պետրոս կրկինը տուաւ: Դրամատոմսերը ափին մէջ  
սեղմած՝ անմիջապէս հեռացաւ Լոխում, առանց բառ մը  
արտասանելու: Մէկէն կեցաւ, սակայն քիչ մը անդին, լապ-  
տերի մը տակ, ետեւ դարձաւ, սարսափելի ծամածռու-  
թեամբ մը խնդաց բարձրաձայն սադայելի մը պէս, եւ թելե-  
րը բացած վեր ցատկեց, ճշալով:

- Խաբեցի, Պետրոսը խաբեցի, առի տասը ֆրանքը...

Ու վազելով խառնուեցաւ մութին: Անշուշտ, նորէն գնաց ծխելու:

.....

Մեքենաները շաբաթ մը եւս դարձուցին:

Երբ Պետրոս կէսօր մը սրճարան մտաւ, զարմացումէն անշարժ մնաց դրան մէջ: Երբեք չէր պատահած, որ բողո՛ղր Հայերը, բոլորն ալ անխտիր այսպէս հաւաքուած գտնէ նոյն սեղանին շուրջը ամէնքն ալ լուռ, անխօս, գլուխները կախ: Մէջտեղնին նստած էր բանաստեղծ-վարժապետը նամակի մը թուղթի առջեւ, գրիչը օդին: - «Չեմ կրնար, եղբայր, ես այսպիսի բան չեմ կրնար գրել», - ըսաւ ան ու յետոյ կարդաց ինչ որ կրցած էր գրել. «Յարգելի Տիկին - Մենք սիրելի ընկերներն ենք ձեր որդւոյն...» - «Անոնք ինչ էր. «Լոխում» - չպիտի գրեմ եմ»: - «Չարեհ, - պատասխանեց ձայն մը, եւ բանաստեղծը կրկնեց. «Յարգելի Տիկին - Մենք սիրելի ընկերներն ենք ձեր որդւոյն Չարեհի, որ...» - «Չեմ կրնար, եղբայր, ես այսպիսի բան չեմ կրնար գրել...»:

- Ճանըմ ինչ է եղեր, ինծի ալ ըսէք, - աղերսեց Պետրոս:

Ինտամեան տարաւ զայն սրճարանին միւս անկիւնը եւ ըսաւ.

- Լոխումին խելքին եկաւ. այո՛, խելքին եկաւ... Երէկ իրիկուն երբոր պանդոկ մտայ, զիս անմիջապէս անոր սենեակը տարին. արդէն ոստիկան մը եկած էր եւ խեղճը կապեր էին մահճակալին վրայ, պաշտօնեաներուն գալուն սպասելով... Գոնէ մարդու բան մը ըսեր... Կը խօսէր կոր միայն. անդադար կը խօսէր... արդէն ատոր համար զիս կանչեր են, որովհետեւ միայն հայերէն կ'ուզէ կոր խօսիլ... ուզեցին, որ ըսածները թարգմանեմ... լեզուս բռնուած էր, չէի կրնար թարգմանել... պէտք չէր, որ թարգմանէի, բայց, երբ թարգմանեցի, ամէնը մէկ սկսան խնդալ... այդ խնդալիք բան է... խնդալիք բան է...

Չէր համարձակէր, չէր համարձակէր, սակայն չկարենալով հետաքրքրութեանը աւելի դիմադրել, Պետրոս հարցուց.

- Ինչ կ'ըսէր կոր...

- Ինչ պիտի ըսէ. - չորցնենք ճահիճները, ջրանցքներ բանանք, չորցնենք ճահիճները, ջրանցքներ բանանք, չորցնենք ճահիճները...

\* \* \*

Զանգակատան ետեւէն, պարտէզի մը խօրէն, ագարակի մը չես գիտէր որ անկիւնէն աքաղաղ մը առաւօտը կը ծանուցանէ: Եւ ահա որ ուրիշներ, սուր, խուլ, կամ թաւ կանչերով կը ձայնակցին առաջինին, մօտեն կամ հեռուէն, աջէն թէ ձախէն, նաեւ երկար ու անհաւասար ժամանակամիջոցներով, յետոյ եռաձայն, քառաձայն: Նոյնն է նաեւ այսպիսի պանդոկներու մէջ: Սանդուղի մը տակէն, նրբանցքի մը խօրէն, չես գիտէր որ յարկէն զարթուցիչ մը կը ճչայ: Եւ ահա, որ ուրիշներ... եռաձայն ու քառաձայն:

Հայհոյութեան մը պէս բազուկը արձակեց Պետրոս վերմակէն դուրս եւ ուժով մը զարկաւ: Ժամացոյցը իր բարձունքէն ինկաւ գետին, թաւալեցաւ մինչեւ աթոռին տակ, ու դեռ շարունակեց զսպանակը քակել, մռլտալով: Որքան պիտի փափաքէր քիչ մը եւս յամենալ անկողնին ջերմութեանը մէջ, եթէ արդէն իսկ սանդուղներէն ծանր ծանր ոտնաձայներ եւ գէշ արթնցած հազեր չիջնէին, եթէ գոնէ ան միւսը չմռլտար: Պետրոս նետուեցաւ անկողնէն վար, վերմակին ծալքերուն խառնուած հագուստները դուրս քաշեց եւ սկսաւ արագօրէն յագուիլ: Փետրուարի այս օրերուն եւ առաւօտուն այսքան կանուխ՝ մութ կ'ընէ: Լոյսը վառեց: Սունկէ ատամնաշարեր ծխնելոյզները կը խաճնեն: Լխալիկ հացի պատառներ աղմուկով կ'իյնան բակին մէջ: Փողոց ելլող բանուորին ծոծրակը պատառաքաղ մը կը մտնէ ու կը

դողայ, մինչ անվերջանալի անձրեւը կ'աղտոտէ ամէն բան, եւ դռները կը գոցուին: Պետրոս վերջին ակնարկ մը նետեց շուրջը: Նախորդ գիշերուընէ մնացած պանան մը տեսաւ սեղանին վրայ: Գրպանեց: Մարեց լոյսը եւ դուռը բացաւ: Անմիջապէս ընկրկեցաւ: Հակառակ առաւօտեան այդ տկար նշոյլին՝ ճանչցած էր Նէնէթը: Ո՛չ անակնկալը, ո՛չ ալ զարմացումը բաւական չեղան զինքը լռեցնելու. Պետրոս անմիջապէս ճչաց.

- Դո՛ւն, դո՛ւն, նօրէն.... Օ՛հ, ա՛լ զիս ձգէ՛, ալ զիս հանգիստ ձգէ...

Բայց երբոր տեսաւ, թէ Նէնէթ սենեակ կ'անցնի եւ դուռը կը գոցէ, ձայնը աւելի բարձրացուց անբան անասունի մը պէս:

- Գնա՛, մեկնէ... կ'ուզեմ, որ անմիջապէս մեկնիս... ա՛լ քեզի պէտք չունիմ ես, ո՛չ, ես այլեւս քեզի պէտք չունիմ...

- Փիէռ, մտիկ ըրէ զիս... մտիկ ըրէ... բան մը ըսելու եկայ, շատ կարեւոր բան մը, յետոյ անմիջապէս պիտի մեկնիմ... մէկ խօսք միայն...

Փիէռ շատ գէշ էր արթնցած եւ ոչինչ կ'ուզեր լսել. առջեւ նետուեցաւ դուռը բանալու համար, սակայն կինը չթողուց:

- Գոհ պիտի մնաս, Փիէռ... մէկ խօսք միայն... հաւատա՛, որ երջանիկ պիտի ըլլաս... գիւղէն մինչեւ հոս եկայ քեզ տեսնելու... Պիպիին քովէն կու գամ... մէկ խօսք միայն...

Կառչած էր տղուն օձիքին ու զայն ետ կը մղէր: Թերեւս հետաքրքրութիւնն է որ յաղթանակեց, թերեւս երիտասարդը բաւական գտաւ իր դիմադրութիւնը, թերեւս իր տակաւին ծանր ուղեղը չկրցաւ յարմար պատասխան մը գտնել, եւ Պետրոս ետեւ քաշուեցաւ ու սպասեց:

- Երէկ անգամ մը եկայ, հոս չէիր. իսկ հիմա չհամարձակեցայ քեզ արթնցնել... ի՛նչ ցուրտ է... գիւղէն կու գամ. իմացայ, թէ որքան հետաքրքրուէր ես Պիպիով. իմացայ,

թէ ինչեր ես ըրեր անոր համար... ուզեցի շնորհակալութիւնս յայտնել... Պիպին միշտ քու խօսքդ կ'ընէ, որովհետեւ քեզ չափազանց կը սիրէ...

- Ա՛յդ էր ըսելիքդ, - պոռաց Փիէռ:

- Եւ յետոյ, եւ յետոյ...- շարունակեց Ֆրանսուահին վախճած աղջնակի մը պէս, արագօրէն, արդէն պատրաստ նախադասութիւններով. - եւ յետոյ ուզեցի, որ անգամ մը զիս տեսնես: Գիտեմ, թէ քեզ դժբախտացուցի, տառապեցուցի եւ... Թերեւս դեռ կը սիրես զիս. չեմ ուզեր, որ տակաւին տառապիս, որովհետեւ... ուրիշ մէկը պիտի չգար, բայց հաւատա՛...

Նէնէթ ձեռքը քսեց դուռին եզերքը, կոճակը գտաւ ու լոյսը բացաւ: Փիէռ...

.....

Լայնեզր գլխարկին տակ կնոջ աչքերը իրենց ամենամեծ անձկութիւնը ապրեցան: Դարձան, քթթեցին, սպառեցան, սպառեցան... Փիէռ... Կարծես Նէնէթ կը հատնէր տագնապին մէջ, աչքերը կ'աղերսէին, կը հարցնէին, կը հայցէին... Փիէռ... Տղան անգիտակցաբար գրպանին մէջ կը ճմլէր պանանը, վերջնապէս, վերջնապէս արձանագած:

Պահը անցաւ սակայն, ինչպէս կ'անցնի ամէն պահ, երբ աչքեր զայն կը լափեն, երբ հպարտութիւններ կը լափուին: Տղուն կոպերը ինկան վերջապէս պաղած բիբերուն վրայ, եւ հազիւ լսելի ձայնով մը ան հարցուց.

- Ինչպէ՛ս եղաւ...

- Քեզմէ բաժնուելէս ամիս մը վերջն էր: Վիշիէն կը դառնայինք Լէսքիւռին հետ: Ան խմած կը, գինով էր, բայց ես իրեն պէս չէի: Ուզեց կառքը ինք վարել. պէտք չէր, որ ձգէի, քանի որ գինով էր, բայց պնդեց, յամառեցաւ, եւ ես յոգնած ըլլալուս՝ տեղի տուի: Շատ արագ տարաւ եւ անկիւնադարձի մը գնաց ճամբուն եզերքի ծառերէն մէկուն զարնուիլ: Ինք հոն մեռաւ, իսկ ես...

Իսկ ի՞նք... Վերարկուին ձախ թելը պարապ էր ամբողջութեամբ, եւ այտին վրայ լայն ու խորունկ պատռուածք մը կար, որ կ'իջնէր մինչեւ վիզին:

.....

Ելեկտրական լոյսը մարած էր:

Գարշելի առաւօտեան նշոյլները դժուարութեամբ կը սողոսկէին սենեակ, թրջելով ու ցեխոտելով ամէն բան: Ժամացոյցը աթոռին տակ արագօրէն կը դառնար: Փիէռ կը քալէր անդադար խեղճուկ սենեակին մէջ անհաւասար քայլերով, անկանոն աղեղներով: Կեցաւ ու ըսաւ.

- Եւ հիմա այսպէս կը դառնաս դուն ինձի, կոտրուած, ջախջախուած, եւ... այսպէս կը դառնաս դուն ինձի: Կուգաս, որովհետեւ այլեւս անկարող ես նախկին կեանքդ վարել, ա՛յլ այն երեկուան բարեկամներդ երեսդ չեն նայիր, ա՛յլ չես կրնար...

Յետոյ նորէն կեցաւ եւ ըսաւ.

- Ամէն օր, անդադար կը հարցնէի ինքզինքիս. - «Ի՞նչ պէտք է որ պատահի, որպէսզի Նէնէթս վերադառնայ ինձ. ի՞նչ»: Մտածեցի ամէն բանի, ամէն անկարելիութեան, բայց ա՛յս... ա՛յս... Յետոյ նորէն կեցաւ ու ըսաւ.

- Ինչո՞ւ անիծեցի ես քեզի: Բայց ես չար չեմ: Սիրոյ մէջ անէծքը պէտք չէ ուժ ունենայ: Ես չար չեմ...

Ամէն անգամուան Նէնէթը կը պատասխանէր.

- Ոչ, Փիէռ, ես այդ նպատակով չեկայ, հաւատա, որ ես ատոր համար չեկայ: Պիտի մեկնիմ. անմիջապէս պիտի մեկնիմ... ձգէ, որ մեկնիմ... մեկնիմ...

.....

Եւ երբոր Փիէռ նշան ըրաւ, որ մնայ, Նէնէթ մօտեցաւ տղուն, միակ բազուկովը պլլուեցաւ վիզին ու սկսաւ համբուրել ուժով, ուժով: Երիտասարդը համբոյրները չվերադարձուց: Այն ատեն Նէնէթ նստաւ մահճակալին եզերքը, ճիշդ տղուն քով: Սանդուխներուն վրայ ոտնաձայն ա՛յլ չկար:



Երբոր ընկալին թոյլատրեց, Նէնէթ սկսաւ խօսիլ ցած ձայնով մը: Ըսաւ, թէ ինք պէտք եղած դրամը ունէր եւ կ'ուզեր հեռանալ Փարիզէն, աւելի լուռ քաղաք մը հաստատուելով՝ կեանքը վերսկսիլ: Կ'ըսէր, թէ պիտի կարենային երջանիկ ըլլալ, եթէ գէշ օրերը մոռնալու ուժը ունենային... թէ ինք բնաւ չէր մոռցած Փիէռոյին խօսքերը. «Ուր որ ալ որ ըլլաս, ինչպէս որ ալ ըլլաս, ով որ ալ սիրես, եթէ անունս իսկ մոռնաս...»:

Փիէռ ոչինչ պատասխանեց:

.....

Խօսքերը սպառեցան: Ան եղաւ միայն կին, ֆրանսացի կին, եւ գլուխը քիչ մը ծռելով ըսաւ.

- Գիտե՞ս, Փիէռօ, մարմնիս վրայ բան մը չունիմ... բան մը չունիմ...

Բայց երբ տղան դարձեալ լռեց, մեծ արցունք մը սահեցաւ կնոջ սպիին վրայէն: Նէնէթ ուզեց պայուսակը բանալ, թաշկինակը առնելու համար, բայց մէկ ձեռքովը ջաջողեցաւ: Պայուսակը ինկաւ գետին: Տղան չշարժեցաւ բնաւ: Երկուքը մնացին մահճակալի եզերքը, քով քովի, գլուխները կախ, ծանր եւ լուռ:

Ճիշդ այդ պահուն է, որ պըտըլիկ մկնիկ մը եկաւ իրենց ճիշդ դէմը, սենեակին մէջտեղ, վարդագոյն ականջները ցցած զարմացումով նայեցաւ այդ երկու անշարժ էակներուն, եւ յետոյ, կարծես յանկարծ խիստ կարեւոր ժամադրութիւն մը վերյիշելով, մեկնեցաւ նետի մը պէս:

Մեծ արցունքը ինկաւ, կորսուեցաւ:

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ՓԻԷՌ ՆԱԽԿԻՆ ԺԻՐԱՐՏՕ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ, ՀԻՄՆՈՒԱԾ 18...

Մնացեալ թուանշանները կարելի չէր կարդալ, որովհետեւ անոնց վրայ ջնջոց մը կար: Լաթի այդ կտորը բռնող ձեռքը անմիջապէս կը ճանչցուէր իր միջնամատէն: Միջնամատ չկար. որով Կոստանինն էր: Փարիզ քաղաքի նախկին հրշէջ գունդի ենթասպաներուն էն կրակոտը բարձրացած էր սանդուխի մը վրայ եւ ցուցափեղկը կը մաքրէր: Եթէ երբեք ջնջոցը պահ մը անշարժացնելով՝ իրենց խանութին հնութեան «ռէկլամ»ը ընել թերացաւ, այդ յանցանքին ամբողջ բեռը կ'իյնար Ֆրանսայի վարած գաղութային քաղաքականութեան վրայ: Իրաւ ալ նոյն պահուն, խիստ թերեւ ու վառ գոյներով հագուատ մը հագած երիտասարդ աղջիկ մը, քովի խանութէն դուրս նետուելով կը ճչար.

- Մէտուիէօ Կոստան, Մէտուիէօ Կոստան, շուներնիս ձագ բերաւ...

- Քանի՞ հատ, - հարցուց Կոստան իր բարձունքէն, առանց պաղարհինութիւնը կորսնցնելու, առանց յուզումը յայտնելու:

- Չեմ գիտէր, չկրցայ հաշուել... կարծեմ կը մեռնի կոր: Ախ, սարսափելի բան է. ո՛հ, կը մեռնի կոր...

- Ես հոս եմ, անհոգ եղէք. կու գամ կոր:

Եւ Կոստան աղջկանը հետ արագ քայլերով մտաւ քովի հանդերձավաճառին խանութը: Ջնջոցը մնաց սանդուղին վրայ, ապակիին կռթնցուած սանդուխը՝ մայթին վրայ, մայթը մնաց մեծ հրապարակին վրայ, իսկ հրապարակը՝ Թօննէռի վրայ:

Թօննէն Իօն նահանգին գլխաւոր քաղաքն է եւ կը գտնուի Փարիզի ու Լիոնի մէջտեղ: Միջերկրական իջնող շոգեկառքի մեծ գիծին վրայ ըլլալուն՝ հաղորդակցութեան դիրութիւնը չի պակսիր բնաւ... մանաւանդ որ ճեպընթացը մայրաքաղաքը Թօննէնէն բաժնող 180 քիլոմետրօն երեք ժամեն կը կտրէ: Ահա ատոր համար է, որ Փիէն ու ժանն երեք շաբաթէն հասան հոս:

Կայարանէն դուրս ելլելուն պէս, ժպիտ մը բացուեցաւ Փիէնի դէմքին: Կենդանութեան, երջանկութեան, գոհունակութեան ժպիտ մը: Երկար ատեն է, որ այսպիսի ջերմութիւն մը իր հոգին չէր պարուրած: Անհամար կասկեանքներ\* գարնանային կանաչութեան իրենց ամբողջ կուսութիւնը նետեր էին օդին, որը բոլորովին տարբեր խունկ մը ունէր, բոլորովին տարբեր մաքրութիւն մը, նոր շունչ մը: Խաղաղութիւնն ու պարզութիւնն է, որ կը խաղային ծառուղիներուն մէջ, մանուկներու եւ տարէց գաւառացիներու շուրջ, մինչ խորը, բացաստանի մը լոյսով՝ զինուորներու անխուսափելի մահարձանը իր մարմարը կը բարձրացնէր: Լայն ճամբայ մը կ'առաջնորդէր քաղաք: Աջին՝ անմիջապէս կը շինուէր ոստիկան զօրքերու շէնքը, եւ քիչ մը աւելի վեր քաղաքապետարանը, իր եռագոյն գօտիով: Ամէն ինչ նոր կը թուէր երիտասարդ Փիէնին: Ան հոգիի կատարեալ գոհունակութեամբ մը ինքզինքը կը յանձնէր գաւառական կեանքին հեշտ օրօրումներուն: Առուտուրի կեդրոնին մէջ կարճ շրջանէ մը յետոյ, գնաց մանաւանդ դեգերիլ բնակութիւններուն շուրջ, լուռ պարտէզներու երկայնքը, դարձդարձիկ, մաքուր եւ մագլցող փողոցներու խորհուրդին: Օտար մըն էր ինք հոն, օտար մը՝ որ երկու կամ երեք յարկնոց այդ այնքան կոկիկ տուններու գաղտնիքին առջեւ կ'ուզէ հարցում մը ուղղել Պալգաքի: Հանրակառքերու եւ ինքնաշարժներու անվերջ աղմուկին փոխարէն, երկաթագործի մը մուրճը վայրկեաններ կը գամէր քահանայի մը ետեւ, եւ ինչ որ Փարիզ պատի ազդ էր միայն, հոս կը դառնար այժ,

\* Շագանակենի:

էշ, կով, բայց այս անգամ շնչաւոր: Շատ հին եկեղեցի մը կար, չես գիտէր, որ 15-րդ դարէն մնացած. յետոյ քաղաքը կը ցցուէր, կը բարձրանար, բուրգի մը պէս: Էն վերը Աստուծոյ տաճար մը եւս՝ իր գրաւած դիրքով կրկնապէս գեղեցկացած, ծառերու, կանաչցած նստարաններու մէջտեղ, եւ որ շուրջի համայնապատկերը կը քաշէր վեր, դէպի իրեն, դէպի իր խաչին: Այդ դիտարանին հովը ճիւղեր կը դողացնէր, մագլցող ճամբաները կը ծռէր, եւ ծխնելոյզներ կը մխային: Ջրանցք մը՝ վրան կեղեւ մը ընկոյզի, եւ կանաչ թաշկինակ մը՝ վրան կաթիլ մը արիւն: Գերեզմանատան դուռը չի բացուիր, որովհետեւ այսօր նորեկ մը չկայ, եւ չի գոցուիր, որովհետեւ փախչիլ ուզելու համար ներսը թաղուած Հայ մը չկայ:

Վարը, Օքսէռ տանող մեծ խճուղիին մօտ գեղեցիկ տուն մը վարձեց Նէնէթ, չորս սենեակով ու պարտէզով, ինչպէս նաեւ գլխաւոր հրապարակին վրայ նայող լուսանկարիչի այս խանութը, նախկին Ժիրարտօ հաստատութիւն, հիմնուած հազար ութ հարիւր չես գիտէր քանիին: Շուտով եկան իրենց միանալ Կոստան ու Պիպի: Լծուեցան աշխատութեան: Նէնէթ ու Կոստան զբաղեցան տունով, իսկ Փիէռ ու Կոստան՝ խանութով: Լուսանկարչական այս աշխատանոցը ամէնէն կարելոր հաստատութիւնն էր այս շրջանին: Փիէռ անհրաժեշտ նորոգութիւններն ու զետեղումները ընելէ վերջ աւելի մեծ փայլ մը տուաւ անոր, իր արհեստին կատարելութեանը շնորհիւ: Հրաւեր ուղղեց տեղին ծանօթ ու կարկառուն անձերուն, ինչպէս քաղաքապետին, սրբազանին, երեսփոխանին եւ ժողովրդական դէմքերու՝ ինչպէս նամակաբերին, ժամկոչին, կայարանապետին: Այս վերջինները մանաւանդ իրենց տարազով, ամբողջ քաղաքին հետաքրքրութեան ու յափշտակութեան առարկան դարձան: Սակայն Կոստան խոնարհաբար դիտել տուաւ, որ պէտք չէր անտեսել հրշէջ գունդին հրամանատարը: Իրաւացի էր. ով որ կը ճանչնայ ֆրանսացի ազգը, գիտէ, թէ ան համազգեստաւոր երկու հոգի միայն անկեղծօրէն

Կը սիրէ. հրշէջ զինուորը եւ Dépôt Nicolas\*: Իսկ միւս կողմէ Նէնէթ կը պնդէր, թէ չի բաւեր միայն փարիզեան ճաշակով լուսանկարել, այլ պէտք է նաեւ գոհացում տալ գիւղացի գլուխներու ճաշակին եւ քաշել անճաշակ պատկերներ:

Ան ալ իրաւացի էր: Որով՝ անգամ մը երեսփոխանին պէս, անգամ մը ժամկոչին պէս, եւ գործը յառաջդիմեց:

\* \* \*

Պատուհանին ժանեակներէն ցնցուղուող կիրակի առտուան արեւը կը խաղար մահճակալին տակ, առանց փոշի հանելու, մինչ նախկին սիրահարները դեռ կը մնային վերմակներուն մէջ, ծոյլ ու զուարթ, Նէնէթ անհանդարտօրէն կը դառնար միշտ, կը կատակէր, կը խնդար, կը շարժէր: Պահ մըն ալ իր խաղէն ու տղուն գգուանքներէն տարուած, ցցուեցաւ ոտքի եւ, իր գեղեցիկ սրունքներն ու կուրծքերը ցուցնելով, անմեղօրէն հարցուց ժպիտը շրթունքին.

- Դեռ գեղեցիկ եմ, Փիէռօ. իրա՛ւ, շա՛տ. որչա՛փ, ըսէ՛, հրշափ:

Տղան պատասխանեց, դէմքը թաղելով բարձերուն մէջ.

- Քարտ փոստալի մը չափ:

Առաջին անգամն է, որ Փիէռ իր խոստումին մէջ կը թերանար: Փարիզէն մեկնելէ առաջ երդում ըրած էր, որ իր Նէնէթը իրապէս սիրելուն է, որ միայն կ'ուզէ հետեւիլ, կ'ուզէ կեանքը կապել անոր կեանքին, եւ դեռ խոստացած էր որեւէ առթիւ ակնարկութիւն մը չընել անցեալ օրերու: Մինչ հիմա, տեղափոխման, հաստատման օրերէն, առաջին շաբաթներու զբաղումներով բեռնաւոր շրջանէն յետոյ, երբ այլեւս միօրինակ դարձող կեանքին մէջ անձերը կը մնային դէմ դէմի, անհանգստութիւնը կը սկսէր: Փիէռ զգաց, որ իր բարեկամուհին վիրաւորուած էր խորապէս, որովհետեւ ան օրերով ապրեցաւ հիւանդի մը նման: Տղան զղջաց, սաստիկ զղջաց, ուզեց դարմանել, սակայն չհա-

\* Պահեստի Նիկոլայ:

մարձակեցաւ կրկին մօտենալ խնդրին: Բարեբախտաբար այս դէպքը կարծես կորսուեցաւ իրարանցումի մէջ: Այդ իրարանցումին պատճառը թութակն էր: Կոստան, որ կը բնակէր պարտէզին վրայ նայող կէս-գետնափոր սենեակը, իր մասնաւոր ելքի դուռով, Փարիզէն հետը բերած էր Brigadierն, թութակը: Պիպին այնքան երջանիկ եղաւ այդ գունագեղ եւ խօսուն թռչունով, որ վանդակը բերաւ վեր ու իրենց սենեակը կախեց: Բնականաբար Նէնէթ հակառակեցաւ. ինչպէս կարելի էր չջղայնօտիլ մէկու մը դիմաց, որ ամբողջ օրը կը կրկնէ - Rrigole Brrigadier, à bas la guerre, Rrigole Brrigadier, à bas la guerre...\*: Պիպին ոտքերը գետին զարկաւ, պոռաց, կանչեց: Նէնէթը աւելի կատղեցաւ, Փիէռ չգիտցաւ ինչ դիրք բռնել, եւ Կոստան շփոթած մնաց: Ի զոր Նէնէթ զաւակը գոհացնելու համար կ'ուզեր օր մը գոնէ այս անախորժ ներկայութիւնը տանիլ եւ յաջորդ օրը անկարելի կ'ըլլար լռել:

Առաւօտ մըն ալ վանդակը պարապ գտան: Պիպին լացը սակայն երկար չտեւեց. նոյն իրիկունն իսկ թռչունը բռնելով վերադարձուցին: Ան ուղղակի գացեր իր բանակատեղին հաստատէր էր ոստիկան զինուորներու զօրանոցին պարտէզը, եւ ամբողջ օրը պոռացեր - Rrigole, Brrigadier, à bas la guerre...: Կոստանին կաթուած պիտի իջնէր. բայց ո՛չ, չիջաւ. որովհետեւ յաջորդ օրն իսկ թռչունը մեռած գտան վանդակին մէջ: Երկու մանուկներուն վիշտը անսահման էր: Կոստան օրերով մարդու հետ չխօսեցաւ: Փիէռ կուզեր ըսել, թէ ինք այդ «ոճիր»ին մէջ որեւէ դեր չունի, բայց այս անգամ բացէիբաց Նէնէթը ամբաստանած պիտի ըլլար, որով գոհացաւ ենթասպան մխիթարելով:

- Անհոգ եղիր, Կոստան, առաջին առթիւ, որ Փարիզ այցելեմ, հատ մը կը գնեմ քեզի, աւելի գեղեցիկ, աւելի մեծ... այս անգամ ոչ թէ Brigadier, այլ Maréchal...

Դիւցազնակատակերգական այս դէպքէն վերջ Պիպին սկսաւ անվերջ սխրագործութիւններու շարք մը: Այս տղան

\* *Չուարճացիր, տասնապետ, կորչի պատերազմը...*

աղէտ մը, ճշմարիտ փորձանք մը դարձաւ իրենց գլխուն: Մէկ տարուան մէջ շատ մեծցեր էր ան, գանգուր մազերը կտրէր էին, եւ ինչպէս ամէն հասակ նետող տղայ, տգեղ-ցած էր զգալապէս: Արդէն անհանդարտ նկարագիր՝ բոլորովին անսանձելի էր դարձած, ծնողքէ, գուրգուրանքէ, ակնածանք ազդող անձերէ զուրկ բոլորած իր մանկութեանը պատճառաւ: Անկիրթ էր չափազանց, սարսափելի անառակ, չար. ոչ մէկէն կը քաշուէր եւ չէր սիրել ոչ իսկ իր մայրը: Ընդհակառակն, միշտ խօսքը կրներ Սէն-ժորժի, պահանջելով, որ զինքը դարձեալ դրկեն իրեններուն քով, Թաթային տունը: Կը փախչէր դպրոցէն, ուրիշ լակոտներու հետ կ'երթար դաշտերը, կը մտներ պարտէզներ՝ պտուղ կամ հաւկիթ գողնալու, կը հալածէր հաւեր, կը խրտչեցնէր ձիեր, կը կթէր արածող կովեր, «պարզապէս անոնց բեռը թերեւցնելու համար»: Եկեղեցիէն մոմերը հաւաքելով՝ տուն կը բերէր, կամ կ'ելլէր ջրանցքին վրայ նաւակով մը Սէն-ժորժը գտնելու: Ամէն օր գանգատներ կը տեղային Փիէռի գլխին, որ սակայն ոչինչ կրնար ընել գիտնալով, որ այս տղան կարգի բերելու միակ միջոցը խստութիւնն է, եւ ինք անկարող է այդ միջոցին դիմելու՝ նկատի առնելով իր բոլորովին օտարի հանգամանքը: Փիէռ կ'ուզէր, որ միայն Նէնէթը զբաղի իր զաւկով, եւ Նէնէթ անկարող էր, լալու չափ անկարող:

Եւ ահա օր մըն ալ այս ստամբակները\* իջեր են մինչեւ շոգեկառքի գիծին վրայ եւ ազդանշանները դարձուցեր՝ «պարզապէս իրենց պատճառաւ շոգեկառքի մը կանգ առնելուն ականատես ըլլալու» հաճոյքէն մղուած: Բարեբախտաբար աղէտ մը չպատահեցաւ, եւ, ոստիկանութիւնը անոնց տարիքը նկատելով, ծեծէ մը վերջ տղոցմէ իւրաքանչիւրը վերադարձուց իր ծնողքին, անշուշտ խիստ ծանր տուգանքի մը փոխարէն: Ա՛լ այս անգամ Փիէռ պահանջեց, որ գիշերօթիկ վարժարան մը դրկեն Պիպին: Հայուն այս անդառնալի որոշումին առջեւ Նէնէթ լացաւ,

\* Անսաստ, ըմբոստ:

սաստիկ լացաւ, եւ երկարօրէն ջանաց համոզել իր բարեկամը:

- «Ո՛հ, - կ'ըսէր ան, - ո՛հ. յանցանքը իրը չէ. էս եմ յանցաւորը, պէտք չէր, որ զինքը զրկէի մայրական հոգածութիւնէս, խնամքներէս եւ յանձնէի օտարներուն ձեռքը: Հիմա եթէ հեռացնենք մեր բոյնէն, ալ վերջնապէս կորսուած պիտի ըլլայ ինծի համար, այլեւս անունս չպիտի տայ, եւ որեւէ կապ չպիտի մնայ մեր միջեւ: Պէտք է, որ մեր գուրգուրանքով իր մէջ սէրը արծարծենք, ու կապուի մեզի: Հաւատա՛ Փիէռօ, ամէն տղայ անառակ է, ես ալ իրեն պէս էի, բայց ան կարգի կու գայ, հաւատա, որ կարգի կու գայ...»:

Այնքան ճշմարիտ էր ու խորունկ երիտասարդ մօր զգացած ցաւը, որ Փիէռ տեղի տուաւ: Տեղի տուաւ մանաւանդ անոր համար, որ ստեղծուած նեղութեան ու անհանգստութեան գլխաւոր պատճառը այս չէր բնաւ, այլ նոյն ինքն Նէնէթը:

Ո՛հ, Փիէռ չէր զղջար կնոջ հետեւած ըլլալուն, սակայն անբացատրելի անհանգստութեան մը, հոգեկան անդիմադրելի դժգոհութեան մը մէջ կը մխրճուէր հետզհետէ ալ աւելի, երբ կը տեսնէր, թէ բոլորովին տարբեր Նէնէթ մըն է դարձած իր նախկին սիրուիին: Շէնշող, կեանքով լեցուն, ինքնավստահ ու յաղթական Նէնէթը մնացած էր այն անձանօթ ճամբուն եզերքին, ջախջախուած կառքի մը ճակատագրին տակ: Այն ակնարկը, որուն առաջին անգամ հանդիպեցաւ Փիէռ՝ իր գործաւորի սենեակին չարաշուք մթաստուերին մէջ, Նէնէթին այն սպառող, հարցաքննող, հայցող ակնարկը տղուն հոգիին ճշմարիտ վերքը եղաւ: Նէնէթ սաստիկ ջղային էր դարձած եւ կը նեղուէր, կը նեղուէր ամէն բանէ: Կարծես ճիգ մը կ'ընէր ապրելու եւ շնչելու համար: Կ'ուզէր ինք անձամբ զբաղիլ իր բոյնին առօրեայ գործերով, հիմա որ ընտանիքի մը պետը կը նկատէր ինքզինքը, բայց իր միակ ձեռքը անբաւական կու գար եւ կոտորող ամէն բան, սպասուիի ամէն անճաշակութիւն զինքը կը ջղագրգռէր: Կը տառապէր մանաւանդ Պիպիով զոր կ'ուզէր սիրելի



դարձնել Փիեռին, զոր կ'ուզէր ուղղել, բայց որ իր մօր ֆիզիկական անկարողութեանը հանդէպ իսկ կը թերանար յարգանքէ: Եւ Նէնէթ իր անզօրութեան մէջ կ'ըլլար դիւրազգած, անկողինը նոր ձգած հիւանդի մը պէս փափուկ:

Փիեռ կնոջ այս վիճակը կը վերագրէր մէկ բանի՝ անդամահատուած գեղեցկութեան: Իրաւ ալ հիւանդանոցի երկար ցաւերուն մէջ նիհարցեր էր Նէնէթ, աչքերուն տակ ծալքեր սկսած էին, եւ երկու կեանքի ընկերները իրարմէ բաժնող տարիքի անջրպետը լայնցած էր: Մինչ Հայը աւելի կ'օգտուէր գաւառի մաքուր օդէն եւ կը ճառագայթէր իր երիտասարդի գեղափայլ առոյգութեանը մէջ, Նէնէթ կորսնցուցած էր արդուզարդի իր սլաքներն անգամ: Եւ անոր ակնարկը կը մեծնար, կը խորանար, լիրբ սպիին վրայ:

- Կը սիրէս զիս, Փիեռօ, առաջուան պէս կը սիրէս զիս, անկեղծօրէն:

Եւ անգամ մըն ալ իրապէս բարկացաւ Փիեռ ու պոռաց.

- Իրաւ որ կարծածիս չափ խելացի չես եղեր. հաւատա՛, որ տղայ ես եղեր... Ըսէ՛ տեսնեմ, ինչ պատճառ կար քեզի հետեւելու, եթէ երբեք չսիրէի. իմ ներկայութիւնս միայն պէտք է բաւական ըլլայ սէրս ապացուցանելու, եւ դուն պէտք չէ տարակուսիս: Կ'ուզես, որ առաջուան պէս ըլլանք. բայց վերջապէս օրեր անցած է, եւ մենք տղայ չենք. վերջապէս, վարժուեցանք իրարու եւ բնական է, որ հիմա սէրը աւելի գորով պարունակէ. եւ դեռ վերջապէս... աւելի ամուսիններ ենք, քան սիրահարներ:

Անշուշտ, Նէնէթ մտովի կ'աւելցնէր բոլոր այն խօսքերն ու պատճառաբանութիւնները, զոր տղան չէր արտասանէր բնաւ, բոլոր այն տակաւին լոյժ\* ու աղտոտ զգայութիւնները, որոնք թանձրանալով՝ զինքը հետզհետէ աւելի կը տառապեցնէին: Եւ կը կրկներ խիստ ցած ձայնով.

- Երջանիկ չես, սակայն:

Երիտասարդը կարծեց դարման մը գտած ըլլալ: Խոր-

\* Անտոակ:

հեցաւ, որ Նէնէթ վարժուած էր արագ ու գործօն կեանքին, ան որ հեւ ի հեւ գնացքին մէջ է, որ կը գտնէր իր կենդանութիւնն ու զուարթութիւնը եւ պէտք էր զինքը տան պարապ անկիւնէն առնելով կրկին նետել գոնէ մասնակի զբաղումի մը մէջ: Նէնէթ չմերժեց բնաւ, եւ լայն ու գեղեցիկ շալ մը ուսերուն նետած՝ կէսօրէ վերջերը սկսաւ կանոնաւորաբար գալ խանութ, գոնէ շարժման մէջ ըլլալու եւ շաղակրատելու: Օր մը, երբ Փիէռ բանտարկուած էր մութ սենեակին մէջ, բուռն վիճաբանութեան մը աղմուկը առաւ: Մարդ մը եկեր էր գանգատիլ Պիպիին ըրած մէկ անառակութեանը համար: Կոպիտ գիւղացիին մէկն էր ան ու կը պոռար՝ Նէնէթին ձայնը խափանելով: Աղմուկը մեծցաւ: Փիէռ ինքզինքը կ'ուտէր գոց դրան ետեւ, անկարող դուրս ելլելու: Անասունը մեկնելէ առաջ գոռաց.

- Հոս ինչ գործ ունիք. կորսուեցէք, ձեր դժոխային Փարիզը կորսուեցեք... Դուն ինչ ես, որ զաւակդ ինչ ըլլայ. եթէ շնորհքով մէկն ըլլայիր, Աստուած քեզի այդպէս չէր պատժեր, այո՛, վերը նախախնամութիւն մը կայ, ան գիտէ պատժելիք անձերը. ո՛վ գիտէ, որուն սիրտն ես այրեր, ու անիծէր են քեզի... Անիծուած, անիծուած...

Երբոր Փիէռ դուրս ելաւ, Նէնէթ մնացեր էր անշարժ, աչքերը խոշոր բացած: Մեկնեցաւ անմիջապէս եւ ա՛յլ խանութ չեկաւ:

Հակառակ ամառը սկսած ըլլալուն, հիասթափուեցան գաւառի կեանքէն: Միօրինակ էր ան եւ անհրապոյր. ժամանցի վայրեր չկային, կենդանութիւն չկար, չունէին ծանօթներ ու բարեկամներ: Իրիկուն մը պատահեցաւ, որ սինէմային մէջ իրենց ճիշդ մօտը անառակ զոյգ մը գտնուի: Անոնք այնքան անպատկառութեամբ եւ աղմուկով իրար կը գրգռէին մութին մէջ, որ Բիբին սկսաւ խնդալ ու խորհրդածութիւններ ընել: Նէնէթ քաղաքավարութեամբ խնդրեց, որ գոնէ մանուկները նկատի առնեն եւ հանդարտ մնան: Թօննէռցին արհամարհական ակնարկ մը նետելէ վերջ ըսաւ, իբրեւ թէ խօսքը ընկերուիին ուղղելով.

- Իրենք, ով գիտէ, ինչեր են ըրած Փարիզ, հոս եկեր՝ սուրբ կը կտրին...

Փիէռի կռուփը բարձրացաւ: Երեկոն սպաննուած էր:  
Բայց ահա մէկէն՝ լոյս մը:

Երբ օրուան կուրցնող արեւին եւ հեղձուցիչ տապին յաջորդող գաղջութեանը հետ երիտասարդ լուսանկարիչը իրիկուն մը տուն կը դառնար, դուռը մէկէն բացուեցաւ իր առջեւ, ու երեւցաւ Նէնէթի դէմքը՝ աննախնթաց ու անպատմելի երջանկութեամբ մը ողողուն: Անտարակոյս մեծ անակնկալ մըն էր պատահած, քանի որ խարտեաշ կինը պլլուեցաւ տղուն, սկսաւ զայն համբոյրներով ծածկել, խայտալ, սեղմուիլ, այնքան, այնքան, որ յուզումին մէջ անկարող եղաւ տղուն հարցումներուն պատասխանել:

Ո՛չ, չէր ուզէր աւարտել գիրկընդխառնումը. հեռուէն անկարելի էր խօսիլ. պէտք էր, որ մնար այսպէս, իր մազերուն գեղեցիկ փունջը անոր վիզին մէջ թաղուած, շունչը շունչին, եւ ըսէր, ըսէր, թէ մայր պիտի ըլլար:

Փիէռ մէկէն բաժնուեցաւ, ու երկուքը դէմ դէմի նոյն գերագոյն հրճուանքէն տարուած ճչացին.

- Un petit Pierrot!.. Un petit Pierrot!..\*

Առաջին անգամ ըլլալով տղան իր սիրուիին համբուրեց այնպէս, ինչպէս այն միւս գարնան, որպէս թէ տակաւին սիրոյ առաջին արարին մէջ ըլլային, որպէս թէ ըլլային 63րդ էջին վրայ: Շապիկով նետուեցաւ փողոց, շամբաները գնելով վերադարձաւ, համբուրեց Նէնէթը, գաւաթները լեցուց, համբուրեց Նէնէթը, գաւաթները պարպեցին, եւ դեռ համբուրեց Նէնէթը այսպէս, որպէսզի մանչ ըլլայ, եւ դեռ այնպէս, որպէսզի աղջիկ ըլլայ... Ամէն ճաշի ինք է, որ կնոջ պնակին մէջ միսը կը կտրատէր, որպէսզի ան կարենայ ուտել. բայց այս իրիկուն որքան գուրգուրանքով ըրաւ: Յետոյ սկսաւ ինք իր ձեռքով պատառները մէկիկ-մէկիկ կնոջ բերանը դնել: Զաւակը ծնած էր արդէն իսկ, եւ այդ զաւակը կը կոչուէր Նէնէթ: Տղուն երջանկութիւնը կը

\* Իմ փոքրիկ Պիէռոյ...

մեծնար մանաւանդ անոր համար որ, կը վերագտնէր իր նախկին սիրուիին: Յաջորդ օրը Փիէռ փափագեցաւ սիրուն անակնկալ մը ընել եւ գործը ձգելով աշխատեցաւ այդ անակնկալին իրականացման: Տօնական ճաշ մը պատրաստեցին, որուն հրաւիրուեցաւ նաեւ Կոստան: Հազիւ թէ դուռը բացուած էր այս վերջնին առջեւ, երբոր Փիէռ ու Նէնէթ մատերնին պատին ուղղած պոռագին.

- Բա բա դանը... Բա բա դանը...

Հոն, ճիշդ դիմացն էր Brigadierի մէկ մեծ ակռանտիսըմանը, ուրկէ թութակը կը փայլէր գունագեղ, լուսաճաճանչ: Կոստանի աչքերը արցունքով լեցուեցան: Ան երջանկութեամբ ցնծաց, մանաւանդ իր սիրելիները տեսնելով կենսութեան, ժպտադէմ: Եւ ալ ինչէր, ինչէր չըրաւ. վերակոչեց անցեալը, պատմեց իր ամուրիի կեանքէն խիստ գեղեցիկ մանրավէպեր, զորս մինչեւ այսօր գաղտնի էր պահած: Ըսաւ օրինակի համար, թէ ինչպէս երիտասարդութեանը ատեն իր դրանը առջեւ պոնիշները կարգի կը սպասէին եւ թէ ակելի վերջը, գաղութավայրերու մէջ, ենթասպայի կարմիր տաբատովը խափշիկ կիները կատղեցուց ցուերու պէս...

Արեւոտ օրեր: Հայուն մտածումը գնաց Պոլիս, իր ծնողքին: Ինչ պիտի մտածէր մայրիկը, երբ լսէր, թէ որդին զաւակ մըն է ունեցած, այն ալ մէկէն որ իր կինը չէ, որ ֆրանսացի է, որ անդամահատուած է, եւ որ...: «Օ՛հ, - ըսաւ Փիէռ խնդալով, - չեմ գրեր, լմնցաւ գնաց. արդէն ըրածներես ո՞րը կը գրէմ որ...»: Եւ սակայն երբոր զաւակը ծնէր, ստիպուած էին ծանուցանել տեղական իշխանութեան, եւ Փիէռ պիտի ընդունէր հայր ըլլալը: Գաղափարներու բնական զուգորդութեամբ մը առաջնորդուած, երիտասարդը խորհեցաւ, որ պահը ամենայարմարն էր Նէնէթին մեծ անակնկալը ընելու: Գրեց...

«Տիկին».

«Սէրն ինչ է չգիտէի, ձեզ տեսայ, սիրեցի. այնպէս սիրեցի, սրտանց սիրեցի, հոգւով սիրեցի եւ ձեզ, որ չեմ կրնար

ապրիլ առանց ձեզ: Որով այս երկտողովս կու գամ ձեր ձեռքը խնդրել: Կ'աղաչեմ մի՛ մերժեք զիս, իմ կինս եղեք, որպէսզի ես այլեւս չտառապիմ եւ դուք ալ սորված ըլլաք այս երգը»:

Իրիկունը, երբ որ Փիէռ տուն դարձաւ, Նէնէթը գտաւ լալագին, թիկնաթոռին մէջ կծկտած, մահուան չափ դժգոյն: Մայր պիտի չըլլար: Տղան դուրս ելաւ ու նամակը պատռեց:

\* \* \*

«Սիրելի Պետրոս,

«...այլ մանաւանդ, որովհետեւ խիստ կարեւոր բան մը ունիմ քեզի պատմելիք: Լոխումին մայրիկը Պոլիսէն եկաւ: Չեմ համարձակիր իր վիճակը նկարագրել, որովհետեւ իմ բառերս անկարող են այդքան մեծ վիշտ մը պատմելու: Պզտիկ, նիհար ջղային կին մըն է, որ բոլորովին կորսունցուցած է ինքզինքը եւ քիչ մը, քիչիկ մը գոնէ իր վիշտը ծածկելու կարողութիւնը չունի: Լեզու չի գիտէր. մարդ չունի, առողջ ալ չէ եւ, մեր պանդոկին այդ գէշ սենեակին մէջ փակուած, ամբողջ օրը կու լայ, մազերը կը փետտէ, կ'անիծէ, կ'աղօթէ: Ես է որ զինքը Շառանթոն\* տարի: Բնաւ չեմ մաղթէր, որ հետս ըլլայիր, որովհետեւ դուն ալ ինձի պէս հիւանդ պիտի վերադառնայիր տուն, եւ կեանքէդ անջնջելի պիտի մնար այդ սեւ օրը: Տեսնես ինչպէս խեղճ մայրը նետուեցաւ տղուն վիզին, ինչպէս համբուրեց, գգուեց, շոյեց, անցեալէն բաներ ըսաւ, արցունքներուն մէջ կատակներ ջանաց գտնել, անօգնուտ, անօգուտ. տղան իր մայրը չճանչցաւ: Բովի պզտիկ սեղանին վրայ սատկած ճանճ մըն է դրեր ան եւ կ'ըսէ, - «Ուզեցի ճանճին ճակատը պողպատել, եւ ան մեռաւ. ես ոճրագործ եմ. այդ կասկած չկայ, ես ոճրագործ եմ, ես, Հայկ Դիւցազն, réfugié d'origine arménienne»\*\*: Տղաքը

\* Փարիզի Սուրբ Փրկիչը կ'ակնարկուի:

\*\* Գաղթական՝ ծագումով հայ: Այսպէս էր գրուում ֆրանսաբնակ՝ Հայոց ինքնութեան թղթերում:

ամէն գիշեր կու գային, որպէսզի կինը բոլորովին առանձին չձգենք, բայց բոլորն ալ սկսան կամաց կամաց քաշուիլ: Շիտակը, կարելի ալ չէ մեղադրել. ինչպէս կրնան այսքան վիշտ տանիլ: Միայն թէ հիմա խնդիր մը կայ. կնոջ նիւթականը բնաւ տեղը չէ. քահանայ մը ճրքան դրամ կրնայ դրկել եւ այն ալ՝ ճրչափ ժամանակ: Խեղճը եկեղեցի դիմեց, որպէսզի օգնութիւն մը ընեն. «Ելիր Պոլիս գնա՛, հոս մնալդ որեւէ օգուտ չունի», - ըսէր են. սակայն ան չ'ուզէր կոր մեկնիլ. «Ես հոս պիտի մեռնիմ», - կ'ըսէ: Որով մենք է որ կ'օգնենք իրեն կրցածնուս չափ: Հիմա քեզի ալ կը գրէմ, որպէսզի եթէ ի վիճակի ես, աջակցութիւնդ չզլանաս մեր խեղճ Լոխումին մօրը: Կը ճանչնամ քեզ, եւ վստահ եմ, որ բնաւ չես մերժէր: Մէկը ըսեր է, թէ Լոխում դժբախտ սիրոյ մը պատճառաւ է, որ իր հաւասարակշռութիւնը կորսնցուց. ի զուր պնդեցի, որ այդպիսի բան չկայ: Գիտես, թէ մօր մը սիրտը ինչ է. անմիջապէս կարծեց լոյսի նշոյլ տեսնել ատոր մէջ ու աղաչեց, պաղատեցաւ: Կարելիս ըրի եւ վերջապէս գտանք աղջիկը: Սարսափելի, ճակատագրական, անգութ գեղեցկութիւն մը: Դուն, որ ֆրանսուիիները կը ճանչնաս, պէտք է ըմբռնես, թէ ինչ տեսակ աղջկան կ'ակնարկեմ: Մտիկ ըրաւ պատմութիւնս անայլայլ՝ եւ բացարձակապէս մերժեց հետերնիս Շառնաթոն գալ, պնդելով, որ որեւէ բան չէ ունեցած այդ տղուն հետ:

«Տեսնէիր դժբախտ մօր աղաչանքը. հայերէնով, տաճկերէնով կ'ուզէր օրհնութիւն կարդալ ու համոզել: Վերջապէս պոռնիկը հաւանեցաւ եւ ժամադրութիւնը որոշեցինք: Չեկաւ սակայն: Յետոյ է, որ իմացայ, թէ սկսեր է «արհեստը» կիրարկել բացէ ի բաց, առանց արտօնագիր ունենալու եւ ձերբակալեր են: Հիմա պիտի սպասենք, որ ազատ արձակուի եւ...»

- Օ՛հ, - պոռաց Փիէռ, Աստուծո՛յ սիրուն, Աստուծո՛յ սիրուն, հանգիստ ձգեցէք զիս...

Այդ ճիշը կրցաւ արցունքներ կեցնել, բայց խեղդուկ

ծայնը տղուն յուզումը մատնեց: Յետոյ Փիէռ, սեղանին վրայ դրամատոմսեր նետելով, ըսաւ.

- Կոստան, վաղն առաւօտ իսկ ասոնք վճարագիրով մը սա հասցէին դրկէ եւ ես ա՛լ նամակ չեմ ուզէր. ալ ո՛րեւէ նամակի պէտք չունիմ. իմ հոգերս ինձի կը բաւեն:

Իր միակ յոգն էր Նէնէթը: Յոգնակի՛, քանի որ մեծ հոգ մը: Անհանգստութիւնը վերսկսած էր իր յառաջխաղացումին, առաջուրնէ աւելի նեղ եւ աւելի մութ նրբանցքներէ: Ատոր մէջ երկուքն ալ իրենց յանցանքի բաժինը ունէին: Նախ Նէնէթ իր ջղայնութեամբ անկարող կը մնար կեղծելու, անտարբեր, ինքնավստահ ու զուարթ ձեւանալու. իսկ երիտասարդը կը կարծէր հալածուիլ կնոջ դժգոհ, սպառող, տարակոյսով լեցուն ակնարկէն: Եւ փոխանակ հակազդելու կը մնար կրաւորական, յուսալով, որ ան պիտի վարժուի իր վիճակին, պիտի համակերպի եւ նախկին դիրակեցութիւնը պիտի վերագտնէ: Եւ տղան կը լռէր, բանի մը չէր ուզէր խառնուիլ, գիշերը, ճաշէն վերջ, կ'անցնէր անթելի գործիքին առջեւ, Նէնէթը թողլով առանձին, երկար, անվերջանալի ժամեր: Իրիկուն մըն ալ գործիքը խանգարուած գտաւ: Ըսին, որ Պիպին խառներ ու արէր է զայն: Բայց ինչո՞ւ մէկէն կնոջ շրթները դողացին ծամածռութեան մը մէջ. ինչո՞ւ ան փղծկեցաւ լացով: Նէնէթն է, որ զայն կոտրած էր դիտումնաւոր կերպով: Երիտասարդը ըմբռնեց:

Բայց հակառակ յաջորդ օրերուն մէջ տղուն կատարած ճիգին, կարելի չեղաւ տիրող ծանր մթնոլորտը պայծառացնել: Ատենը անգամ մը թունաւորիչ դէպքեր երկու երիտասարդները իրարմէ բաժնեցին:

- Պիտի ըսեմ, Պիպի, մայրիկիդ պիտի ըսեմ, - կը սպառնար Կոստան երեկոյ մը, տան դուռին առջեւ: Մանուկը, Փիէռին գալը չնշմարելով, պատասխանեց.

- Ես մայրիկէս չեմ վախնար որ. անոր մէկ ձեռքը իմ գրպանս է...

Եւ այս ըսած ատեն ձեռքը կը զարնէր տաբատի գրպանին: Առաջին անգամ ըլլալով՝ Փիէռ սարսափելիօրէն ձե-

ծեց զայն: Եւ որովհետեւ, չէր ալ ուզէր Նէնէթին ըսել իր քարկութեան պատճառը...

Ծաղիկներով ու պտուղներով բեռնաւոր, ժպտադէմ եւ գոհ՝ տուն եկաւ երիտասարդը: Ա՛լ այս երեկոյ քան մը չպիտի պատահէր: Վճռած էր երջանիկ ըլլալ եւ ուժով ուժով համբուրեց իր սիրուիին: Միայն թէ նամակ մը եւս կար:

- Պիտի պատռեմ, - ըսաւ Նէնէթ, - պիտի պատռեմ, դուն չըսիր, թէ ա՛լ նամակի պէտք չունիս: Ամէն անգամուան արտաքին պատճառներ կու գան կոր մեր հանգիստը խռովել:

Բայց որովհետեւ չէր կրնար մէկ ձեռքով պատռել, խաճաւ նամակը ու քաշեց: Ծանրաբեռնուած մեծ պահարան մըն էր ան, որ կը դիմադրէր: Վերջապէս աղմուկով պատռուեցաւ, ու մէջէն վարդագոյն ժապաւէնի կտոր մը ինկաւ գետին: Տղան անմիջապէս խլեց կնոջ ձեռքէն ամէն քան, բացաւ կտորները, քով քովի դրաւ... իր գրած մէկ քանի երկտողները, երկու լուսանկար, պզտիկ յիշատակներ... Մէջի պահարանին վրայ իրեն ծանօթ ձեռք մը գրած էր. «Մահուընէս վերջ վերադարձնել Փիէռին, Հրաչին միջոցաւ»:

Փթիթ Լիզը ա՛լ չկար:

.....

- Եւ այն ատեն, «Կապոյտ»ները ճանճերու պէս սկսան իյնալ շուրջս: Մեր հրամանատարը սրիկային, խայտառակին մէկն էր. պէտք չէր որ մեզ այդ աւերուած գիւղը նետեր հրետանիին գործողութենէն առաջ: Աւերակներու մէջ թաքնուած գնդացիները մեզ կը լափէին. միայն ձեռնառումբերով կը կռուէինք: Եւ այն ատեն ես գետին ինկայ. երեք տեղէ զարնուած էի: Հոն է, որ մատս թռաւ: Ամէնէն գէշը այն էր, որ մէկ աչքս արիւն էր գացած, եւ լաւ չէի տեսներ: Կարելի չէր այդ դժոխքին մէջ մնալ. ամբողջ հողը կը ցնցուէր, սկսայ քաշկռտուիլ: Տեսայ մառանի մը պզտիկ ծակը եւ ներս սողոսկեցայ. արդէն ուրիշ վիրաւորներ եկեր ու մեռեր



էին հոն: Եւ այն ատեն, լսեցի որ քովս կը խօսէին. տկար լոյսին մեզ կը տեսնուէր երկու հոգի. Ֆրանսացի մը եւ «պոշ» մը. ֆրանսացին զինուած էր, իսկ միւսը՝ ոչ. այդ կը նշանակէ, թէ մեր ընկերը գերի էր բռնած զայն եւ կը սպասէր յարձակողականին աւարտելուն, որպէսզի իր աւարը մեր գիծերը տանի: Եւ այն ատեն տարօրինակ խօսակցութիւն մը ծայր տուաւ: Ֆրանսացին առաջարկեց, որ փոխանակ զայն մեր գիծերը տանելու, ինք, ֆրանսացին ըլլայ գերի, եւ «Ֆռից»ը զինքը փոխադրէ գերմանական ճակատը: «Ո՛չ, ըսաւ Գերմանը, դուն զիս գերի բռնեցիր եւ պէտք է, որ տանիս. երեք տարի է, որ ես այս վայրկեանին կը սպասէի»: «Իսկ ես չորս տարի է, որ կը կռուիմ, - պատասխանեց «Կապոյտը», - ա՛լ կ'ուզեմ ազատիլ, ազատէ՛ զիս, երկու զաւակ ունիմ...» Մէկը միւսին կ'աղաչէր, կը պաղատէր, երկուքն ալ կ'ուզէին փրկուիլ. առաջինը կ'ըսէր, թէ զաւակ ունի, երկրորդը կ'աւելցնէր, թէ մայր ունի...

Նէնէթը գլուխը դարձուց Փիէռին եւ դանդաղօրէն ըսաւ.  
- Ճիշդ մեզի պէս...

Բարեբախտաբար, Կոստան այնքան փարած էր իր պատմութեան որ ոչինչ կռահեց, իսկ Փիէռ՝ արդէն տխուր՝ այդ չարաշուք տարիներու վերակոչումով, բոլորովին վիրաւորուեցաւ կնոջ ըրած դառն ակնարկութենէն: Տղան աթոռը դարձուց եւ անթելին սաղաւարտը դնելով՝ սկսաւ ունկնդրել: Ճիշդ քովէն մէկը կ'արտասանէր. «Trop Vain pour en pleurer, trop triste pour en rire»\*: Անմիջապէս անհիւները դարձուց եւ ուրիշ կայան մը առաւ. այս անգամ կրցաւ հանդարտօրէն լռել, որովհետեւ ձայնը կ'ըսէր.

- «Կով. -1295 հատ ժամանած, 90 հատ անվաճառ: Էքստռա 8. 90, ա. տեսակ 8. 00, բ. տեսակ 6. 60, գ. տեսակ 5, 40: Եզ. - 2589 հատ ժամանած, 98 հատ անվաճառ: Էքստռա 806715000»:

Երբոր Կոստան գնաց պառկելու, Նէնէթ ըսաւ.

\* Շատ անմիտ (ունայն) արտասուելու համար, շատ տխուր՝ ծիծաղելու համար:

- Փիէռ, չեմ ուզեր, որ այդ աղջկանը երես տաս եւ ան ամէն օր խանութ գայ, չեմ ուզեր. Ան յիմարին, թեթեւօղիկին մէկն է. կրնայ քու կատակներդ լուրջի առնել: Ես արդէն բնաւ այդ տեսակ ապուշ արարածներէն չեմ ախորժիր. ամէնէն աւելի վտանգաւորները անոնք են:

Կնոջ սուր հոտառութիւնը վտանգ մըն էր նախազգացած: Լուսանկարչատան քովի հանդերձավաճառին քեռաղջիկը Լիոնէն եկած էր հոս, արձակուրդի ամիսները անցընելու: Նէնէթ չէր չափազանցէր բնաւ. այդ Կապին խիստ թեթեւօղիկ էր, հակառակ քսանը անցուցած ըլլալուն՝ չափազանց տղայամիտ, եւ իր արդուզարդէն, շարժումներէն ու աչքերէն դատելով՝ անսանձելիօրէն կրթոտ: Բայց գեղեցիկ էր ան, մարմնով հարուստ եւ միշտ երգող, ցատկոտող, խնդացող: Ամէն օր, եւ երբեմն ալ օրը քանի մը անգամ որեւէ բան մը պատճառ կ'ընէր գալու համար Փիէռին, եւ ճպուռի մը պէս կը խօսէր, կը խնդար, ձեռքը կը քսէր հագուստին, որպէսզի թափանցիկ կերպասը աւելի լաւ կաղապարուի կուրծքին վրայ, ականարկը կը խորացնէր, կը խաճներ շրթները, մէկ խօսքով երիտասարդը կը ցանկար: Կ'ըսէր. - «Յաւով պիտի մէկնիմ Թօննէռէն, եթէ պէտք ըլլայ դարձեալ պիտի գամ. նոյնիսկ կարելիս պիտի ընեմ վերջապէս մնալու համար հոս, եթէ ստիպեն...»: Հայը միշտ կը խնդար եւ բնաւ առիթը չէր փախցնէր զայն ծաղրելու: Բայց հիմա, Նէնէթին ըրած այս դիտողութիւնը զինքը բարկացուց: «Իր ամէն բանը մոռցաւ եւ սկսաւ իմ ըրածներս անվայել գտնել», - խորհեցաւ Փիէռ եւ փոխանակ փակելու խնդիր մը, որ զերծ էր որեւէ մեղաւոր հանգամանքէ, պատասխանեց խստօրէն: Սաստիկ վիճեցան:

Երկու օր վերջ հանդերձավաճառը երիտասարդ լուսանկարիչը կանչեց եւ խնդրեց, որ գոնէ իր միջնորդութիւնը չմերժէ եւ հաճի երթալ հարսանեկան խմբանկարը առնել: Փիէռ չէր ընդունած այդ հրաւերը, տեղի հեռաւորութիւնն ու ժամանակի կորուստը պատրուակելով: Բայց հանդերձավաճառը կ'ուզէր օգտակար ըլլալ հարսնետորներ-

րուն, որոնք իր գլխաւոր յաճախորդներն էին, եւ կառք մը Փիէռին տրամադրութեանը տակ դրաւ:

- Բայց ես երբեք կառք չեմ վարած, - առարկեց Փիէռ: - Կրնայ արկած մը պատահիլ:

- Ես վարել գիտեմ, - պատասխանեց Կապի. - միասին կ'երթանք:

Այդպէս ալ ըրին որոշուած օրը: Չորս հոգինոց գեղեցիկ կառք մըն էր, նոր ու թեթեւ: Գործիքները ետեւի կողմը զետեղելէ վերջ, Փիէռ նստաւ երիտասարդ աղջկան քով ու ճամբայ ելան: Ժամուան մը տեղ ունէին երթալիք: Յարդէ լայնեզր գլխարկ մը դրած էր Կապի, վարդագոյն թեթեւ զգեստ մը իրանը կը գրկէր, կուրծքերուն վրայ նմանելով՝ հասուն պտուղի մը ամանին, եւ խարազանը կը շաչէր անդադար ձիուն ականջներուն վրայ: Քաղաքէն դուրս ելլելուն պէս, Կապի, որ այդ կառքով բազմաթիւ անգամներ շրջակայքը պտտած ըլլալուն ծանօթ էր տեղին, երկարօրէն նկարագրեց փոխուող հորիզոնները, պուրակները եւ հեռաւոր զգայնոտութիւնները: Եւ որովհետեւ Փիէռ կը լռէր, բաւականացաւ գեղգեղելով:

Վերջապէս հասան ընդարձակ եւ հարուստ ագարակ մը: Իրենց ժամանումը մեծ իրարանցում պատճառեց, խոզեր եւ հաւեղէններ փախան, իսկ փեսային վերջին գաւաթը մոլոր գնաց: Հարսնետրները անվերջանալի շփոթութիւններէ, երթալ-գալերէ յետոյ, վերջապէս հաւաքուեցան դարպասին մէջ: Բերին աթոռներ, նստարաններ, տակառներ, սակառներ, եւ ամէն ոք գրաւեց իր բարձունքը: Փեսան զօրագունդի մը պէս երկար էր, իսկ հարսը գունդի մը պէս կլոր: Փեսան նոյն առաւօտն իսկ ածիլուած էր, իսկ հարսը ո՛չ. անոր վերին շրթունքը երեք օրէ ի վեր սգաւոր էր: Նոր թեզանիքներէ դուրս կ'ելլէին կոշտ ձեռքեր, օձիքի անվարժ կզակներ կ'անշարժանային ծիծաղելիութեան մը մէջ, այտերու վրայ բրնձափոշին շատ գէշ էր քսուած, գոհարեղէնները ամբողջութեամբ երշիկ կը հոտէին, եւ չկար ոչ իսկ մէկ հոգի, որ կարենար բնականոն կերպով քալել,

նոր կօշիկները ոտքին: Կ'արժէր Փիէռին վիճակը տեսնել, ճնճղուկի մը պէս կը ցատկոտէր անդադար, կարգի դնելու, համար այս զուարճութիւնը: Իրաւ ալ դիւրին չէր լուսանկարել 67 հոգի, առանց հաշուելու երեք շուն, կատու մը, երկու բադ, եւ վերը, տանիքին ծեպերուն վրայ շարուած աղաւնիներ: Ու ճիշդ այն պահուն, որ քաուչուէ տանձը պիտի սեղմուէր Փիէռին ափին մէջ, սելուկիկ հորթ մը մեծ աղմուկով սլացաւ գործիքին վրայ: Բոլոր բերանները միանգամայն պռռացին. «Նուառօտ, Նուառօտ»\*: Փեսան անմիջապէս դուրս նետուեցաւ իր լուսանկարէն եւ կենդանին համբոյրով մը անշարժացուց, մինչ հարսը կը կարմրէր, կը մարմրէր...

Երբոր Փիէռ պատուասիրութիւններէն յետոյ ուզեց մեկնիլ, ի զուր փնտռեց Կապին: Վերջապէս գտաւ զայն հեռաւոր անկիւն մը կարմիր թաշկինակ մը վիզին շուրջ, երիտասարդներուն չարլսթօն սորվեցնելու զբաղած: Կապին գլուխը բռնած էր: Պատրաստուեցան մեկնիլ: Բայց ճիշդ այն պահուն, որ Փիէռ իր նստարանը պիտի բարձրանար, ճեփճերմակ հաւ մը դուրս թռաւ կառքէն մեծ աղմուկով ու իր տեղը ձգեց տաքուկ հաւկիթ մը...

Նախ խօլական արշաւի մը սկսաւ կառքը, յետոյ պրկուող սանձերը ձիուն գնացքը դանդաղեցուցին: Ֆրանսուհին սկսաւ կռթնիլ Հայուն, ակնարկը խորացնել, յետոյ երգել նուաղկոտ սիրոյ մեղեդիներ: Զմայլելի պահ մը, կանաչութիւն, անհատնում դաշտագետիներ, ջուրի ճամբայ մը, քանի մը դղեակ եւ վերջալոյսը, որ կ'իջնէ: Բայց որովհետեւ երիտասարդը շուտով կ'ուզեր Թօննէռ դառնալ, Կապի դիմեց խորամանկութեան: Ճամբուն ստուերոտ մէկ անկիւնը հասնելուն պէս, առանց յայտնի ընելու, մէկէն անիւները սեղմեց: Եւ մինչ Փիէռ վար կը ցատկէր նայելու, թէ ինչ էր կոտրած, Ֆրանսուհին իր նստարանին տակէն դուրս քաշեց տուփ մը, զայն բանալով վերածեց ձայնագիրի եւ սկսաւ գեղեցիկ վալս մը դարձնել:

\* Հորթիկ (հորթի փաղաքշական անուն):

Փիէռ ուժը չունեցաւ մերժելու եւ իրար պլլուած պարե-  
ցին ամայի ճամբուն վրայ, տերեւներու շուքին հետ: Վալ-  
սին յաջորդեց չարլսթօն մը. արտառոց, բարբարոս չարլս-  
թօն մը. հաչոց, ոռնոց, որոտում, թմբուկ... այնքան, որ մէ-  
կէն ձին խրտչեցաւ ու իր կարթերուն ամբողջ ուժովը սկսաւ  
սլանալ ճամբուն վրայ: Իզուր երիտասարդները կը վազէին  
ետեւէն. կարելի չէր հասնիր: Վտանգ կար. վարէն կու գա-  
յին երկու հեծելանւորդներ. քահանայ մը եւ նամակաբեր  
մը, որոնք կը խօսէին օրուան նիւթերուն, այսինքն ընդ-  
հանուր պատերազմին վրայ: Նամակաբերը կրցաւ ատե-  
նին վար նետուիլ եւ խոյանալ ձիուն սանձերուն, բայց քա-  
հանան, բախումէ մը խուսափելու իր ճիգին մէջ ճամբուն  
եզերքի փոսը ինկաւ: Մինչ Փիէռ ու Կապի կ'երթային կղե-  
րականին օգնութեան, որուն ձեռքը միայն քիչ մը արհւնած  
էր, նամակաբերը սկսաւ ձին հարուածել: Օ՛հ, այո: Պատե-  
րազմը շատ աղետաբեր եղաւ ձիերուն...

.....

Կոստան իրենց ընդառաջ եկաւ ու կառքին մէջէն գոր-  
ծիքները վերցնելով՝ տարաւ ներս: Նէնէթ, որ յօնքերը  
պռստած էր, մէկէն ըսաւ.

- Որո՞ւնն է այս կրամաֆոնը, ինչո՞ւ հողով լեցուէր է...  
սկաւառակներն ալ կոտրեր եք...

Տղան դեռ կը խնդար պատահած դէպքին վրայ,  
քրտինքները սրբելով: Թաշկինակին վրայի արեան հետ-  
քերը կնոջ աչքերէն չվրիպեցան: Տեղացող հարցումներուն  
տակ երիտասարդին խնդուքը աւելցաւ, եւ ան անմեղօրէն  
պատմեց դէպքը ամբողջութեամբ:

Սաստիկ, սաստիկ վիճեցան:

\* \* \*

- Արձակուրդս շատոնց է որ լրացած է, բայց ես չէի ու-

զէր Թօննէռէն մեկնիլ. չէի կրնար. Բայց հիմա ալ ստիպու-  
ած եմ. շաբթուս վերջ պիտի վերադառնամ Լիոն: Միայն  
թէ կը փափագիմ, որ զիս անգամ մը ես լուսանկարէք...  
այս անգամ տեքուրէ:

Փիէռ ոխ ունէր Կապիին հանդէպ, իր ու Նէնէթին միջեւ  
գժտութիւն մը սերմանած ըլլալուն համար: Իրեն բոլորո-  
վին անտանելի էին այժմ թեթեւաբարոյ աղջկան ամէն մէկ  
շարժումները, սակայն իր կնոջ հրամանին տակ չգտնուելու  
մտածումով, անկախ եւ ուզածը ընելու կարող մէկը ձեւա-  
նալու տղայական հպարտութեամբ, Փիէռ զուարթ ձեւացաւ  
եւ Կապին առաջնորդեց գործողութեան սրահ: Արդուզար-  
դի խուցին մէջ երիտասարդ աղջիկը պատրաստուեցաւ:  
Մինչ Փիէռ գլուխը սեւ կտաւին տակ թաղած՝ գործիքին  
տեսողութիւնը կը ճշդէր, մէկէն ապակիին վրայ երեւցաւ -  
անշուշտ շրջուած դիրքով - Կապին. վենետիկեան սեւ դի-  
մակ մը աչքերուն, եւ ամբողջութեամբ մերկ: Անգիտակցա-  
բար ստացած էր ճիշդ այն դիրքը, որ Նէնէթինն էր, ան  
չարաշուք *ակռանտիսըմանին* վրայ:

Այնքան ուժով, որ մեքենան պիտի տապալէր, Փիէռ  
գլուխը քաշեց գործիքէն դուրս, եւ քաուչուէ տանձը գետին  
շարտելով, ըսաւ մէկէն շառագունած.

- Կ'աղաչեմ, օրհորդ, հագուեցէք եւ անմիջապէս: Ատի-  
կայ իմ մասնագիտութիւնս չէ բնաւ:

Երբոր Փիէռ անցաւ խանութ, դէմ դիմաց եկաւ Նէնէ-  
թին հետ: Քանի մը օր է, որ ան վերսկսած էր խանութ գալ,  
յարափոփոխ պահու մը: Երիտասարդը պլլուեցաւ կնոջ ու  
ըսաւ.

- Օ՛, Նէնէթ, Նէնէթ, հաւատա՛, որ դուն աւելի կ'արժես.  
իրա՛ւ, որ դուն բոլորէն ալ աւելի կ'արժես...

Իրիկունը, հակառակ եղած խոստովանութիւններուն,  
հակառակ նոյնիսկ անոր, որ Նէնէթ սրտանց համոզու-  
ած կը թուէր անդարմանելին պատահած չըլլալուն, չուզեց  
մխիթարուիր

Մինչ Փիէռ անդադար կը դառնար անկողնին մէջ անքուն, Նէնէթ մնաց. երկար, երկար ժամեր լուսնկայի մեռելական լոյսին տակ, թիկնաթռռին մէկ անկիւնը կծկտած: Երկուքն ալ դժբախտ էին:

.....

- Allons! Նէնէթ, ելիր, որ համբուրեմ քեզ, ալ քիթ մի' ընէր: Փարիզ պիտի երթամ, Հրաչին հարսանիքին ներկայ ըլլալու. 3-4 օրէն աւելի պիտի չբացակայիմ. թող որ արդէն կը գրէմ քեզ: Հաւատա՛, որ խորհածս ճիշդ է. լաւ է, որ քիչ մը ատեն անցնի, սա մթնոլորտը մաքրուի եւ վերադարձիս երկուքս ալ ուրախ նետուինք իրարու: Allons! ելիր, որ համբուրեմ:

Նէնէթ չպատասխանեց բնաւ: Ուսերը ցնցեց միայն մերժումով եւ աւելի թաղուեցաւ վերմակին տակ:

Փիէռ մեկնեցաւ:

Երբոր վագոնին պատուհանէն ձեռքը դուրս երկարեց Կոստանին մնաս բարով ըսելու, տեսաւ, որ անոր աչքերը արցունքով լեցուէր էին:

- Խե՛նթ էք, ինչ էք, - պոռաց Փիէռ, - ի՛նչ կ'ըլլաք կոր, չմեռա՛յ, չկորսուեցա՛յ: 4-5 օրէն պիտի վերադառնամ. գոնէ դուն տղայ մի ըլլար: Քեզ տեսնեմ, Կոստան, տունին պաշտպանութիւնը քեզի կը յանձնեմ. լաւ հսկէ ամէն բանի. նայէ, որ ժաննը բանի մը պէտք չունենայ եւ անտեղի մտածումներով ինքզինքը չտանջէ...

- Մէտսիէօ Փիէռ, տիկինը երջանիկ չէ...- կակազեց Կոստան:

Բարեբախտաբար շոգեկառքը ճամբայ ելած էր արդէն, եւ երիտասարդը պատասխան մը գտնելու հոգէն փրկուեցաւ:

Իր անկիւնը անցնելուն պէս, Պետրոս ուզեց անմիջապէս վերագտնել իր զուարթութիւնը եւ փախուստը շնչել ազատօրէն: Ու նկատելով, որ պէտք եղած արագութեամբ

Թօննէռէն չէր հեռանար, ձեռքի պահարանը պատռեց սկսաւ կարդալ երջանիկ:

«Անուշիկ չոճոխս իմին... Չէս ըսէր, առջի օր կատունիս հորը ինկաւ. ալ քաշած նեղութիւնս տեղ մը չկայ... Չէվիրմէի անուշը աղուոր տուփի մը մէջ դրի եւ հայրիկդ առջի օր փոստա տարաւ. եթէ այս անգամ ալ կորսուի, ալ խէլքի գալիք բան է. իրաւ որ շատ պիտի ցաւիմ: Աղէկ նայէ, մէջէն բաղնիքի քեսէ մը պիտի ելլէ. քեզի համար կարեցի, մասնաւոր, տոկուն կերպասէ... իմին փաշայ մանչս, իմին...»:

## 2

Կէսօրուան թոհուրոհին մէջ երկու երիտասարդներ ուժով ուժով համբուրուեցան ու յետոյ նետուեցան թաքսի: Հրաչ, իր զարմացումը եւ ուրախութիւնը չկարենալով արտայայտել, կը կրկներ անդադար.

- Վայ մաւաշալլահ, պէյիմ. ձեզի տեսնողը ինչ կ'ըլլայ... Այս ինչ անակնկալ: Շիտակը Պետրոս, գրեցի քեզ, բայց բնաւ չէի յուսար, որ հրաւէրս կ'ընդունիս եւ կու գաս: Էյ, հիմա՛ քէյֆերնիս կատարեալ պիտի ըլլայ...

Պետրոս անմիջապէս զայն լռեցուց եւ կատակով լեցուն խստութեամբ մը ըսաւ.

- Ծօ Հրաչ, ըսէ՛ նայիմ, աս քու ըրածդ կը վայլէ, նորէն չոճոխ մը ունեցեր ես: Անպատճառ դարձեալ *պոնիշէ* մըն է... Ծօ, աս ինչ է քու բռնած ճամբադ. չէս ամչնար կոր...

- Մի՛ ըսէր, Պետրոս, *կիւճիս* կու գայ: Հաւատա՛, որ այս անգամուանը պոնիշ չէ. ընդհակառակն, անուշիկ, զմայլելի, պատուական պուպրիկ մը. եւ շատ շնորհքով ընտանիքի աղջիկ: Զաւակն ալ էս ուզեցի որ ունենանք, որպէսզի իր ծնողքը մեր ամուսնութեանը հաւանի: Հաւատա՛, Պետրոս, բնաւ ան քու կարծած թերեւտլիկներէդ չէ, շատ դժուարամատչելի. ամիսներով ետեւէն եմ վազեր, որպէսզի



զինքը համոզեմ: Բայց հիմա ալ երջանիկ եմ, երջանիկ: Քիչ մը վերջ դուն ալ պիտի տեսնես, թէ ինչ աղջիկ է...

- Աղէկ, աղէկ, հասկցայ. գէշ տեսակէն բռնուէր ես: Հիմա դուն սա ըսէ տեսնեմ, երբ կնքեցիք պզտիկդ:

- Կնոնք մի, էյ, միայն այդ էր պակաս: Շաբաթ կեսօրէ վերջ պիտի ամուսնանանք, որպէսզի մանչուս ծնունդը օրինաւոր ըլլայ, այդքան:

- Քաղաքապետարանի արարողութենէն վերջ պիտի երթանք եկեղեցի, պսակադրութեան համար:

- Պսակադրութիւն, եկեղեցի... Eh bien, mon vieux Pierre!\*, դուն տակաւին Պոլիսը չես մոռցեր: Մոռցիր, սիրելիս, մոռցիր, տէրտէր, շարական, վարդապետ...

- Էյ, աղէկ եա. առանց կնունքի եւ հարսանիքի, մեր քահանաները ինչ կ'ուզես որ ընեն:

- Բե՛ժ, այդ ծոյլերը պիտի մտածէի: Եթէ կ'ուզեն բան մը ընել, թող ֆրանսացի կրօնականներուն պէս pâte dentifrice\*\* կամ bénédictine\*\*\* պատրաստեն: Եւ կամ թէ... եւ կամ թէ թող Աստուածաշունչը գրաբարի թարգմանեն...\*\*\*\*

.....

Հազիւ ֆրանսուհին դուռը բացած էր, եւ Հրաչը կը պատրաստուէր երկուքը ներկայացնել իրարու, երբոր Պետրոսի երակներուն մէջ արիւնը վայրկենապէս սառեցաւ: Կարծես թէ ահաւոր լախտի հարուած մը ընդունած էր գլխին: Չէր ուզէր, չէր կրնար աչքերուն հաւատալ, սակայն բացարձակապէս անկարող էր որեւէ շարժում ընելու, դէմքին վրայ որեւէ ժպիտ ուրուագծեղու: Ինքզինքը պիտի մատնէր: Երիտասարդ կինը սակայն, որ մանրարոպէ

\* Դէ, ծերուկս, Պիէռո, լաւ:

\*\* Արամի ըմպելի դեղ:

\*\*\* Խմիչքի տեսակ:

\*\*\*\* Հաւանաբար նկատի ունի արեւմտահայերէնի, քանի որ «Աստուածաշունչ»ի գրաբար թարգմանութիւններ կան եւ Հրաչը անտեղեակ է...

մը իսկ իր պաղարիւնութիւնը չէր կորսնցուցած, խնդալով ըսաւ.

- Վստահ էի, որ բարեկամդ զիս պիտի ճանչնայ. քանի մը անգամներ իր պանդոկին սանդուխներուն վրայ հանդիպած ենք իրարու...

- Հիմա հասկցամ, mon vieux...! ուզեցի անակնկալ մը ընել քեզ եւ թաքսիին մէջ բան մը չըսի: Գիտէի, թէ պիտի ճանչնայիր Սիւզանս, որ դիմացի սենեակիդ Գանատացի բանաստեղծին կու գար անգլերէնի աս առնել, շաբաթը երկու կամ երեք անգամ: Հիմա ճանչցամ...

Այո՛, Պետրոս կը ճանչնար, շատ լաւ կը ճանչնար այս աղջիկը, Գանատացիին *սդերիներուն* նախկին հոմանուհին, որ նոյնիսկ անգամ մը իր հրաւերն ալ չէր մերժած ու եկած էր սենեակ, թող տալով, որ Պետրոս ուզածին պէս...

Մէկ անգամ մը միայն Սիւզան իր ականարկը գամեց լուսանկարիչին աչքերուն: Կարծես ըսել կ'ուզեր. «Յաղթականը ես եմ. երբեք, երբեք պիտի չհամարձակիս ոչ իսկ բառ մը արտասանել»: Հակառակ անոր, որ կատարեալ հայիոյանք մըն էր կնոջ այս անյողդողդ ինքնավստահութիւնը եւ անվախութիւնը, Պետրոս չափազանց գոհ ու զուարթ ձեւացաւ: Հրաչին հետ քովի սենեակը անցան, մանուկը տեսնելու: Խիստ գեղեցիկ մանչուկ մըն էր ան եւ կը կոչուէր Ռընէ:

- Չէի՞ր կրնար հայերէն անուն մը դնել, - ըսաւ Պետրոս՝ դժգոհութիւնը ալ չկրնալով ծածկել:

- Չ'ըլլար, ճանըմ, - պատասխանեց միւսը, - Ռընէ, Սիւզանիս հօրը անունն է: Նայէ՛, այս վարագոյրները եւ մէջտեղի լամբարը ամբողջ ան նուիրեց, եթէ հիմա անունը փոխենք, շատ պաղ կը փախի...

Պէտք է խոստովանիլ սակայն, որ խիստ լաւ տանտիկին մըն էր եղած Սիւզան: Մաքուր, ճաշակաւոր, անթերի յարկաբաժին մըն էին կահաւորած: Հակառակ իր փափագին՝ Պետրոս չկրցաւ օձիքը ազատել: Մասնաւոր անկողին

մը շտկեցին, ստիպելով, որ մինչեւ Թօննէն մեկնիլը իրենց մնայ: Եւ այնքան երջանիկ էր Հրաչ, այնքան գոհ ու զուարթ Սիւզան, որ Պետրոս մեղկօրէն ինքզինքը մոռցաւ սահող օրերու ժպիտին մէջ: Ան նոյնիսկ մոռցաւ նախանձիլ:

Շաբաթ օր տեղի ունեցաւ հարսանեկան արարողութիւնը: Այդ օրուան պատահարներէն մէկը գոնէ արժանի է յիշատակութեան: Քաղաքապետարանէն ելլելէ վերջ, գացին Պիւտ-Շոմոնի պարտէզին դիմացի հանրաժանօթ ճաշարանը: Խնջոյքի զուարճութիւններուն մէջ, երբ գլուխները պէտք եղածին չափ տաքցած էին, Հրաչ կանգնեցաւ սեղանին գլուխը, ձեռքի բաժակը լեցուն՝ եւ ըսաւ.

- Հիմա ձեզի պատմեմ, թէ ինչպէս ծանօթացայ Սիւզանիս: Գարնան կիրակի օր մը Սուրէնին հետ գացինք Փիէռին, որպէսզի զայն հետերնիս առնելով Սէն-Քլու պտոյտ մը ընենք: Միասին տարած էինք ուտելիքներ, բայց պարապը ելանք: Հակառակ բանալին վարը չըլլալուն, սենեակը մարդ չկար: Մենք ալ չուզեցինք հինգ յարկ վար իջնել եւ դուռին առջեւ նստելով սկսանք ուտել: Ճաշակեցինք, երգեցինք, կատակեցինք, մինչեւ որ դիմացէն ուրիշ դուռ մը բացուելով երեւցաւ... Սիւզան...

Ճաղատ, կախ բեղերով ու չափազանց գէր մարդ մը, որ Սիւզանին վարագոյրները նուիրող հայրն էր, մէկէն ծռեցաւ իր աղջկան պոռաց, մետասաներորդ ժամու խստութեամբ.

- Այդ պանդոկը դուն ինչ գործ ունէիր:

- Բայց, Բաբա, շատ լաւ գիտես, թէ անգլերէնի դաս կ'առնէի...

- Օ՛, դաս, այո՛, անհրաժեշտ բան է:

Այն ատեն Պետրոսն է, որ իր գեղեցիկ ձայնը հնչեցուց.

- Եւ հիմա թոյլատրեցէք, որ ես ալ իմ կարգիս իմ կարճ պատմութիւնս ընեմ: Գարնան կիրակի կէսօր մը բարեկամուհիիս հետ սենեակս փակուած էի, երբոր Հրաչ ու Սուրէն ինձի եկան: Բնականաբար դուռը չբացինք եւ անոնք ստիպուեցան...

Ճիչերու, բացականչութիւններու, ծափերու ալէլուեա

մը: Երբոր հանդարտութիւնը վերահաստատուեցաւ, Պետրոս անելցուց.

- Որով կ'առաջարկեմ, որ մեր բաժակները պարպենք...

Ամէն կողմէ սկսան պոռալ, «Երիտասարդութեան կենացը. հարսին կենացը. երկու ազգերուն կենացը, երջանկութեան կենացը...»: Պետրոս կը լռէր: Կարծես ան մէկէն վիրաւորուեցաւ այս չափազանցուած զուարթութենէն, հակառակ ուստում մը ըրաւ ինքն իր մէջ, կորսուող ժպիտը զինքը անելի գեղեցկացուց եւ երիտասարդը արտասանեց, ականարկը հեռաւոր տեսիլքի մը լոյսին.

- Ես այս գաւաթը կը խմեմ կենացը դժբախտ անձերու: Ես այս գաւաթը կը խմեմ կենացը անոնց, զորս մոռցեր էք այս պահուս. անոնց, որոնց համար մեծագոյն օր մը պիտի ըլլար այս օրը: Ես կը խմեմ եազմաջի Քրիստին եւ Աղաւնի հանրմին կենացը...

Շատեր ցած ձայնով իրարու հարցուցին «Ո՞վ են, ո՞վ են»:

- Հայրիկս... մայրիկս, - կակազեց Հրաչ մէկէն հեկեկալով, մինչ Սիւզան թաշկինակը կ'երկարէր, անոր արցունքներն անգամ առնելու համար:

\* \* \*

Գնաց ամէն կողմ, այցելեց ամէն ծանօթի, կարօտը առաւ մեծ մայրաքաղաքէն: Ամէն անգամ, որ սակայն քայլերը Պիյեանքուռի մօտեցան, աղիողորմ վախճան մը զինքը վանեց հեռու: Ինչ էր եղած «Լոխում». ինչ էր եղած անոր մայրը: Պետրոս ըսաւ ինքզինքին.

- «Միօրինակ ու անվախճան ցաւեր կան: Անոնք տկար են եւ կը տեսնն մեր կեանքին չափ: Պէտք է սաստկացնել զանոնք: Որովհետեւ երբոր սաստկանան, անկարող կ'ըլլանք զանոնք կրելու, քանի որ վատ ենք, եւ կը մոռնանք»:

Խնտամեան պատմեց.

- Ո՛չ, ա՛յլ «Լոխում»էն բնաւ յոյս չկայ. արդէն օրէ օր կը

ծիրի: Իսկ մայրը. ան բնա՛ւ մի հարցնէր: Առաջ մեր ճերմակեղէնները կը լուար, կարկտուքները կ'ընէր, հիմա ասոր ալ անկարող է. աչքերը սկսան տկարանալ: Այո, անօթի չձգեցինք զինքը, կրցածնիս ըրինք, բայց վերջին ճիգ մըն ալ պէտք է կատարենք. ես հանգանակութիւն մը կազմակերպեցի, որպէսզի քիչ մը դրամ հաւաքելով՝ զինքը դարձնենք Պոլիս:

- Բայց, Աստուած իմ, - ըսաւ՝ Պետրոս, - այս քահանան բնա՛ւ դրամ ղրկելու կարողութիւն չունի: Եթէ այդքան խեղճ էր իր նիւթականը, ինչ բանի վստահելով ձգեց, որ այս կինը Փարիզ գայ:

- Ինչ, քահանայ մի: Չե՞ս գիտէր, որ կարգազուրկ ըրին զայն... այո՛, փիլոնազուրկ ըրին. դուն բնաւ թերթ չե՞ս կարդար. ահագին աղմուկ ելաւ Պոլսոյ մամուլին մէջ: Իբրեւ է թէ մեռելատուն մտնելով անտէր ննջեցեալի մը բերնէն ոսկի ակռաները գողցեր է... Այո՛, անշուշտ, պէտք է նկատի առնէին իր վիճակը. զաւակը յիմարանոցներուն մէջ է, կինը անօթի է, տասնոց չկա... այո՛, բայց փիլոնազուրկ ըրին... Տխո՛ւր, տխու՛ր պատմութիւն:

\* \* \*

Քանի մը օրէն հրապարակ կ'ելլէր Սուրէնին առաջին հատորը: Մե՛ծ, շատ մե՛ծ երջանկութիւն մըն էր այս Պետրոսին համար: Նոյն ցեղին, նոյն սերունդին զաւակներն էին: Գրեթէ նոյն կեանքն էին ապրած. նոյն յոյսերը, հիասթափութիւններն ու ցաւերը կազմած էին զիրենք: Պետրոսին այնպէս կը թուէր, թէ Սուրէնին բերնով ինք է, որ պիտի խօսէր: Ինչե՛ր, ինչե՛ր չկային ըսելիք. Սուրէն արդեօք որքա՛ն լաւ պիտի պատկերացնէր Փարիզ նետուած հայ տղոց կեանքը: Ահա այս մե՛ծ հրճուանքով է, որ գնաց իր ընկերոջ: Կ'ուզէր մանաւանդ խօսիլ, խօսիլ անոր, բայց սրտով: Նոյնպէս բաց սրտով Սուրէն զինքը ընդունեց: Բայց երբ դարակէն հանելով գրքին վերջին փորձերը դրաւ իր առջեւ...

Գիրքը պիտի հրատարակուէր ֆրանսերէն:

Իրենց խօսքը բնաւ չկար:

Սուրէն դիւրաւ ըմբռնեց Պետրոսի լռութիւնը եւ ըսաւ.

- Ամէն գրագէտ սնապարծ է եւ յաւակնոտ: Միայն թէ ամէն գրագէտ չի խոստովանիր: Իսկ ես կ'ըսեմ բարձրաձայն, որովհետեւ մտածումս թերակար չունի: Ես ուժ մըն եմ - գոնէ այդ հաւատքը ունիմ - ուժ մը, որ կ'ուզէ գործել: Մեր մէջ գետին չկայ. շարժում չկայ. գործունէութեան դաշտ չկայ: Պատճառները զիս չեն հետաքրքրէր: Ես կամ, եւ միայն էս: Պէտք է, որ ապրիմ եւ երիտասարդի աւիւնս արժեցնեմ: Յոյսերով կարելի չէ զիս օրօրել, տեսայ ինձմէ առաջ եկող Հայերը, որոնք միշտ սպասեցին լաւագոյն օրերու եւ այդ յոյսով ծերացան: Իմ արուեստս չուզէր սպասել ոչ մէկ վաղորդայնի: Չեմ ուզէր ամբաստանել հայը, բայց ան ալ զիս ամբաստանելու իրաւունք չունի: Կ'ուզեմ խօսիլ, եւ բնական է, որ խօսքս ուղղեմ անոնց, որոնք լսելու ատեն եւ փափագ ունին: Հայը ոչ մէկն ունի, ոչ միւսը: Իսկ դուն, սիրելի Պետրոս-Փիէռ, դուն եւ քեզիպէսները իմ ըսածներս պիտի հասկնաք: Այդ կը բաւէ ինձի:

- Այո՛, - ըսաւ Պետրոս, - իրաւունք ունիս. միայն թէ կը մոռնաս, որ «կարօտ» բառին ֆրանսերէնը չկայ... «կարօտ»ը չկայ...

- Ճիշդ է, գիտեմ, այդ բառին համարժէքը ֆրանսերէն լեզուին մէջ գոյութիւն չունի: Բայց բառ մը պակաս է եղեր. ինչ կ'արժէ...

Պետրոս սկսաւ սանդուխները իջնել ծանր քայլերով, գլխարկը ձեռքին մէջ ճօճանակ՝ եւ մինչեւ կորսուիլը ըսաւ.

- Գրածներդ ոչ մէկ Հայու կրնան խօսիլ, որքան ատեն, որ անոնց մէջ «կարօտ» բառը չկայ... Այո՛, մի՛ խնդար, որովհետեւ միայն այդ չէ, որ թերի է. դուն արդէն գիտես, բայց թող որ յիշեցնեմ, թէ ֆրանսերէնը գոյութիւն չունի նաեւ «մայր» բառին, «հայ» բառին, «աքսոր» բառին... ֆրանսերէնը չկայ մեր «գաղթական»ին, մեր «որբ»ին...

## 3

Բացիկ մը միայն դրկած էր Նէնէթին, իր ուշանալուն պատճառները բացատրելով: Այլեւս պիտի վերադառնար Թօննէն, քանի որ ութ օրէ ի վեր Փարիզ անցուցած այս արձակուրդը բաւական կը նկատէր: Այդ առաւօտ, ըստ սովորութեան, Հրաչ կանուխ մը գործատեղի մեկնեցաւ: Հագիլ թէ դուռը գոցուած էր իր ետեւէն, երբ վազելով կրկին սանդուխները բարձրացաւ եւ վերմակը բանալով նամակ մը երկարեց իր ընկերոջ: Նամակը Թօննէնէն կու գար: Պետրոս ցցուեցաւ անկողնին մէջ ու կարդաց.

«Մէտսիէօ Փիէն,

Երբ այս նամակս ստանաք, անմիջապէս վերադարձէք Թօննէն: Կ'աղաչեմ, շուտով տուն եկէք: Տիկինը լաւ չէ: Տիկինին վիճակը շատ գէշ է: Ոչ, մի՛ վախնաք, հիւանդ չէ, բան մը չունի, բայց շատ դժբախտ է: Իմ աչքէս չի վրիպիր: Ձեր մեկնելէն ի վեր բոլորովին փոխուած է. անկողինէս կը լսեմ, որ գիշերը երկար ժամեր կը քալէ, յետոյ կը խօսի բարձրաձայն: Այդ շատ գէշ նշան է: Քանի մը անգամներ լալը տեսայ. լաւ բան չէ. պէտք չէ ձգենք, որ լայ: Հետո գրեթէ բնաւ չի խօսիր, բայց ես չեմ նեղանար. կ'ըմբռնեմ պատճառները: Առջի օր միայն ըսաւ, թէ պիտի մեկնինք. ո՛ր պիտի մեկնինք, դուք տեղեմկ էք: Երէկ առտու տեսայ, օր դեռ արեւը չձագած՝ պարտէզ ելաւ. շատ վախցայ եւ ետեւէն գացի. բայց կ'աղաչեմ, դուք մի՛ վախնաք: Չէի ուզեր այս բաները գրել բայց կը յիշէք, որ մեկնած ատեննիդ տան պահպանութիւնը ինձի յանձնեցիք. խնդրեցիք որ հսկեմ ամէն բանի. ես պարտականութեանս մէջ չեմ թերանար: Այսօր Տիկինը ժամերով գրեց. յետոյ կանչեց զիս ու նամակ մը տուաւ, որպէսզի ձեզի դրկեմ: Հագիլ թէ գլխարկս դրած էի, երբ նամակը ձեռքէս ուժով մը խլեց ու պատռեց. յետոյ սկսաւ լալ սարսափելիօրէն: Ես նամակին կտորները հաւաքեցի: Եւ թէեւ ակնոցս քովս չըլլալուն չկրցայ ամբողջութեամբ կարդալ, բայց տեսնելով որ կարե-

ւոր բան մըն է եւ վրան ալ հասցէն կայ, ահաւասիկ անմիջապէս կը դրկեն ձեզի: Կ'աղաչեմ, մի՛ ուշանաք, շուտ եկէք. 7. 30-ին եւ 10-ին շոգեկառք կայ Փարիզէն:

Միշտ ձեզի հաւատարիմ՝  
*Կոստան Լըվո»*

Փիէռ պատռուած նամակին կտորները քով քովի դրաւ եւ կարդաց.

«Սիրական Փիէռոս,

Ո՛չ, միտքէս իսկ չեմ ուզեր անցընել, թէ ըրածդ պատրուակ մըն է զիս վերջապէս լքելու: Գիտեմ, թէ պիտի վերադառնաս Թօննէռ: Բայց անմիջապէս ըսեմ որ երբ գաս, տունը պարապ պիտի գտնես. քու ժամանումէդ առաջ ես մեկնած պիտի ըլլամ: Ներէ՛ ինծի, ներէ՛ ինծի, իմ աղուոր Փիէռոս, որ անգամ մը եւս քու սիրտդ կ'արհւնեմ, կը տառապեցնեմ քեզ, անգամ մը եւս քու սիրոյդ փոխարէն միայն վիշտ կու տամ: Մի՛ անիծէր զիս, Փիէռոս, մի՛ անիծէր. արդէն շատ դժբախտ եմ եւ չարութեամբ չէ, որ կը փախչիմ քեզմէ: Որովհետեւ իմ հեռացումովս կ'ուզեմ ապացոյցը տալ քեզի հանդէպ ունեցած սիրոյս. որովհետեւ կ'ուզեմ, որ գիտնաս, թէ միայն քեզ երջանիկ ընելու յոյսով է որ կեանքս կը բաժնեմ քուկինէդ: Որովհետեւ, հաւատա՛, Փիէռոս, ամբողջ հոգիովս ներողութիւն կը խնդրեմ քեզմէ, գործած սխալիս համար: Ես գիտեմ, թէ սխալ շարժեցայ. ինծի պատահած մեծ դժբախտութենէն վերջ պէտք չէր, որ քեզի վերադառնայի, մահուընէ փախչելով վատօրէն: Բայց, ինչ ընեմ, ինչ կրնայի ընել, գիտես, թէ առանձին էի եւ զիս անկեղծօրէն մեղքնալու համար իսկ մէկը չկար շուրջս: Ինչպէ՛ս պիտի ապրէի անդամահատուած. մեղք եմ, Փիէռոս, իրաւ որ խղճալի եմ. վիճակս սարսափելի էր եւ կ'ուզէի մեռնիլ: Միայն դուն կայիր, միայն դուն, որուն անկեղծութեանը, հոգիի մաքրութեանը վրայ չէի տարակուսած երբեք, գիտէի նաեւ, թէ անկարող էիր զիս մոռնալու: Որով, եկայ: Պէտք չէր, որ գայի, բայց եկայ, մահուընէ փախչելով վատօրէն: Թերեւս կարելի էր կեանքս վերսկսիլ



մէկու մը հետ, որ զիս անցեալիս մէջ չէ ճանչցած, որուն աչքերուն առջեւ աւելի կատարեալ կնոջ մը պատկերը չպիտի գայ միշտ: Բայց քեզի հետ... Մի անիծէր զիս, Փիէռոս, տկարութեանս մէջ վախցայ ես մահէն: Հաւատա՛, որ ամբողջ հոգիովս կը սիրեմ քեզի եւ պիտի սիրեմ ալ միշտ, որովհետեւ բարի եղար եւ կարելիդ ըրիր զիս երջանիկ ընելու: Յանցանքը քուկդ չէ երբեք, եթէ երջանիկ չեղանք. կը զգամ քու վիճակդ եւ կ'ըմբռնեմ, թէ իրաւունքը չունիմ քեզմէ աւելին պահանջելու: Վերջապէս դուն ալ մահկանացու մըն ես, պարզ հոգի մը, եւ բնական է, որ իմ վիճակս քու ներքին պայծառութիւնդ մթագնէ: Իսկ ես, ես դժբախտ եղայ նախ անոր համար, որ վարժուած էի փայփայուելու, սիրուելու, գուրգուրանքի առարկայ մը դառնալու: Դուն զիս տարբեր սիրով սիրեցիր, դուն զիս շատ սիրեցիր, եւ հիմա...: Դժբախտ եղայ նաեւ անոր համար, որ տեսայ քու ալ դժգոհութիւնդ: Դուն դեռ շատ երիտասարդ ես, ամբողջ կեանք մը ունիս առջիդ. չեմ ուզէր զայն թունաւորել: Երջանիկ եղիր դուն, Փիէռոս, կ'ուզեմ, որ երջանիկ ըլլաս. արժանի ես: Ձգէ, որ ես մեկնիմ. մի՛ տառապիր, բայց մանաւանդ մի՛ փնտռեր զիս, ձգէ, որ ես մեկնիմ: Անկարելի է, որ մեզ գտնես, եւ ես անկարելի է, որ այս կեանքը վերսկսիմ: Անհոգ եղիր, բան մը չպիտի պատահի ինձի, պիտի ապրիմ քաջուած, քու անջնջելի յիշատակիդ հետ եւ իմ միակ մխիթարութիւնս պիտի ըլլայ Պիպիս: Այլեւս միայն անոր համար կ'ուզեմ ապրիլ, միմիայն անոր համար: Ամբողջ սէրս, գուրգուրանքս պիտի տամ անոր եւ վստահ եմ, թէ օր մը, վերջապէս, պիտի սիրէ զիս, պիտի անդրադառնայ վիճակիս եւ պիտի գթայ իր դժբախտ մօրը:

«Դժբախտ եմ, չէ՛, Փիէռոս... շատ, շատ դժբախտ եմ. ինչէր պիտի ուզէի գրել քեզ, բայց չեմ կրնար: Քանի անգամներ այս էջը պատռեցի: Չէի ուզէր գրել, բայց ստիպուած եմ: Անհոգ եղիր, ես ամէն բան կարգադրելով պիտի մեկնիմ. թուղթերը պիտի գտնես սեղանին վրայ: Միայն զիս է, որ պիտի չգտնես, իմ աղուոր, իմ բարի Փիէռոս:

Ո՛չ, հրաժեշտի բառ մը չեմ ուզեր գրել. ոչինչ, ոչինչ: Պէտք չէ, որ յուզուիմ եւ տկար ուժերս կորսցնեմ: Միայն թէ, Փիէռռու, հիմա որ քեզի կը համբուրեմ այսպէս, այսպէս, վերջին անգամ մը գոնէ կրկնէ հոգիէդ. - Nenette, Nenette chérie...»

Առաւօտեան 8-ն էր. կէսօրէ վերջ ժամը մէկին միայն երիտասարդը կրնար հասնիլ Թօննէռ: Մինչեւ այդ՝ հինգ ժամ, հինգ տարի:

.....

Եւ երբեմն ան կը մեկնի, հրթիռի մը պէս: Խլացուցիչ պայթումով մը մթնոլորտը կը պատռէ եւ իր լուսեղէն սիւնը կը սլանայ վեր, ուղղաձիգ, շաչելով, ֆշշալով, սուլելով: Կը բարձրանայ կը բարձրանայ ու յանկարծ կանգ կ'առնէ, կարծես անտեսանելի երախի մը մթութեանը մէջ կորսուած:

Այսպէս է, որ պոռաց Փիէռին վիշտը: Այսպէս է, որ պոռաց սէր մը, անսահման սէր մը, որուն ուժգնութեանը բնաւ չէր անդրադարձած Փիէռ եւ, որ գացած էր թմրիլ, թաղուիլ առօրեայ կեանքին սովորականութեանը մէջ: Եւ սովորական, եւ հասարակ, եւ ռամիկ մահկանացուի մը վիշտը ապրեցաւ ան, շաչելով, ֆշշալով, սուլելով: Նախ բնաւ չուզէց հաւատալ. կարծեց, թէ Նէնէթ կը ստէ պարզապէս, թէ կ'ուզէ քանի մը օր պահուրտիլ իր սէրը փորձելու համար, թէ կ'ուզէ վստահ ըլլալ իր զգացումներուն անկեղծութեան, բայց երբեք, երբեք ուժ չպիտի ունենայ զինքը լքելու: Յետոյ սակայն խոստովանեցաւ, որ ինքզինքը խաբելու համար միայն այսպէս կը խորհի, քանի որ գիտէ, թէ Նէնէթ անկարող է այդ լոյսին տակ խաղ մը բեմադրելու: Ինչպէս ծիսակատարները այն միւս աղանդին, որոնք իրենց մարմինը կը հարուածեն, կը չարչրկեն, կ'արհւնեն, Փիէռ իր ամէն մէկ մտածումով, ամէն մէկ անդրադարձումով արհւնեցաւ:

- «Այո՛, - կ'ըսէր ան. - Էս եմ, եւ միայն ես եմ յանցաւորը: Իմ հպարտութիւնս զիս սպանեց, իմ անտարբերութիւնս Նէնէթս առաւ ինձմէ: Կեանքին նայեցայ իմ նէղ պատուհանէս. զիս շրջապատող անձերուն եւ դէպքերուն նայեցայ

իմ սեղմ անկիւնէս. չելայ անձէս դուրս՝ մտնելու համար Նէնէթին մէջ: Ան դժբախտ մըն է, որ կը մաքառէր կեանքին հետ, իր կորսուող երջանկութեան հետ, եւ ես պէտք էր, որ զինքը ընկղմէի անչափ գորովի մը մէջ, զայն ծածկէի նոյնիսկ չափազանցուած սիրոյ մը բեռով: Իմ սէրս պէտք էր կատարեալ ըլլար, սփոփարար դառնալու համար: Եւ փոխանակ ատոր՝ մնացի ընդարմացած, մնացի անտարբեր, մնացի կրաւորական:

«Պէտք չէր լռէի, որովհետեւ ոչ ոք այնքան հակամէտ է լռութիւնը թարգմանելու, որքան թերահաւատ մը: Ես այդ վատուժ թերահաւատին իմ աջակցութիւնս զլացայ, որովհետեւ ոչ գիտէի մոռնալ ինչ որ կարօտ էր մոռացումի, եւ ո՛չ ալ յիշել ինչ որ արժանի էր յիշողութեան: Նէնէթը այլեւս իմս էր. ամբողջութեամբ, էութեամբ իմ գերիս էր, ալ երբեք վախը չունէի զայն կորսնցնելու, եւ այս ապահովութիւնը փոխանակ ինձ կրկնակի թելեր տալու, զիս նետեց պժգալի անտարբերութեան մէջ: «Իրաւունքը չունիմ քեզմէ աւելին պահանջելու»: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, Նէնէթ, ունէ՛իր իրաւունքը ինձմէ աւելին պահանջելու, քանի որ ես յեղյեղուկ մը չեմ, ես զոհը չեմ անանուն զգացումներու, գիտեմ, թէ ինչ է ուզածս, գիտեմ, թէ ինչ է այն ճամբան, որ... վերջապէս կը սիրեմ քեզ, եւ սիրտս պարտական էր... ինչո՞ւ հետո՞ չկռուեցայ մեր սէրը շրջապատող ծիծաղելիօրէն ճղճիմ արգելքներուն դէմ: Իրաւունքը չունիս ինձմէ աւելին պահանջելու, որովհետեւ պարզ մահկանացու մըն եմ ես, խեղճ, սովորական մէկը, որ խոտի պէս կ'ապրի ու անկարող է բացառիկ կեցուածք մը ունենալու. ըսել է այդքան հասարակ մէկն եմ ես, այնքան գաճաճ հոգի մըն եմ... ես... ես...

Այս «եւ»երը կրկնած ատեն կարծես իր մորթին վրայ կարդալու համար իր փոքրոգութիւնը՝ Փիէռ ակնարկը հաւաքեց, խոնարհեցուց եւ ուշով նայեցաւ ձեռքերուն, մարմնին, ուսերուն: Յետոյ նայեցաւ շուրջը, գիտակցութիւնը պտտցուց իրականութեան մէջ, կարծես հասկնալու համար, թէ արդեօք ուրիշներն ալ իր կուզերը կը նշմարեն:

Gare de Lyon էր, երրորդ կարգի վագոնի մը մէջ: Փիէռ սուկումով անդրադարձաւ, որ ամէնուն ուշադրութեան առարկան էր դարձած. ծեր կին մը իրեն կը նայէր ակնոցներու վրայէն, ուրիշ մը՝ թերթի մը մէկ անկիւնէն, պատկառելի մօրուսաւորի մը աչքերուն մէջ կարծես կարեկցութիւն կար, իսկ պզտիկ աղջնակ մը՝ կենդանային հետաքրքրութեամբ գլուխը կը մօտեցնէր: Երիտասարդը անմիջապէս ելաւ տեղէն ու գնաց պատսպարուիլ առաջին կարգի առանձնութեանը մէջ: Ինչ էր եղած. աչքերը ինչ արտայայտութիւն ունէին. դիմագիծը ինչ կրնար ըսել: Փախչի՛լ, վազել, սուրալ, պլլուիլ երկու բազուկներով, ամբողջ մարմնով, եւ ճկիլ, եւ պռռալ...

Դանդաղօրէն, դանդաղօրէն շոգեկառքը սկսաւ շարժիլ:

Կը սկսէր մեծ ճամբորդութիւն մը:

Կը սկսէր այն միակ ճամբորդութիւնը, որ արժանի է «մեծ» տիտղոսին, որովհետեւ այդ յառաջխաղացումին նպատակակէտը հեռու է մարդոցմէ անհունօրէն, անսահմանօրէն, որովհետեւ այդ նպատակակէտը մօտիկ է մարդոց, ինչպէս ոչ մէկ բան կեանքի մէջ:

Թելը կտրուեցաւ: Երիտասարդին խորհրդածութիւններով շարքը կասեցաւ յանկարծ: Վիշտին սովորական աղմուկը լռեց, բարձրացող աւելի մեծ ձայնով մը խափանուած: Տղան ինքզինքը գտաւ առանձին, միս մինակ, օդին, պարապին, անեզրութեան մէջ:

Ամէն կին, երբոր մայրանայ, կը բարձրանայ հողէն, կ'ելլէ վեր, շատ վեր ու զաւակը կը ծնանի տեսողութիւններէ հեռու: Այդ պատճառաւ է, որ կ'ըսեն. - աշխարհ եկաւ: Որովհետեւ մարդիկ կու գան վերէն վար, մարդիկ կ'իյնան բարձունքէ մը դէպի հողը, անյեղի օրէնքի մը հպատակելով:

Այդ սրընթաց արշաւին մէջ շատեր կը մնան անբանացած, անգիտակից, անկարող՝ տեսնելու, դիտելու, անդրադառնալու. հողին քաշողութենէն տարուած եւ դիմադրելու ուժէն զուրկ՝ կ'իյնան թաւալգլոր, իրենք անդամներն ու

զգայարանքները սանձելու անընդունակ, եւ նշմարուած խաբուսիկ պատկերները կը մնան անճիշդ, մակերեսային, առարկայական: Այս անձերը երբոր հասնին երկիր, միայն հողակոյտ մը կրնան կազմել:

Կան սակայն ուրիշներ, որոնք կը նմանին օդանաւորդներու: Անոնք ալ ունին իրենց անկումի պարտադիր շրջանը: Պէտք է որ բաւական մը ժամանակ թաւալին իրենց բնագոյն, իրենց կիրքերէն, իրենց զգայարանքներէն քաշուած: Արդար է, որ գոնէ ատեն մը միայն բնութիւնը ըլլայ զիրենք վարող: Բայց ահա որ թաւալող օրերուն մէջ իր փրկարար տառապանքը կը բերէ դէպք մը, երբեմն աննշմարելի ըլլալու չափ պզտիկ, երբեմն ալ ահեղ, բայց միշտ ճակատագրական դէպք մը: Ստեղծուած ցաւը կ'ըլլայ յենակէտ, լծակը կը կազմուի, եւ այս ճամբորդէն, ինչպէս օդանաւորդէ մը, անկարգելը կը մեկնի: Անկարգելը կը մեկնի վեր, կը բարձրանայ, կը տարածուի, կ'ուռի: Անկէ կախուած էակը պիտի ցնցուի իր ֆիզիքական մարմնին ամենայետին մասնիկներուն մէջն իսկ, բայց պիտի կազմուի երկրորդ մարմինը: Ճամբորդը ինքզինքը պիտի գտնէ իրեն բոլորովին անձանօթ բարձրութեան մը մէջ, պիտի հաւասարակշռուի եւ իր ականարկը այս անգամ պիտի տարածուի հաստատ, խաղաղ, թափանցող:

Անշուշտ այս մէկն ալ պիտի երթայ հողին, ինչպէս ամէն բան կ'երթայ իր ճակատագրին. բայց այս անգամ ան պիտի երթայ հեշտութեամբ, քաղցրութեամբ, հրճուանքով, գիտակից իր ճանապարհին, գիտակից իր նպատակակէտին:

- «Մեր մէջ իմացական անհատը եւ ֆիզիքական մարմինը կեցած են դէմ դէմի եւ կը կռուին: Երկուքն ալ ունին իրենց հրամայող ուժերը եւ անյեղի օրէնքները: Այդ կռիւն է, որ պիտի արձանագրէ ճակատագիրը մարդոց, եւ այդ պայքարին վախճանն է, որ անհատները պիտի ձգէ կամ բարձրացնէ: Կրնանք բարեկամական կամ սիրոյ կապերով միանալ ուրիշներու, բայց մէկ ենք մենք մեր անձին հետ: Եթէ այդ միութիւնը կը կրենք անգիտակցութեամբ, մեր

### **Յակոբ Օշական**

Շահնուրի վէպն ալ շահ մըն է. հարստութիւն մը: Իր լոյս տեսած օրերուն ես չվարանեցայ այդ գիրքին մէջ տեսնելու իր սերունդին անդրանիկ կատարեալ վէպը:

*«Վկայութիւն մը», էջ 126, Հալէպ, 1946:*

### **Արշակ Չոպանեան**

«Նահանջը» հզօր է, խորունկ վէպ է, իսկ Շահնուր բազմապատիկ յատկութիւններով օժտուած տոհմիկ գրագէտ մըն է: Այս նորեկէն շատ բան կարելի է սպասել...»:

*«Անահիպ», Ա Տարի, էջ 105, 1930*

### **Վահան Թէքէեան**

Շահան Շահնուր գրական այս սերունդին լաւագոյն ներկայացուցիչն է, ըլլալով միաժամանակ մէկը ամէնէն տոկուններէն: Մեզդի համար բարեբախտ յայտնութիւն էր ան /իմա՝ «Նահանջը»/ զոր խանդաղատանքով ողջունեցին արտասահմանը եւ ...

*«Ապագայ», 11-13 յունուար, 1934*

### **Շաւանշ Նարդունի**

Պարոններ, կատարեալ գործ մըն է «Նահանջը» ետպատերազմեան գրականութիւն: Արուեստ, թարմ յղացումով: Այսպէս հայ գրականութիւնը կը գտնէ նոր դէմքն ալ...:

*«Յառաջ», 5 հոկտեմբեր, 1929*

### **Գուրգէն Մխիթարեան**

Ամբողջ գիրքը կը կարդացուի մէկ շունչով եւ կը դիմանայ մէկէ աւելի ընթերցումներու, պահելով միշտ իր շահեկանութիւնը եւ իր ջերմութիւնը: Շահնուր մեր վաղուան գրականութեան ամէնէն ամուր սիւներէն կրնայ ըլլալ: Իր

զայն քննենք ոչ թէ առանձին, այլ անոր ծնունդ տուող բոլոր պատճառներուն հետ, այսինքն նախ մեր անձին հետ: Որովհետեւ մեզի պատահածներուն մեծագոյն մասը մենք է, որ կը պատրաստենք, մեր բացայայտ թէ անանուն ըղձանքներն են, որ զայն կը կանչեն, եւ դէպքը կ'ըլլայ այնպէս, ինչպէս որ մենք ենք: Ան կ'ունենայ մեր բնութիւնը, կ'ունենայ մեր մտածումներուն ընդարձակութիւնը եւ մեր հոգիին գոյնը:

«Վայելելու համար պէտք է ճանչնալ, պէտք է ճանչնալ ոչ թէ վայելքները, այլ նորէն մեր անձը: Մարդ էակը կարող է ոչ միայն իրարմէ զանազանել մարմին մը տգեղէն, բարի արարք մը չարէն, այլ նաեւ բնութիւնը ունի երեւակայելու բարին, գեղեցիկը, ազնուականը: Եւ բնականաբար, երբ կ'ուզէ գոհացում տալ իր ըղձանքներուն, լաւագոյնին է, որ կը ձգտի, առանց գիտնալու, թէ գեղեցիկ հոգի մը վայելելու համար պէտք է գեղեցկացած ըլլալ, ազնուական կեանք մը գնահատելու համար՝ պէտք է նոյն բարձունքին հասած ըլլալ, եւ նոյն բարձունքին հասնելու համար պէտք է ճանչնալ ինքզինքը:

«Տիրանալու համար՝ պէտք է տալ: Կ'ուզենք սիրուիլ բարձրագոյն սիրով մը, կ'ուզենք ունենալ անձնուէր եւ անշահախնդիր բարեկամներ, կ'ուզենք, որ օրերը մեզ բարիք բերեն եւ ձախորդութեան առջեւ ճակատագիրը միայն կ'անհիծենք: Իրականին մէջ մենք է, որ չենք գիտէր բարձրագոյն սիրով մը սիրել, անձնուէր եւ անշահախնդիր բարեկամ ըլլալ ու օրերուն բարութեանը ժպտիլ: Մեծագոյն ճշմարտութիւնը, գերագոյն իրողութիւնը մեր անձն է. ամէն ինչ անկէ է, որ կը սկսի: Նախ մենք պէտք է, որ ընդառաջ երթանք ամէն բանի, նախ մենք պէտք է տանք, բայց տալու համար անհրաժեշտ է, որ տէրը ըլլանք մեր հոգիին:

«Տէրը ըլլալ հոգիին, պատռել միսը, ճեղքել նեղ պատեանը, մարմինը գերանցնիլ, ֆիզիքականին գործունէութեան դաշտը անդրանցնիլ, բարձրանալ վեր, վեր, որպէս-

զի մեր ակնարկը ըլլայ լայն, ընդարձակ, վճիտ, եւ որպէս-  
զի դեռ ան ըլլայ երջանիկ, խայտացող, հրճուանքով լի:

«Ճշմարիտ հրճուանքով լի՝ քանի որ այս բարձունքին  
մէջ միայն կրնայ գիտակից հրճուանքը կազմուիլ, կրնայ ըլ-  
լալ տեսական, աննկուն ու բեղուն: Կենսատու հեղուկի մը  
պէս ան կը ծորի, իր բարձունքէն առատութեամբ կը տեղայ  
մեր մարմնին, մեզ կը պարուրէ, կը համակէ, կ'ընկղմէ իր  
մէջ, եւ իրմով կը լեցուին մեր օրերը, արարքները, մտածում-  
ները: Մտածում. անոր անսխալականութեանը պէտք չու-  
նինք բնաւ այս բարձունքին հասնելու համար: Մեզ անհրա-  
ժեշտ չեն երբեք յստակ ու որոշ մտածումներ, բեռ գիտու-  
թիւններու: Կը բաւէ, որ զգանք, ապրինք փրկութիւնը, նե-  
տուինք մեր պատեանէն դուրս, մենք մեզ յանձնենք բարձ-  
րացումին, եւ ականջ տանք երաժշտութեան, որ կը սկսի:

«Որովհետեւ հո՛ս է, որ մեր ձայնը կը լսենք: Հոս է, որ  
կը սկսի ներքին նուագը, *rythme*ը թրթռացումը: Ան մերն է,  
միմիայն մերը եւ միակը աշխարհի վրայ: Կը բաւէ, որ մեր  
քայլերը հպատակին այդ չափականութեան, կը բաւէ, որ  
մեր զգացումները պատշաճեցնենք այդ կշռոյթին, կը բաւէ,  
որ մեր իմացականութիւնը յառաջանայ համաչափ ու ան-  
վախճան մեղեդիին հետ, եւ մենք մեր մտերմութեանը մէջ  
հասած ըլլանք երջանիկ խաղաղութեան մը, ու պիտի յաղ-  
թենք կռուելէ առաջ, լսելի պիտի ըլլանք՝ խօսելէ առաջ եւ  
պիտի գեղեցկանանք սիրահարուելէ առաջ:

«Երակ մը մեր կեանքին յաջորդական փուլերը պիտի  
կտրէ անցնի, ու մեր բոլոր ապրումները օղակներու շղթայ  
մը պիտի ձեւացնենք նոյն ուղղութեամբ առաջնորդուած:  
Մինչ կ'ապրէինք անհոգ կեանք մը, մեր երջանկութիւնը  
փշրանքներու էր վերածուած օրերու բազմութեան մէջ, եւ  
մեր առօրեայ նպատակները իդէալի մը պատառներուն  
կը նմանէին, այժմ գոյութեան միութիւնը կազմուելով, ոչ  
միայն անհամեմատօրէն պիտի մեծնայ մեր ապրումը, մեր  
երջանկութիւնը եւ մեր իդէալը, ոչ միայն պիտի յառաջա-  
նանք լուսաւորուած ուղիէ մը հաստատ քայլերով, այլ եւ



ապրելով պիտի ապրեցնենք ուրիշն ալ, բարձրանալով մեր հետ պիտի քաշենք մեր շուրջինն ալ:

«Այդ բարձունքին՝ ոչ մէկ սիրուիի պիտի կարենայ զինքը սիրողին ըսել. «իրաւունքը չունիմ քեզմէ աւելին պահանջելու»: Այո՛, չենք պահանջէր, երբ գիտենք, թէ ստանալու կարելիութիւն չկայ, ինչպէս որ շատ անգամ հարցում կ'ուղղենք, երբ պատասխանը արդէն ծանօթ է մեզի, եւ կամ թէ ականջ կու տանք, երբ արդէն ձայնը կը լսուի: Բայց ան, որ հոգիի կատարեալ գեղեցկութեան մէջ է, ան սէրը պիտի գործածէ, եւ ոչ թէ օգտագործէ. անոր համար սիրելի էակը հայելի մը պիտի ըլլայ եւ ոչ թէ իր զգայարանքները, հպարտութիւնը, անձնասիրութիւնը շրջանակող զարդ մը: Սիրելի էակը պիտի մնայ միշտ նոյն Նէնէթը, ամէն բանէ վեր, այնպէս, ինչպէս որ էր առաջ, եւ այնպէս, ինչպէս որ պիտի ըլլայ վաղը: Այո՛, Նէնէթ, պիտի տեսնես, թէ քու Փիէռօզօ ինչպէս իր ամբողջ հոգիովը, իր ամբողջ ամբողջութեամբը պիտի...»

Փիէռ անգամ մը եւս իր մտածումը կոտրեց: Ամէն մէկ խորհրդածութենէ վերջ, երիտասարդը կը թաւալէր նոյն զառիթափին վրայ, կը գերուէր իր մտալկումէն, ինքզինքը կը գտնէր Նէնէթին առջեւ: Եւ երբոր խօսքը անոր ուղղելով կը տեսնէր, թէ կը կորսուի յուզումին մէջ եւ ժամանակը անսահմանօրէն կ'երկարի, կը վերադառնար վերացեալին, կրկնելով սա տեսակ նախադասութիւն մը. - «Ընկերութիւնը կը կերտուի մեզմով, եւ այդ կառուցումը կը սկսի մեր մէջէն: Որպէսզի կարենանք ազդել աշխարհի եւ որպէսզի այդ ներգործումին արդիւնքը դրական ըլլայ, պէտք է որ...»

Փիէռ շատ հեռու էր ծանօթ վարդապետութիւն մը ընդգրկելէ: Ինք արդէն չէր խորհեր իսկ վարդապետութեան մը վրայ. մտածումները բնականաբար չունէին շարայարութիւն, մեծ մասը ըրպէի տրամադրութեան արդիւնք էր, եւ գրեթէ միշտ սկսուած նախադասութիւն մը կը մնար կիսատ, հակասութեան մը պատճառաւ կամ ի չգոյէ բա-

նի: Բայց ինչ փոյթ, կը բաւէ, որ ինք կ'ապրէր զարթում մը, համբարձում մը եւ հոգիին ամէնէն խորունկէն կը պոռար, որ պահը անցաւոր չէ, այլ նախադուռը վաղուան կեանքին: Մտածումներ տարտամ, աղօտ, լոյծ, մտածումներ երկար ատենէ ի վեր իր մէջ համախոնուած, կուտակուած, որոնց շատերուն ձեւ չէր տուած երբեք, որովհետեւ զինքը տառապեցուցած էին, ահա ատոնք բոլորը կու գային զինքը բարձրացնել հանգրուանի մը:

Պետրոս շփոթեցաւ շատ անգամ, անոնցմէ շատերը չուզէց խորացնել եւ կառչեցաւ քանի մը նախադասութիւններու: «Սիրել եւ տառապիլ գիտնալ-չտարուիլ առօրեայ ճղճիմ պատահարներէ-ինքնագիտակցիլ եւ մնալ գլուխներէ բարձր»: Այս անգամ պարզ խօսքերը իրեն անսահման կը թուէին եւ չափազանց կը զարմանար, թէ ինչպէս զանոնք մինչեւ այս օրը չէր ապրած, հասկնալ կարծելով հանդերձ:

Վագոնին պատուհաններէն դուրս կէսօրը կը տարածուէր դաշտերու, մարգագետիններու, առուակներու վրայ: Եղեւնիներու խուրձ մը, սարահարթներ, քանի մը զանգակատուն: Ակօսի մը վրայ հակած պարտիզպան մը, գիւղ մը անդին ոտքի ելաւ, յետոյ գլխարկը փոխեց ու կնոջ հագուստ հագաւ: Իր կովը, որ նախապէս սպիտակ էր, ագարակ մը անդին սեւցաւ եւ անմիջապէս ձագ մը ունեցաւ: «Ընկերութիւնը կը կերտուի մեզմով, եւ այդ կառուցումը կը սկսի մեր մէջէն»: Տէս, այսօր բարտիները տողանցք ունին, կարմիր կղմինտրները տանիք ունին, Ֆրանսայի ամպերը երկինք ունին, տէս:

«Ընկերութիւնը կը կերտուի»ն այլեւս իր զօրութիւնը կորսնցուց, եւ Փիէռ տեղի տալով այն մեծ ալիքին, որ կ'ունէր իր մէջ, արտասանեց.

«Ընկալ քաղցրութեամբ, տէր Աստուած հզօր...»:

Կեցաւ, սրբագրեց եւ սկսաւ աղօթել.

«Ընկալ քաղցրութեամբ Նէնէթդ իմ հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս

դիմօք. փարատեա՛ն ամենապարզե՛ւ զամօթական տխրու-  
թիւնս: Տեառնագրեա՛ն քո անուամբդ զլուսանցոյց երդ յար-  
կիս. պարփակեա՛ն քո ձեռամբ զառաստաղ տաճարիս.  
գծագրեա՛ն քո անուամբ զմուտ սեմոց սենեկիս: Տնօր հան-  
գիստ բերկրութիւն մահահանգոյնս նիրհման...»

Յանկարծ յիշեց Սուրէնին խօսքը:

- «Նարեկը Հայոց ամէնէն աւելի գէշ, սխալ, վատառողջ  
եւ անբարոյական գիրքն է»:

Փիէռ պատասխանեց բարձրաձայն. գլուխը երերցնելով.

- *Ça dépend, mon vieux, ça dépend...*\*

Սուրէնին պատկերը, չհեռացաւ իր տեսողութենէն: Այդ  
խորաթափանց ու շնական տղուն խոժոռ դիմագիծը եւ  
սուր ականարկը նայեցան իրեն շեշտակի:

Փիէռ յիշեց հին խօսքերը: Գոցեց աչքերը, եւ դէմքը  
բարձր, դէմքը լուսայորդ, երկար պահ մը սպասեց:

Կարծես կը վայելէր մերձեցումը մեծ երջանկութեան  
մը: Յետոյ սկսաւ արտասանել դանդաղօրէն, մէկիկ մէ-  
կիկ.

«Հրամայեց, որ մարդիկ վազեն միայն այն ճշմարտու-  
թիւններուն ետեւէն, որոնց ճիշդ հակառակն ալ ճշմարիտ է:

«Հրամայեց, որ կարաւանները հանգրուանի մը մօտե-  
ցած ատեն իրենց գնացքը արագացնեն, որպէսզի ոչ մէկ  
ճամբորդ չհասնի իրենց:

«Հրամայեց, որ նաւերը մեկնելով հոսկէ հասնին հոն,  
սակայն կայմերու վրայ միայն առագաստ պարզուի:

«Հրամայեց, որ ոչ ոք ամպ մը դնէ լուսնին շուրջ, եւ լայ  
եւ խնդայ»:

«Հրամայեց, որ ոչ ոք սկսի հաշուել հարիւր մէկէն մեկ-  
նելով»:

- «Դո՛ւն, Հայու լակոտ, դուն ամենէն շուտը կը փոխուիս  
անասունի, եթէ օր մը իսկ մնաս առանց վիշտի»:

---

\* Դա կախուած է իմ տրամաբարուց, դա կախուած է...

*Հռութենէ մը վերջ կրկին Սուրէնը խօսեցուց.*

*«Միսը միշտ նոյնն է, քաշ մը ւելի, քաշ մը պակաս».*

*«Հոգին միշտ նոյնն է, դար մը ւելի, դար մը պակաս».*

*«Կան միսեր, որոնց համբոյր մը միայն կը պակսի».*

*«Կան հոգիներ, որոնց մէկ օրն իսկ ւելորդ չի գար...»*

- Այն, այն, - պոռաց Փիէռ ոտքի կանգնելով, - Արեւելքցի ենք եւ կը հաւատանք ճակատագիր ըսուած բանին: Բայց այդ ճակատագրին գլխագիրներն են միայն, որ չինական մելանով են գրուած: Մնացեալը մատիտ է, մնացեալը քար է, մնացեալը փոշի է: Մեզի՛ կը մնայ այդ մնացեալը փոխել:

Եւ գնացքին միօրինակ աղմուկը պատասխանեց. - չըսսի՛ քեզի, չըսսի՛ քեզի, չըսսի՛ քեզի, չըսսի՛ քեզի...

#### 4

Կարդաց, կրկին կարդաց, նորէն կարդաց: Անօգուտ: Բացարձակապէս անկարող էր մտածումը հաւաքելու, ուշադրութիւնը կեդրոնացնելու թուղթի այդ կտորին վրայ: Նայեցաւ ստորագրութեան: «Կի՛, Կի՛... ո՛վ էր այս Կին. արդեօք Սէն-ժոռժի՛նը. այն, որուն վրայ այնքան շատ կը խօսէր Պիպին եւ զոր կը կոչէր «Կի հօրեղբայր»»: Փիէռ ամբողջ ճիգը թափեց կարելի եղածին չափ քիչ դողդղացնելու համար նամակը իր մատներուն մէջ, բայց անկարող թերթը սեղանին վրայ դրաւ եւ գլուխը երկու ձեռքերուն մէջ ուժով մը սեղմած ուզեց գոնէ ամենակարեւոր մասը ըմբռնել: Հեգեց.

«... Երկարատեն է, որ ամէն բան աւարտած է ինծի համար: Եթէ նոյնիսկ ւելի դժբախտ ըլլայիր, կարելի չէր, որ գայի քեզ առնել ու մեր կեանքը վերսկսիլ: Ինծի պատճառած աններելի դժբախտութիւններէդ վերջ պէտք էր ապահով ըլլայիր ասոր եւ ի զուր երրորդի մը միջոցաւ զիս

կրկին քովդ ունենալու ցանկութիւնդ ջայտնէիր: Ալ երբէք, երբէք չես կրնար խաբել զիս. նախընտրելի է ինծի համար հասարակ պոռնիկ մը, քան դուն: Մարդ պէտք է Արեւելքցի ըլլայ, ան ալ 25 տարեկան անփորձ Հայ մը՝ քեզմէ տարուելու համար: Միայն գիտցիր, թէ այն տարին, մեր բաժանումի այն սարսափելի տարին եւ անկէ վերջն ալ դեռ երկար ժամանակ, ես քեզ անիծեցի եւ հիմա խորունկ հաւատքը ունիմ, թէ այդ անէծքս է, որ քու երեսդ պատռեց: Կ'ըսէիր, թէ բիրտ եմ, անոպայ ու վայրագ. ուրախ եմ, որ վերջապէս առիթը կ'ունենամ այդպիսի անձ մը ըլլալս հաստատելու: Պիտի առնեմ Պիպին: Դուն արժանի չես անոր մայրը կոչուելու: Ինչ ըրիր զաւկիդ համար. ինչ ըրիր մեր զաւկին համար: Հոգածութիւն, խնամք, գորով եւ դեռ պզտիկի մը անհրաժեշտ ամէն բան զլացար դուն անոր, կարծելով, թէ ղրկած անարգ ամսականդ ուժը պիտի ունենայ մեծ պակասը լրացնելու: Նոյնիսկ անպատկառութիւնը ունեցեր ես մէկուն ըսելու, որ քիչ կը սիրես Պիպին, որովհետեւ ան իմ անկարգ, անոպայ ու անգութ բնութիւնս ունի: Բայց գիտցիր, որ ես զայն սիրեցի ճիշդ այդ պատճառաւ եւ յետոյ նաեւ - ինչո՞ւ չխոստովանիմ - որովհետեւ քեզի կը նմանէր: Ամբողջ կարելիս ըրի, գացի հաստատուեցայ Սէն-ժոռժի մօտը, եւ չանցաւ շաբաթ որ գոնէ երկու անգամ չտեսնեմ որդիս: Ահա այդպէս է, որ ես զայն գրաւեցի, կարելի եղածին չափ քեզ նսեմացուցի զաւկիդ առջեւ եւ ան ամբողջութեամբ կապուեցաւ իր Կի «հօրեղբօրը»:

«Եւ ահա դուն կը յանդգնիս զայն ինձմէ խլել. կը յանդգնիս նոյնիսկ տարիներ վերջը զիս անգամ մը եւս հարուածել: Մի՛ մոռնար սակայն, որ բարեկամդ օտարական է եւ օտարական մը չի կորսուիր Ֆրանսայի մէջ: Գտայ վերջապէս ձեր հասցէն եւ կու գամ առնել որդիս: Գիտեմ, թէ ամենայն սիրով ու մեծագոյն հրճուանքով է, որ ինձ պիտի հետեւի ան: Այս նամակս պիտի ստանաս միայն այն պահուն, երբ մենք արդէն իսկ հեռացած պիտի ըլլանք Թօննէնէն: Ի զուր մի յոգնիր. երբեք չպիտի կարենաս մեզ գտնել

եւ ոչ մէկ օրէնք զօրութիւնը պիտի ունենայ որդիս ձեռքէս խլելու: Պատիժդ թող այս ըլլայ»:

Փիէռի դէմքը ողողուած էր քրտինքով, ու քունքերը պիտի պայթէին: Ապշած, անբանացած, խորհելու անկարող այդ վիճակին մէջ բնազդաբար ձեռքը երկարեց ու, սեղանին վրայէն լաթի կտոր մը առնելով, սկսաւ սրբուիլ: Այնքան կարծր էր այդ քուրջի կտորը, որ մորթը սկրթուեցաւ: Որքան մեծ եղաւ տղուն զարմացումը, երբ ձեռքինը քննելով տեսաւ, թէ բաղնիքի քերիչ (քէսէ) մըն էր ան, մասնաւոր տոկուն կերպասէ կարուած: Սեղանին վրայ էր նաեւ բացուած ծրար մը, թրքական դրոշմաթուղթերով, «չէվիրմէ»յի անուշով:

Փիէռին այնպէս կը թուէր, թէ երազ մըն է, որ կ'ապրի: Քնաշրջիկի մը պէս քայլերը տարաւ պարապ հարկաբաժնին ամէն մէկ կողմը, շօշափեց խոհանոցին պատուհանը, որուն ապակին կոտրելով է, որ կրցած էր ներս մտնել, ու կրկին վերադարձաւ ննջասենեակ: Ահա մեծ սնտուկը, մէկնելու կազմ եւ պատրաստ, ահա լեցուն պայուսակները: Պիպիին խաղալիքները, ահա Նէնէթին գլխարկն ու վերարկուն, եւ մանաւանդ, բայց մանաւանդ արիւն, արիւն ամէն կողմ: Արիւն՝ մահճակալին վրայ եւ գետինը արիւն՝ ջուրով լեցուն բազմաթիւ ամաններու մէջ, արիւն քուրջերու, շապիկներու, անձեռոցներու վրայ, արիւն մինչեւ դրան շեմը:

Դրացի մը վերջապէս ուզեց խօսիլ, եւ Փիէռ խելագարի մը պէս վազեց, վազեց, «քէսէ»ն ափին մէջ՝ ուժով մը սեղմած:

Երբ սանդուխները բարձրացաւ, երթալիք սենեակը գտնելու համար պէտք չունեցաւ մէկուն հարցում ուղղելու: Դրան մը առջեւ կեցած էր Կոստան, երկու ձեռքերը կուրծքին սեղմած, գլխիկոր, եւ կը հեկեկար, կը հեկեկար:

Փիէռ դուռը բացաւ:

Համակ սպիտակութիւն: Սպիտակ՝ պատերը, վարագոյրները, սեղանը, սպիտակ՝ դէմքերը, ձայները, մթնոլոր-

տը: Անկողնին վրայ հակած երեք հոգի, բժիշկ, օգնական եւ հիւանդապահ, գլուխները ցցեցին եւ նշան ըրին, որ չմօտենայ:

Փիէռ բան չէր լսէր, բան չէր ըսէր, եւ մահճակալէն զատ բան չէր տեսնէր: Չկրցին զինքը դուրս հանել:

Փիէռ մօտեցաւ երկու քայլ, կանգ առաւ, թելերը բացուեցան կարծես գիրկընդխառնումի մը համար, մարմինը տատանեցաւ կթոտ ծունկերուն վրայ, եւ անանկ ձայնով մը տղան հեկեկաց.

- Nnette, Nnette chérie!

Դժգոյն կոպերը բարձրացան մէկէն, եւ օրհասականին դէմքին վրայ անանուն, անդրաշխարհային ժպիտ մը տարածուեցաւ: Ժպիտ մը, որ աւելի ծամածռութիւն էր, բայց որ հրճուանք էր, աղերս ու աղապատանք էր, բայց որ ամբողջ սէր էր:

Նէնէթ ուզեց ցցուիլ, շարժում մը ընել, բայց ուժերը մերժեցին: Կարծես գերագոյն ճիգ մը ըրաւ խօսելու, եւ հազիւ լսելի ձայնով մը փսփսաց տղուն մօտեցող ականջին.

- Փիէռո՛, ազատէ զիս, ազատէ զիս... այս անգամ, հաւատա՛... հիմա բժիշկը ըսաւ, հաւատա՛, ես... ես իրապէս յղի... ես իրապէս յղի...

Ձայնը հալեցաւ, սպառեցաւ, շրթունքները շարժեցան պարապին մէջ ու կոպերը ինկան:

- Դ՛նրս, դ՛նրս, բայց կ'աղաչեմ դուրս ելէք, - կը կրկներ բժիշկը. չէք տեսնէր, որ մահուան հետ կը պայքարի:

Դռնէն անցած պահուն մէկէն ետեւ դարձաւ Փիէռ, բռնեց բժիշկին օձիքէն եւ ըսաւ.

- Պիտի ազատէք զայն, պիտի աղէկցնէք Նէնէթս, ըրէք ինչ որ կ'ուզէք, բայց բժշկեցէք, ապա թէ ոչ... ապա թէ ոչ, je te casse la gueule moi, je te casse la gueule...\*

---

\* Քիթ մոռութի պէտք է ջարդեմ...

.....

Նրբանցքին խորը, անկիւն մըն էին կծկտած երկուքը, շունչ շունչի: Փիէռ Կոստանը գրկած էր ուսերէն ու կը խօսէր խեղդուկ ձայնով մը, բայց շունչը սպառելու չափ արագ.

- Այո՛, պիտի աղէկնայ ան, պիտի տեսնես, թէ ինչպէս պիտի աղէկնայ, իմ բարի, իմ պատուական Կոստանս, մենք դեռ շատ երջանիկ պիտի ըլլանք, մենք դեռ ինչ օրեր պիտի ապրինք... Կոստան՛, Կոստան՛, ահա կը ներկայացնեմ ձեզ Փարիզ քաղաքի հրշէջ գունդի ենթասպաներուն էն կրակոտը... այո, Rrrigole, Brrigadier... բայց ինչո՛ւ, ինչո՛ւ ուզեց անձնասպան ըլլալ, ինչո՛ւ դուն հոն չէիր... Պիպին տարէր են եղեր, աւելի լաւ. թող կորսուի անպիտանը. ան միշտ կը խռովէր մեր խաղաղութիւնը, կը փչացնէր մեր զուարթութիւնը... բայց հիմա, ա՛լ երջանիկ պիտի ըլլանք. ես հոս եմ, պիտի աղէկնայ իմին Նէնէթս, Ririgole, Brrigadier... Հաւատա՛, Կոստան, այս անգամ ատեն չունեցայ, բայց եթէ նորէն Փարիզ երթամ, անպայման, անպայման պիտի գնեմ թութակդ, այո, առանց թութակի չըլլար. Նէնէթն ալ թութակը շատ կը սիրէր... Մայրի՛կ, մայրի՛կ... je te casse la gueule moi, je te casse la gueule...

Եւ յետոյ.

Երբ այլեւս բնաւ յոյս չմնաց, ոչ իսկ երիտասարդի մը համար, Հայը գլուխը ցցեց եւ միշտ Կոստանը այդպէս գրկած՝ սկսաւ աղերսել.

- «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, որպէս եւ մենք թողումք մերոց պարտապանաց... Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս եւ մէք թողումք մերոց պարտապանաց... Թողումք մերոց պարտապանաց պարտապանաց...

- Չեմ յիշէր կոր, Կոստան, մեղքցիր ինձի, ես իմ «Հայր մեր»ս չեմ յիշէր կոր...

Այն ատեն ֆրանսացին սկսաւ արտասանել իր թաւ ձայնով եւ Հայը խօսքերը կրկնեց, շունչ առ շունչ.



- Notre père qui êtes aux çieux-
- Notre père qui êtes aux çieux
- Que votre nom soit bénit-
- Que votre nom soit bénit
- Que votre règne arrive sur la terre-
- Que votre règne arrive sur la terre\*

Դանդաղորէն, դանդաղորէն, մութէն անջատուեցաւ մեծ խաչը մէկ պատուհանին, եւ արշալոյսը սկսաւ լազուարթ, թերեւս կապտորակ, թերեւս վարդագոյն:

Հեռաւոր, չարաշու՛ք հաջոցներ, աքաղաղի խուլ կանչեր, մսկոտ սօսափիւնը պարտէզներու, թախծոտ սոյլեր հարաւի:

Առաւօտեան սիւքով, արշալոյսով, վարդով լի՛ բաց պատուհանին վարագոյրը սկսաւ ուռիլ, ուռիլ, մեկնելու պատրաստ առագաստի մը պէս, փշրուելու պատրաստ ալիքի մը պէս, որպէս երազ մը անանուն:

Քիչ մը ջուր՝ խունկով օրհնուած, ճիւղ մը անծանօթ տերեւ՝ աղօթքներով չորցուած, եւ այլեւս մեղրամոմէ դէմքին վրայ անձրեւող լոյս մը դողդղացող, չարաշուք, դամբանալին:

Կիսաստուերին մէջ իր սպիտակութեամբը կը նշմարուի մայրիկին կարած «քէսէն» տոկուն, դիմացկուն, որուն մէջ հիմա առատ խուրձ մը կայ Նէնէթին ոսկի մազերէն:

Փիէռ կը մնար մահճակալին եզերքը, թմրած, պարապ, անգոյ: Կարծես դեռ կը վազէր անոր ետեւէն, որ ժամեր առաջ մեկնեցաւ, նոյն անթափանց պահարանով:

Ներքին խժալուր աղմուկներուն մէջ, ականջներուն ան-

---

\* Հայր մեր, որ յերկինս ես,  
 Հայր մեր, որ յերկինս ես  
 Սուրբ Եղիցի անուն քոյ  
 Եկեսցէ արքայութիւն քոյ....  
 ..... արքայութիւն  
 ..... քոյ

վերջանալի վզզոցէն տարուած՝ մէկէն կարծեց, թէ մօտաւոր բակէ մը ջութակ մը բարձրացաւ. հին, շատ հին մեղեդի մը բոլորին ծանօթ, որ մինչեւ հոս կ'ելլէր անհաւասար ալիքներով, տատանելով, յամենալով յարկերուն մէջտեղ, որ կ'ուզէր աւելի երկրորդինը յուզել, քան չորրորդ յարկինը, որ ալ պարտասած\*՝ երբեմն կը կառչէր ջութի խողովակներուն, բայց որ կ'ելլէր, բայց որ կ'ելլէր մինչեւ հոս, այդ հին, շատ հին մեղեդին, բոլորին ծանօթ:

**Նոյեմբեր 1927 - Յունուար 1929**

---

\* Յոգնած, խոնջացած:

## ՎԵՐՋԱԲԱՆ

### Սփիւռքի *որդիների* պատկերագարի ողիսականը

*Ճշմարիտ մտաւորականը ան է,  
որ իր մարմնեղէն հայրենիքը կը սիրէ այնչափ,  
որչափ կը սիրէ ոգեղէն հայրենիքը:  
Զանոնք իրարմէ չի զատեր...*

**Շ. Շահնուր**

*...ինչ մնացած է հայկական Պոլիսէն... Պիտի  
տեսնէք անձամբ, եթէ չծածկուի ան...  
Գրական-մտաւորական շարժումը՝ ակտուս,  
բայց կարելի չէ որ հայութիւնը խաթարուի հոն:*

**Գրիգոր Քէօսէեանին գրած նամակից**

**29. օգ. 1967\***

Հայութեան անխաթար լինելութեան հոգածութեամբ, ի գին ամեն բանի ապրեց Շահան Շահնուրը, երբ «կարճատեն մը» ականատեսն էր Պոլսոյ «մտաւորական շարժումին»: Հետագային երբ «Մենք»ի իբրեւ իւրօրինակ գրական համայնքի խանդավառ միջավայրում էր,- սկզբնական շրջանում հանդէսի խմբագիր, աննախադէպ հայ գրականութեան պատմութեան մէջ «Մեհեան»ից յետոյ,- Շահնուրի *հեղինակային* «Փարիզի տղաքը» բնորոշումը չափազանց առարկայացուած մտահնարքով էր արդարացուած՝ ժամանակաշրջանը հայութեան ներքին փոթորկումներով ու տուայտանքներով արտացոլեցնող, համախումբ երիտասարդների գրական-ստեղծագործական վարքագիծը դրսեւորող՝

\* Շ. Շահնուր «Նամականի» /կազմեց, ծանօթագրեց, Գր. Քէօսէեան/, «Մայրենի» հրատ., 2001:

նրանց մտածողական ինքնուրոյնութիւնը նպաստակայնօրէն որոշադրելու առումով՝ սփիւռքեան *այդօրեայ* միջավայրում:

Այս ամենով հանդերձ, ստեղծուած իրականութիւնը բովանդակաւորող մթնոլորտը չէր կարող նպաստաբեր չլինել Շահնուրի եւ այլոց գրողական աշխարհընկալման *բռնկումներին*, եւ եթէ յիշենք երբ եւ ինչ պայմաններում է գրուել «Նահանջը առանց երգի» վէպը, մանաւանդ ազգային, հանրային ինչպիսի մակընթացութիւններ ապրող ժամանակատարածքում, զուտ ազգայինին վերաբերող յանդուգն եզրահանգումների եւ գաղափարազերծ հայեցակէտերի արծարծմամբ, ապա արդէն իսկ կռահելի է, որ Շահնուրը հայութեան հոգեբանական-կենսական խաթարումի, այլ բառով՝ ուժացումի վտանգայարոյց իրավիճակը սելեռուն մտահոգութեամբ էր *դիտարկում* ու վերապրում: Երիտասարդի գերզգայունակութեան մտավախութիւններից, մտապատրանքներից, թէ՛ ոչ աւելորդ զգուշաւոր լինելու անհեռատեսութիւնից էր, որ արմատապէս ընդիմադրի կեցուածքով զորում կեանքի կոչել այն ակնյայտնի ճշմարտութիւնները, որոնք սքողուած, խանձարուրուած կէս ճշմարտութիւններ էին, ինչ վերաբերում էր ազգին ու ազգայինին, եւ որոնք հայութեանը «պատիւ չբերող» վկայութիւններ էին համարում, վնասաբեր, անպատուաբեր, մինչեւ իսկ ի սպառ յուսահատեցնող...

Միջանկեալ նշենք, որ «Նահանջը առանց երգի» վէպի շուրջ ստեղծուած աննախադէպ գրական-հրապարակագրական հրահանգաւորուած *վայրապարը*՝ վէպի հրատարակութեան իսկ օրերին տպագրուած «Յառաջ» օրաթերթում, իբրեւ թերթօն, եւ առանձին գրքով լոյս տեսնելուց յետոյ էլ՝ շարունակաբար /ներառեալ նաեւ վէպն արժեւորող դրուատական գրադատականները/ բացառիկ մենագրութեան «նիւթ»ի *տարողութեամբ* ժամանակաշրջանի ազգային-հանրային հոգեբանական այլեւայլ խնդիրներ նորովի լուսաբանելուն կը նպաստեն:

«Անտարակոյս, ամէնէն համակրելի դէմքն է նորերուն

մէջ: Իր վէպը՝ «Նահանջը առանց երգի» ինձի համար թանկագին նմոյշ մըն է... Շահնուր իր անձը կրցաւ բաւական ընդարձակ ընծայել, եթէ ոչ սերունդի մը, գոնէ անոր մէկ մասին հոգեկան դիմագիծը վկայել ընկալչութեամբ մը առնելու եւ տալու համար»\*:

«Սերունդի մը դառնութիւնը» շարունակական զարգացումների ընդլայնումով, չնայած գրողական ոչ այնքան հարուստ փորձառութեամբ, անկասելի *դադարներ* ջանդուրժող պոռթկումներով, անձնային, միջանձնային յարաբերութիւնների խորաթափանց պատկերումներով տարագրուած հայութեան բազմակերպ *կերպարն* ու կերպընկալումը ներկայացնելը անսպասելի էր գրական եւ, ընդհանրապէս, հայ հանրութեան համար, եւ ըստ այդմ, դատապարտելի: Բայց, իրականում Սփիւռքի,- ընդ որում նորակազմաւոր,- այդ քննարժան ժամանակաշրջանի գեղարուեստական վավերագրութիւնը, թէ՛ վարքագրութիւնն էր վիպայնացուել: Շահնուրը իբրեւ Մեծ եղեռնի հետեւանքների,- նաեւ պատճառահետեւանքային կապի ըմբռնումի վկայագրող,- խնդրոյ առարկայ էր համարել նոր իրականութեան մէջ յայտնուած «հարկաւոր ընտրութեան» առջեւ շուարուն *չկանգնել*. «Ձգեցէք որ իր վէպը չսիրեն հաստ կառոյցի, հաստ մեթոտի պաշտպանները: Ու եթէ հողը փխրուն է՝ ծռելու չափ գրողի քմայքներուն, պողպատը աղեղ իսկ կը շինէ գրողին մատներուն տակ»:\*\*

Օշականեան բնորոշմամբ վէպը «ընդարձակելու, ազատագրելու» յանդգնութիւնը,- եթէ այդ տարիներին այդպիսին էր ընկալում,- անելի ճիշդ դատափետում, վարկաբեկում, ապա «մեղսագործը» ժամանակի իրականութիւնն էր, յատկապէս մտաւորական հանրութիւնը անդաւաճան աւանդապահութիւն որդեգրած՝ կեղծ ազգասիրական նուիրականութիւն տարփողող:

\* «Մայրիներու շուքին տակ», /գրական գրոյց Յ. Օշականի հետ. գրի առաւ Բ.Թաշճեան/, Պէյրութ, 1983, էջ 35-36:

\*\* Նոյն տեղում, էջ 37:

Եւ, «մեղքի» իր *սկզբնական* բաժինն ունէր «Յառաջ» օրաթերթի հիմնադիր-խմբագիր Շաւարշ Միսաքեանը, որը ոչ *առերեւոյթ*, այլ գիտակցուած զգօն-յանդգնութիւն ցուցաբերեց իբրեւ թերթօն հրատարակելու՝ անշուշտ պատկերացնելով վէպի շուրջ ծաւալուելիք փոթորկումները, նոյնիսկ *անժամանակային* առումով:

Ինչն էր իրապէս ցնցել,- «հայու» գաղափարային կենսադիրքորոշում, ապրելակերպ,- այս պարագային յոյժ էական, նախապաշարեալ ամանդոյթներ ու մտացածին քրիստոնէական ընկալումներ դաւանող հանրութեանը կամ հանրութեան առաւել «գրագէտ» /արեւմտահայերէնի իմաստով/ շրջանակներին: Իրականութիւնն էր կեղծել գրողը. արդեօք չկային, չէին ապրում Հրաչներ, Սուրէններ, Պիէռներ, Լոխումներ, փարիզեան եւ ընդհանրապէս սփիւռքեան իրականութեան մէջ, չէին ճանաչում իրենց «շուրջիներուն»: Վէպի «էջերու պոռնկագրական պատկերներէն» էին նրանք ուշակորոյս կամ յուշակորոյս: Սուրէնի «հակազգային» ընդվզումները, որն հիմնականում ուղղուած էր չարդարացուած, սնապատիւ ազգայնականութեան դէմ՝ Շահնուրին համարելով նրան գաղափարակից ու տեսակէտների մեկնաբան՝ Սուրէնի գրող լինելու հանգամանքով թիրիմացօրէն պատճառաբանուող: Այն, ինչ ոչ միայն արդարացի չէ, այլեւ Շահնուրի անձի վարկաբեկում, որը իբր թէ «Արարատ չունի հոգւոյն խորը»:

Չենք անդրադառնում *վիպասնող* այլ հանգամանքների, որոնք նպաստել են վէպի աղմկայարոյց... փառքին, եւ ոչ էլ նպատակադրուած ենք սիրավէպի, ազգավէպի,- ինչպիսին համարուել է «Նահանջը»,- գեղարուեստական կառոյցի որոշ հատուածներ մեկնաբանել՝ այս կամ այն կերպարի տիպական-ժամանակաբնորոշ էութիւնը բնորոշել, այն ինչ գրեթէ բոլոր կերպարների պարագային խորհրդամղող ասպարէզ է *բացում*, եւ միշտ միեւնոյն հարցման առջեւ է մեզ *կանգնեցնելու*. ինչո՞ւ, եւ ի՞նչ պայմաններում / կամ պայմաններից ելնելով/ տարագրուեց հայութիւնը, եւ

ինչպիսին էր արմատախրումի իրավիճակ ապրելիս: Պատասխանը փնտրենք՝ վէպում, Շահնուրն այն մտաահայեցել է անառարկելիորէն...

Այնուամենայնիւ,- զերծ կը մնանք դիպաշարային մանրամասներից, որպէս բնական երեւոյթ համարելով տարագրումը մի ողջ ժողովրդի, որ Աղէտի հետեւանք էր, աւելին՝ *անկասելի* երեւոյթ, ազգային փոքրամասնութիւններին ընդհանրապէս ճակատագրով վերապահուած: Այս, եւ ոչ միայն այս հարցադրումները Շահնուրը գեղարուեստականացրել է՝ իրականութեան «լոյսն ու ստուերը» իրաւամբ անթաքոյց զատորոշելով, իբրեւ «Պատկերազարդ պատմութիւն Հայոց»ի այդ տարիների մեկնաբան, ում համար հասարակաց կարծիքն այնքան էլ էական չէր՝ գրողի ազատ կամարտայայտութեան պոռթկումով. կորսուող սերունդի ողիսականը ոչ պաճուճազարդ ներկայացնող. «Յոյերթաս, Հայութիւն»:

Այնուամենայնիւ, առանցքային կերպարի՝ Պետրոս-Պիէռի *վարքագծային* ազդեցութիւնը միւս կերպարների նաեւ Նէնէթ-ժանի, Փըթիթ Լիզի ներկայ-բացակայ զուտ սիրային յարաբերութիւնների վրայ. նրանցից իւրաքանչիւրին ինքնադրսելորման էր մղում: Այս նկատառումը անտարակուսելի է այն պարզորոշ պատճառով, որ վէպը դոյզն ինչ, գուցէ եւ առաւելապէս ինքնակենսագրական է. Պետրոս-Պիէռի լուսանկարիչ լինելը՝ Շահնուրի լուսանկարչութեամբ *զբաղուելը* տարագրութեան առաջին տարիներին եւ այլն. «Պետրոս կը պատկանէր այն բազմաթիւ մարդոց դասակարգին, որ կը խորհի. Կեանքին հանդէպ յայտնած բոլոր կարծիքներուն մէջ, ես կը նախընտրեմ կեանքը»: Ասել է, թէ կեանքի փիլիսոփայութեան շահնուրեան ըմբռնումը յստակ պատասխան է նրանց,- միշտ պատասխան է՝ ջղաձգումների տեղիք տուող,- ովքեր ազատ մտածողութեան սահմանափակումները անփոփոխելի են համարում: Այստեղ է, որ միջանձնային եւ միջսերնդային բախումներն անխուսափելի են. երկու սերունդի միջեւ ստեղծուած ան-

հասկացողութեան պատնէշներ, տուրգենտեան «հայրեր եւ որդիներ» խնդրայարոյց զգայնական կերպընկալման փոխակերպման «վայելքներ», /յայտնի է Շահնուրի խօսքը Տուրգենտի «Հայրեր եւ որդիներ» վէպից կրած ազդեցութեան մասին՝ «Նահանջի» զգացողիկ-հոգեբանական «մթնոլորտին» վերաբերող/: Նաեւ Արեւելք-Արեւմուտք երկփեղկ բեւեռների հակասականութեան ընդհանրացումներ՝ մի կողմից Պետրոս-Պիէռի անձի երկատուածութեան «ընկալումներ»՝ ինքնահաստատման ձգտող անձի տենչ /Պիէռ/, միւս կողմից անձի առ անցեալն ունեցած բնագոյն գրգիռների ջաղթահարուած ապրումներ /Պետրոս/: Միւս կերպարների ընդհանրացմամբ՝ սփիւռքեան անկազմակերպ վիճակի յորձանուտում յայտնուած երիտասարդների *տարածական* վարքագրութիւն...

Եւ ամենեւին պատահական չէ շեշտուող *նահանջը*՝ որոշեալ առումով: Շահնուրը ընդգծում է նահանջի շարունականութիւնը: Իսկ «առանց երգի» *ցուցիչը* շեշտադրում է նահանջողների ոգեզուրկ էութիւնը:

Փարիզեան կեանքին վայելքներին ընտել ու «հոն» յայտնուած երիտասարդ «տղաքը», այնուամենայնիւ, իրենց յիշողութիւնների բեռը թոթափելուն պատրաստ են միայն նոր միջավայրին ձուլուելու սիրոյն՝ ապագան այլ կերպ պատկերացնելով, միով բանիւ, Շահնուրը ուժացման վտանգաւորութիւնը կանխատեսելի համարելով **գրեթէ** փորձում է աղէտի նախապատճառները քննարժան դարձնել՝ ըստ էութեան նրանց հոգիներում ծածուկ նիրհող բաբելոնեան խառնաշփոթի դէմն առնել: Ընդհանրապէս, **առկախ** է հետեւեալ հարցադրումը. ո՞վ է եւրոպացին, եւ արդե՞՞ք ազգութեան օրինավիճակ «չի ճանաչում»: Պոլ Վալերին հետեւեալ,- թերեւս ոչ սպառնիչ,- պատասխանն է տուել. «Ես եւրոպացի եմ համարում այն բոլոր ժողովուրդներին, որոնք պատմութեան ընթացքում ենթարկուել են երեք ազդեցութիւնների», որոնցից նշանակալին, ըստ Վալերիի, քրիստոնէութիւնն է: Հայութեան քրիստոնէական «կեր-



պարը», կենսադիրքորոշումը ինչպէս եւ ինչ կերպ կարող էր ազդեցութիւն ունենալ այն միջավայրում, որտեղ յայտնուել էր եւ որտեղ նախ եւ առաջ ինքնապահովութիւնն էր խնդրոյ առարկայ: Եւս մէկ հարցադրում, որը իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ըստ կամօք «լուծելու», հետեւապէս իր կենսակերպով իրագործելու, եթէ իհարկէ **միջավայրային** խոչընդոտներ չի յարուցում: «Նահանջը առանց երգի» վէպի կերպարները այս երկրնտրանքի առջեւ են կանգնած: Շահնուրն ամենեւին «մեղսագործ» չէ, որ նրանք իրականութեան զոհերն են. վէպի երկրորդ մասում գրողական դիրքորոշումը անսպասելի շրջադարձային է Պետրոսի համար՝ *հնարաւորինս* հոգեփրկութեան առումով: Արդէն յայտնի է Սուրէնի՝ ֆրանսագիր գրող դառնալու փափագը, Հրաչի ամուսնութիւնը ֆրանսուհու հետ. եւ Պետրոսի հիասթափութիւնը իր շրջապատից՝ Ռընոյի գործարանում աշխատելու, այլ միջավայր ընտրելու ցանկութեամբ է պայմանաւոր: Այստեղ կոյր պատահականութեան միջադէպն է նաեւ մասնայատկում, երբ Պետրոսը մինչ այդ անյանդուրժն վերաբերմունք ունենալով ընկերների հետ՝ Նէնէթի մերկ լուսանկարն է յայտնաբերում Հայաստանի քարտէզի ետնամասում, հետեւանք, որ համեմատական հակադրութիւն է ստեղծում՝ հակակրանք ֆրանսուհու նկատմամբ... Ազգային եւ սիրոյ խնդիրների արծարծմանը զուգահիշ Շահնուրը տարագրութեան պատմական շերտերը *թերթում է* գրեթէ բաց գրքի պէս, ընդ որում մի կողմից տիպիկ գաղթականի, միւս կողմից նոյն գաղթականի /արեւելցու/ նկարագրից *օր առաջ* ձերբազատուող կերպարների պատկերմամբ, ընդհանրացմամբ: Եւ, ընդհանրապէս Պետրոս-Պիէռի տաճած սէրը սկզբնական շրջանում եւ հետագայում վթարի ենթարկուած՝ խեղուած դէմքով Նէնէթի նկատմամբ մերթ ուրուագծային է, մերթ էլ պատճառաբանուած: Բայց խնդիրը բոլորովին այլ հարթութեան վրայ է դիտարկելի. նրա հոգեւոր շրջադարձ ապրելու պարագան Լոխումի ներազդեցութեամբ է նաեւ ճշտորոշում... եւ այս-

պէս շարունակ, վէպի իրարայաջորդ զարգացումներում կորստեան ցաւի զգացողութիւնը միշտ առկայ է՝ գրեթէ բոլորի վարքագծում նկատելի. դասականացուած խօսքը՝ «տիպական կերպարները տիպական հանգամանքներում» որոշադրող գործօն է յատկապէս ողբերգականութիւն շեշտադրող. «Շահնուրի մօտ չարի ու բարու ամանդական յավերժական պայքարի, առաւել եւս դուալիզմի ըմբռնումը չէ, այլ հակադիր կողմերի փոխապայմանաւորուածութիւնը, անխուսափելի համատեղումը կեանքային պրոցեսում /Ստ. Թոփչեան/: Մի հանգամանք, որ լիովին մասնայատուկ է վէպին՝ վերաբերմունքի ապացուցողական դրսեւորում առ հայութեան անցեալն ունեցած եւ ներկան /սփիւռքեան ժամանակի/ երեւութականացնելու առումով՝ հնարաւոր բոլոր «ուրացումներից» չերկիւղելով, ինչպէս վէպի ուշադրաբար ընթերցումն է միանգամայն ենթադրում եւ «պահանջում»...

*Արթուր Անդրանիկեան  
1-17 յունիս, Երեւան, 2022*

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպը,- ի բացառեալ սփիւռքեան հրատարակութիւնների,- առաջին անգամ Հայաստանում տպագրուել է 1962թ. /Երեւան, «Երկեր»/: Գրիգոր Քէօսէեանին գրած 14 մարտ, 1963 թուակիր նամակում Շահնուրը իր անբարենպաստ կարծիքն արտայայտելով գրում է. «Բնագիրը ենթարկուած է հապաւումներու, ըստ քաղաքական-ազգային աշխարհայեացքի մը, օրինակ՝ ջնջուած է «Նահանջի սա հանրաժանօթ պարբերութիւնը. «Հայը ունի լաւ նկարիչներ, բայց ոչ նկարչութիւն, հայը ունի լաւ դերասաններ, բայց ոչ թատերգութիւն, յոգնիլ չգիտցող ճամբորդներ՝ բնաւ նաւապետ...»։ Այս mutilations-ները /հաշմումները/ զիս պիտի նեղէին, եթէ «Նահանջը» ըլլար կատարեալ եւ անթերի. բայց լաւ կ'ըլլար, որ յիշէին ծանօթութեան մը մէջ, թէ բնագիրը կրած է յապաւումներ: Բացի տպագրական կոպիտ սխալներէ «Երկեր»ու բացատրողականները /օտար բառեր, ասութիւններ/ շատ անգամ անճիշդ են, հակառակ Ալաճաճեանի /նկատի ունի գրքի խմբագիր Ստ.Ալաջաջեանին/ ակներեւ հոգածութեան: /Շահան Շահնուր «Նամականի», հտ. Ա. էջ 54-55/:

Հետագայում, «Նահանջը առանց երգի» վէպը ընդգրկուել է «Երկեր»ում/Երեւան, 1982-1983/:

Ծանօթագրութիւնները կազմելիս ֆրանսերէն, թրքերէն, նաև հայերէն սակաւ գործածական բառերը, արտայայտութիւնները թարգմանաբար նշել ենք ընդտողեայ, որպէսզի անելի դիրին դառնայ վէպի ընթերցումը:

Տեղին ենք համարում ընդգծել, որ երեւանեան չորս վերահրատարակութիւններում բնագրային ուղղագրութիւնը անտեսուած է, զեղչուել են՝ սովետական ժամանակներին բնորոշ «հոգածութեամբ» վէպը ինչ-ինչ առումներով բնորոշող «Պատկերազարդ պատմութիւն Հայոց» ենթախո-

րագիրը, Շահնուրի երախտագիտական խօսքը ուղղուած տուեալ հրատարակութեան /1929/ առաջին հրատարակութեան հովանաւոր՝ Վահան Իսախրեանին, եւ որ վէպը նուիրուած է Յակոբ Տէր-Յակոբեանին: «Մկրատուել են» վէպի բնաբան Ղուկաս Աւետարանիչի խօսքերը՝ 1994, 2013թ.թ. հրատարակութիւններում դրանք պահպանուել են:

Ի վերջոյ, հարկ ենք համարել ներկայացնել՝ վէպն արժեւորող ժամանակակիցների վկայութիւնները ի պատասխան վէպի էջերում անբարոյականութիւն եւ ապազգային մտայնութիւններ փնտրող-չգտնող *ազգայնականներին*:

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի»  
վէպի մասին

### **Գուրգէն Մահարի**

- Վերցրու եւ կարդա, ամեհի գիրք է...

Չարենցն էր, բոլոր ամեհի, անգամ ոչ ամեհի գրքերի առաջին ընթերցողը: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի»ն էր գիրքը:

- Չուշացնես: Վաղը պիտի վերադարձնեմ մեծ վանեցուն: Նա էլ շատ է հաւանել:

Մեծ վաբնեցին Աղասի Խանջեանն էր:

35 տարի է անցել այդ օրից: Շատ գրքեր են լոյս տեսել այդ ժամանակամիջոցեցում եւ նրանցից շատ-շատերը մոռացուել են: Շահան Շահնուրի ստեղծագործութիւնները սակայն դիմացան ամեհի ժամանակի քննութեանը: Կախարդական հմայքով եւ ուժով օժտուած նրա գրիչը գործել է «չինական մելանով», նրա ստեղծած գոյները խունացման ու գունաթափման ենթակայ չեն:

\* \* \*

Այո, հին, բոլորին ծանօթ մեղեդի է Շահնուրի երգածը, բայց եւ նոր է ու տեւական, իր շլացուցիչ ստեղծագործական գաղտնարաններով, բարձր արուեստի իր վսեմ կատարմամբ: Եւ՛ այո, Շահնուրը ներկայումս գրում է ֆրանսերէն, բայց կարդալով այս «Նահանջ»ը եւ նրա միւս ոչ լրիվ ներկայացուած պատմուածքները, չես կարող չհաւատալ, որ Շահնուրին սպասում է մի նոր յաղթական «Նահանջ եւս»...

*«Հայրենիքի ծայն», 26 դեկտ., 1965:*

### **Յակոբ Օշական**

Շահնուրի վէպն ալ շահ մըն է. հարստութիւն մը: Իր լոյս տեսած օրերուն ես չվարանեցայ այդ գիրքին մէջ տեսնելու իր սերունդին անդրանիկ կատարեալ վէպը:

*«Վկայութիւն մը», էջ 126, Հալէպ, 1946:*

### **Արշակ Չոպանեան**

«Նահանջը» հզօր է, խորունկ վէպ է, իսկ Շահնուր բազմապատիկ յատկութիւններով օժտուած տոհմիկ գրագէտ մըն է: Այս նորեկէն շատ բան կարելի է սպասել...»:

*«Անահիտ», Ա Տարի, էջ 105, 1930*

### **Վահան Թէքէեան**

Շահան Շահնուր գրական այս սերունդին լաւագոյն ներկայացուցիչն է, ըլլալով միաժամանակ մէկը ամէնէն տոկուններէն: Մեզդի համար բարեբախտ յայտնութիւն էր ան /իմա՝ «Նահանջը»/ զոր խանդաղատանքով ողջունեցին արտասահմանը եւ ...

*«Ապագայ», 11-13 յունուար, 1934*

### **Շաւանջ Նարդունի**

Պարոններ, կատարեալ գործ մըն է «Նահանջը» ետպատերազմեան գրականութիւն: Արուեստ, թարմ յղացումով: Այսպէս հայ գրականութիւնը կը գտնէ նոր դէմքն ալ...:

*«Յառաջ», 5 հոկտեմբեր, 1929*

### **Գուրգէն Մխիթարեան**

Ամբողջ գիրքը կը կարդացուի մէկ շունչով եւ կը դիմանայ մէկէ աւելի ընթերցումներու, պահելով միշտ իր շահեկանութիւնը եւ իր ջերմութիւնը: Շահնուր մեր վաղուան գրականութեան ամէնէն ամուր սիւներէն կրնայ ըլլալ: Իր

խառնուածքը հարստութիւն մըն է արդէն մեր գրականութեան համար:

*«Քառորդ դար գրականութիւն», էջ 356-368, Գահիրէ:*

### **Վահէ Վահեան**

Շահան Շահնուր յայտնուեցաւ իբրեւ արտակարգ երեւոյթ մը՝ պանդուխտ մեր գրականութեան մէջ: Վիճելիին սահմանէն վեր իրողութիւն մըն է այլեւ թէ Շահնուր գրագէտը կրցաւ աշխարհացրիվ մեր օտարութեան առաջին տասնամեակին տագնապները առնել գեղարուեստական գրականութեան մէջ, գիրքով մը՝ որ դեռ չունի իր զուգակշիռը:

*«Անի», Բ Տարի, թիւ 4:*

### **Սիմոն Սիմոնեան**

Կ'ըսուի թէ Զապէլ Եսաեան յափշտակութեամբ կարդալէ ետք «Նահանջ»ը, փողոց ինկած է փնտռելու անոր հեղցինակը եւ գտնելէ ետք՝ ճակտէն համբուրած է:

*«Դէպի երկիր», Հալէպ, Ա. թիւ, էջ 29:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մուտք .....	7
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ .....	15
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ .....	62
ԵՐՐՈՐԴ ՄԱՍ .....	169
<b>Վերջաբան.</b> Սփիւռքի <i>որդիների</i> պատկերազարդ ողիսականը. Ա. Անդրանիկեան .....	218
<b>Ծանոթագրություններ</b> .....	226
<b>Վկայություններ</b> .....	228



## ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

# ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

Խմբագիր՝  
Համակարգչային շարուածքը՝  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

Արթուր Անդրանիկեան  
Վիոլետա Խաչատուրովայի  
Աննա Համբարձումեանի  
Ալվարդ Օհանջանեանի

**EDIT PRINT**  
43 D. Malyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
Երևան, Դ. Մալյան 43  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)